Հ Ե Ղ Ա

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Առատաձեռնության զորությունը

Փ Ո Խ Ու

ԶԱՐԻ ԿԻՍԻ

Թ Յ Ու Ն Ը

Հ Ե Ղ Ա

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Առատաձեռնության զորությունը

Փ Ո Խ Ու

ԳԱՐԻ ԿԻՍԻ

Թ Յ Ու Ն Ը

Your Financial Revolution,
The Power of Generosity, Armenian

Copyright © 2022 by Gary Keesee
Originally published in English
Copyright © 2015 by Gary Keesee
ISBN: 978-0-9729035-9-2

Gary Keesee Ministries,
P.O. Box 779, New Albany,
OH 43054, USA
GaryKeesee.com

This book is a FREE GIFT from Gary Keesee Ministries and is

NOT FOR SALE

Ձեր ֆինանսական հեղափոխությունը.
Առատաձեռնության զորությունը, հայերեն

© 2022 Գարի Կիսի
Սկզբնապես հրատարակված է անգլերենով
© 2021 Գարի Կիսի
ISBN: 978-0-9729035-9-2

Գարի Կիսիի ծառայություն,
Փ/Ա 779, Նյու Ալբանի,
Օհայո 43054, ԱՄՆ
GaryKeesee.com

Այս գիրքն ԱՆՎՃԱՐ ՆՎԵՐ է Գարի Կիսիի ծառայությունից
և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, հատուկ նշումների դեպքում՝ անգլերեն «Նոր Միջազգային թարգմանությունից» (NIV), «Ավետարանական ժառանգություն թարգմանությունից» (EHV) և «Նոր Քինգ Ջեյմս թարգմանությունից» (NKJV):

ՆՎԻՐՈՒՄ

Գիրքը նվիրվում է հիասքանչ կնոջս՝ Դրենդային, ում հետ ամուսնացած եմ արդեն քառասուն տարի: Նա ամենաառատաձեռն անձնավորությունն է, որին երբևէ հանդիպել եմ: Դրենդան մշտապես մտածում է ուրիշների մասին և ինձ շատ բան է սովորեցրել մարդկանց սիրելու վերաբերյալ, ինչի համար հավիտյան շնորհակալ եմ:

– Գարի Կիսի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **7**

ԳԼՈՒԽ 1. Առատաձեռնության զորությունը 15

ԳԼՈՒԽ 2. Պատասխանը. շնորհք 33

ԳԼՈՒԽ 3. Արդյո՞ք համապատասխանում եք պահանջներին 63

ԳԼՈՒԽ 4. Ո՞ւմ փողն է դա 81

ԳԼՈՒԽ 5. Դուք գործընկերոջ կարիք ունեք 97

ԳԼՈՒԽ 6. Տասանորդի խորհուրդը 113

ԳԼՈՒԽ 7. Դուք քսակի կարիք ունեք. մաս 1 133

ԳԼՈՒԽ 8. Դուք քսակի կարիք ունեք. մաս 2. 165

ԳԼՈՒԽ 9. Չափի օրենքը 177

ԳԼՈՒԽ 10. Առատաձեռն թագավորը 193

ԳԼՈՒԽ 11. Խոստում նրանց, ովքեր առատաձեռն են 213

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբ Աստված Դրենդային և ինձ կանչեց հեռուստատեսային գործունեություն ծավալելու, պետք է խոստովանեմ, որ դա ամենահեռու բանն էր, որ մտքովս կարող էր անցնել: Ես նոր էի վերադարձել Ալբանիայից, որտեղ հինգ հավաքույթ էի անցկացրել Աստծո Թագավորության թեմայով և պատմել, թե ինչպես Դրենդան ու ես ազատվեցինք պարտքերից՝ հետևելով Թագավորության օրենքներին:

Եթե կարդացել եք իմ նախորդ գրքերը, հավանաբար կհիշեք, թե ինչպես էր միսիոների հյուրասենյակը լցվել Աստծո փառքի կապույտ մշուշով այն գիշեր, երբ անցկացրինք վերջին հավաքույթը: Այնտեղ էր, որ Տերը խոսեց ինձ հետ. *«Ես կանչում եմ քեզ դեպի ազգերը, որպեսզի սովորեցնես մարդկանց ֆինանսական օրհնության Իմ ուխտը: Եվ ուր էլ քեզ ուղարկեմ, Ես կվճարեմ»:*

Այդ գիշեր իմ կյանքը փոխվեց: Սակայն, ես գաղափար չունեի, թե ինչ նկատի ուներ Տերը այս խոսքերով. *«Ես կանչում եմ քեզ դեպի ազգերը»:*

Ինչպես պարզելու էի, հեռուստատեսությունը լինելու էր այն միջոցը, որ Տերն արդեն ուներ Իր մտքում: Հիշեցնեմ, դա այն չէր, որ ես կմտածեի կամ, նույնիսկ, երբևէ կցանկանայի անել: Բայց մեկ բան հաստատ գիտեի. ես փափագում էի օգնել մարդկանց՝ բացահայտելու այն, ինչ բացահայտել էինք Դրենդան ու ես, այսինքն՝ Աստծո Թագավորությունը:

Ինը տարի շարունակ ես ապրել եմ պարտքերի ծանր բեռի տակ, ունեցել ամեն տեսակի արգելանքներ և պայքարել խուճապի տանջող նոպաների դեմ: Բժշկի նշանակած հակադեպրեսանտներն ինձ չէին օգնում: Ես հայտնաբերեցի, որ մեկուսա-

նում էի կյանքից, և վախի խավարը կարծես նվաճում էր մտքերս: Վախն այնպես էր տիրել ինձ, որ նույնիսկ վախենում էի տնից դուրս գալուց, ինչն ակնհայտորեն վատ էր անդրադառնում իմ աշխատանքի վրա: Մենք արագորեն գահավիժում էինք դեպի սնանկություն, և ես կարծես անզոր էի դա կանխելու համար: Ամոթը դարձել էր ապրելակերպ, և ես ինձ անհաջողակ էի զգում: Ամենից շատ անհաջողակ էի զգում իմ հիասքանչ կնոջ և երեխաների առջև: Այդ տարիներին, բացի նրանից, որ չէի ապահովում այն գումարները, որ մեզ անհրաժեշտ էին, ես հեռու էի նաև լավ հայր կամ ամուսին լինելուց:

Մենք ապրում էինք 1850-ական թվականներին կառուցած մի հին գյուղական տանը, որտեղ ամեն բան անսարք էր: Պատուհաններն ամրացված էին կպչուն ժապավեններով: Հատակի գորգը բերված էր աղբանոցից: Տղաները քնում էին ծերանոցի դեն նետած ներքնակների վրա: Մեքենաները, որ վարում էինք, խայտառակություն էին: Մենք մշտապես ստանում էինք տուգանքների մասին ծանուցող հեռախոսազանգեր իրավաբաններից և բազմաթիվ քարտային ու վարկային կազմակերպություններից, որոնց գումարներ էինք պարտք:

Ես անհույս էի. այո՛, ես քրիստոնյա էի, որը սիրում էր Աստծուն: Ես հաճախում էի եկեղեցի և մկրտված էի Սուրբ Հոգով: Ունեի Հին կտակարանի բակալավրի աստիճան և ավարտել էի մեկամյա աստվածաշնչյան դպրոցը, սակայն ինչ-որ բան սխալ էր, սարսափելիորեն՝ սխալ:

Հուսահատության մեջ, մի օր աղաղակեցի Աստծուն, և Նա անմիջապես պատասխանեց: Այնպես չէր, որ այդ ինը լարված տարիներին ես չէի աղոթել. անշուշտ, աղոթել էի: Բայց այս անգամ *գիտեի*, որ պիտի լսեմ:

Մինչև այդ պահը մշտապես մտածում էի, որ կարող եմ ինքնուրույն դուրս գալ այն ֆինանսական հորից, որ ինքս էի փորել՝ իմ ուժերով ինչ-որ բաներ անելով: Բայց այդ առավոտ հասկացա, որ այլևս անզոր էի: Ես պարտք էի վերցրել բոլոր ընկերներից, տասնյակ հազարավոր դոլարներ պարտք էի ծնողներիս, և սպառվել էին կրկին վարկեր վերցնելու բոլոր միջոցները:

Երբ այդ առավոտյան աղոթեցի, հուսահատված էի, սակայն, ի զարման ինձ, շատ արագ լսեցի Նրա պատասխանը: Հոգումս լսեցի, թե ինչպես Նա մեջբերեց Փիլիպեցիների 4.19-ը (NIV).

> *«Եվ իմ Աստված լրացնի ձեր բոլոր կարիքները Իր փառքի հարստության չափով՝ Քրիստոս Հիսուսում»:*

Ես ասացի Տիրոջը. «Տե՛ր, ես գիտեմ այդ խոսքը, բայց չեմ տեսնում, որ դա իրականանում է իմ կյանքում»: Նա կրկին խոսեց՝ ասելով, որ ես այդ խառնաշփոթի մեջ էի, քանի որ երբեք չէի սովորել, թե ինչպես է Նրա Թագավորությունը գործում: Ես չգիտեի, թե ինչ նկատի ուներ Նա, բայց Դրենդայի հետ վճռեցինք պարզել:

Առաջին սուրբգրային խոսքերից մեկը, որ Աստված ցույց տվեց մեզ, Ղուկասի 6.20-ն էր.

> *«Եվ Նա Իր աչքերը դեպի Իր աշակերտները բարձրացրեց և ասաց. «Երանի՜ աղքատներիդ, որ ձերն է Աստծո Արքայությունը»»:*

Մեր պատասխանն Աստծո Թագավորությունն էր: Կրկնեմ, մենք իսկապես գաղափար չունեինք, թե ինչ Նա նկատի ուներ, բայց գիտեինք, որ պետք է պարզեինք դա:

Քիչ հետո ավելի շատ կխոսենք Թագավորության մասին, բայց թո՛ւյլ տվեք ասել, թե արդյունքում ինչ եղավ:

Սուրբ Հոգին Աստվածաշնչում սկսեց ցույց տալ բաներ, որոնք մինչ այդ երբեք չէինք նկատել: Կիրառելով այն, ինչ Տերը սովորեցնում էր մեզ Թագավորության մասին՝ երկուսուկես տարում կարողացանք լիովին ազատվել պարտքերից: Սկսեցինք կանխիկով վճարել մեր մեքենաների համար և կանխիկ գումարով գնեցինք 22 հեկտար հողատարածք՝ գեղեցիկ փշատերև անտառներով ու ճահճուտներով, որտեղ կարող էի որսորդություն անել և մաքուր օդում մեծացնել երեխաներիս:

Եվ իմ կյանքի մեծագույն ուրախությունն էր տեսնել, թե ինչ-

պես էր Դրենդան նախագծում և կառուցում իր երազանքի տունը, որը նույնպես ձեռք բերեցինք առանց պարտքերի:

Այն ամենից հետո, ինչի միջով անցա, և այն բանից հետո, երբ տեսանք, որ Աստծո Թագավորությունը գործում է, ինչպես որ այն գործեց մեր կյանքում, մենք սկսեցինք *ամեն օր* ապրել տոնախմբության մեջ: Իրականում, տոնախմբությունը չի ավարտվել: Մենք շարունակում ենք ամեն օր ցնծալ Թագավորությամբ: Կար ժամանակ, երբ փորփրում էինք բազմոցի բարձերի տակ՝ հույս ունենալով գտնել տասը ցենտանոց մետաղադրամներ, որոնցով կկարողանայինք «Ուրախ ճաշ» գնել մեր երեխաների համար: Այժմ մենք ազատ ենք պարտքերից և կարող ենք հարյուր հազարավոր դոլարներ ներդնել Ավետարանի տարածման գործում. այս ամենն, անշուշտ, առիթ է տոնախմբության:

Դրենդան ու ես մեծ փափագ ունենք պատմելու մարդկանց Աստծո զարմանահրաշ Թագավորության մասին: Սա էր պատճառը, որ առաջին հերթին ես գնացի Ալբանիա:

Ինչպես նշեցի, երբ Աստված Ալբանիայում խոսեց ինձ հետ ազգերի մեջ մտնելու մասին, ես շփոթվեցի: Ի՞նչ էր դա նշանակում: Այդ ժամանակ Դրենդայի հետ հովվում էինք այն եկեղեցին, որը հիմնել էինք տասը տարի առաջ: Արդյո՞ք պետք է հանձնեի հովվությունը և սկսեի ճանապարհորդել:

Աստծո կողմից սահմանված ծանոթությունների լաբիրինթոսի միջով անցնելով՝ Դրենդան ու ես ծանոթացանք հեռուստատեսային գործունեությամբ զբաղվող մարդկանց և հեռուստաարտադրող ընկերությունների հետ: Ես չէի փնտրում նրանց. Աստված էր դնում նրանց մեր ճանապարհին: Կրկնեմ, ես բոլորովին հետաքրքրված չէի հեռուստատեսային գործունեությամբ, բայց հիշեցի մի տեսիլք, որ տեսել էի տարիներ առաջ: Եկեղեցական ծառայություններից մեկի ժամանակ, աղոթքի մեջ, հանկարծ Տերը ցույց տվեց, որ ես զբաղվելու եմ ռադիոհեռուստատեսային գործունեությամբ: Ես շատ չմտածեցի դրա վերաբերյալ, քանի որ իսկապես հետաքրքրված չէի դրանով, սակայն այդ տեսիլքը գրավեց իմ ուշադրությունը, և ես Դրենդային պատմեցի դրա մասին:

Կարճ ասած՝ Աստված զարմանահրաշ դռներ բացեց և ծանո-

թացրեց հիանալի մարդկանց հետ, որոնք քաջալերեցին մեզ հեռուստատեսային գործունեություն ծավալել, թեև ոչինչ չգիտեինք հեռուստատեսության մասին: *Եվ երբ ասում եմ՝ ոչինչ, նկատի ունեմ՝ ոչինչ:* Բայց մենք զգում էինք, որ պետք է շարունակենք հետևել նրան, ինչ Աստված ցույց էր տալիս:

Մենք չունեինք սարքավորումներ և նույնիսկ չգիտեինք, թե ինչ սարքավորումներ են անհրաժեշտ հեռուստատեսային հաղորդումներ պատրաստելու համար, բայց մարդիկ, որոնց հետ Աստված մեզ ծանոթացրեց, գիտեին: Ի վերջո, մենք հասանք այն կետին, որ պետք է որոշում կայացնեինք: Մի հեռուստաարտադրող ընկերություն առաջարկեց մեզ պայմանագիր՝ զեղչված սակագնով հեռուստատեսային արտադրանք թողարկելու համար: Հաշվարկելով եթերաժամանակը և բոլոր ծախսերը՝ պարզեցինք, որ հեռուստատեսություն սկսելու համար մեզ անհրաժեշտ կլիներ շուրջ 300.000 դոլար: Դա մի գումար էր, որ մենք չունեինք այդ ժամանակ: Բայց աղոթելուց և Աստծո հետ գոտեմարտելուց հետո ի վերջո ասացի՝ այո՛ (անշուշտ, դուք երբեք չեք հաղթում Աստծո հետ գոտեմարտում):

Այսպիսով, արտադրական ընկերությունը, որ հիմնադրված էր Տեխասում, եկավ մեր քաղաք, և մենք սկսեցինք նկարահանել մեր առաջին հեռուստահաղորդումը: Քանի որ չունեինք տաղավար, մի ամբողջ տարի նկարահանումները կատարեցինք մեր հյուրասենյակում՝ բուխարու առջև: Ասել, որ ես նյարդային էի առաջին եթերի ժամանակ, նշանակում է՝ ոչինչ չասել: Ես չգիտեի ինչ ակնկալել: Ըստ էության, միայն նկարահանումը չէր, որ մտահոգում էր ինձ: Ես պետք է մտածեի բովանդակության վերաբերյալ և ի մի բերեի ամբողջական հաղորդումը, իհարկե՝ Դրենդայի հետ միասին: Արտադրական թիմը հրաշալի խորհուրդներ տվեց և մարզեց մեզ, բայց ես շարունակում էի անհանգիստ լինել:

Խնդրո՛ւմ եմ, հասկացե՛ք, ես այդքան էլ մարդամոտ անձնավորություն չեմ, այնպես որ՝ ինձ համար հեռուստատեսային գործունեությամբ զբաղվելը բոլորովին դուրս էր իմ հարմարավետության գոտուց: Բացի այդ՝ արտադրական թիմը նկարահանման օրը սաստիկ խռովահույզ վիճակում էր: Կեսգիշերին մեկնել էր

թիմի ղեկավարը, որովհետև հարևանի մեքենան հարվածել էր նրա կրտսեր որդուն, և տղան մահացել էր: Այդ մասին իմացա առավոտյան, երբ պատրաստվում էինք նկարահանման: Ես որոշեցի ոչինչ չասել Դրենդային մինչև նկարահանման ավարտը: Ինչ դժվար ժամանակ էր:

Այնուհետև, նկարահանումից անմիջապես հետո, վթարի ենթարկվեց մեր աշխատակիցներից մեկը՝ որդուս՝ Թիմի հողե ճանապարհների մոտոցիկլետը վարելիս: Թիմը վազելով տուն մտավ և աղաղակեց, թե Դավիթը մահացել է: Նա չէր մահացել, պարզապես ուշագնաց էր եղել. ինչպիսի՜ մեկնարկ:

Մեզ հաջողվեց մեկ շաբաթում ավարտել նկարահանումը, և հաղորդումը հեռարձակվեց տեղական կայանով: Մենք շարունակեցինք նկարահանվել՝ ամսական մեկ շաբաթ կտրվածքով, բայց երկրորդ ամսվա ավարտին մեր գործն ավելի չհեշտացավ. ես միաժամանակ պայքարում էի անհամապատասխանության և խուճապի զգացումների դեմ: Ի վերջո արտադրական ընկերության սեփականատիրոջն ասացի, որ չեմ կարող դա անել: Նա մի պահ աչքերն հառեց ինձ և ասաց. «Ո՛Չ: Դու պետք է զբաղվես հեռուստատեսությամբ»:

Հետո ասաց, որ նստեմ, որովհետև ուզում էր ինչ-որ բան ցույց տալ: Նա միացրեց հեռուստացույցը և բացեց հեռուստացանցերի քրիստոնեական բաժինը: Անկեղծ ասած՝ քրիստոնեական հեռուստահաղորդումներ երբեք շատ չեմ դիտել, բայց այն, ինչ տեսա այդ օրը, տհաճություն պատճառեց ինձ և ստիպեց վերանայել քրիստոնեական հեռուստատեսության մեջ ներգրավվելու գաղափարը:

Մի հաղորդման մեջ վաճառում էին «ձիթապտղի սուրբ յուղ» և պնդում, որ այն բարգավաճման ավելի մեծ օծություն կբերի: Մյուսում քարոզիչը վաճառում էր «օծված նշխարներ»՝ հաստատելով, որ յուրաքանչյուր պատառն ընդունելով՝ նոր հայտնություն կստանաք: Մեկ այլ հաղորդման մեջ ասում էին, որ եթե նվիրատվություն կատարեք հաջորդ երեք րոպեներին, ապա կստանաք եռակի օծություն՝ բարգավաճման համար: Մեկ ուրիշում էլ սառեցված-չորացրած սնունդ էր առաջարկվում: Յուրաքանչյուր

հաղորդում կարծես առաջարկում էր որևէ խորհրդավոր դրդապատճառ՝ զոհաբերություն կատարելու համար:

Բայց ես նկատեցի, որ այդ հաղորդումներից ոչ մեկում չէր ասվում, թե ինչպես մարդիկ ստանան այն, ինչի կարիքն ունեն. ինչպես է Թագավորությունն իրականում գործում: Նրանք ասում էին, որ պետք է սերմ ցանել, բայց ես գիտեի, որ մարդկանց անհրաժեշտ էր ասել, թե ինչպես *բերք հավաքեն* այդ սերմից:

Խճանկարը բաղկացած էր շատ կտորներից, որոնք մարդիկ պետք է իմանային, եթե ցանկանում էին հաջողակ լինել: Ես գիտեի, որ եթե մարդկանց միայն սովորեցնեն, թե ինչպես տան, և չսովորեցնեն, թե ինչպես հնձեն, նրանք կհիասթափվեն Աստծուց, և երբ իրենց սպասելիքները չիրականանան, կմտածեն, որ Աստված հուսախաբ է արել իրենց:

Մարդիկ կարիք ունեին իմանալու Թագավորության օրենքները և հասկանալու, թե ինչու է տալն այդքան կարևոր այստեղ՝ երկրային տիրույթում, Թագավորության առատության մեջ քայլելու համար: Եվ կրկին, առավել կարևոր էր, որ նրանք իմանային, թե ինչ անեն տալուց *հետո:* Նրանք պետք է իմանային ինչպես հնձել այն, ինչի կարիքն ունեին Աստծուց:

Ես բացահայտեցի, որ հունձքի մեջ ունեմ իմ դերը, որը, նախևառաջ, իմանալն է, թե ինչ է հավատքը, և ինչու է այն անհրաժեշտ: Ես կարիք ունեի սովորելու, թե ինչպես է Սուրբ Հոգին առաջնորդում ինձ դեպի իմ հունձքը, և որքան կարևոր են ժամանակը և հունձքի մանրամասները: Ես բացահայտեցի, որ կան հոգևոր օրենքներ, որոնք պետք է սովորել և կիրառել, ինչպես նաև՝ օրենքներ, որոնք կառավարում են երկրային տիրույթը և ազդելու են հունձքի վրա:

Այդ բոլոր հաղորդումներն այնպիսի տպավորություն էին թողնում, որ կարծես փողը պարզապես հայտնվելու էր ձեր փոստարկղում:

Ես կհամաձայնեմ, որ երբեմն այն *իսկապես* հայտնվում է ձեր փոստարկղում, բայց եթե ուշադիր քննեք դեպքերը, կգտնեք հոգևոր հուշումներ, թե ինչու և ինչպես է դա տեղի ունեցել:

Այդ հաղորդումներից մի քանիսը դիտելուց հետո ես շվարած էի: Զարմանալի չէ, որ աշխարհն ուշադրություն չէր դարձնում դրանց: Բայց նաև բարկացած էի: Այդ պահին ես գիտակցեցի, որ իմ կարիքը կա, որ ես ասելիք ունեմ:

Ես որոշեցի շարունակել հեռուստատեսային գործունեությունը, որովհետև պատմություն ունեի պատմելու: Արդեն 14 տարի է՝ հեռուստահաղորդումներ եմ թողարկում և տեսնում եմ, թե ինչպես են տասնյակ հազարավոր մարդիկ բացահայտում Թագավորությունը. ոչ թե կրոն, այլ Թագավորությունը, և ունեն նույնպիսի արդյունքներ, որ Դրենդան ու ես ունեցանք:

Գիտեմ, որ նույն արդյունքները դուք կունենաք:

«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Առատաձեռնության զորությունը» գիրքը իմ՝ «Ֆինանսական հեղափոխություն» գրքաշարի հինգերորդ և վերջին գիրքն է: Ես ոգեշնչված եմ այս ավարտուն գրքաշարով, ոգեշնչված եմ նաև այս վերջին գրքով:

– Գարի Կիսի

ԳԼՈՒԽ 1

ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի երեկո մեր ընտանիքը ճաշում էր մեր սիրելի տեղական ռեստորաններից մեկում: Մատուցողուհին երիտասարդ կին էր, որի հղիությունն ակնհայտ երևում էր: Երբ պատրաստվում էի փակել մեր հաշիվը, հանկարծ առաջնորդություն զգացի տալ նրան մեծ թեյավճար՝ 22-25% թեյավճարի փոխարեն, որ սովորաբար տալիս էի, ուստի թեյավճարին ավելացրի ևս 100 դոլար: Նա, առանց նայելու, վերցրեց «Visa» քարտի ստորագրված բլանկը և գնաց խոհանոց:

Մեկ րոպեից վերադարձավ՝ արցունքներն այտերին: Նա եկել էր, որպեսզի շնորհակալություն հայտներ: Նա ասաց, որ դժվար ֆինանսական վիճակում է և մտածում է, թե ինչպես է հաղթահարելու իրավիճակը: Նախքան հեռանալը՝ մենք հնարավորություն ունեցանք պատմելու նրան Քրիստոսի մասին և աղոթելու նրա համար:

Մենք ոչինչ չարեցինք՝ բացի առատաձեռն լինելուց, որը դուռ բացեց՝ նրա սրտին դիպչելու և նրան ծառայելու համար:

> *«Կամ թե՝ Նրա քաղցրության առատությունը և համբերությունը և երկայնամտությունը արհամարհո՞ւմ ես՝ չգիտենալով, որ Աստծո քաղցրությունը քեզ **ապաշխարության** է տանում»:*
>
> – Հռոմեացիների 2.4

Աստվածաշնչի թարգմանության «Քինգ Ջեյմս» տարբերակում Հռոմեացիների 2.4-ն ասում է, որ Աստծո բարությունը մեզ ապաշխարության է տանում:

Լինել առատաձեռն՝ նշանակում է գործել Աստծո նման:

Մատթեոսի 5.45-ում գրված է.

> *«Որ որդիներ լինեք ձեր Հոր, որ Երկնքում է. որովհետև Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է բերում արդարների և անիրավների վրա»:*

Աստված բարի է և առատաձեռն: Մենք Նրա զավակներն ենք, և Քրիստոսում մեր նոր էությունը նաև առատաձեռն լինելն է: Ինչպես վերոհիշյալ պատմության մեջ, լինել առատաձեռն՝ նշանակում է կիսել Աստծո սիրտը մարդկանց հանդեպ: Ինչպես մի կում սառը ջուրը՝ սաստիկ շոգին, այնպես էլ առատաձեռն լինելը սփոփանք և հույս է բերում աղքատության անապատում գտնվող աշխարհին:

Առատորեն տալու ազդեցությունը հստակ երևում է Բ Կորնթացիների 9.10-15 (NIV) խոսքերում գրված Պողոսի հրահանգներում, որոնք հասցեագրված են Կորնթոսի եկեղեցուն.

> *«Բայց Նա, որ սերմ ցանողին սերմ է պարգևում, և հաց՝ կերակուրի համար, Նա կպարգևի և կշատացնի ձեր սերմունքը և կաճեցնի ձեր արդարության պտուղը: Դուք ամեն կերպ հարստացած կլինեք, որպեսզի առատաձեռն լինեք ամեն առիթով, և մեր միջոցով ձեր առատաձեռնությունը գոհություն կբերի Աստծուն:*
>
> *Որովհետև այս փուրքի ծառայությունը ոչ թե միայն սուրբերի պակասությունն է լրացնում, այլև շատերի գոհությունը շատացնում է Աստծո համար: Որ այս ծառայության փորձով Աստծուն փառավորեն ձեր՝ Քրիստոսի Ավետարանին հնազանդ դավանության համար և այն առատաձեռնության համար, որ կիսում եք նրանց և ամենի հետ: <u>Եվ ձեզ համար նրանց աղոթքով նրանց սրտերը կփափագեն ձեզ՝ Աստծո այն անգերազանցելի</u>*

շնորհքի համար, որ ձեզանում է: Եվ շնորհակալություն Աստծուն Նրա անպատմելի պարգևի համար»:

Ձեր առատաձեռնությունը ստիպում է մարդկանց փառաբանել Աստծուն և գոհանալ Նրանից: Ուշադրություն դարձրեք, որ Պողոսն ասում է՝ առատաձեռն լինելը ձեր *ծառայությունն* է Աստծուն:

«Ծառայություն» բառի սահմանումն է. *աշխատանքի կամ պարտականությունների կատարում գերադասի համար կամ որպես ծառա*[1]*:*

Այստեղ՝ երկրային տիրույթում, ձեր պարտականության մաս է կազմում Աստծո անունից կիսել Նրա սիրտը և մտահոգությունը մարդկանց հանդեպ: Արդյունքն ակնհայտ է. դա դիպչում է մարդկանց սրտերին և ճանապարհ բացում՝ ընդունելու Քրիստոսին:

Կարծում եմ, բոլորս կարող ենք հիշել, երբ ինչ-որ մեկը մեզ օգնության ձեռք մեկնեց, և որքան մեծ նշանակություն ունեցավ դա մեզ համար:

Հիշում եմ՝ երբ ամուսնացա, 4.000 դոլարի հարկ էի պարտք և գաղափար չունեի, թե որտեղից էի հայթայթելու այդ գումարը: Ես բազմաթիվ անքուն գիշերներ էի անցկացնում՝ սարսափելով ստեղծված իրավիճակից: Այդ ժամանակ մենք ապրում էինք Տալսայում և ծրագրել էինք արձակուրդներին մեկնել Օհայո:

Երբ հայրս հարցրեց, թե ինչպես են գործերս, ես նրան պատմեցի Հարկային տեսչության հաշվի մասին: Նա ասաց. «Դա հեշտ է լուծել», և այդ գումարի չափով չեկ գրեց ու տվեց ինձ: Հորս ակնթարթային առատաձեռնությունն իմ հանդեպ ստիպեց ինձ ավելի սիրել նրան: Որովհետև այդ պահին ես տեսա նրա սիրտը իմ հանդեպ:

Հայրս հաճախ թաքցնում էր իր սիրտը: Իրականում նա երբեք բացահայտ չէր ցուցադրում իր զգացմունքները մարդկանց հանդեպ, նույնիսկ՝ մորս հանդեպ: Եթե հիշողությունս չի դավաճանում, ամբողջ կյանքում նա երբեք չէր ասել, որ սիրում է ինձ:

1 Ամերիկյան ժառանգություն® Անգլերենի բառարան, հինգերորդ հրատարակություն

Միայն մեկ անգամ, երբ մայրս հորդորեց նրան ասել դա, ի վերջո նա ասաց, այն էլ՝ բուռն ապրումներից հետո: Դա կարծես երեկ լիներ: Մայրս աղաչում էր նրան. «Դու չես կարողանում ասել հարազատ որդուդ, որ սիրո՞ւմ ես նրան»: Բայց նա լռում էր:

Վերջապես, տեղի տալով մորս արցունքներին, նա ասաց, որ սիրում է ինձ: Բայց ես երբեք հաշվի չեմ առել այդ պահը՝ որպես նրա կողմից ասված սիրո խոստովանություն, որովհետև նա հարկադրված արեց դա:

Իր սերը բառերով արտահայտելու փոխարեն՝ լինում էին ժամանակներ, երբ հայրս յուրահատուկ բան էր գնում մեզ համար, և կարծում եմ՝ բոլորս էլ (նրա չորս զավակները) գիտեինք, որ հայրիկը սիրում է մեզ: Ես տեսնում էի հայրիկի սիրտը միայն նրա արարքների միջոցով և գրեթե երբեք՝ խոսքերի միջոցով: Այդ պահերն ինձ համար թանկ էին, որովհետև դրանք կարծես լույս լինեին մթին գիշերում:

Այն օրը, երբ նա չեկ գրեց Հարկային տեսչության պարտքը մարելու համար, սիրտս լցվեց երախտագիտությամբ: Արցունքներն աչքերիս՝ փաթաթվեցի հորս և շնորհակալություն հայտնեցի: Նրա պատասխանը հանկարծակիի բերեց ինձ: Նա ասաց. «Քանի դեռ ունեմ, ուզում եմ օգնել»:

Համոզված եմ՝ դուք նույնպես ունեք հիշողություններ ինչ-որ մեկի առատաձեռնության մասին, պահեր, որոնք գրավել են ձեր ուշադրությունը: Ուստի, հիշե՛ք. **առատաձեռնությունը մարդկանց՝ ցույց է տալիս ձեր և Աստծո սիրտը նրանց հանդեպ:**

Առատաձեռնությունն այնքան զորեղ է: Այն գերազանցում է խոսքերին և դիպչում ուղիղ սրտին: Զարմանալի է, թե ինչպես ենք հիշում ինչ-որ մեկի ասած գովեստի խոսքը կամ մատուցած նվերը:

Վեցերորդ դասարանում էի, երբ կյանքում առաջին անգամ տեսա հորս սիրտը: Զարմիկս ու ես հրապուրված էինք հրթիռային մոդելներով, և ես գնել էի մի մոդել, որն ուներ այնպիսի գլխիկ, որի մեջ կարել էր ինչ-որ բան տեղադրել և արձակել երկինք:

Այդ օրը զարմիկիս հետ մտածեցինք հրթիռի գլխիկի մեջ գորտ

տեղադրել և գլխիկը կպչուն ժապավենով այնպես փաթաթել, որ հրթիռը զարկվի գետնին՝ պարաշյուտը բացելու փոխարեն: Մենք ուզում էինք տեսնել, թե ինչ կկատարվի գորտի հետ, ինչը, կարծում եմ, կարող եք պատկերացնել:

Եվ այսպես, հրթիռն արձակեցինք և, ի սարսափ մեզ, հայրս դուրս եկավ՝ դիտելու տեսարանը: Մենք գիտեինք, որ նրան դուր չէր գա գորտի սպանությունը:

Հրթիռն օդ բարձրացավ, ինչպես նախատեսված էր, ապա աղեղի նման թեքվեց և գլխիկով զարկվեց գետնին: Երբ գնացի այն վերցնելու, տեսա, որ գլխիկը կոտրվել էր, իսկ գորտը՝ սատկել, ինչպես և սպասում էի:

Երբ վերցրի հրթիռը, սատկած գորտին արագ մի կողմ նետեցի, որպեսզի հորիցս թաքցնեի մեր իսկական մտադրությունը: Նա մոտեցավ և խնդրեց, որ հրթիռը տանք իրեն: Մինչև հիմա հիշում եմ նրա անկեղծ մտահոգությունը մեր հրթիռի համար: Հրթիռը ձեռքերում պահած՝ նա ասում էր, թե ինչպես կարող եմ այն նորոգել և ափսոսանք էր հայտնում պատահածի համար: Այնուհետև նա մանրամասն պատմեց, թե ինչպես կարելի է վերանորոգել կոտրված կտորները: Անկեղծ հոգատարությունը և բարությունը, որն արտահայտվեց նրա ձայնի մեջ, հանդիմանեցին ինձ իմ վատ արարքի համար: Նա այդպես էլ չիմացավ գորտի մասին, բայց ես երբեք չմոռացա նրա մեղմ մտահոգությունը իմ և հրթիռի համար: Այդ պահին միանգամայն պարզ էր, որ նա իսկապես հոգ էր տանում ինձ համար:

Լինում են ժամանակներ, երբ Աստված գործածում է մարդկանց, որոնց մենք նույնիսկ չենք ճանաչում, որպեսզի նրանք քաջալերեն և օգնեն մեզ:

Ինձ համար հատկապես անմոռանալի է այն դեպքը, երբ Դրենդան ու ես մի քանի ընկերներով գնացինք փասիան որսալու: Մենք նոր էինք ամուսնացել և ապրում էինք Տալսայում: Իմ սենյակակիցներից մեկը, որ ապրում էր Կանզասում, հրավիրեց մեզ միանալու իրեն՝ փասիանի որսաշրջանի տարեկան բացման արարողությանը: Մեղմ ասած՝ հուզմունքը պատել էր ինձ:

Հինգ ժամում մենք հասանք Կանզաս, որսորդության հրաշալի

օր ունեցանք և լրացրինք թռչունների մեր սահմանաչափը: Բայց Տալսա վերադառնալու ճանապարհին մեր ընկերոջ մեքենայի շարժիչը պայթեց: Մենք գտնվում էինք հողածածկ ճանապարհի մեջտեղում և դեռ մի քանի ժամ ունեինք՝ տուն հասնելու համար: Եթե երբևէ եղել եք Կանզասում, ապա գիտեք, թե ինչ ամայի տարածք է դա:

Արդեն մութ էր, և հեռվում միայն մեկ լույս էր նշմարվում: Մենք քայլելով հասանք մի գյուղացու տուն և պատմեցինք նրան մեր իրավիճակը: Ես ապշեցի, երբ նա ասաց. «Շա՛տ լավ, այս գիշեր ձեզ մեքենայով տուն կտանեմ: Ձեր մեքենան կդնեմ իմ կցասայլին և ձեզ ժամանակին տուն կհասցնեմ, որպեսզի երկուշաբթի գնաք աշխատանքի» (առավոտյան Դրենդան սկսելու էր ոչ լրիվ դրույքով աշխատել մի ռեստորանում, և նա այնքան հուսահատված էր, որ ստիպված էր լինելու զանգել և ասել, որ չի կարողանա ներկայանալ աշխատանքի):

Զարմանալիորեն, այս մարդը, որին երբեք չէինք հանդիպել, հինգ ժամում մեքենայով մեզ բերեց Տալսա և նույնը օրը, լույսը չբացված, վերադարձավ Կանզաս: Ամբողջ գիշեր նա մեքենա էր վարել:

Ես երբեք չեմ մոռանա բարության այդ անձնուրաց արարքը: Նա նույնիսկ մի լումա չվերցրեց վառելիքի համար: Ես ընդմիշտ երախտապարտ կլինեմ այդ մարդուն: Ամեն անգամ նրան հիշելիս երախտագիտությամբ եմ մտածում նրա նվերի մասին:

Երբ մարդիկ մտածեն ձեր մասին, շնորհակալություն կհայտնեն Աստծուն ձեր առատաձեռնության համար:

Համոզված եմ, որ այսպիսի իրավիճակներ եղել են նաև ձեր կյանքում: Դուք կհիշեք, թե որքան երախտապարտ էիք այն հոգատարության և անհանգստության համար, որ ինչ-որ մեկը ցուցաբերում էր ձեր հանդեպ: Սա այն է, ինչ Պողոսը փորձում էր փոխանցել այս եկեղեցուն. նրանց առատաձեռնությունն Աստծո սրտի հետ հասնում էր մարդկանց և ստիպում նրանց փառք ու գոհություն տալ Աստծուն՝ Նրան մատուցած այդ ծառայության համար:

Երբ ընդունեցի Քրիստոսին, հայտնաբերեցի, որ սիրտս փափ-

կել է, և տեսա, որ իսկապես հոգ եմ տանում մարդկանց համար: Երբ կարիք էի տեսնում, մշտապես ուզում էի օգնել, բայց այնքան հուսահատեցնող էր այն, որ սովորաբար չէի կարողանում դա անել, որովհետև չունեի գումար, որը կարող էի ծախսել այդ նպատակով:

Ես հայտնաբերել եմ, որ այսպես է զգում մարդկանց մեծ մասը: Պարզապես խոսե՛ք բազմության մեջ և ուղղությո՛ւն խնդրեք ու կտեսնեք, թե ինչպես են տասնյակ մարդիկ ցանկանում օգնել ձեզ գտնելու ձեր ճանապարհը:

Բայց ինչպես բացահայտեցի Աստվածաշնչում, առատաձեռն լինելն ավելի զորեղ է, քան երբևէ գիտակցել եմ: Կորնթացիների երկրորդ թղթի 9-րդ գլխի այս հատվածը կարդալով՝ հայտնաբերեցի Թագավորության մի օրենք, որը լիովին փոխեց տալու մասին իմ պատկերացումը.

> *«Այս փուրքի ծառայությունը ոչ թե միայն սուրբերի պակասությունն է լրացնում, այլև շատերի գոհությունը շատացնում է Աստծո համար:*
>
> *Որ այս ծառայության փորձով Աստծուն փառավորեն ձեր՝ Քրիստոսի Ավետարանին հնազանդ դավանության համար և այն առատաձեռնության համար, որ կիսում եք նրանց և ամենի հետ:*
>
> *Եվ ձեզ համար նրանց աղոթքով նրանց սրտերը կփափագեն ձեզ՝ Աստծո այն անգերազանցելի շնորհքի համար, որ ձեզանում է: Եվ շնորհակալություն Աստծուն Նրա անպատմելի պարգևի համար»:*
>
> – Բ Կորնթացիների 9.12-15, NIV

Մարդիկ շնորհակալություն են հայտնելու Աստծուն այն անգերազանցելի շնորհքի համար, որ Աստված տվել է նրանց, ովքեր առատաձեռն են:

Որպեսզի իսկապես հասկանանք, թե ինչ է Պողոսն ասում այստեղ, պետք է տանք մեր եզրաբառերի սահմանումները:

«Անգերազանցելի»՝ նշանակում է մեծ քանակությամբ կամ

ՄԱՐԴԻԿ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԱՍՏԾՈՒՆ ԱՅՆ ԱՆԳԵՐԱԶԱՆՑԵԼԻ ՇՆՈՐՀՔԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՏՎԵԼ Է ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՌԱՏԱՁԵՌՆ ԵՆ:

բարձր աստիճանի, գերազանցող կամ արտասովոր. *անգերազանցելի մեծության կառույցներ*[2]:

Այդ ինչն է, որ հսկայական քանակությամբ ձերն է լինելու: Ինչն է, որ ձեր կյանքում լինելու է արտասովոր և անգերազանցելի մեծությամբ. Աստծո շնորհքը:

Շատ լավ, այժմ պետք է տանք շնորհքի սահմանումը:

«Շնորհք»՝ նշանակում է Աստծո անվաստակելի կամ չարժանացած բարեհաճություն:

Սա շնորհքի ընդունված սահմանումն է, բայց դա այնքան հեռու է շնորհքի իրական բնորոշումից: Թո՛ւյլ տվեք տալ ավելի լավ սահմանում:

Ստորև ներկայացված է մեջբերում Վիքիփեդիայից՝ աստվածային շնորհքի մասին.

> *Համաձայն ընդհանուր քրիստոնեական ուսմունքի՝ շնորհքը չարժանացած ողորմություն (բարեհաճություն) է, որ Աստված տվել է մարդկությանը՝ ուղարկելով Իր Որդուն, որպեսզի Նա մահանա խաչի վրա և հավիտենական փրկություն բերի: Սակայն, միայն այս սահմանումը չի կարող բովանդակել Սուրբ գրքում գործածված այս հասկացության բոլոր նշանակությունները: Օրինակ, Ղուկասի 2.40-ում գրված է. «Երեխան էլ աճում էր և զորանում հոգով՝ իմաստությունով լցված, և Աստծո շնորհքը նրա վրա էր»: Այս օրինակում, եթե կիրառենք շնորհքի այն սահմանումը, որի համաձայն շնորհքը չարժանացած բարեհաճություն է, ապա դա անիմաստ է, քանի որ անմեղ Քրիստոսը դրա կարիքը չուներ:*
>
> *Ջեյմս Ռայլն առաջարկել է հետևյալը. «Շնորհքն Աստծո զորացնող Ներկայությունն է, որ հնարավորություն է*

2 Dictionary.com

տալիս քեզ լինելու այն անձնավորությունը, ում Աստված ստեղծել է լինելու, և անելու այն, ինչ Նա կանչել է քեզ անելու»: Բիլ Գոթարդն առաջարկել է այս տարբերակը. «Շնորհքը տալիս է մեզ ցանկություն և զորություն՝ իրականացնելու Աստծո կամքը»: Այս երկու սահմանումներն էլ խելամիտ իմաստ են հաղորդում «շնորհք» բառի կիրառությանը ամբողջ Աստվածաշնչում[3]:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ Պողոսն այս հատվածում խոսում է շնորհքի մասին, որը զորություն է տալիս բարգավաճելու: Այս պարգևը՝ շնորհքի պարգևը, բարձր էր գնահատվում, որովհետև այն լիազորում էր մարդկանց բարգավաճելու: Եվ քանի որ նրանք առատաձեռն էին ու լրացնում էին ուրիշների կարիքները, դա ստիպում էր վերջիններիս փառավորել Աստծուն:

Պողոսն իր քննարկումն ավարտում է **«Շնորհակալություն Աստծուն Նրա անպատմելի պարգևի համար»** խոսքերով:

Շատ լավ, ևս մեկ սահմանում: «Անպատմելի»՝ նշանակում է, ինչպես և բառը հստակ ցույց է տալիս, որ չկան խոսքեր, որոնք կարող են համարժեքորեն նկարագրել տվյալ բանը[4]: Ահա թե որքան լավն էր՝ *անպատմելի,* շնորհքի այն պարգևը, որի մասին խոսում էր Պողոսը, հատկապես նրանց համար, ովքեր ֆինանսական աջակցություն էին ստանում այդ պարգևի շնորհիվ:

Ահա այն զորությունը, որ կարող է ազատել ձեզ ֆինանսական կապանքներից: Այս զորությունը՝ Աստծո շնորհքը, հասանելի է յուրաքանչյուր հավատացյալի:

Բայց ահա թե որն է հարցը. մենք կարող ենք ժամերով խոսել այն մասին, ինչ հորդորեց Պողոսը, այսինքն՝ *տալու* մասին: Բայց եթե չհասկանանք շնորհքը՝ Աստծո զորությամբ բարգավաճելու արտոնությունը, բաց կթողնենք այն հունձքը, որ Աստված նախատեսել է մեզ համար: Դա նման կլինի նրան, որ այգի աճեցնեք անտառում՝ հսկա ծառի ստվերում, որտեղ ոչ արևի շող կա, ոչ զորություն՝ ցանկալի արդյունք ստանալու համար:

---

3 https://en.wikipedia.org/wiki/Divine_grace

4 Ամերիկյան ժառանգություն® Անգլերենի բառարան, հինգերորդ հրատարակություն

Դրենդան ու ես կարդում էինք պատմություններ Աստվածաշնչում, որտեղ հայտնվում էր Աստծո զորությունը և լիովին բարեփոխում իրավիճակը: Պետք է խոստովանեմ, որ մանուկ հասակից շատ քիչ նմանատիպ պատմություններ եմ լսել, որոնք տեղի են ունեցել մեր եկեղեցում: Փրկությունից բացի՝ ոչ ոք երբևէ իսկապես չի խոսել այն մասին, թե ինչպես է հնարավոր Աստծո շնորհքը բերել այս կամ այն իրավիճակի մեջ:

Ես հասկանում եմ, որ մեր փրկությունն ամենակարևոր բանն է: Բայց ինչպես նշեցի, ես կարիք ունեի, որ այդ նույն շնորհքը գործեր իմ կյանքի *բոլոր* բնագավառներում, սակայն չգիտեի՝ ինչպես: Եվ իմ տգիտության պատճառով մենք կոտրված էինք, հիվանդ և ընկճված: Մենք գիտեինք փրկության մասին. առանձին վերցրած, ունեինք հավիտենական փրկություն, բայց չգիտեինք կամ չէինք հասկանում, թե ինչպես երկինքն իջեցնենք մեր կյանքի մեջ և ի ցույց դնենք Աստծո զորությունը: Ինչպես արդեն ասել եմ, մենք ֆինանսապես ջախջախված վիճակում էինք:

Բայց ահա թե ինչ Տերն ասաց ինձ այն օրը, երբ խոսեց Թագավորության մասին. *«Դու այս խառնաշփոթի մեջ ես, որովհետև երբեք չես սովորել, թե ինչպես է Իմ Թագավորությունը գործում»:*

Այլ խոսքով՝ Նա ասում էր, որ ես չգիտեմ ինչպես արձակել Թագավորի իշխանությունը այստեղ՝ երկրային տիրույթում: Ես երբեք չէի սովորել, թե ինչպես դա անեմ, նույնիսկ չգիտեի, որ կարող եմ դա անել: Ես գաղափար չունեի, թե ինչպես միանայի շնորհքին՝ Աստծո զորությանը:

Իմիջիայլոց, այդ օրը, երբ Աստված խոսեց ինձ հետ Թագավորության մասին, նաև ասաց. *«Իմ եկեղեցին ապրում է այնպես, ինչպես Իսրայելի զավակներն այն ժամանակ, երբ սրրուկ էին և աղյուսներ էին պատրաստում փարավոնի համար: Նրանք սրրուկներ են: Իմ ժողովուրդը պարտքի մեջ է, և Ես ուզում եմ, որ նրանք ազատ լինեն»:*

Թույլ տվեք կարևոր նկատառում անել. դուք երբեք ազատ չեք լինի, մինչև ֆինանսապես ազատ չլինեք: Եվ ինչպես Դրենդան ու ես ասում ենք վերջին 30 տարիներին, դուք երբեք չեք բացահայտի, թե ով եք իրականում, և չեք քայլի ձեր կյանքի հոգևոր նպա-

տակի մեջ, մինչև չկարգավորեք ձեր ֆինանսական բնագավառը:

Թույլ տվեք նաև այս նկատառումն անել. **ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ:**

ՄԱՐԴԻԿ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ: ՆՐԱՆՔ ԻՐԱԿԱՆ ԲԱՆ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ: ՆՐԱՆՔ ՀՈՒՍԱՀԱՏՈՐԵՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ ՏԵՍՆԵԼՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԿՐՈՆ:

Ես ապացուցել եմ դա, և նույնն արել են հազարավոր մարդիկ: Աստծո շնորհքը հասանելի է՝ ձեզ օգնելու համար: Կան բաներ, որոնք դուք կանչված եք անելու, սակայն առանց ֆինանսների երբեք չեք կարողանա իրականացնել: Դուք պետք է ֆինանսական ազատություն ստանաք ոչ միայն ձեզ և ձեր ընտանիքի համար, այլև այն նպատակով, որ մարդիկ տեսնեն, թե ինչպես է Աստծո Թագավորությունը գործում ձեր կյանքում: Արդյունքում, ինչպես հասած պտուղներով պտղատու ծառ, դա կգրավի մարդկանց դեպի Թագավորությունը: Մարդիկ պատասխաններ են փնտրում: Նրանք իրական բան են փնտրում: Նրանք հուսահատորեն կարիք ունեն տեսնելու Թագավորությունը, այլ ոչ թե կրոն:

Թո՛ւյլ տվեք պատմել վերջերս մի բուժքրոջ հետ ունեցած խոսակցության մասին: Ըստ էության՝ երկու բուժքույրերի:

Մայրս 88 տարեկան է և բավականին առույգ է, բայց, ինչպես հասկանում եք, օգնության կարիք ունի տեղաշարժման հարցում: Այդ օրը մենք պետք է այցելեինք մի քանի բժշկի:

Առաջին այցելության ժամանակ, երբ խոսում էի բուժքրոջ հետ, նա հարցրեց, թե ինչպե՞ս էի ես վաստակում: Նրան պատմեցի մեր եկեղեցու և իմ ֆինանսական ընկերության մասին, նաև՝ թե ինչպես ենք օգնում մարդկանց՝ ազատվելու պարտքերից: Դա գրավեց նրա ուշադրությունը: Նա ասաց, որ անախորժության մեջ է, մխրճվել է պարտքերի մեջ և գաղափար չունի, թե ինչպես է գոյատևելու:

Երբ նույն օրն այցելեցինք երկրորդ բժշկին, գրեթե նույն խոսակցությունն ունեցա այնտեղ աշխատող բուժքրոջ հետ: Նրա աչքերը լցվեցին արցունքներով՝ մինչ պատմում էր իր ֆինանսական վիճակից:

Բարեկա՛մս, նրանք միակը չեն: Ահա թե ինչպես է Ամերիկան այսօր ապրում:

Իմ սրտի փափագն է օգնել մարդկանց հասկանալու, որ կա ավելի լավ ապրելակերպ՝ Թագավորության ապրելակերպը:

Երբ Դրենդան ու ես սկսեցինք սովորել Աստծո Թագավորության մասին և ձեռնամուխ եղանք կիրառելու այն, ինչ Աստված սովորեցնում էր մեզ, մեր կյանքն արմատապես փոխվեց: Մենք սկսեցինք տեսնել, թե ինչպես է շնորհքը, որի մասին խոսում էր Պողոսը, դրսևորվում մեր կյանքում:

Մի գիշեր երազ տեսա այն մասին, որ պետք է սկսեմ մեր անձնական գործը, որը կօգնի մարդկանց ազատվել պարտքերից: Մի՞թե սա խենթություն չէ: Նկատի ունեմ՝ մեկը, ով խնդիրներ ուներ ֆինանսական բնագավառում, այժմ ղեկավարելու էր մի ընկերություն, որը ցույց էր տալու մարդկանց, թե ինչպես ազատվեն պարտքերից: Միայն Աստված կարող էր դա անել, այնպես չէ՞:

Գուցե հարցնեք. «Ինչպե՞ս դա եղավ: Ինչպե՞ս հայտնաբերեցիք պարտքերից ազատվելու ճանապարհը, որ կարողանայիք օգնել ուրիշներին՝ ազատվելու իրենց պարտքերից»: Հրաշալի՜ հարց է:

Կարճ ասած՝ Սուրբ Հոգին ցույց տվեց, թե ինչպես կարելի էր դա անել:

Անշուշտ, ես պետք է ձեռք բերեի բնական գիտելիքներ, այնուհետև հանդիպեի մարդկանց, որոնք ինձ կսովորեցնեին, թե ինչպես հիմնեմ իմ ընկերությունը, սակայն Սուրբ Հոգին էր, որ ուղղորդեց մեր առաջընթացը և տվեց այն եզակի մարտավարություններն ու մեթոդները, որոնք գործածեցինք՝ մարդկանց օգնելու համար: Այդ ընկերությունը վերելք ապրեց և միջոց դարձավ ֆինանսական ազատության հասնելու համար:

Ի դեպ, ես գիտեմ, թե ինչ եք մտածում. հավանաբար, օգնության դիմաց մարդկանցից շատ գումարներ էինք վերցնում, քանի որ ընկերության եկամուտների հաշվին էր, որ ազատվեցինք պարտքերից:

Ո՛չ: Ինչպես ասացի, Սուրբ Հոգին տվեց մեզ շատ յուրահատուկ բիզնես-մոդել: Ահա այն.

մենք հաճախորդների հետ աշխատում ենք ԱՆՎՃԱՐ:

Ինչպե՞ս կարող եմ վճար գանձել մեկից, ով արդեն պայքարում է իր հաշիվները փակելու համար: Ո՛չ, ես չեմ կարող դա անել: Աստված տվեց ինձ այլ ճանապարհ՝ իմ ընկերությունը ֆինանսավորելու համար: Ընկերությունում չի եղել և երբեք չի լինի վարձավճար՝ հաճախորդների համար պարտքերից ազատվելու անհատականացված ծրագիր կազմելու համար: Մենք մասնագիտացած ենք այն բանում, որ հաճախորդներին ցույց տանք, թե ինչպես է հնարավոր յոթ տարուց պակաս ժամանակահատվածում ազատվել պարտքերից, այդ թվում՝ տան հիփոթեքից, սովորաբար առանց եկամտի փոփոխության:

Մենք ֆինանսական աջակցություն ենք ստանում ոչ թե մեր հաճախորդներից, այլ տասնյակ ընկերություններից, մատակարարներից և մասնագետներից, որոնց ընտրել ենք՝ հաճախորդներին լուծումներ և վերաֆինանսավորման տարբերակներ տրամադրելու համար: Նրանք աջակցում են մեզ, քանի որ մեր հաճախորդներին պատմում ենք իրենց մասին:

Օրինակ, վերաֆինանսավորման գործընթացում, եթե գիտեմ, որ այսինչ ընկերությունը կարող է իմ հաճախորդի ապահովագրական հաշիվը կիսով չափ կրճատել, ապա նրան ասում եմ, որ դիմի այդ ընկերությանը: Այժմ նա ինքը կարող է խոսել այդ ընկերության հետ և որոշել՝ հետաքրքրվա՞ծ է ընկերության ավելի էժան սակագնով՝ որպես իր վերաֆինանսավորման ծրագրի մաս, թե՞ ոչ:

Այսպիսով՝ հաճախորդի համար ամեն բան անվճար է: Եվ ես համոզված եմ, որ սա գլխավոր գործոնն էր, որ նպաստեց մեր ընկերության հզոր աճին: Ծանոթացե՛ք մեր ընկերությանը forwardfinancialgroup.com կայքում:

Մենք նաև օգնում ենք մարդկանց՝ բացահայտելու, թե ինչպես կարող են, այսպես ասած, ապահով ներդրում կատարել: Դա այն է, երբ կատարում ես ներդրում՝ առանց տնտեսական անկումների ռիսկի, որոնք գողանում են կենսաթոշակային թանկ գումարը:

Այս ամենն ասացի այն նպատակով, որ վերջին 30 տարիներին մենք խոսել ենք հարյուր հազարավոր մարդկանց հետ և տեսել այն խառնաշփոթը, որի մեջ գտնվում է ամերիկացիների մեծ մասը:

Աչքերիս առջև առանձնանում է մի օրինակ, որը լուսաբանում է, թե ինչպես են շատ ամերիկացիներ ապրում:

Մի կին զանգեց և խնդրեց, որ այցելեմ իրեն, քանի որ օգնության կարիք ուներ պարտքերի հարցում: Ես և գործընկերներիցս մեկը հանդիպեցինք նրան, և երբ նա բացատրեց իր իրավիճակը, անկարող էի հավատալ նրա ասածներին: Նա ուներ 32 տարբեր վարկային քարտեր՝ բոլորն էլ ժամկետանց (այո՛, դուք ճիշտ կարդացիք. նա ուներ 32 վարկային քարտ):

Նա հաջողությամբ կառուցել էր իր սեփական բանտը և ինձնից խնդրում էր դուրս գալու բանալին: Մտքումս պտտվում էր այս պարզ պատասխանը. դադարե՛ք վարկային քարտեր գործածելուց: Դա լավ մեկնարկ կլիներ: Այսպիսով՝ նրան ասացի, որ վերջ տա քարտերին, և պնդեցի, որ ապրի իր եկամտով: Այնուհետև հանձնարարեցի կազմել մի ցուցակ, որտեղ պիտի նշեր իր կեցության բոլոր ծախսերը, որպեսզի իմանայի, թե որտեղից սկսեի խորհրդատվությունը: Առաջարկեցի նաև, որ սկսի գործածել վճարային քարտ՝ բանկային քարտի փոխարեն՝ իրավիճակը վատթարացնելուց խուսափելու համար:

Քարտերից հրաժարվելու առաջարկին նա արձագանքեց արցունքներով և տվեց այս ցնցող հարցը. «Ինչպե՞ս եմ կարողանալու կոշիկներ գնել»:

Արդյո՞ք ճիշտ լսեցի: Նա բավականաչափ գումար չուներ ուտելիքի համար, բայց հարցնում էր կոշիկների մասին:

Գուցե մտածեք, որ այդ կինն ինչ-որ շեղումներ ուներ: Նրա ունեցած վարկային քարտերի քանակով՝ այո՛, բայց ֆինանսական բանտում լինելու առումով՝ ո՛չ: Նայե՛ք Ամերիկայի վերջին վիճակագրական տվյալներին.

- Մարդկանց 57%-ը բանկում չունի 1000 դոլար[5]:
- 44%-ը չի կարող փակել 400 դոլարի չնախատեսված հաշիվ[6]:

5 Ռեյ Հանանիա, «Ամերիկացիների 57%-ն ունի ավելի պակաս, քան 1000 դոլար խնայողություն», մարտի 31, 2021, SuburbanChicagoland.com

6 Ջոզեֆ Լոյեր, «Ամերիկացիների 44%-ը չի կարող փակել 400 դոլարի չնախատեսված ծախսը», «Վաշինգտոն քննիչ», մայիսի 19, 2017

- Ամերիկացիների 23%-ը չի կարող փակել ամսական հաշիվները և ամեն ամիս ավելի ու ավելի խորն է ընկղմվում պարտքերի մեջ[7]:

Բարեկա՛մս, ամերիկացիներն այն են, ինչ Աստված ինձ հայտնեց. նրանք ստրուկներ են:

Ահա՛ թե ինչ է անում ստրուկը.

- Նա չի աշխատում իր համար: Չնայած նա աշխատում է և շահույթ ստեղծում, բայց այդ շահույթն ամեն ամիս ուղարկվում է պարտատիրոջը և նրան թողնվում է միայն այնքան, որ ընտանիքը գոյատևի ևս մեկ ամիս:
- Ստրուկներն ապրում են տներում, որոնց սեփականատերն իրենք չեն (նկատի ունեմ՝ նրանք հիփոթեք են վճարում):
- Նրանք վարում են իրենց չպատկանող մեքենաներ, որպեսզի գնան աշխատանքի և վճարեն այն տան համար, որն իրենցը չէ:
- Նրանք հագնում են հագուստ, որ գնել են վարկային քարտով, որպեսզի գնան աշխատանքի, վճարեն այն մեքենայի և տան համար, որոնք իրենցը չեն՝ ավելացրած ուսանողական վարկը, որն արդեն քսան տարի շարունակ մարում են:

Դուք հասկանում եք միտքը:

> *«Հարուստը աղքատներին կտիրի, և փոխ առնողը ծառա կլինի փոխ տվողին»:*
>
> – Առակաց 22.7

Գիտեի՞ք, որ մարդկանց մեծ մասը չի սիրում իր աշխատանքը: Իրականում, ըստ «Գալուպ»-ի հարցման, աշխատողների 85%-ն ատում է իր աշխատանքը[8]:

Այդ դեպքում ինչո՞ւ են նրանք աշխատում այնտեղ, որտեղ աշ-

---

7 Մեգան Լեոնարդ, «Եղի՛ր պարտքերից ազատ», մայիսի 24, 2019

8 Սառա Բուրոս, «Մարդկանց 85%-ն ատում է իր աշխատանքը՝ ըստ «Գալուպ»-ի հարցումների», սեպտեմբերի 22, 2017, returntonow.net

խատում են: Որովհետև նրանք ստրուկներ են, իսկ ստրուկները չունեն ընտրություն:

Այսպիսով՝ կա՞մ արդյոք ստրկությունից դուրս գալու ելք: Այո՛:

Չե՞ք հավատում: Թո՛ւյլ տվեք ցույց տալ:

> *«Այս փուրքի ծառայությունը ոչ թե միայն սուրբերի պակասությունն է լրացնում, այլև շատերի գոհությունը շատացնում է Աստծո համար:*
>
> *Որ այս ծառայության փորձով Աստծուն փառավորեն ձեր՝ Քրիստոսի Ավետարանին հնազանդ դավանության համար և այն առատաձեռնության համար, որ կիսում եք նրանց և ամենի հետ:*
>
> *Եվ ձեզ համար նրանց աղոթքով, նրանց սրտերը կփափագեն ձեզ՝ Աստծո այն անգերազանցելի շնորհքի համար, որ ձեզանում է: Եվ շնորհակալություն Աստծուն Նրա անպատմելի պարգևի համար»:*
>
> – Բ Կորնթացիների 9.12-15, NIV

Կենտրոնանանք այդ պատասխանի վրա. Աստծո շնորհք՝ բարգավաճելու զորություն:

Հաշվի առնենք նաև, որ թշնամին ուզում է, որ դուք մնաք պարտքերի մեջ և երբեք չիմանաք ելքը: Դա է պատճառը, որ ԱՄՆ-ում կա 1.1 *տրիլիոն* ակտիվ վարկային քարտ[9]: Դա է նաև պատճառը, որ ամեն տարի 4-8 միլիարդ վարկային քարտի առաջարկ է ուղարկվում[10]:

Ինչ-որ մեկն ուզում է, որ դուք պարտքերի մեջ լինեք, և պարզապես բանկերն ու առևտրական ձեռնարկությունները չեն, որ խնդրում են ձեզ փորձել իրենց քարտերը:

Սատանան գիտի, որ եթե կարողանա պահել ձեզ պարտքերի մեջ, ապա երբեք չեք կարողանա քայլել ձեր հոգևոր կոչման մեջ՝ ավերածություններ պատճառելով նրա թագավորությանը:

---

9 Ռեյնոր դը Բեստ, «Վարկային և վճարային քարտերի թիվը Միացյալ Նահանգներում 2012-2018թթ.», դեկտեմբերի 16, 2020, statisa.com/statistics

10 Բոբ Բրայն, նոյեմբերի 24, 2015, businessinsider.com

Թո՛ւյլ տվեք մի պահ ամփոփել: Այս գիրքն առատաձեռն լինելու մասին է, ճի՞շտ է: Այո՛ և ո՛չ: Այո՛, քիչ հետո մենք կխոսենք տալու և առատաձեռն լինելու բոլոր օգուտների մասին: Բայց պատասխանն ինքնին տալը չէ: Դուք պետք է ունենաք գիտելիք այն մասին, թե ինչպես միանաք շնորհքին՝ Աստծո զորությանը:

Կրկին հաստատենք. բանալին ինքնին տալը չէ՝ որպես բանաձև: Այն մասերից մեկն է, բայց ձեզ և ինձ անհրաժեշտ է բարգավաճելու այն գերբնական, արտասովոր զորությունը, որ կոչվում է շնորհք:

Դաստինն ու Քենդելը բացահայտեցին, թե ինչի մասին եմ ես խոսում: Այս երիտասարդ զույգն իրականում չէր հասկանում, որ ֆինանսական բնագավառում Աստծո շնորհքի կարիքն ուներ, մինչև որ հայտնվեց խառնաշփոթի մեջ: Նրանք դիտարկել էին ձեռնարկատիրական մի նոր գաղափար և որոշել էին գործարկել այն: Արժեքն էր 150.000 դոլար, որն ամբողջությամբ պարտքով էին վերցրել:

Նույն ամսին, երբ գնեցին ձեռնարկությունը, Հարկային տեսչությունը ստուգումներ անցկացրեց և 53.000 դոլարի հարկային պարտքի հաշիվ ներկայացրեց: Դաստինի խոսքով՝ նրանց պարտքը կազմում էր 200.000 դոլարից ավելի, և նրանք որևէ ելք չունեին՝ հատկապես այն դեպքում, երբ արդեն ֆինանսական նեղ վիճակում էին՝ նախքան այդ ձեռնարկությունը գնելը:

Նրանք նոր էին պարտքով գումար վերցրել իրենց վերջին երեխայի հիվանդանոցային ծախսերը հոգալու համար և վճարումներ էին կատարում դրա դիմաց: Աուդիտը հասցրել էր նրանց ֆինանսական ծայրահեղ վիճակի, և Դաստինը փորձում էր տարբերակներ գտնել:

Փնտրտուքներից հետո նա վերջապես գտավ 30.000 դոլարի վարկային գծի առաջարկ և այս գաղափարը հայտնեց կնոջը՝ նրա կարծիքն իմանալու համար: Բայց նա չգիտեր, որ Քենդելն ուսումնասիրում էր իմ՝ *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Հանգստի զորությունը»* գիրքը և խորհում էր դրա շուրջ, որում նույնպես խոսվում է Աստծո շնորհքի մեջ մտնելու մասին:

Ուստի, երբ Դաստինը կիսեց նրա հետ վարկի գաղափարը,

Քենդելը վիատվեց. նա հուսով էր, որ ամուսինը կդիմի Աստծուն՝ պարտքեր վերցնելու փոխարեն: Նա որոշեց խոսել նրա հետ և քաջալերեց վստահել Աստծուն: Բարեբախտաբար, Դաստինն ընդունեց կնոջ իմաստությունը:

Երբ նրանք աղոթեցին, լսեցին, թե ինչպես Սուրբ Հոգին ասաց, որ սերմ ցանեն: Այդ ժամանակ նրանք չունեին այն գումարը, որ Աստված ցույց տվեց նրանց, ուստի աշխատեցին հաջորդ 28 օրերին, որպեսզի վաստակեին այնքան, որ կարողանային ցանել Աստծո ցույց տված գումարը:

Արդյո՞ւնքը: Նրանց գործը վերելք ապրեց:

Հաջորդ տարի նրանք ի վիճակի եղան մարելու 175.000 դոլարի պարտքը, և Դաստինն ասաց, որ այդ տարի ՏԱՍՆԵՐԿՈՒ անգամ ավելի շատ գումար է վաստակել, քան վաստակել էր ամբողջ կյանքում:

Քենդելն ու Դաստինը հայտնաբերեցին, որ Թագավորությունը գործում է ամեն ժամանակ:

Ո՞րն էր նրանց պատասխանը. Թագավորությունը և Աստծո շնորհքը:

Ո՞րն է ձեր պատասխանը. Թագավորությունը և Աստծո շնորհքը:

ԳԼՈՒԽ 2

ՊԱՏԱՍԽԱՆԸ. ՇՆՈՐՀՔ

Նախորդ գլխում խոսեցինք այն մասին, թե ինչպես է առատաձեռնությունն ազդում մարդկանց վրա հոգևորապես. ինչպես է այն փափկեցնում նրանց սիրտը և նրանց մեջ երախտագիտության զգացում առաջացնում ձեր և Աստծո հանդեպ: Պողոսի խոսքերից հասկացանք, որ առատաձեռն լինելու կարողությունը մեր կյանքում Աստծո շնորհքի արդյունք է:

> *«Եվ ձեզ համար նրանց աղոթքով նրանց սրտերը կփափագեն ձեզ՝ Աստծո այն անգերազանցելի շնորհքի համար, որ ձեզանում է: Եվ շնորհակալություն Աստծուն Նրա անպատմելի պարգևի համար»:*
>
> – Բ Կորնթացիների 9.14,15

Մենք խոսեցինք այն մասին, որ Պողոսը հատուկ շեշտադրում արեց *«անգերազանցելի»* բառի վրա, երբ նկարագրում էր այն շնորհքը, որ Աստված տվել է մեզ՝ բարգավաճելու համար: Մենք պարզեցինք, որ «շնորհք» նշանակում է ինչ-որ բան իրականացնելու արտասովոր զորություն: Պողոսը Աստծո շնորհքի այս լիազորությունն անվանում է անպատմելի պարգև: Կարծում եմ, յուրաքանչյուրը կխոստովանի, որ եթե Աստված պատրաստվում է օգնել իրեն բարգավաճելու, ապա դա անհավանական առավելություն կլինի:

Որպեսզի օգնեմ ձեզ հասկանալու այն բանի մեծությունը, ինչ Աստված ցանկանում է անել ձեր կյանքում, և ըմբռնելու այն ահռելի զորությունը, որ հասանելի է ձեզ, ամրապնդենք մի քանի

սուրբգրային խոսքեր և սկսենք կարդալ Բ Կորնթացիների 9-րդ գլխի 6-րդ խոսքից.

> *«Որովհետև սա եմ ասում, թե՝ խնայելով սերմողը, խնայելով էլ կինձի, և առատությամբ սերմողը, առատությամբ էլ կինձի: Ամեն մեկն՝ ինչպես որ սրտի հոժարություն կա, ոչ թե տրտմությունով կամ հարկադրությունով. որովհետև Աստված սիրում է ուրախ տվողին: Բայց Աստված կարող է բոլոր շնորհքներն ավելացնել ձեզանում. որ ամեն բանի մեջ, ամեն ժամանակ, ամեն բավականություն ունենալով՝ ամեն բարի գործի համար ավելանաք: Ինչպես գրված է. «Փռեց՝ աղքատներին տվեց. Նրա արդարությունը մնում է հավիտյան»:*
>
> *Բայց Նա, որ սերմ ցանողին սերմ է պարգևում, և հաց՝ կերակուրի համար, Նա կպարգևի և կշատացնի ձեր սերմունքը և կաճեցնի ձեր արդարության պտուղը: Դուք ամեն կերպ հարստացած կլինեք, որպեսզի ամեն կերպ առատաձեռն լինեք, ինչը մեզնով գոհություն է բերում Աստծուն»:*
>
> – Բ Կորնթացիների 9.6-11, EHV

Ահա թե որտեղ է ամեն բան իսկապես հետաքրքրական դառնում:

Մենք տեսնում ենք, որ նույն *«շնորհք»* բառն օգտագործվում է այստեղ՝ միայն այն բացառությամբ, որ այս հատվածում Պողոսն ավելացնում է *«ամեն»* դերանունը, որպեսզի ընթերցողին օգնի հասկանալու, որ Աստծո ԱՄԲՈՂՋ զորությունը այդ «շնորհք» բառի հետևում է: Պողոսը հստակ խոսում է տալու և ստանալու մասին ու հաստատում, որ երբ ցանում եք, Աստծո ամբողջ շնորհքը հասանելի է՝ հունձք ստանալու համար:

Աստծո ամբողջ շնորհքը ենթադրում է, որ Աստծո ամբողջ զորությունը, իմաստությունը, բարեհաճությունը և գիտությունն այժմ հասանելի են ձեզ՝ ցանածը հնձելու համար: Չգիտեմ՝ դուք ինչ եք զգում, բայց դա քաջալերում է ինձ:

Սակայն, սա չի նշանակում, որ հունձքն ինքնըստինքյան տեղի կունենա:

Եթե մի շատ հարուստ հողագործ ասեր, որ ձեզ փոխ է տալու իր բոլոր՝ միլիոնավոր դոլարներ արժեցող գյուղատնտեսական սարքավորումները՝ տնկելու և բերք հավաքելու համար, բայց դուք ոչինչ չիմանայիք հողագործության մասին, ապա դա ձեզ որևէ օգուտ չէր տա:

Աստված Իր ամբողջ զորությունը հասանելի է դարձրել մեզ, բայց, միևնույն է, մենք մեր մասն ունենք անելու, ինչպես հողագործը, որը գիտի, որ հողագործությունն ավելին է, քան պարզապես հողի մեջ սերմ ցանելը:

Այս պահին, այն ամենը, ինչ ուզում եմ՝ հասկանաք, սա է. Աստծո ամբողջ կարողությունը հասանելի է ձեզ, որ ցանելուց հետո ոչ միայն հնձեք, այլև իմանաք, թե երբ և որտեղ ցանեք: Եվ դրա շնորհիվ դուք ունեք անսահմանափակ ֆինանսական ապագա:

Այժմ մեկ քայլ առաջ պետք է գնանք և խոսենք այս հատվածում հստակ ներկայացված այն հայտնության մասին, թե որն է փող ունենալու նպատակը:

> *«Բայց Աստված կարող է բոլոր շնորհքներն ավելացնել ձեզանում. որ ամեն բանի մեջ, ամեն ժամանակ, ամեն բավականություն ունենալով՝ ամեն բարի գործի համար ավելանաք»:*

ԴՈՒՔ ՀՈԳՈՒՄ ԵՔ ԱՍՏԾՈ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ, ՆԱ ԷԼ ԿՀՈԳԱ ՁԵՐ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ:

Մենք տեսնում ենք, որ առաջին բանը, որ Աստված նշում է, սա է. ամեն բավականություն ունենալով: Ուշադրություն դարձրեք, որ խոսքը միայն փողի մասին չէ: Նա ասում է՝ *ամեն* բանում և *ամեն* ժամանակ:

Ես մշտապես այսպես եմ ասում. «Դուք հոգում եք Աստծո գործի համար, Նա էլ կհոգա ձեր գործի համար»: Այսպիսով, «ամեն բանում և ամեն ժամանակ» արտահայտությունն ինձ համար նշանակում է, որ դուք երբեք կարոտություն չեք ունենա՝ անկախ նրանից, թե ինչ է կատարվում տնտեսությունում: Երբ Աստված ասում է, որ ձեր կարիքները կլրացվեն, Նա չի խոսում ծայրը ծայրին հասցնելու մասին:

> *«Եվ դու շատ ազգերի փոխ կտաս, բայց դու փոխ չես առնի: Եվ Եհովան գլուխ կանի քեզ, և ոչ թե ագի: Դու միշտ բարձրում կլինես և ցածում չես լինի, եթե քո Եհովա Աստծո պատվիրաններին լսես, որոնք Ես այսօր քեզ պատվիրում եմ, որ պահես և կատարես»:*
>
> – Երկրորդ Օրինաց 28.12բ,13

Երբ Աստված խոսում է ձեր կարիքները լրացված լինելու մասին, Նա խոսում է առանց պարտքի լիակատար ֆինանսական ազատության մեջ քայլելու, ձեր առաջադրանքը ջերմեռանդությամբ իրականացնելու և երկրի բարիքն ուտելու մասին: Դա նաև նշանակում է լինել քաջառողջ և ունենալ կատարյալ խաղաղություն:

Երկրորդ՝ ձեր կարիքները լրացված լինելուց հետո, դուք ոչ թե պարզապես գոյատևում եք, այլ՝ բարգավաճում.

> *«Դուք ամեն կերպ հարստացած կլինեք, որպեսզի <u>ամեն կերպ առատաձեռն լինեք</u>»:*

Վերջնարդյունքը ֆինանսական կարողություն ունենալն է՝ առատաձեռն լինելու, տալու, մարդկանց աջակցելու և երկրի վրա Աստծո առաջադրանքների իրականացմանն օժանդակելու համար:

Աստծո նպատակն է՝ Իր սիրտը հայտնի դարձնել մարդկանց և նրանց սրտերն ուղղել Իրեն:

Ինչպես մշտապես ասում եմ. «Աստված ներգրավված է մարդկանց հետ աշխատանքում»:

Թո՛ւյլ տվեք անդրադառնալ մի սխալ ենթադրության, որը լսում եմ շատ հաճախ:

Վերջերս խոսում էի մի շատ հարուստ անձնավորության հետ, որն ասաց. «Ինձ ավել փող հարկավոր չէ. ես շատ ունեմ»:

Ես գիտեմ, թե ինչ էր նա փորձում ասել. այն, որ ամեն բանով ապահովված է և անձամբ ավելի շատ փողի կարիք չունի: Բայց փաստն այն է, որ նրան անհրաժեշտ են լրացուցիչ գումարներ, այն էլ՝ շատ:

Եթե միայն նայենք նրան, թե ինչ կարող է փողն անել *անձամբ* մեզ համար, այդ դեպքում ենթադրում եմ, որ ավելի շատ փող ունենալու շարժառիթն ինչ-որ տեղ կթուլանա: Բայց եթե հասկանաք, որ Աստծո սրտի փափագն է հասնել միլիոնավոր մարդկանց, որոնք դեռ պետք է բացահայտեն այն հրաշալի կյանքը, որ Թագավորության մեջ է, սակայն այս պահին դեռևս գտնվում են «դժոխք» կոչվող իրական վայր տանող ճանապարհին, ապա կգիտակցեք, որ Աստծուն ավելի շատ ֆինանսներ են անհրաժեշտ:

Թո՛ւյլ տվեք կրկնել. **«ԱՍՏԾՈՒՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ»:**

Դեռևս շատ աշխատանք կա անելու:

> *«Բայց Աստված կարող է բոլոր շնորհքներն ավելացնել ձեզանում. որ ամեն բանի մեջ, ամեն ժամանակ, ամեն բավականություն ունենալով՝ <u>ամեն բարի գործի համար ավելանաք»:</u>*

Դուք կարող եք զբաղվել ամեն բարի գործով: Ամեն բարի գործը այն գործն է, որ կատարվում է Թագավորի անունից: Իրականում, դուք շատ առանձնահատուկ աշխատանք ունեք անելու՝ համաձայն Եփեսացիների 4.7,11,12ա խոսքերի.

> *«Բայց ամեն մեկիս տրված է շնորհքը՝ Քրիստոսի պարգևի չափի պես: Եվ Նա մի քանիսին տվեց առաքյալներ լինելու, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և վարդապետներ՝ սուրբերի կատարելության համար, պաշտոնի (ծառայության) գործի համար»:*
>
> – Եփեսացիների 4.7,11,12ա

Հասկանում եք, մարդկանց մեծ մասը ձգտում է լինել ֆինանսապես ազատ, որովհետև հոգնել է առնետավազքից: Նրանք խաղաղություն են փնտրում: Քանի որ մեծ մասը չի սիրում իր աշխատանքը, ուստի փնտրում է այն ազատությունը, որը հնարավոր է ձեռք բերել փող ունենալու դեպքում: Մարդիկ փնտրում են

ազատություն՝ անելու այն, ինչ *ցանկանում* են, այլ ոչ թե այն, ինչ *սրիպված* են: Նրանք ուզում են զբաղվել իրենց սիրած գործով և գտնել այն նպատակը, որ նախասահմանված է իրենց կյանքի համար:

Ահա մի պնդում, որը խելագարության է հասցնում կրոնավոր մարդկանց.

«Դուք ամեն կերպ հարստացած կլինեք»:

Այո՛, այդպես է ասվում: Դուք հարստացած կլինեք:

«Հարուստ» բառն, անշուշտ, սուբյեկտիվ է ընկալվում և մեծ մասամբ սխալ է հասկացվում մեր մշակույթում: Իրականում մենք չենք կարող ասել, որ նա, ով ունի մեկ միլիարդ դոլար, ավելի հարուստ է նրանից, ով ունի հարյուր հազար դոլար: Ո՛չ, «հարուստ» լինելը տարբեր բան է նշանակում տարբեր մարդկանց համար: Սակայն, անտարակույս, այն ենթադրում է, որ մեր բոլոր կարիքները բավարարված են, որ մենք ապրում ենք պարտքերից ազատ և վայելում ենք երկրի բարիքը:

«Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք»:

– Եսայի 1.19

Բայց հարուստ լինելը չի վերաբերում միայն փող ունենալուն: Այն նաև թոռնիկներիդ հետ խաղալն է, կնոջդ ձեռքը բռնելը և կյանքում բազում այլ հիասքանչ բաներ անելը: Դրենդան ու ես ունենք հինգ հրաշալի զավակ, որոնք սիրում են Աստծուն և այս կամ այն կերպ ներգրավված են ծառայության մեջ: Մենք բոլորս սերտ կապված ենք, սիրում ենք ժամանակ անցկացնել միմյանց հետ: Ինձ համար դա հարուստ լինել է:

Հասկանո՞ւմ եք, կրոնավոր մարդիկ մտածում են, որ շատ փող ունենալն ագահություն է: Բայց դուք չեք կարող չափազանց շատ ունենալ, եթե Աստծո հետ ներգրավված եք այն աշխատանքում, որ Նա իրականացնում է մարդկանց հետ: Մշտապես կան նոր առաջադրանքներ, որ պետք է կատարել, և նոր տարածքներ, որ պետք է գրավել:

Այսպիսով՝ Աստված ուզում է, որ դուք ունենաք առատ միջոց-

ԱՅՍՊԻՍՈՎ՝ ԱՍՏՎԱԾ ՈՒԶՈՒՄ Է, ՈՐ ԴՈՒՔ ՈՒՆԵՆԱՔ ԱՌԱՏ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ԵՐԿՐԻ ՎՐԱ ՆՐԱ ԳՈՐԾԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ներ՝ երկրի վրա Նրա գործը կատարելու համար:

Աստված ցանկանում է, որ առատաձեռն լինեք Իր համար՝ օգնելով մարդկանց և ֆինանսավորելով Նրա առաջադրանքները: Եթե պատրաստվում եք առատաձեռն լինել ամեն առիթով, ուրեմն պետք է փող ունենաք:

Նկատի ունեմ, որ ամեն առիթը կարող է լինել *ամեն օր* կամ *օրական բազմաթիվ անգամներ:* Եկե՛ք ազնիվ լինենք. դա անելու համար, չէիք ապրի աշխատավարձից՝ աշխատավարձ. դուք կունենայիք ավելին, քան՝ որքան հարկավոր է ձեր հաշիվները փակելու համար, դուք կունենայիք շա՛ատ ավելին: Կարծում եմ՝ բոլորը կհամաձայնեն ինձ հետ:

Բայց տեսնենք, թե ինչպես է գաղափարը կյանքի կոչվում, երբ խոսում ենք առատաձեռն լինելու կամ, ընդհանրապես, տալու մասին:

Դուք պետք է լուծեք վախի հարցը, երբ տալիս եք:

Ես չասացի, որ դուք պետք է *հաշտվեք* վախի հետ: Ես ասացի, որ դուք պետք է ԼՈՒԾԵՔ վախի հարցը, երբ տալիս եք: Եվ վախի հարցը լուծելու լավագույն միջոցը ճշմարտությունն իմանալն է:

Այսպիսով՝ ո՞րն է տալու վախը: Պարզ ասած՝ այն, որ բավականաչափ չենք ունենա մեզ համար, ճի՞շտ է:

«Այդ գումարն ինձ անհրաժեշտ է»,- գուցե մտածում եք դուք: Իհարկե, այն ձեզ անհրաժեշտ է: Բայց Աստծուն նույնպես անհրաժեշտ է: Եվ Աստված չի պատրաստվում խնդրել, որ ձեր գումարն Իրեն տաք օգտագործման համար՝ առանց այն վերադարձնելու, այսպես ասած, առանց ձեր ներդրման դիմաց հատուցելու խոստման, այդպես չէ՞: Կարծում եմ՝ Նա շատ հստակ ցույց է տալիս դա Իր Խոսքում.

> *«Տվե՛ք, և կտրվի ձեզ. լավ չափով, թափ տրված, շարժված, լիփ-լիքը կտան ձեր գոգը»:*
>
> – Ղուկաս 6.38ա

Աստված ավելի շատ ժամանակ է հատկացնում Իր Թագավորությանն աջակցելու կարևորությունը բացատրելու համար, քան սովորեցնում է, թե ինչ պետք է անենք: Նա պարզապես մեկ բառ է ասում. *«Տվե՛ք»,* բայց 23 բառ է օգտագործում՝ *օգուտը* բացատրելու համար: Կարծում եմ՝ ես կստորագրեի ցանկացած պայմանագիր, որն այդպես է կազմված:

Իմացե՛ք, որ Աստված սաստիկ շահագրգռված է ձեր բարգավաճմամբ: Մտածե՛ք այս մասին. որտեղի՞ց է Աստված ձեռք բերելու այն գումարները, որոնք անհրաժեշտ են Իր ծրագրերը ֆինանսավորելու համար:

Բնականաբար, այդ գումարները հոսելու են ձեզնից, ինձնից և մյուս հավատացյալներից: Սատանային ծառայող մարդիկ չեն ֆինանսավորելու Աստծո առաջադրանքները:

Ցավալին այն է, որ հավատացյալների մեծ մասն ասում է, որ սխալ է հավատալ Աստծուն՝ տվածիդ փոխհատուցման համար: Նրանք կարծում են, որ Աստծուն տալը և դրա դիմաց որևէ բան ակնկալելը հիմնված են ագահության վրա և թուլացնում են Աստծուն մաքրությամբ ծառայելու շարժառիթը:

Մի՞թե կարծում եք, թե հողագործը սխալվում է, երբ հավատում է, որ իր ներդրումը եկամուտ կբերի իրեն և իր ընտանիքին: Նա պարզապես օգտագործում է այն օրենքները, որ Աստված տվել է իրեն:

Աստված հիանում է, երբ տեսնում է մեզ բարգավաճելիս: Նա մեզ տվել է ցանելու և մեր օգտին հնձելու օրենքը: Սատանան ժամանակների սկզբից խաբել է եկեղեցուն՝ տալու և փողի հարցում: Որոշ հարանվանություններ հպարտանում են աղքատության իրենց երդումներով՝ չգիտակցելով, որ ընկնում են ուղիղ սատանայի ստերի ծուղակը: Իր ծառայության ընթացքում Հիսուսը բազմիցս ստիպված եղավ բախվել այդ վերաբերմունքին: Իրականում, Նա պատմեց իր հայտնի առակներից մեկը՝ «Բարի սամարացին», որը վերաբերում էր հենց այս խնդրին:

«Եվ ահա մեկ օրինական վեր կացավ, Նրան փորձում էր՝ ասելով. «Վարդապե՛տ, ի՞նչ գործեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ»:

Նա էլ ասաց նրան. «Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես կարդում»:

Նա էլ պատասխանեց և ասաց. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտից, քո ամբողջ անձից, քո ամբողջ զորությունից և քո ամբողջ մտքից, և քո ընկերոջը՝ քո անձի պես»:

Եվ նրան ասաց. «Ուղիղ պատասխանեցիր. այդ արա և կապրես»:

Իսկ նա, որովհետև կամենում էր իր անձն արդարացնել, Հիսուսին ասաց. «Եվ իմ ընկերն ո՞վ է»:

Հիսուսն էլ պատասխանեց և ասաց. «Մի մարդ Երուսաղեմից իջնում էր Երիքով և ավազակների ձեռքն ընկավ, նրանք էլ մերկացրին նրան և խոցոտեցին, կիսամահ թողեցին-գնացին: Եվ դիպվածով մի քահանա էր իջնում նույն ճանապարհով և նրան տեսավ՝ անցավ: Նույնպես էլ մի ղևտացի այն տեղը հասավ, եկավ և տեսավ ու անցավ: Մի սամարացի էլ, որ ճանապարհորդում էր, եկավ այնտեղ և նրան տեսնելով՝ գթաց: Եվ մոտ եկավ, նրա խոցերը փաթաթեց՝ վրան ձեթ և գինի ածելով: Եվ իր անասունի վրա դրած տարավ մի իջևան և նրան հոգ տարավ: Եվ հետևյալ օրը, երբ որ այն տեղից դուրս էր գնում, երկու դահեկան հանեց և իջևանի տիրոջը տվեց և ասաց նրան. «Դրան հո՛գ տար, և ինչ որ ավելի ծախս անես, ես մյուս անգամ եր դառնալիս կվճարեմ քեզ»»:

Հիմա այն երեքից ո՞րն է երևում քեզ, թե ընկեր է եղել այն ավազակների ձեռքն ընկած մարդուն:

Նա էլ ասաց. «Նա, որ ողորմություն արեց նրան»:

Ապա Հիսուսը նրան ասաց. «Գնա՛, դու էլ այնպես արա»»:

– Ղուկաս 10.25-37

Կարծում եմ՝ բոլորս լսել ենք այս պատմությունը այն դասի հետ, թե ինչ կաներ Աստված, եթե քայլեր փողոցով և տեսներ այս մարդուն: Տերն այդ ծեծված մարդուն մահամերձ չէր թողնի ճանապարհին:

Կիրակնօրյա դպրոցների մեծ մասը այս պատմությունից սովորեցնում է, որ պետք է լինել լավ ընկեր, հոգ տանել մարդկանց համար: Մարդկանց հանդեպ հոգատար լինելն Աստծո սրտի էությունն է, և ես լիովին համաձայն եմ այդ գնահատման հետ: Սակայն, այս պատմության ասելիքը ավելին է, ինչը հաճախ աչքաթող է արվում:

Որպեսզի իսկապես հասկանաք օրինականին ուղղված Հիսուսի հանդիմանությունը, պետք է հասկանաք այդ ժամանակվա հասարակական մթնոլորտը: Հրեաներն արհամարհում էին սամարացիներին և նրանց անմաքուր ու ոչ հոգևոր էին համարում: Այդկերպ, նրանք իրենց ավելի սուրբ և արդար էին տեսնում Աստծո աչքերում՝ այն աստիճան, որ նույնիսկ չէին հաղորդակցվում սամարացիների հետ: Այնպես որ, Հիսուսի պատմությունն, ըստ էության, ապտակ էր այս օրինականին. հանդիմանություն՝ նրա կրոնապաշտ վերաբերմունքին: Կարծում եմ՝ բոլորս հասկանում ենք սա:

Բայց ես երբեք չեմ լսել, իսկապես չեմ լսել, որ որևէ կիրակնօրյա դպրոցում սովորեցնեն այս պատմության այն մասը, որը վերաբերում է երկու դահեկանին: Ինչո՞ւ Հիսուսը խոսեց երկու դահեկանի մասին, եթե Նա արդեն հայտնել էր Իր կարծիքը սամարացու հանդեպ օրինականի սխալ սրտի վերաբերյալ: Եկե՛ք պարզենք.

> *«Եվ իր անասունի վրա դրած տարավ նրան մի իջևան և նրան հոգ տարավ: Եվ հետևյալ օրը, երբ որ այն տեղից դուրս էր գնում, երկու դահեկան հանեց և իջևանի տիրոջը տվեց և ասաց նրան. «Դրան հո՛գ տար, և ինչ որ ավելի ծախս անես, ես մյուս անգամ եր դառնալիս կվճարեմ քեզ»»:*
>
> – Ղուկաս 10.34ա,35

Մենք կարող ենք նմանություն տեսնել այս պատմության և այն ամենի միջև, ինչ Հիսուսն անելու էր մեզ համար: Մենք տեսնում ենք, որ մարդկությունը ծեծված և խոցոտված է սատանայի՝ գողի կողմից: Մենք հասկանում ենք, որ յուղը և գինին մարգարեական ձևով ներկայացնում են Սուրբ Հոգուն և այն արյան ուխտը, որ Հիսուսը կապելու է նրանց հետ, ովքեր կգան Իր մոտ: Եվ պատմության մեջ տեսնում ենք, որ յուղն ու գինին օգտագործելուց հետո սամարացին մեկ քայլ առաջ է գնում և վիրավորին տանում իջևանատուն՝ նրան բուժելու նպատակով: Նա գիտի, որ առողջանալու համար այդ մարդուն ժամանակ է հարկավոր, ուստի նրան տեղափոխում է անվտանգ վայր, ընդ որում՝ այդ ամենն անելով իր հաշվին:

Ես հավատում եմ, որ իջևանատունը ներկայացնում է տեղական եկեղեցին: Այստեղ է Հիսուսը բերում այն մարդկանց, որոնք խոցոտված և մահամերձ ընկած են կյանքի ճանապարհին: Նրանք վերստին ծնված են, արյան ուխտի միջոցով մեղքից սրբված և Սուրբ Հոգով կենդանացած, սակայն դեռևս կրում են երկրի անեծքի համակարգի հետքն ու ցավը: Նրանց ժամանակ է հարկավոր՝ բժշկվելու և լիովին նոր ապրելակերպ ունենալու համար: Հիսուսը նրանց տեղավորում է տեղական եկեղեցում՝ իջևանատիրոջ՝ հովվի հսկողության ներքո, որպեսզի վերջինս հետևի նրանց առաջընթացին:

Բայց, դժբախտաբար, նույն վերաբերմունքը, որն ուներ օրինականը, տեսնում ենք եկեղեցում: Մարդիկ չեն ցանկանում օգնության ձեռք մեկնել և ներգրավվել իջևանատան աշխատանքում: Ինչպես վիրավոր մարդու կողքով անցնողները, նրանք նույնպես համարում են, որ դա իրենց խնդիրը չէ: Ինչո՞ւ ներգրավվեն: Ժամանակ և գումար արժենալուց բացի՝ ի՞նչ կարող է դա իրենց տալ:

Այս վերաբերմունքի պատճառով հովիվները շատ ժամանակ են անցկացնում՝ աղաչելով մարդկանց օգնել մանկասենյակում կամ ծառայել խմբակում: Բայց կարծես մարդիկ արդեն զբաղված են իրենց գործերով և դժվարանում են պարտավորություն ստանձնել: Կրոնն ինքնին ոչ մի շարժառիթ չի առաջարկում,

միայն պարտականություն և օրենք: Կրոնը փորձում է ստիպել մարդկանց, որ օգնեն՝ առաջ բերելով հետևյալ պնդումը. «Դու պարտական ես Աստծուն և պետք է հոգ տանես այս կամ այն բանի համար: Վերջին հաշվով, տե՛ս, թե ինչ է Աստված արել քեզ համար»: Ես համաձայն եմ, որ մենք մշտապես պետք է ունենանք հոժարակամ և երախտապարտ սիրտ Աստծո հանդեպ և ցանկանանք օգնել ուրիշներին, բայց Աստված չի գործում «դու պարտական ես Ինձ» համակարգի միջոցով: Նա ասում է. «Ես քեզ թողնում եմ երկու մետաղադրամ՝ ծախսերը հոգալու համար, և երբ վերադառնամ, կվճարեմ ԱՅՆՔԱՆ, ՈՐՔԱՆ դա կարժենա քեզ»:

Կրկին, կրոնական մտածելակերպն այս պնդումը կմեկնաբանի այսպես. երբ գնանք Երկինք, Հիսուսը վարձահատույց կլինի մեզ այն աշխատանքի դիմաց, որ կատարել ենք այստեղ՝ երկրի վրա, Իր Թագավորության համար: Ո՛չ, երբ Հիսուսը պատմում էր այս պատմությունը, Նա վկայակոչում էր այն ժամանակը, երբ գործարարը վերադարձի ճանապարհին կրկին կանցներ իջևանատան մոտով: Հիսուսը խոսում էր իջևանատիրոջը ժամանակին տրվող ֆինանսական օգնության մասին: Բայց մարդիկ այժմ կասեն. «Հրաշալի՜ է, Աստված պատրաստվում է փակել իջևանատան ծախսերը՝ միաժամանակ հոգ տանելով այս անձնավորության համար, բայց ես նույնպես ծախսեր ունեմ: Ես չեմ կարող ժամանակ կամ գումար հատկացնել՝ ներգրավվելու համար»: Ներգրավվելու նպատակով ծախս անելու և դրա դիմաց փոխհատուցում ստանալու մտածելակերպը չի խթանում շատերին: Անշուշտ, այն օգնում է, բայց չի հայտնում ամբողջ պատմությունը այն սիրո մասին, որ Աստված տածում է նրանց հանդեպ, ովքեր իսկապես ներգրավվում են Թագավորության գործի մեջ:

Այո՛, ես գիտեմ, թե ինչ կասեք. «Մենք պետք է օգնենք իջևանատանը՝ պարզապես Աստծո հանդեպ սիրուց մղված»: Այո՛, դուք կարող եք դա անել ձեր հովվի հանդեպ հավատարմությունից և Աստծո հանդեպ սիրուց ու պարտավորությունից մղված, և երբեմն այդպես էլ պահանջվում է… Բայց Աստված ուզում է, որ դուք *խանդավառվեք* Նրա հետ «իջևանատանը աշխատելու» համար:

Եվ կարևորը հենց դա է. մենք չենք աշխատում Աստծո ՀԱՄԱՐ,

մենք աշխատում ենք Աստծո ՀԵՏ: Ինքը՝ Աստված, Պողոսի միջոցով ասում է.

> *«Ո՞վ է, որ երբևէ իր պաշարով զինվորություն անի. ո՞վ է, որ այգի տնկի և նրա պտղից չուտի. ո՞վ է, որ հոտ արածեցնի և հոտի կաթից չուտի: Մի՞թե ես այս բաները մարդու կերպով եմ ասում, կամ՝ չէ՞ որ օրենքն էլ է ասում այս բաները: Որովհետև Մովսեսի օրենքում գրված է. «Կալի մեջ աշխատող եզան դունչը մի՛ կապիր»: Մի՞թե Աստված եզների համար էր հոգս անում: Կամ՝ չէ՞ որ մանավանդ մեզ համար է ասում. որովհետև մեզ համար գրվեց, որ հերկողը պետք է հույսով հերկի, և կալսողն իր հույսը (բերքը) վայելելու հույսով կալսի»:*
>
> – Ա Կորնթացիների 9.7-10

Աստված չի ցանկանում, որ ծառայեք Իրեն վախից կամ պարտականությունից դրդված:

Ուշադրություն դարձրեք, թե ինչ Նա ասաց. *«Հերկողը պետք է հույսով հերկի, և կալսողն իր հույսը (բերքը) վայելելու հույսով կալսի»:* Աստված պարզապես չի հոգում այն բերքի համար, որը ձեզ տրված առաջադրանքի արդյունք է: Նա նաև հոգում է նրանց համար, ովքեր աշխատում են Իր կողքին, և ցանկանում է, որ նրանք էլ Իր նման մասնակից դառնան բերքի ուրախությանը:

Հիսուսն այս պատմության համար ընտրեց իջևանատիրոջ կերպարը մի շատ կարևոր պատճառով: Մենք հասկանում ենք, որ իջևանատերը ձեռնարկատիրական գործունեություն է ծավալում: Նրա օրական ծախսերը ներառում են վերադիր ծախսերը և աշխատակազմի աշխատավարձը: Չնայած բոլոր ծախսերին, որոնք անհրաժեշտ են իջևանատունն աշխատեցնելու համար՝ նա նաև շահույթ է ստանում: Այո՛, *շահույթ:*

Ամեն անգամ, երբ իջևանատերը գիշերակացի համար իր հյուրից վճար է գանձում, նա շահույթ է ստանում: Այս պատճառով, իջևանատերը բոլորովին այլ հեռանկար ունի՝ կապված իր մոտ բերված վիրավոր մարդու հետ: Նրանից ոչ մի գրոշ չի պահանջվում վիրավորին հոգ տանելու համար, քանի որ ճանապարհորդը

խոստացել է հոգալ նրա ծախսերը: Բայց իջևանատերը գիտի մի փաստ, որը թույլ է տալիս նրան, առանց դժկամության, օգնել այս մարդուն: Իրականում, վերջինս նրա համար գրեթե գլխապտույտ առաջացնող հնարավորություն է:

Իջևանատերը հասկանում է, որ ամեն գիշեր, երբ այդ մարդը մնա այդտեղ, ինքը շահույթ կստանա, և նրան հիացրել է ճամփորդող գործարարի բաց չեկային գրքույկը: Ես կարող եմ պատկերացնել իջևանատիրոջ խոսակցությունը ճամփորդող գործարարի հետ, երբ վերջինս պատրաստվում է հեռանալ. «Հեյ, եթե ճանապարհին տեսնեք մեկ ուրիշի, ով օգնության կարիք ունի, անպայման բերե՛ք այստեղ: Ես կարող եմ հոգ տանել նրանց համար, ում կբերեք, և եթե սենյակները չբավականացնեն, ես կավելացնեմ»:

Ինչպես տեսնում եք, այս պատմության ասելիքը ավելին է, քան այն, ինչ մեզ սովորեցրել են՝ շեշտը դնելով նրա վրա, թե ինչպես Հիսուսը կվարվեր: Հիսուսը փորձում էր ուղղել կրոնական մտածելակերպը, որ օրինականն ուներ Աստծո և սամարացու վերաբերյալ: Նա նաև հաղորդում էր այն միտքը, որ վերջինս բաց էր թողնում հսկայական հնարավորություն, որն օգտագործեց սամարացին, այն է՝ *շահույթ ստանալու* հնարավորությունը:

Ես միշտ տխրում եմ, երբ մարդիկ ասում են, որ Աստված վատ բաներ է անում լավ մարդկանց, կամ՝ որ մարդիկ ծառայում են Աստծուն՝ կրոնական պարտականությունից ելնելով, այլ ոչ թե այն հիասքանչ կյանքի պատճառով, որ կարող էին ունենալ: Սատանան փորձել է թաքցնել Աստծո բարությունը Աստծո մարդկանցից, որպեսզի նրանք ամբողջ սրտով և հոժարությամբ չծառայեն Նրան:

ՑԱՎՈՔ, ՆՐԱՆՔ ՉԵՆ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԱՍՏԾՈ ՍԻՐՏԸ, ԱՅՆ, ՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱ ՊԱՏՐԱՍՏ Է ՎՃԱՐԵԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԳԻՆ, ԵՎ ՆԱ ՄԻՇՏ ՏԱԼԻՍ Է ՄԵԶ ԱՎԵԼԻՆ, ՔԱՆ ՄԵՆՔ ՆԵՐԴՆՈՒՄ ԵՆՔ: ՄԻՇՏ:

Շատերի համար եկեղեցական ծառայությունը պարզապես մեկ այլ իրադարձություն է օրացույցում, մինչդեռ նրանք պետք է հասկանային, որ իրենք են եկեղեցին՝ այն իջևանատունը, որտեղ Աստված

ուղարկում է մարդկանց՝ առողջանալու համար: Ցավոք, նրանք չեն հասկանում Աստծո սիրտը, այն, որ մարդկանց հասնելու համար Նա պատրաստ է վճարել ցանկացած գին, և Նա միշտ տալիս է մեզ ավելին, քան մենք ներդնում ենք: Միշտ:

Հիշում եմ, տարիներ առաջ Դրենդայի եղբոր հետ նստած քննարկում էինք հենց այս թեման. որ Աստված բարի է և վարձահատույց լինող, ու Նա տվել է մեզ Թագավորությունը, որը բավարարում է մեր բոլոր կարիքները: Թագավորության մասին այս հասկացողությունը նոր էր Ջոնիի և նրա կնոջ՝ Քենդիի համար, քանի որ նրանք դուրս էին եկել ավանդական եկեղեցուց, որտեղ քիչ ճշմարտություն էին սովորեցնում:

Այդ ժամանակ Ջոնին ու Քենդին ուսուցիչներ էին Ջորջիայի դպրոցներից մեկում, և Ջոնին միաժամանակ կես դրույքով աշխատում էր մեր՝ «Ֆորվարդ Ֆայնենշլ գրուպ» ֆինանսական ընկերությունում: Ջոնին կարծես արտակարգ օժտվածություն ուներ այդ գործում: Ընկերությունում կես դրույքով աշխատելու առաջին տարում նա ավելի շատ եկամուտ ստացավ, քան ստանում էր դպրոցում, ուստի նա որոշեց թողնել դասավանդելը և լիովին զբաղվել ֆինանսական գործունեությամբ:

Սկզբում Ջոնին շատ լավ էր աշխատում: Բայց նույն տարում՝ ավելի ուշ, նրա գործունեությունը դանդաղեց, և ես հասկացա, որ այդ տեմպով նա երկար չէր կարող աշխատել:

Դրենդան ու ես ծրագրել էինք Ծննդյան տոներին մեկնել Ջորջիա, և ես մտադիր էի կանգ առնել ու որոշ ժամանակ անցկացնել Ջոնիի հետ՝ պարզելու որոշ պատճառներ, թե ինչու նա չէր աշխատում այնպես, որ պահպաներ ամբողջ դրույքը: Նախքան կզանգեի Ջոնիին, նա զանգեց ինձ և խնդրեց, որ կանգ առնեի իրենց մոտ՝ աշխատանքային որոշ հարցեր քննարկելու նպատակով: Իհարկե, ես արդեն պատրաստ էի դրան:

Ես իսկույն հասկացա, որ Ջոնին ու Քենդին վախեցած էին: Նրանք արդեն ունեին 5.000 դոլարի հաշիվներ, որ պետք է փակեին ընթացիկ ամսում, և նույնքան գումար էլ հարկավոր էր հաջորդ ամսվա հաշիվները փակելու համար: Երբ նստեցի Ջոնիի մոտ, նրա առաջին բառերն էին. «Դա պարզապես չի գործում»:

Ես գիտեի, որ Թագավորության մասին հասկացողությունը բոլորովին նոր էր Ջոնիի և Քենդիի համար, և զգում էի, որ պետք է սովորեցնեմ նրանց, թե ինչպես մոտենան դրան հոգևոր առումով: Որովհետև ես գիտեի, որ Թագավորությունը միշտ գործում է: Ուստի, գրեթե երկու ժամ անցկացրի նրանց հետ՝ խոսելով Թագավորության օրենքներից և բացատրելով, թե ինչպես արձակեն իրենց հավատքը: Մինչ խոսում էի, զգացի, թե ինչպես է վախը նահանջում, և հավատքն աճում: Ես գիտեի, որ Ջոնին պատրաստ էր հաջորդ քայլին:

– Ջո՛նի,- ասացի ես,- դու պետք է սերմ ցանես Աստծո հետ և հավատաս Նրան այն գումարի համար, որ քեզ անհրաժեշտ է:

Ջոնին ու Քենդին համաձայնեցին, բայց նրանք փող չունեին: Այնպես եղավ, որ այդ օրը գլխավոր գրասենյակից Ջոնիի համար 160 դոլարի վարձատրության վճարագիր էի բերել: Ես գիտեի, որ նրանք կարող էին օգտագործել այդ գումարը, բայց քաջալերեցի, որ փոխարենը ցանեն այն որպես սերմ, քանի որ բոլորս էլ գիտեինք, որ 160 դոլարն ինքնին չէր կարող փակել 5.000 դոլարի ընթացիկ կամ նույն չափի եկող հաշիվները: Նրանք համաձայնեցին:

Երբ պատրաստվում էինք միասին աղոթել և արձակել մեր հավատքը, Ջոնիին հարցրի. «Այս գումարը ցանելով՝ որքա՞ն ես հավատում, որ կստանաս»: Երբ այս խոսքերը դուրս եկան իմ բերանից, Սուրբ Հոգին կանգնեցրեց ինձ և ասաց, որ թույլ չտամ նրան պատասխանել, ու ես գիտեի՝ ինչու: Ջոնին կասեր, որ հավատում է 5.000 դոլարի համար, որովհետև ակնհայտորեն ճնշումն այդտեղից էր գալիս: Փոխարենը, Սուրբ Հոգին ասաց. «Հարցրո՛ւ նրան, թե արդյո՞ք 12.000 դոլարը 30 օրում բավական կլինի»:

Ես այդպես էլ վարվեցի: Թույլ չտվի նրան պատասխանել և հարցրի, թե արդյո՞ք 12.000 դոլարը 30 օրում բավական կլինի: Տեսա, թե ինչպես նրա աչքերը լայն բացվեցին, երբ արտաբերեցի այն գումարի չափը, որ Տերն ասել էր ինձ: Ես գիտեի, որ Ջոնին ամբողջ կյանքում 30 օրում 12.000 դոլար երբեք չէր վաստակել: Նա մի պահ նստեց, ապա ասաց, որ, այո՛, կարող է ինձ հետ հավատալ դրան: Նույն հարցը տվեցի Քենդիին և նույնպես

դրական պատասխան ստացա: Մենք դրեցինք մեր ձեռքերը չեկի վրա և արձակեցինք մեր հավատքը՝ 30 օրում 12.000 դոլար ստանալու համար:

Երեք շաբաթ անց Ջոնիից հեռախոսազանգ ստացա: Նա հուզված էր: Վերջին երեք շաբաթում այնքան ապահովագրական փաթեթներ էր վաճառել, որ վաստակել էր ոչ թե 12.000, այլ 17.000 դոլար: Նա ասաց, որ այսուհետև ինքն իսկապես հավատացյալ է:

Դժբախտաբար, երկու ամիս անց, մի անձրևոտ երեկո հանդիպումից տուն վերադառնալիս Ջոնին կորցրեց մեքենայի վերահսկողությունը: Մեքենան ամբողջովին ջախջախվեց, բայց Ջոնին ողջ մնաց, ինչը խոսում էր Աստծո միջամտության մասին: Վթարի հետևանքով Ջոնին անկարող էր աշխատել, քանի որ ապաքինման կարիք ուներ: Այդ ժամանակահատվածում նրա տան վրա արգելանք դրվեց, և տունը հայտնվեց շերիֆի աճուրդի ցուցակում: Նրան անհրաժեշտ էր 10.000 դոլար՝ տունն աճուրդից հանելու համար:

Այս ընթացքում Ջոնին ու Քենդին որոշեցին տեղափոխվել Օհայո, որպեսզի ավելի խորը ծանոթանան Թագավորության ուսմունքին, որը փոխում էր նրանց կյանքը: Ուստի, նրանք տունը վաճառքի հանեցին, թեև գիտեին, որ ունեին ընդամենը մեկ ամիս, նախքան տեղի կունենար աճուրդը:

Մոտենում էր նշանակված օրը, բայց դեռևս իրական գնորդներ չկային, և աճուրդից ընդամենը մի քանի օր առաջ տան մոտ կանգ առավ մի մարդ և առաջարկեց գնել այն: Բայց նա մի խնդրանք ուներ. ուզում էր իմանալ, որ եթե Ջոնիին տար 10.000 դոլար, կարո՞ղ էր 30 օրով տունը պահել, մինչև որ ինքն ավարտեր մեկ այլ գործարք, որը հնարավորություն կտար վճարելու ամբողջ գումարը:

Ջոնին ցնցված էր: Նա գիտեր, որ տունն աճուրդի ցուցակից հանելու համար պետք է լիներ կանխիկ գնորդ, քանի որ աճուրդին մնացել էր ընդամենը մի քանի օր: Այս գնորդը ցանկանում էր տեղում 10.000 դոլարի չեկ գրել Ջոնիին, իսկ մնացած հարցերի շուրջ պայմանավորվել ավելի ուշ: Սա հենց այն գումարն էր, որ

անհրաժեշտ էր Ջոնիին: Ջոնին գիտեր, որ դա Աստված էր, նա վերցրեց 10.000 դոլարի չեկը և վճարեց տան ընթացիկ պարտքը: Օ՜հ, և այդ 10.000 դոլարը *հավելումն* էր հայտարարված գնի:

Այսպիսով, Ջոնին ու Քենդին տեղափոխվեցին Օհայո և բնակվեցին վարձակալած մի տանը: Նրանք միացան «Հավատքի կյանք» եկեղեցուն, և Ջոնին նոր եռանդով լծվեց իր գործին: Բայց առաջացավ մի նոր խնդիր: Նրանք ունեին միայն մեկ մեքենա, և այն հարկավոր էր Ջոնիին՝ շաբաթվա ընթացքում հաճախորդների հետ հանդիպելու համար: Դե, իհարկե, նրանք գիտեին՝ ինչ անել: Նրանք սերմ ցանեցին նոր մեքենայի համար և հավատացին, որ ստացան այն, երբ աղոթեցին՝ համաձայն Մարկոսի 11.24-ի:

Այնուհետև ամենաարտասովոր բանը տեղի ունեցավ: Ջոնիի մանկության ընկերը զանգեց…

– Ջո՛նի, քեզ փոխհատուցե՞լ եմ այն հեծանիվի համար, որ տվեցիր ինձ վեցերորդ դասարանում,- հարցրեց նա:

– Ո՛չ,- պատասխանեց Ջոնին:

Այն ժամանակ նրա ընկերն ասաց.

– Շա՛տ լավ, ես պատրաստվում եմ փոխհատուցել քեզ հիմա: Ես մտադիր եմ քեզ համար «BMW» գնել:

Երեխա ժամանակ երկու տղաները մշտապես խոսում էին մեքենաների մասին, և նա գիտեր, որ Ջոնին միշտ «BMW» է ցանկացել: Ընկերը հավատարիմ եղավ իր խոսքին և Ջոնիին գումար փոխանցեց «BMW» գնելու համար: Բայց ստանալով գումարը՝ Ջոնին հասկացավ, որ աճող ընտանիքի համար «BMW»-ն այն մեքենան չէր, որ իրեն իսկապես հարկավոր էր: Նա և Քենդին որոշեցին գնել ընտանեկան ամենագնաց Քենդիի համար և ավելի փոքր մեքենա՝ Ջոնիի գործի համար, քանի որ Քենդիի փոքր մեքենան, որ նրանք վարում էին, հին էր և խնդիրներ ուներ: Ահա այն, ինչ տեղի ունեցավ:

Հիշում եմ այն գիշերը, երբ Ջոնին զանգեց ինձ: Նա նստած էր իր նոր ամենագնացի մեջ, որի կողքին մյուս նոր մեքենան էր, և արցունքներն աչքերին պատմում էր, թե որքան ցնցված է, որ

կյանքում առաջին անգամ միանգամից վճարել է երկու մեքենայի համար:

Ջոնին նոր մարդ էր: Այն ժամանակ նա հասկացավ, որ Աստված կարող էր անել ցանկացած բան:

Մի օր նա այցելեց իմ գրասենյակ և ասաց, որ հոգնել է տուն վարձակալելուց, և ինքն ու Քենդին ցանկանում են գնել հողատարածքով տուն ագարակում: Ես գիտեի, որ Ջոնիի վարկային պատմությունը, պայմանավորված վթարով, այդքան էլ լավ չէր, և քաջալերեցի նրան մի փոքր երկար վարձակալել ու կանխիկ միջոցների պահուստ ձևավորել՝ ժամանակ տալով, որ վարկային միավորները բարձրանան: Բայց կարծես Ջոնին այդքան էլ ուշադրություն չդարձրեց իմ խոսքերին:

Հետո նա ասաց, որ մեր փողոցից ներքև մի ագարակ է տեսել, որը դրված է վաճառքի, և պատրաստվում է տեղեկանալ այն գնելու պայմաններին: Իհարկե, քանի որ այդ ժամանակ ես ունեի հիփոթեքային ընկերություն, գիտեի, որ Ջոնին ոչ մի կերպ չէր կարող համապատասխանել հիփոթեքային պահանջներին: Նաև գիտեի, որ նա չուներ կանխավճար՝ նման գնում կատարելու համար:

Ես ցնցված էի, երբ մեկ շաբաթ անց նա վերադարձավ իմ գրասենյակ և լայն ժպիտը դեմքին՝ ասաց, որ տունն ագարակով իրենն է: Ես հասկացա, որ անպայման պետք է լսեի այդ պատմությունը: Իհարկե, նա և Քենդին ֆինանսական սերմ էին ցանել Աստծո գործի մեջ, քանի որ իրենց սովորեցրել էին հավատալ, որ ստանում են, երբ աղոթում են: Հետո Ջոնին բացատրեց, թե ինչ էր տեղի ունեցել:

Տունը գնելու հարցով նա այցելեց իր բանկը: Կառավարիչը հանեց նրա վարկային պատմությունը, նստեց և ասաց. «Ջո՛նի, դուք ճիշտ էիք ձեր վարկային պատմության հարցում: Դուք չեք կարող որևէ բան գնել»:

Բայց հետո կառավարիչը տարօրինակ մի բան ասաց: Նա մի կողմ դրեց վարկային թղթապանակը և ասաց. «Բայց դուք ինձ դուր եք գալիս: Տեսնեմ, թե ինչ կարող եմ անել»:

Երկար պատմությունը մի փոքր ավելի կարճ դարձնելով՝ ասեմ, որ բանկը 100 տոկոս ֆինանսավորում տրամադրեց, տվեց նրան չորս ամիս ժամանակ, մինչև լրանար նրա վարձակալական պայմանագրի ժամկետը, և նա կարողանար տեղափոխվել, լցրեց պրոպանե ցիստերնը, վճարեց չմարված գույքահարկերը և վերջում Ջոնիին տվեց 5.000 դոլարի չեկ՝ ճակատային ծածկապատշգամբի բետոնե ճեղքը վերանորոգելու համար:

Ես ապշած նստած էի, մինչ Ջոնին շարունակում էր խոսել Թագավորության մասին: «Ա՜յ քեզ բան»,- սա ամենն էր, ինչ ես կարողացա ասել:

Մեկ ամիս անց Ջոնին ինձ հայտնեց, որ սերմ է ցանել «Ֆորդ» մակնիշի տրակտորի համար: Նա որոշել էր, որ իր նոր ագարակում իրեն տրակտոր է հարկավոր, և շատ յուրահատուկ սերմ էր ցանել «Ֆորդ» մակնիշի կապույտ դիզելային տրակտորի համար: Կրկին, քանի որ նա աշխատում էր ինձ մոտ, և ես տեղյակ էի տրակտորների գնից, գիտեի, որ նա դեռևս չուներ այդքան գումար:

Իհարկե, մի քանի շաբաթ անց, երբ նայում էի ճանապարհի ուղղությամբ, տեսա Ջոնիին՝ «Ֆորդ» մակնիշի կապույտ դիզելային տրակտոր վարելիս: Երբ նրան հարցրի, թե որտեղ և ինչպես ձեռք բերեց տրակտորը, նա ասաց, որ եկեղեցում մի կին պատահաբար մոտեցել է իրեն և հարցրել՝ արդյո՞ք ճանաչում է որևէ մեկին, ով տրակտորի կարիք ունի: Նա դատարկում էր ծնողների ագարակը և փորձում էր ազատվել նաև այդ տրակտորից: Ջոնին հայտնել էր, որ հետաքրքրված է դրանով:

Այդ կինը նրան ասաց, որ չանհանգստանա վճարի համար, թող վճարի, երբ կարողանա. ինքը չի շտապում: Այդպես՝ Ջոնին ձեռք բերեց իր տրակտորը:

Նրա հաջողությունները շարունակվեցին: Հաջորդ ամիս, մեկ ամսում նա վաստակեց 72.000 դոլար: Եթե հարցնեք Ջոնիին, թե ինչպես դա պատահեց, նա կպատասխանի, որ դա տեղի ունեցավ Աստծո հանդեպ առատաձեռն լինելու և Թագավորության օրենքները հասկանալու շնորհիվ:

Ինչպիսի՜ պատմություն: Մինչև հիմա հիշում եմ, թե ինչպես

այն երեկո Ջորջիայում, Ջոնիի և Քենդիի տանը նստած, խոսում էի Թագավորության մասին: Նրանք ընկճված էին, քանի որ ունեին 5.000 դոլարի պարտք, առջևում Ծննդյան տոներն էին, նրանց սպասում էր ևս 5.000 դոլարի հաշիվ, իսկ տեսադաշտում գումար չկար: Կարծում եմ՝ գուցե ձեզ կհետաքրքրի, թե ինչ ասացի նրանց այդ երեկո:

Ես գիտեի, որ պետք է օգնեի նրանց՝ տեսնելու Աստծուն հանգամանքների այն մշուշում, որի մեջ նրանք հայտնվել էին: Ես սկսեցի՝ նրանց ցույց տալով այն, ինչի մասին խոսում էինք Բ Կորնթացիների 9.10,11 խոսքերում.

> *«Բայց Նա, որ սերմ ցանողին սերմ է պարգևում, և հաց՝ կերակուրի համար, Նա կպարգևի և կշատացնի ձեր սերմունքը և կաճեցնի ձեր արդարության պտուղը: Դուք ամեն կերպ հարստացած կլինեք, որպեսզի առատաձեռն լինեք ամեն առիթով, և մեր միջոցով ձեր առատաձեռնությունը գոհություն կբերի Աստծուն»:*

Ես նշեցի, որ Պողոսն ասում էր, որ Աստված ոչ միայն կմատակարարի սերմ՝ ցանելու համար, այլև կպարգևի հաց՝ մեր սեփական կարիքները հոգալու համար: Հացը վերաբերում է այն ամենին, ինչի կարիքն անձամբ ունեք ձեր կյանքում: Այնուհետև Նա կավելացնի ձեր կարողությունը, որպեսզի ավելին տաք: Դա նշանակում է, որ դուք աճելու եք:

Հիշեցնեմ, թե որն է տալու վախը. դուք վախենում եք, որ ձեզ չի բավականացնի սեփական կարիքների համար:

Բայց ուշադրություն դարձրեք, թե ինչ է Աստված ասում: Նա սերմնացանին տալիս է սերմ և հաց՝ կերակուրի համար: Ահա մի շատ կարևոր հարց, որը նաև տվեցի Ջոնիին:

Այն, ինչ ձեր ձեռքում կա, սերմ է, թե՞ կերակուր: Դա ձեր ընտրությունն է:

Պապիկս՝ մայրիկիս հայրը, ամբողջ կյանքում հողագործ է եղել: Հիշում եմ, որ երբ երեխա էի, խաղում էի նրա սերմերի վագոնում: Միգուցե դուք երբեք չեք լսել սերմերի վագոնի մասին: Դա կարող է նույնիսկ իրական արտահայտություն չլինել, բայց

իրական էր մեզ համար, ովքեր իրենց մանկությունն անցկացրել են պապիկի մոտ: Ամեն տարի՝ բերքահավաքին, պապիկը բավականաչափ սերմ էր պահում՝ ամբարում գտնվող վագոնը լցնելու համար: Այդ վագոնը լի էր սերմով, որը նա տնտեսում էր՝ գարնանը ցանելու և հաջորդ տարի բերք ստանալու համար:

Ձմռան ամիսներին պապիկը ստուգում էր սոյայի հատիկներով բերնեբերան լցված մեծ վագոնը: Նա գիտեր, որ ուներ ընտրություն. հրատապ կարիքի դեպքում վաճառել սերմը կամ խնայել այն գարնանացանի համար՝ առատ բերք ստանալու ակնկալիքով: Նա ուներ ընտրություն, բայց համոզված էր, որ կային օրենքներ, որոնք կառավարում են ցանքը և հունձքը, և իր կյանքը կառուցում էր դրանց վրա:

Ջոնին ու Քենդին ստիպված եղան բախվել այդ նույն որոշմանը, երբ ձեռքներում պահել էին 160 դոլարի չեկը: Անշուշտ, նրանք կարող էին օգտագործել այն՝ որևէ հրատապ կարիք հոգալու համար, բայց, փոխարենը, գիտեին, որ Աստծո հանդեպ առատաձեռն լինելը, վերջին հաշվով, ավելի մեծ հունձք կբերեր իրենց: Եվ նրանք ճիշտ էին:

> *«Կա, որ ցրվում է, և էլ է ավելանում. բայց չափից դուրս խնայող կա, սակայն կարոտության է հասնում»:*
>
> – Առակաց 11.24

Նախքան կեզրափակենք այս գլուխը, կա ևս մեկ առակ, որ կցանկանայի՝ ուշադրություն դարձնենք: Այն քանքարների մասին առակն է՝ գրված Մատթեոսի 25.14-30 խոսքերում:

> *«Որովհետև, ինչպես մի մարդ, որ օտար երկիր էր գնում, իր ծառաներին կանչեց և իր ունեցածը նրանց հանձնեց: Եվ մեկին հինգ քանքար տվեց և մյուսին՝ երկու, և մյուսին՝ մեկ, յուրաքանչյուրին իր կարողության չափով, և շուտով գնաց: Եվ այն հինգ քանքար առնողը գնաց, նրանցով բան արեց և ուրիշ հինգ քանքար էլ շահեց: Այնպես էլ նա, որ երկուսն առավ, ուրիշ երկուսն էլ շահեց: Իսկ այն մեկն առնողը գնաց, գետինը փորեց և իր տիրոջ արծաթը թաքցրեց:*

Եվ շատ ժամանակից հետո գալիս է այն ծառաների տերը և նրանցից հաշիվ առնում: Եվ այն հինգ քանքար առնողը մոտ եկավ, ուրիշ հինգ քանքար էլ առաջ բերեց և ասաց. «Տե՛ր, ինձ հինգ քանքար տվիր, տե՛ս, ուրիշ հինգ քանքար էլ շահեցի նրանց վրա»:

Նրա տերն էլ ասաց նրան. «Լա՛վ, բարի և հավատարիմ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ էիր, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտի՛ր քո տիրոջ ուրախությունը»:

Եվ այն երկու քանքար առնողն էլ մոտ եկավ և ասաց. «Տե՛ր, ինձ երկու քանքար տվիր. տե՛ս, երկու ուրիշ քանքար էլ շահեցի նրանց վրա»:

Նրա տերը նրան ասաց. «Լա՛վ, բարի և հավատարիմ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ էիր, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտի՛ր քո տիրոջ ուրախությունը»:

Եվ այն մեկ քանքար առնողն էլ մոտ եկավ և ասաց. «Տե՛ր, ես ճանաչում էի քեզ, որ դու մի պինդ մարդ ես. հնձում ես, որտեղ որ չսերմեցիր, և հավաքում ես, որտեղ որ չփռեցիր: Եվ վախենալով գնացի, թաքցրի քո քանքարը գետնի մեջ. ահա, քոնը ա՛ռ»:

Նրա տերն էլ պատասխանեց և ասաց նրան. «Չա՛ր և ծո՛ույլ ծառա, գիտեիր, որ ես հնձում եմ, որտեղ որ չսերմեցի, և հավաքում եմ, որտեղ որ չփռեցի: Ուրեմն պետք էր, որ իմ արծաթը սեղանավորներին տայիր, և ես կգայի տոկոսով կառնեի իմը:

Արդ, առե՛ք դրանից քանքարը և տվե՛ք տասը քանքար ունեցողին: Որովհետև նա, ով որ ունի, նրան կտրվի և կավելանա, բայց նա, որ չունի, նրանից այն ունեցածն էլ վեր կառնվի: Եվ այն անպիտան ծառային հանե՛ք դրսի խավարը, այնտեղ կլինի լացը և ատամների կրճտելը»»:

– Մատթեոս 25.14-30

Պատմությունը ծանոթ է: Տերը հեռանում է քաղաքից և երեք ծառաներին հանձնում իր ունեցածը: Մեկին տալիս է հինգ քանքար (արծաթե կամ ոսկե մետաղադրամ), մյուսին՝ երկու քանքար, և երրորդին՝ մեկ քանքար:

Առաջին երկուսն անմիջապես գործի են անցնում և կրկնապատկում իրենց քանքարները: Տերը գովում է նրանց իրենց աշխատանքի համար: Բայց ուզում եմ՝ ուշադրություն դարձնենք երրորդ ծառային: Նրան տրվեց մեկ քանքար, բայց նա ոչինչ չարեց դրանով: Իրականում, նա թաղեց այն, մինչև որ տերը վերադարձավ:

> *«Եվ այն մեկ քանքար առնողն էլ մոտ եկավ և ասաց. «Տե՛ր, ես ճանաչում էի քեզ, որ դու մի պինդ մարդ ես. հնձում ես, որտեղ որ չսերմեցիր, և հավաքում ես, որտեղ որ չփռեցիր: Եվ վախենալով գնացի՝ թաքցրի քո քանքարը գետնի մեջ. ահա, քոնը ա՛ռ»»:*

Հատուկ ուշադրություն դարձրեք առաջին նախադասությանը. «*Տե՛ր, ես ճանաչում էի քեզ, որ դու մի պինդ մարդ ես. հնձում ես, որտեղ որ չսերմեցիր, և հավաքում ես, որտեղ որ չփռեցիր»:*

Ի՞նչ է նա ասում: Ես ձեզ կասեմ, թե ինչ է նա ասում: Նա ասում է. «Ինչո՞ւ պետք է ես ներգրավվեմ: Եթե դու հնձում ես, որտեղ որ չես սերմել, այդ դեպքում ո՞վ է վճարել սերմի համար, ո՞վ է ցանել այն, և ո՞վ է խնամք տարել, որ աճի»:

Մենք հասկանում ենք, որ տերը նրան փող տվեց սերմ գնելու համար, բայց նա մտածում էր, որ չարժե ժամանակ տրամադրել ներգրավվելու համար: Դրանից նա ոչ մի օգուտ չուներ: Ամբողջ շահույթը՝ իր աշխատանքի արդյունքը, պատկանելու էր տիրոջը: Քանի որ նա տիրոջը տեսնում էր որպես խիստ վերակացու, ըստ էության, հրաժարվեց գործի մեջ ներգրավվելուց: Նա փորձեց քողարկել տիրոջ հանդեպ իր անարգանքը՝ պնդելով, որ փողը թաքցնելու շարժառիթը այն կորցնելու վախն էր: Բայց տերը մերկացրեց նրա կեղծիքը և ասաց, որ եթե նա իսկապես մտածում էր իր մասին, ապա գոնե փողը կտար սեղանավորներին, և այն տոկոս կբերեր:

Ո՛չ, ծառան չէր վախենում քանքարը կորցնելուց. նա վախենում էր այն բանից, թե ինչ կարժենար նրան գործում ներգրավվելը: Նա աղավաղված և սխալ պատկերացում ուներ տիրոջ մասին. սխալ, որովհետև իրականում ճիշտ հակառակն էր: Տերը խիստ

վերակացու չէր: Մյուս երկու ծառաները պարգևատրվեցին պաշտոնի բարձրացմամբ և հրավիրվեցին վայելելու տիրոջ հարստությունը, երբ հաջողությամբ գործի մեջ դրին տիրոջ քանքարները: Տիրոջ մասին սխալ պատկերացում ունենալու պատճառով այս ծառան ընտրեց չներգրավվել: Եվ սա հենց այն է, ինչ կրոնը սովորեցնում է. Աստված խիստ վերակացու է, և Նրա հետ աշխատելուց օգուտ չկա, ուստի՝ ինչո՞ւ ներգրավվել:

Բայց Աստծո մասին այդ պատկերացումն ամբողջովին աղավաղված է և ոչ ճշմարիտ: Աստծուն անարդար անվանելը չարություն է: Աստված այդ նկարագրության ճիշտ հակառակն է: Նա բարի է և վարձահատույց լինող:

Բայց այժմ, ուզում եմ շեշտադրել մի շատ կարևոր միտք, որն ամփոփված է այս պատմության մեջ: Հատուկ ուշադրություն դարձրեք այն բանին, թե ինչ է տերն անում այն քանքարի հետ, որ հետ է վերցնում չար ծառայից:

> *«Արդ, առե՛ք դրանից քանքարը և տվե՛ք տասը քանքար ունեցողին: Որովհետև նա, ով որ ունի, նրան կտրվի և կավելանա, բայց նա, որ չունի, նրանից այն ունեցածն էլ վեր կառնվի: Եվ այն անպիտան ծառային հանե՛ք դրսի խավարը, այնտեղ կլինի լացը և ատամների կրճտելը»:*

Ճի՞շտ կարդացի: Տերն անպիտան ծառայից վերցրեց քանքարը և տվեց ոչ թե չորս, այլ տասը քանքար ունեցողին: Համոզված չեմ, որ դա քաղաքականապես ճիշտ կլիներ, բայց դա այն է, ինչ նա արեց: **ՀԱՏՈ՛ՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ**:

Աստված Իր գերազանց գաղափարներն ու առաջադրանքները տալու է Իր այն զավակներին, որոնք մտածում են Նրա շահի մասին և նախապես ապացուցել են իրենց անձնվիրությունն ու հավատարմությունը փոքր գործերում:

ԱՍՏՎԱԾ ԻՐ ԳԵՐԱԶԱՆՑ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՏԱԼՈՒ Է ԻՐ ԱՅՆ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՄՏԱԾՈՒՄ ԵՆ ՆՐԱ ՇԱՀԻ ՄԱՍԻՆ:

Աստված հիմար չէ: Նա Իր փողը ներդնելու է այնտեղ, որտեղ այն ամենամեծ շահույթը կբերի:

Խնդրո՛ւմ եմ, մտածե՛ք այն մասին, ինչ հենց նոր ասացի. Աստված Իր փողը ներդնելու է այնտեղ, որտեղ այն ամենամեծ շահույթը կբերի:

Անտարակույս, Աստված աշխատում է ոչ թե *փողի*, այլ *մարդկանց* հետ: Եվ երբ մենք հավատարիմ լինենք ու ջանասիրաբար աշխատենք Նրա հետ, Նա կբարձրացնի մեզ և բարեհաճություն կտա Իր բարիքների հանդեպ:

Այո՛, Աստված ունի սիրելի մարդիկ՝ տարբեր առաջադրանքներ վստահելու առումով: Ովքեր ապացուցել են իրենց հավատարմությունը, կվաստակեն Աստծո վստահությունը՝ ավելի մեծ և առավել վարձատրվող առաջադրանքներ ստանալու համար:

Ուշադրություն դարձրեք հաջողության հասած երկու ծառաների վերաբերմունքին. նրանք անմիջապես գնացին և գործի դրին իրենց տիրոջ քանքարները: Ինչո՞ւ անմիջապես: Որովհետև նրանք գիտեին, որ դա *հնարավորություն* է, ոչ թե ստրկության բեռ:

Աստծո ժողովրդից շատ-շատերը Աստծուն ծառայելը դիտում են որպես ծանր աշխատանք, պարտականություն, այլ ոչ թե հնարավորություն:

Երբ Դրենդան ու ես կառուցում էինք «Հիմա» կենտրոնի մասնաշենքը, մենք պետք է որոշում կայացնեինք: Մեր եկեղեցին ուներ մոտավորապես 300 անդամ, երբ որոշեցինք կառուցել մշտական և ավելի մեծ տուն՝ հավատացյալների աճող մարմնի համար:

Մենք ձեռնամուխ եղանք, որքան հնարավոր է, շատ գումար հավաքագրելու գործին, քանի որ դա 6 միլիոն դոլարի արժողությամբ նախագիծ էր լինելու: Այդ ժամանակ դա հսկայական գումար էր մեզ համար: Մենք ծրագրում էինք շուրջ 4,2 միլիոն դոլարով կառուցել հիմնական ենթակառուցվածքը, այնուհետև մնացած 2 միլիոն դոլարով ձեռք բերել սարքավորումները և շարունակել շինարարությունը՝ ֆինանսական միջոցների ձեռքբերմանը զուգընթաց:

Սա մեր առաջին փորձառությունը չէր Աստծո ծրագրերի հան-

դեպ առատաձեռն լինելու գործում, բայց դա մինչ այդ պահը եղած ամենամեծ նախագիծն էր, որի մասնակիցն էինք մենք:

Ինչևէ, ինչպես մեր պատմության ծառաները, որոնք ճանաչում էին Աստծո բարությունը, մենք անմիջապես ցանկացանք մասնակցել գումարի հավաքագրմանը: Մեզնից հավատք և հնազանդություն էր պահանջվում, որպեսզի տայինք այնքան, որքան հավատում էինք, որ Աստված ցույց էր տալիս մեզ:

Այն օրը, երբ ամբողջ եկեղեցին հռչակեց, թե որքան է համաձայնել ցանել նախագծի մեջ, Դրենդան ու ես ասացինք, որ մենք տալիս ենք 200.000 դոլար: Այդ պահին մենք չունեինք 200.000 դոլար, բայց ունեինք 20.000 դոլարի սերմ, որ պատրաստվում էինք ցանել՝ մնացած գումարը հնձելու համար:

Մենք գիտեինք, որ ինչպես անցյալում, այնպես էլ հիմա Աստված ցույց էր տալու, թե որտեղ և ինչպես ավելցուկով հնձենք այդ գումարը:

Մեր ունեցածը ցանելուց հետո սկսեցինք աղոթել Հոգով՝ սպասելով ուղղորդման և հրահանգների, թե որտեղից և ինչպես ստանայինք մնացած գումարը: Որպեսզի հասկանաք, թե ինչպես Աստված մատակարարեց այդ գումարը, պետք է ասեմ, որ մենք ունենք ֆինանսական ընկերություն, որը գործում է շուրջ 39 տարի: Ինչպես ավելի վաղ նշեցի, այդ ընկերությունն աշխատում է տարբեր ապրանքներ և ծառայություններ մատակարարող ընկերությունների և մասնագետների հետ: Առավել խոշոր ընկերությունների մեծ մասն ունենում է տարեկան համագումարներ և հավաքույթներ իրենց հաճախորդների համար:

Այդ տարի մեր մատակարարներից մեկը Դրենդային և ինձ հրավիրեց Անգլիա՝ Լոնդոն՝ մասնակցելու իրենց համագումարին: Մենք մնում էինք Լոնդոնի կենտրոնում գտնվող մի շատ գեղեցիկ հյուրանոցում. այն պարզապես սքանչելի էր, ինչպես ասում են Լոնդոնում:

Այդ ընկերությունը կազմակերպել էր միջոցառում, որը տեղի էր ունենալու քաղաքի մյուս ծայրում, և փոխնախագահը հրավիրեց մեզ իր հետ տաքսիով գնալ միջոցառմանը: Մենք ուրախությամբ ընդունեցինք նրա հրավերը: Ճանապարհին այդ կինը

շնորհակալություն հայտնեց մեզ այն հաճախորդների համար, որ ուղարկում էինք իրենց մոտ, ապա պատմեց այդ տարի գործարկվող նոր բոնուսային ծրագրի մասին:

Այնուհետև նա բացատրեց, թե ինչպես է դա գործում, և ներկայացրեց այն բոնուսային համակարգը, որը կիրառելու էին իրենց արտադրանքն առաջարկող գործընկերների համար: Լսելով նրան՝ ես շատ ոգևորվեցի, քանի որ գիտեի, որ բավականաչափ գործարքներ էինք կնքում և կարող էինք օգտվել բոնուսային ծրագրից:

Այնուհետև, այն պահին, երբ ցանկացա առավել մանրամասն տեղեկություններ ստանալ, նա կտրուկ հաստատեց, որ մեր ընկերությունը չէր համապատասխանում բոնուսային ծրագրի պահանջներին՝ ելնելով նրա ընկերության հետ ունեցած մեր փոխհարաբերության կառուցվածքից:

Ես չէի կարողանում հավատալ դրան: Ինչո՞ւ նա, ամենայն մանրամասնությամբ, խոսեց այդ մասին և ոգևորեց այդ հրաշալի ծրագրով, եթե վերջին րոպեին պետք է մերժեր ինձ: Չէի հասկանում նաև, թե ինչպես էր կառուցված իմ փոխհարաբերությունը նրա ընկերության հետ, որ ես չէի համապատասխանում բոնուսային ծրագրի պահանջներին:

Չնայած իմ տված լրացուցիչ հարցերին՝ ես նրանից որևէ հստակ պատասխան չստացա: Միակ բանը, որ հաստատ գիտեի, այն էր, որ ես բավարար չեմ համարվում՝ բոնուսային ծրագրով նախատեսված պարգևավճարից օգտվելու համար. նա հստակ հայտնեց դա:

Անցավ մեկ տարի, և մենք բավականին արդյունավետ գործունեություն ծավալեցինք, ուստի ես մտածեցի զանգել նրան ու կրկին հարցնել պարգևավճարի մասին: Ես չկարողացա կապվել նրա հետ և հարցս հաղորդագրության միջոցով փոխանցեցի նրա օգնականին:

Հաջորդ օրը նրա օգնականը զանգեց և խիստ ձայնով պնդեց, որ մեկ տարի առաջ փոխնախագահն արդեն ասել է, որ ես բավարար չեմ համարվում, և նա ոչինչ չի կարող անել այդ կապակցությամբ:

«Շա՛տ լավ,- մտածեցի ես,- *համենայն դեպս ես փորձեցի»:*

Եվ այսպես, մի անգամ, երբ աղոթում էի, թե որտեղից հայթայթեմ 180.000 դոլարը, լսեցի, թե ինչպես Սուրբ Հոգին ասաց, որ զանգեմ փոխնախագահին և կրկին խնդրեմ պարգևավճարի համար: Ասեմ ձեզ՝ ես չհրճվեցի, երբ լսեցի դա: Վերջին երկու տարիներին նրան խնդրելու փորձառությունից հետո արդեն գիտեի նրա դիրքորոշումը: Նա շատ հստակ հայտնել էր դա: Ուստի՝ մտածեցի, որ պարզապես մի էլեկտրոնային նամակ կուղարկեմ, այսպես ասած, իրավիճակը գնահատելու համար:

ՀԱՍԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ, ԱՍՏՎԱԾ ՎԱՐՁԱՀԱՏՈՒՅՑ Է ԼԻՆՈՒՄ: ԵՎ ԿԱ ՕԳՈՒՏ ԱՍՏԾՈ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԱՌԱՏԱՁԵՌՆ ԼԻՆԵԼՈՒ ՄԵՋ:

Յոթ օր հետո ես ստացա նրա պատասխանը: Հուրախություն ինձ՝ նա ասաց, որ մտածել է այդ մասին և որոշել է իմ ընկերությանը պարգևավճար տալ: Զարմանալի է, բայց պարգևավճարը կազմում էր 200.000 դոլար: Իսկ հիմա, ամենալավ մասը: Պայմանագրի այդ փոփոխությունը ուժի մեջ է արդեն 14 ՏԱՐԻ, և այդ ժամանակվանից ի վեր ամեն տարի մենք ստանում ենք 200.000 դոլարի պարգևավճար:

Հասկանո՞ւմ եք, Աստված վարձահատույց է լինում: Եվ կա օգուտ Աստծո առաջադրանքների հանդեպ առատաձեռն լինելու մեջ**:**

Այսպիսով՝ որքա՞ն արժեցավ Դրենդային և ինձ՝ այդ 200.000 դոլարը ցանելը:

Անցավ գրեթե հինգ տարի, և մենք որոշեցինք, որ, որպես եկեղեցի, պետք է հավաքագրենք ավելի շատ գումար՝ եկեղեցում մի քանի բաներ ավարտին հասցնելու և որոշ սարքավորումներ գնելու համար: Կրկին, Դրենդան ու ես որոշեցինք, թե որքան ենք ցանկանում ցանել այդ ծրագրերի մեջ, և կանգ առանք 500.000 դոլարի վրա:

Օհո՛, դա մեծ գումար էր: Բայց մենք զգացինք, որ կարող էինք վստահել Աստծուն այն բանից հետո, ինչ Նա արեց 200.000 դոլարի դեպքում: Կրկին, մենք ցանեցինք այն, ինչ կարող էինք (կար-

ծում եմ, 50.000 դոլար էր), և հավատացինք, որ Սուրբ Հոգին ցույց կտա, թե որտեղից և ինչպես ստանանք մնացած 450.000 դոլարը:

Հավանաբար, վեց շաբաթ անց ես ստացա մի ծանուցում այն մասին, որ կատարվելու էին մի քանի պայմանագրային փոփոխություններ, որոնք վերաբերում էին ընկերության աշխատանքները վճարելուն: Կատարվող փոփոխությունները հաշվարկելուց հետո պարզեցինք, որ հաջորդ երեք տարում 630.000 դոլարով ավելի շատ եկամուտ կստանայինք, քան ստանում էինք: Վատ չէր, այնպես չէ՞: Կռահե՛ք, թե ինչ եղավ: Այդ պայմանագրային փոփոխությունն ուժի մեջ է արդեն 11 տարի, և մինչև այժմ ամեն տարի մենք աշխատում ենք ավելացված սակագնով:

Կրկին, որքա՞ն արժեցավ Դրենդային և ինձ՝ ցանելը և Աստծո ծրագրերում առատաձեռն լինելը:

Այսպիսով՝ հիշե՛ք, որ Աստված շահույթի Աստված է: Նա բարի է և վարձահատույց լինող:

ԳԼՈՒԽ 3

ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՔ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Կարծում եմ՝ բոլորը լսել են Սուրբ ծննդյան պատմությունը, նաև՝ թե ինչպես երեք թագավորները Հիսուսին ոսկի, կնդրուկ և զմուռս բերեցին: Երբևէ մտածե՞լ եք, թե ինչ արժեին այդ իրերը: Ավելի խելացի կլինի հարցնել. «Ինչո՞ւ նրանք առաջին հերթին այդ բաները բերեցին»:

Որոշ հետազոտություն անցկացնելով՝ պարզեցի, որ այդ օրերին ընդունված էր արքայազնին պատվել այսպիսի նվերներով, քանի որ նա դիտվում էր որպես ապագա թագավոր:

Լավագույն գնահատմամբ այս նվերները, հավանաբար, արժեին 100.000-ից մինչև մի քանի հարյուր հազար դոլար:

Այս իմաստունները պետք է որ ուսումնասիրած լինեին Սուրբ գրքերը և եկող Մեսիայի մասին մարգարեությունները: Աստղը տեսնելով՝ նրանք եզրակացրին, որ Նա այնտեղ է, ապա անցան մեծ տարածություն՝ Նրան նվերներ բերելու համար:

Այն գաղափարը, որ իմաստունները Հիսուսին հանդիպեցին մսուրում, չի համապատասխանում իրականությանը, թեև այդպես է պատկերված Սուրբ ծննդյան մեր ներկայացումներում: Սա իմանում ենք Մատթեոսի Ավետարանի հետևյալ խոսքերից.

«Եվ երբ որ <u>տունը մտան</u>, գտան Երեխային Իր մայր Մարիամի հետ և ընկնելով երկրպագեցին Նրան և իրենց

գանձերը բացին, ընծա տվին Նրան՝ ոսկի և կնդրուկ և զմուռս»:

– Մատթեոս 2.11

Նրանք հանդիպեցին Հիսուսին Իր տանը, ոչ թե մսուրում: Այս հատվածում նշվում է, որ Նա երեխա էր, բայց ոչ՝ նորածին: Ուստի, հավանաբար, որոշ ժամանակ էր հարկավոր, մինչև որ իմաստունները հասնեին այնտեղ:

Երկրորդ՝ ոչ ոք իրականում չգիտի, թե որքան իմաստուններ կային այնտեղ: Աստվածաշունչը չի ասում, թե քանիսը եկան, բայց հստակ արձանագրում է, թե ինչ բերեցին: Այդ ժամանակ կնդրուկը և զմուռսն ավելի թանկ էին, քան ոսկին, այնպես որ՝ նրանց բերած նվերները չափազանց արժեքավոր էին:

ԱՍՏՎԱԾ ՄԻՇՏ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ Է ԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ. ՄԻՇՏ:

Ինչո՞ւ խոսեցի այս մասին: Թո՛ւյլ տվեք հարցնել. «Ձեր կարծիքով ինչո՞ւ այս իմաստունները բերեցին այս նվերները»:

Ես կարող եմ ասել, թե ինչու Հովսեփը միջոցների կարիք ուներ՝ իր առաջադրանքն իրականացնելու համար:

Հիշե՛ք…

Աստված միշտ ֆինանսավորում է Իր առաջադրանքները. մի՛շտ:

«Հավատքի Կյանք» եկեղեցու շենքը լեփ-լեցուն էր: Այն լեփ-լեցուն էր հանգստյան օրերին, լեփ-լեցուն էր շաբաթվա ընթացքում, երբ կրթում էինք 200-ից ավելի երեխայի, լեփ-լեցուն էր խմբակներով և աշխատակազմով: Մեզ ավելի շատ տեղ էր հարկավոր: Մենք սկսեցինք քննարկել՝ արդյո՞ք պետք է բացել երկրորդ մասնաշենքը, թե՞ լրակառուցել ներկայիս շենքը: Որոշեցինք միաժամանակ երկուսն էլ անել:

Այսպիսով՝ մենք կազմեցինք թիմ՝ մասնաշենքի համար տարածք որոնելու նպատակով, և ուղղորդեցինք նրան դեպի քաղաքի այն հատվածը, որը զգում էինք, որ պետք է նայենք հենց սկզբից:

Այնուհետև, միաժամանակ առաջին քայլերն արեցինք շենքի նախագծման, ինժեներական ուսումնասիրությունների և ընդլայնման համար անհրաժեշտ այլ ձեռնարկումների ուղղությամբ: Վարձեցինք ճարտարապետ և շինարար, ձևավորեցինք խորհրդատվական մարմին՝ բոլորն էլ պայմանագրային աշխատանքի փորձառությամբ:

Մենք բացահայտեցինք, որ լրակառուցման հետ կապված լուրջ խնդիրներ կային: Ամենամեծ խնդիրն այն էր, որ մեր ներկայիս շենքում չունեինք ո՛չ կոյուղագիծ, ո՛չ ջրագիծ: Կոյուղու համար օգտագործում էինք ջրհորի ջուր և թափոնների կառավարման ինքնուրույն համակարգ:

Նահանգային օկրուգն արդեն ասել էր, որ մենք չէինք կարող լրակառուցել կամ լրացուցիչ շինություններ ավելացնել մեր 15 հա տարածքում, մինչև չունենայինք քաղաքային ջրագիծ և կոյուղագիծ, քանի որ մենք առավելագույնս օգտագործել էինք թույլատրելի հնարավորությունները: Մենք գիտեինք դա, սակայն մեր շուրջն այնքան նոր շինություններ էին կառուցվում, որ ես համոզված էի, որ շուտով ջրագծերն ու կոյուղագծերը կմոտեցնեին մեզ, և մենք կկարողանայինք լուծել այդ խնդիրը:

Բայց ինչպես պարզվեց, ջրակոյուղատար գծերը նույնիսկ մեր փողոց չէին հասել, այնպես որ, ինքնըստինքյան, հնարավոր չէր օգտվել այդ ծառայություններից: Դրանք պարզապես հասանելի չէին:

Մենք սկսեցինք հայտեր ստանալ՝ ջրագծերն ու կոյուղագծերը մեր շենք բերելու համար, ընդ որում, մենք վճարում էինք դրա համար, այնուհետև փոխհատուցում էինք ծախսերի զգալի մասը, քանի որ կառուցապատողը վճարում էր մեզ՝ ջրատարին միանալու համար: Ավելի լավ է՝ չիմանաք, թե որքան էր դա արժենալու մեզ:

Մենք կրկին գնացինք քաղաքապետարան և վերանայեցինք նրանց ծրագրերն ու ժամկետները այդ ծառայությունների հասանելի լինելու վերաբերյալ և հույս ունեինք, որ նրանք կդիտարկեն ժամկետների տեղափոխման հարցը, քանի որ թաղամասն աճում էր, և, վերջին հաշվով, այդ ծառայություններն անհրաժեշտութ-

յուն էին դառնալու: Բայց նրանք տեղից չշարժվեցին: Ըստ նրանց խոսքերի՝ այդ ծառայությունները հասանելի կդառնային ոչ մոտ ապագայում:

Մենք գիտեինք, որ չէինք կարող տարիներով սպասել, մինչև ջրագծերն ու կոյուղագծերը հասանելի դառնային մեր թաղամասում, ուստի որոշեցինք հետաձգել մեր շենքի լրակառուցումը և, որպես հիմնական նպատակ, սկսեցինք տարածք փնտրել նոր մասնաշենքի համար (այդ հանդիպումից մինչև այս գլուխը գրելու պահը արդեն չորս տարի է անցել, և քաղաքապետարանը դեռևս ոչինչ չի ասում այն մասին, թե երբ կոյուղագծերը հասանելի կլինեն):

Մեր թիմը վեց ամիս շարունակ համապատասխան տարածք էր փնտրում նոր մասնաշենքի համար, բայց ապարդյուն: Կարծես թե չկային վարձակալման կամ գնման ենթակա շենքեր, որոնք համապատասխանում էին մեր նկարագրությանը: Մենք մտածեցինք տարածքում վարձել միջոցառումների մի կենտրոն, որը մեզ անհրաժեշտ էր լինելու միայն հանգստյան օրերին և արժենալու էր ամսական 30.000 դոլար: Բացի դա՝ ստիպված էինք լինելու ամեն շաբաթ տեղադրել ու հավաքել մեր իրերն ու սարքավորումները: Ես իրականում չէի ցանկանում, որ մեր անդամները հայտնվեին նման իրավիճակում: Ես ուզում էի մշտական տարածք, որը կկարողանայինք վերահսկել: Մենք չունեինք խաղաղություն միջոցառումների կենտրոնի հարցում:

Այնուհետև քննարկեցինք մի խարխլված առևտրի կենտրոնում տարածք վարձակալելու հարցը: Սակայն, դիտարկելով վերանորոգման բոլոր աշխատանքներն ու փոփոխությունները, որոնք անհրաժեշտ էին՝ այն համապատասխան տեսքի բերելու համար, որոշեցինք, որ դա նույնպես ելք չէ:

Շենք գտնելու մեր գլխավոր սկզբունքներից մեկն այն էր, որ այն պետք է օժանդակեր երեխաների կրթությանը ամբողջ շաբաթվա ընթացքում: Եկեղեցում մենք ունենք տնային ուսուցում իրականացնող հարյուրավոր ընտանիքներ և ամեն շաբաթ անցկացնում ենք համատեղ հավաքներ, ինչպես նաև դասեր: Մենք բազմիցս խոսել էինք այն մասին, որ մի օր կունենանք դպրոց, ցե-

ռեկային խնամքի կենտրոն, արտադպրոցական ծրագիր և շատ այլ ծրագրեր՝ տեղական համայնքներին ծառայելու համար: Մենք ուզում էինք գտնել այնպիսի տարածք, որը հնարավորություն կտար մեզ իրականացնելու այդ ամենը: Մենք սերմ էինք ցանել այդ շենքը ստանալու համար՝ պնդելով, որ կգտնենք գերազանց շենք, որը կբավարարի մեր կարիքները, բայց այն ի հայտ չէր գալիս:

Դրենդան ու ես պետք է մասնակցեինք մի հավաքույթի, որը տեղի էր ունենալու Տեխասի Ֆորթ Վորթ քաղաքում՝ հաջակցություն նոր բացված «Հաղթանակ» հեռուստատեսային ցանցի: Մինչ այնտեղ էի՝ նկարահանման հրապարակում նստած, Տերը խոսեց ինձ հետ. *«Ես ուզում եմ, որ այս հեռուստացանցի մեջ ցանես 100.000 դոլար: Գնա՛ տուն՝ քո եկեղեցի, դո՛ւրս գրիր չեկը, յուրաքանչյուր ծառայությանը պահի՛ր այն քո ձեռքում և հռչակի՛ր այդ սերմի վրա, որ դուք գերազանց շենք եք գտնելու: Նաև հանդիմանի՛ր սատանային և ասա՛, որ դադարի Իմ գործերին խառնվելուց: Հենց որ ցանես, կանչի՛ր այն՝ ինչպես կատարված»:*

Այդպես էլ արեցինք: Մենք գնացինք տուն, ես կանչեցի իմ գանձապահին և ասացի, որ 100.000 դոլարի չեկ գրի «Հաղթանակ» հեռուստատեսային ցանցին: Այնուհետև, այդ չեկը տարա եկեղեցի և յուրաքանչյուր ծառայությանը ամբողջ եկեղեցին միաբանվեց ինձ հետ այն հարցում, որ այդ սերմը ցանում ենք գերազանց շենք ունենալու համար: Մենք հանդիմանեցինք սատանային և ասացինք, որ դադարի խառնվելուց և մեր մատակարարումն ուշացնելուց:

Հաջորդ օրը՝ երկուշաբթի առավոտյան, զանգեց մեր դուստրը և ասաց, որ մինչ մենք Տեխասում էինք, անշարժ գույքի գործակալն առաջարկել էր ցույց տալ մի հետաքրքիր շինություն: Այն ենթակա չէր վարձակալության և իրականում չէր համապատասխանում մեր բյուջեին, քանի որ դրված էր վաճառքի՝ 7.9 միլիոն դոլարով: Այն արժեր շատ ավելի, պարզապես արգելանքի տակ էր: Նա ասաց, որ դա հրաշալի մասնաշենք կլիներ, բայց, անշուշտ, գիտեր, որ ֆինանսական առումով դա հնարավոր չէր: Այնուամենայնիվ, նա ուզում էր իմանալ, թե արդյո՞ք չէինք ցան-

կանա, ամեն դեպքում, տեսնել այն: Մենք, իհարկե, համաձայնեցինք:

Այսպիսով՝ երեքշաբթի առավոտյան գնացինք այդ շինությունը տեսնելու: Այն զբաղեցնում էր շուրջ 2,8 հա տարածք և ծառայել էր որպես բարձրակարգ մասնավոր ավագ դպրոցի համալիր: Այն ուներ եռահարկ ավագ դպրոցի շենք և ևս երկու խոշոր մասնաշենքեր, ինչպես նաև բնակելի տուն: Այնտեղ կային վազքուղի, թենիսի չորս դաշտ, մարզասրահներ, արվեստի շենք՝ ֆոտոլաբորատորիայով, երկու թրծավառարան խեցեգործության համար, կարի սարքավորումներով և արվեստի պարագաներով լի սենյակ, երաժշտական սենյակ՝ տասնյակ երաժշտական գործիքներով և այլն: Ամբողջ շինությունը լիովին կահավորված էր և պարագաներով հագեցած:

Երբ շրջում էինք տարածքով, այն պարզապես գերազանց էր: Բայց միաժամանակ գիտեինք, որ չէինք կարող պարտքի տակ մտնել: Շինարարության ֆոնդում ունեինք շուրջ 3 միլիոն դոլարի խնայողություն, բայց դեռևս հարկ կլիներ գրեթե 5 միլիոն դոլարի պարտք վերցնել:

Այդ երեկո մենք ծրագրել էինք ընթրել մեր ծառայության գործընկերներից մեկի հետ: Այս ընթրիքը աշնան ընթացքում հավանաբար չորս անգամ ծրագրել և տեղափոխել էինք, քանի որ երկուսս էլ չափազանց զբաղված էինք, բայց այդ երեկո այն կայացավ:

Երբ զրուցում էինք, այդ պարոնը հարցրեց ինձ շինարարության նախագծի վերաբերյալ, և ես պատմեցի բոլոր ուշացումների մասին, որոնց բախվել էինք: Նա նայեց ինձ և ասաց. «Գիտեք, կարծում եմ, դուք պետք է մտածեք փոխարենը ուսումնական համալիր բացելու մասին»: Ես նրան ասացի, որ համաձայն ենք, և իրականում արդեն վեց ամիս է՝ շենք ենք փնտրում, բայց դեռ չի հաջողվել գտնել: Ասացի նաև, որ այդ օրը գերազանց ուսումնական համալիր էինք տեսել, սակայն այն չէր տրվում վարձակալության և դուրս էր մեր գնային շրջանակից:

Նա մի քանի հարց տվեց դրա վերաբերյալ, ապա նայեց Դրենդային և ասաց. «Իսկ եթե դա անվճար լինե՞ր»: Դրենդան ոչինչ

չպատասխանեց, քանի որ մտածում էր, թե նա կատակում է: Նա կրկնեց. «Դրեմնդա, ես ասացի՝ իսկ եթե դա անվճար լինե՞ր»:

Դրենդան հարցրեց. «Ի՞նչ նկատի ունեք»:

«Ես դրա համար չեկ կգրեմ»,- պատասխանեց նա:

Դրենդան ու ես ապշած նստած էինք:

Կարճ ասած՝ նա իսկապես վճարեց դրա համար: Հետո մենք որոշ գումար ծախսեցինք շենքի վերանորոգման և վերափոխման վրա, որպեսզի այն համապատասխաներ մեր նպատակային օգտագործմանը: Արդյունքը եղավ գերազանց ուսումնական համալիրը: Եվ շենքի համար վճարված էր:

Ես չէի կարող ավելի կատարյալ ուսումնական համալիր ծրագրել մեր կարիքների համար: Այստեղ ամեն բան գերազանց է: Մենք կատարեցինք գնահատում մեր ապահովագրական ընկերության համար, և այն կազմեց 11 միլիոն դոլար՝ ներառյալ ներսի պարունակությունը:

Մտածե՛ք այդ մասին. այժմ մենք ունենք 11 միլիոն դոլարի արժողության ուսումնական համալիր՝ 8.268մ^2 տարածքով, որի համար վճարված է: Մի՞թե ձեզ դուր չեն գալիս այսպիսի պատմություններ:

Ինչպես ասացի, Աստված ֆինանսավորում է Իր առաջադրանքները: Դա Նրա ծառայությունն է, ոչ թե մեր: Մենք պարզապես աշխատում ենք Նրա կողքին՝ ընտանեկան բիզնեսում:

Այժմ, թույլ տվեք պատմել, թե ինչ կատարվեց այն ամուսիններ ի հետ, որոնք ֆինանսավորեցին մեր շենքը: Նախևառաջ, համաձայն նվիրատվության դիմաց գույքի ընդունված արժեքի նվազեցման, նրանց հարկային հաշիվը կրճատվեց ավելի շատ, քան նրանք վճարել էին շենքի համար: Ինչպե՞ս: Շենքը երկու տարի գրանցվեց նրանց անունով: Այնուհետև նրանք շենքը նվիրաբերեցին ծառայությանը այն ժամանակվա գնահատված արժեքով:

Սա մի մարտավարություն է, որի մասին պետք է տեղյակ լինեք, եթե հովիվ եք և շենքի կարիք ունեք: Այնպես որ, վերջում շենքն իրականում անվճար արժեցավ երկուսիս համար էլ՝ նվիրատուի կողմից իմաստուն հարկային պլանավորման շնորհիվ:

Բայց նույնիսկ դա չէ պատմության զարմանահրաշ կողմը:

Այն ժամանակ, երբ մենք շինություն էինք փնտրում, այս գործընկերը փորձում էր քաղաքում գնել ևս մեկ ձեռնարկություն, որը դրված էր վաճառքի: Չնայած նա կանխիկով գնման առաջարկ էր անում, նրա հայտը դեռևս պետք է հաստատվեր ընկերության սեփականատերերի կողմից, և, դժբախտաբար, վերջիններս հայտնեցին, որ այն առաջարկել են մեկ ուրիշի: Նա չափազանց հիասթափված էր նրանց որոշումից: Նա ինձ ասաց, որ չէր կարող այդպես թողնել, որ հոգում զգում էր, որ դա դեռ վերջը չէ:

Երբ նա գումար ցանեց մեր շենքի համար, ինձ ասաց, որ այն ցանեց՝ հավատալով, որ ընկերության սեփականատերերը կփոխեն իրենց միտքը, քանի որ մյուս առաջարկների համեմատ նա ամենաուժեղ ֆինանսական դիրքում էր և վճարում էր կանխիկ:

Անտարակույս, այն բանից հետո, երբ կատարվեց մեր շենքի գործարքը, նա զանգ ստացավ սեփականատերերի կողմից, որոնք հայտնեցին, որ նախորդ գործարքը ձախողվել է, և այժմ այն նրանն է, եթե ցանկանա: Նա ասաց, որ, անշուշտ, ցանկանում է:

Նոր ձեռնարկության առք ու վաճառքի պայմանագիրը կնքելուց մի քանի շաբաթ առաջ նա բոլորովին անսպասելի գործարք կատարեց, որի դիմաց ստացավ այնքան գումար, որքան անհրաժեշտ էր՝ ձեռնարկությունը կանխիկ գումարով գնելու համար: Հարկ չեղավ, որ նա դիպչեր այն կանխիկ գումարին, որ նախապես մի կողմ էր դրել՝ ձեռնարկությունը գնելու համար: Նա ինձ ասաց, որ դա նման էր անվճար ձեռնարկություն գնելուն:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է ԱՄԵՆ ԱՆԳԱՄ:

Օ՜հ, իմիջիայլոց, երբ նա գնեց ձեռնարկությունը, այն գնահատվեց կրկնակի, քան վճարել էր դրա համար: Նա այնքան ոգեշնչված էր, երբ գույքի առք ու վաճառքի պայմանագիրը կնքելու օրը զանգեց ինձ:

Թագավորությունը գործում է ամեն անգամ:

Այս գործընկերն առատաձեռն էր Աստծո առաջադրանքների

հանդեպ և հնազանդ էր՝ հետևելու ու տեսնելու, թե ինչ էր Աստված անում երկուսիս համար: Մենք ցանեցինք նոր հեռուստակայանի՝ Աստծո մեկ այլ հանձնարարության մեջ, և տեսե՛ք, թե ինչ կատարվեց:

Աստծո և Նրա մարդկանց հանդեպ առատաձեռն լինելը կբացի այնպիսի դռներ, որոնք նույնիսկ չեք մտածել, որ գոյություն ունեն:

Մարդիկ մշտապես հարցնում են. «Գա՛րի, եթե այսօր կարողանայիր տալ ինձ մեկ կարևոր բանալի Թագավորության ֆինանսների վերաբերյալ, ապա ո՞րը կլիներ»:

Իհարկե, կան շատ բաներ, որոնք, կցանկանայի ասել ձեզ: Բայց հետևյալ խորհուրդն անգին կլինի: Այնպես որ՝ անպայման նշումներ կատարե՛ք Թագավորության հետևյալ սկզբունքի վերաբերյալ:

Եթե ոչինչ չստանաք այս գրքից, ստացեք սա՛:

Ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել Ղուկասի Ավետարանի 4-րդ գլխին, երբ սկսեմ ձեզ համար բացահայտել Թագավորության այս հզոր օրենքը: Գիտեմ, որ ներքոհիշյալ տեքստը մի փոքր ավելի երկար է, քան սովորաբար մեջբերում եմ, բայց ամբողջ հատվածը կարդալն ընդհանուր գաղափար կտա այն մասին, թե ինչ է կատարվում, և ինչու Հիսուսն այդպես պատասխանեց:

> *«Եվ եկավ Նազարեթ, ուր որ մեծացել էր, և Իր սովորության պես շաբաթ օրը ժողովարանը մտավ և կանգնեց, որ կարդա: Եվ Եսայի մարգարեի գիրքը տվին Նրան: Եվ երբ որ գիրքը բացեց, այն տեղը գտավ, որ գրված էր.*
>
> *«Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որի համար էլ օծեց Ինձ. Նա Ինձ ուղարկել է աղքատներին ավետարանելու, սրտով կոտրվածներին բժշկելու, գերիներին թողություն քարոզելու և կույրերին տեսողություն տալու. խոցվածներին արձակելու՝ ազատելով, Տիրոջ ընդունելի տարին քարոզելու»:*

Եվ գիրքը փակեց, պաշտոնյային տվեց, նստեց, և ժողովարանի մեջ ամենքի աչքերը Նրան էին մտիկ տալիս: Եվ Նա սկսեց ասել նրանց, թե՝ այսօր այս գիրքը կատարվեց ձեր ականջներում:

Եվ ամենքը վկայում էին Նրան և զարմանում էին այն շնորհաց խոսքերի վրա, որ դուրս էին գալիս Նրա բերանից, և ասում էին. «Չէ՞ որ սա Հովսեփի որդին է»:

Եվ Նա նրանց ասաց. «Իհա՛րկե, այս առակը կասեք Ինձ. «Բժի՛շկ, Քո անձը բժշկի՛ր». որչափ բաներ լսեցինք՝ Կափառնայումի մեջ եղած, Քո հայրենիքում՝ այստե՛ղ էլ արա»:

Եվ ասաց. «Ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե ոչ մի մարգարե ընդունելի չէ իր հայրենիքում: Եվ ճշմարտությամբ ասում եմ ձեզ, թե Եղիայի օրերում Իսրայելի մեջ շատ որբևայրիներ կային, երբ որ երկինքը երեք տարի և վեց ամիս փակվեց այնպես, որ ամբողջ երկրի վրա մեծ սով եղավ: Եվ Եղիան նրանցից ոչ ոքի մոտ չուղարկվեց, բայց միայն սիդոնացիների Սարեփթան՝ մի որբևայրի կնոջ մոտ»»:

– Ղուկաս 4.16-26

Այս տեքստը գրված է այն բանից հետո, երբ Հիսուսը փորձվեց անապատում և վերադարձավ Իր հայրենի քաղաքը:

Քանի որ Հիսուսը մեծացել էր Նազարեթում, այստեղ Նրան և Նրա ընտանիքին շատ լավ էին ճանաչում, և մենք կարող ենք ենթադրել, որ տեղի ժողովարանում Նա բազմիցս էր կարդացել Սուրբ գիրքը: Կա մի բան, որ պետք է իմանաք այն տեքստի վերաբերյալ, որ Հիսուսն ընտրեց կարդալ նրանց համար: Նա մեջբերում էր Եսայի 61.1,2 խոսքերից և կարդաց մինչև այն տեղը, որտեղ ասվում է. ***«Տիրոջ ընդունելի տարին քարոզելու»,*** այնուհետև կանգ առավ:

Այժմ, հետաքրքիրն այն է, որ Նա կանգ առավ նախադասության հենց մեջտեղում, ինչի համար, հասկանում ենք, որ հստակ պատճառ կար:

Տիրոջ ընդունելի տարին Հոբելյան տարին էր, և այն ներկայացնում էր Աստծո Թագավորության վերականգնումը երկրային

տիրույթում: Դա խորհրդապատկերն էր այն բանի, ինչ Մեսիան վերականգնելու էր Իր գալուստով: Այսպիսով, երբ Հիսուսը կանգ առավ այս արտահայտության վրա և ասաց. ***«Այսօր այս գիրքը կատարվեց ձեր ականջներում»,*** Նա հռչակում էր, որ Ինքն է Մեսիան:

Այնուհետև Նա շարունակեց և մարգարեացավ, թե ինչ էին ասելու Իրեն ապագայում, որն, ըստ էության, հետևյալն էր. «Մենք չենք հավատում Քեզ. ապացուցի՛ր մեզ»: Պատճառն այն էր, որ նրանք իսկապես չէին հավատում Հիսուսին:

> *«Եվ Նա նրանց ասաց. «Իհա՛րկե, այս առակը կասեք Ինձ. «Բժի՛շկ, Քո անձը բժշկի՛ր»». որչափ բաներ լսեցինք՝ Կափառնայումի մեջ եղած, Քո հայրենիքում՝ այստե՛ղ էլ արա»:*

Կափառնայումն այն վայրն էր, որտեղ Հիսուսը հիմնել էր Իր ծառայության կենտրոնակայանները, և որտեղ տեղի ունեցավ Նրա հրաշքների մեծ մասը: Նա մարգարեանում էր այդ մարդկանց՝ ասելով, որ նրանք կլսեն մեծ հրաշքների մասին, որոնք կկատարվեն Կափառնայումում, և երբ լսեն, կասեն, որ Նա գա և նույն գործերն անի Նազարեթում, որպեսզի հավատան Նրան: Փաստն այն էր, որ Հիսուսը հանդիմանում էր նրանց քարասրտության և անհավատության համար: Նա գիտեր, որ նրանք չէին հավատում Իրեն և երբեք էլ չէին հավատալու: Մենք գիտենք դա, որովհետև Նա ավելացրեց, որ նրանք նաև կասեն. «Բժի՛շկ, բժշկի՛ր Քո անձը»՝ հղում անելով այս խոսքերին, որ ասվելու էին Նրա խաչելության ժամանակ:

> *«Եվ անցնող-դարձողները հայհոյում էին Նրան՝ իրենց գլուխները շարժելով, և ասում էին. «Ո՛վ տաճարը քանդող և երեք օրում շինող, ազատի՛ր Քեզ, եթե Աստծո Որդի ես, իջի՛ր խաչից»: Այնպես էլ քահանայապետներն էին ծաղր անում դպիրների և ծերերի հետ և ասում. «Ուրիշներին ազատեց, ինքն իրեն չի կարողանում ազատել. թե որ Իսրայելի թագավորն է, իջնի հիմա խաչից, և կհավատանք դրան»»:*
>
> – Մատթեոս 27.39-42

Իր ծառայության սկզբից մինչև վերջ Նա ասում էր, որ, չնայած այն ամենին, ինչ կլսեին, մարդիկ չէին ընդունի Իր ուղերձը: Այնուհետև Նա ավելի պարզ դարձրեց Իր ուղերձը՝ պատմելով Եղիայի և որբևայրու պատմությունը, երբ Աստված ստիպված եղավ Եղիային Իսրայելից դուրս ուղարկել, որովհետև Իսրայելի ժողովուրդը խստասիրտ էր և չէր կարողանում հավատալ: Սա այնպես զայրացրեց դպիրներին, որ նրանք Հիսուսին դուրս հանեցին, որ սպանեն, բայց Աստվածաշունչն ասում է, որ Նա անցավ նրանց միջով:

Այժմ, ցանկանում եմ, որ ինձ համար մեկ բառ գրեք և դնեք այն այնպիսի տեղում, որ հիշեք, որովհետև դա բանալի է ձեր ֆինանսական ապագայի համար: Գրե՛ք «ՈՒՂԱՐԿՎԵՑ» բառը: Ճիշտ այդպես՝ «ՈՒՂԱՐԿՎԵՑ»: Սա շատ կարևոր է:

ՈՒՂԱՐԿՎԵՑ

Ուզում եմ, որ կարդանք Գ Թագավորաց 17.7-16-րդ խոսքերը, որտեղ կգտնենք մի հզոր գաղտնիք, որը բացարձակապես կփոխի ձեր կյանքը:

> *«Եվ եղավ, որ որոշ ժամանակ հետո չորացավ հեղեղատը, որովհետև երկրում անձրև չկար: Եվ Տիրոջ Խոսքն եղավ նրան՝ ասելով. «Վե՛ր կաց, գնա՛ Սիդոնացիների Սարեփթան և այնտեղ նստի՛ր. ահա Ես այնտեղ մի որբևայրի կնոջ հրամայել եմ, որ քեզ կերակրի»: Եվ նա վեր կացավ, գնաց Սարեփթա և հասավ քաղաքի դուռը, և ահա այնտեղ մի որբևայրի կին փայտ էր ժողովում: Եվ նա կանչեց նրան և ասաց. «Խնդրե՛մ, ինձ համար մի քիչ ջուր բեր մի ամանում, որ խմեմ»: Եվ երբ որ նա գնաց բերելու, նրան կանչեց և ասաց. «Խնդրե՛մ, ինձ համար մի պատառ էլ հաց բեր ձեռքիդ»:*
>
> *Եվ նա ասաց. «Կենդանի է քո Տեր Աստվածը, որ ես մի նկանակ չունեմ, բացի մի բուռ ալյուր սափորում և մի քիչ յուղ կուժում, և ահա մի երկու փայտ եմ ժողովում, որ գնամ և պատրաստեմ այն ինձ համար և իմ որդու համար, որ այն ուտենք և մեռնենք»:*

Եվ Եղիան ասաց նրան. «Մի՛ վախեցիր, գնա՛ և արա՛ քո խոսքի պես, միայն թե առաջ ինձ համար մի փոքր շոթ շինի՛ր նրանից և բե՛ր ինձ համար և հետո քեզ և քո որդու համար կշինես: Որովհետև այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. «Սափորից ալյուրը չպիտի վերջանա, և կուժից յուղը չպակասի, մինչև այն օրը, որ Տերը անձրև տա երկրի երեսին»:

Եվ նա գնաց և արեց Եղիայի խոսքի պես, և նա և կինը և իր տունը կերան բավական ժամանակ: Եվ սափորից ալյուրը չէր վերջանում, և կուժից յուղը չէր պակասում Տիրոջ այն խոսքի պես, որ ասաց Եղիայի ձեռքով»»:

– Գ Թագավորաց 17.7-16

Թո՛ւյլ տվեք ներկայացնել տեսարանը: Սաստիկ երաշտ է, և հեղեղատը, որի մոտ Եղիան մնում էր, չորանում է: Այժմ նա պետք է տեղափոխվի նոր տեղանք՝ կերակուր և ջուր գտնելու համար: Աստված խոսում է նրա հետ և ուղղորդում. ***«Վե՛ր կաց, գնա՛ Սիդոնացիների Սարեփթան և այնտեղ նստի՛ր. ահա ես այնտեղ մի որբևայրի կնոջ հրամայել եմ, որ քեզ կերակրի»:*** Հարկ է նշել, որ այդ ժամանակ Սարեփթան քանանացիների քաղաք էր և չէր մտնում Իսրայելի կազմի մեջ:

Երբ Եղիան մոտենում է քաղաքին, տեսնում է մի որբևայրու՝ փայտեր ժողովելիս, և կանչում է նրան՝ խնդրելով, որ իրեն ջուր տա: ***«Եվ երբ որ նա գնաց բերելու, նրան կանչեց և ասաց. «Խնդրե՛մ, ինձ համար մի պատառ էլ հա՛ց բեր ձեռքիդ»»:*** Կինը պատասխանում է, որ, փաստացի, ուտելիք չունի, քանի որ ընդամենը մի բաժին կերակուր է մնացել որդու և իր համար:

Այդ ժամանակ մարգարեն անում է ծայրահեղ տարօրինակ մի բան, այնպիսի բան, որ գուցե անհավատալի է թվում՝ հաշվի առնելով հանգամանքները: Նա կնոջը պատվիրում է տուն գնալ, սկզբում իր համար շոթ պատրաստել ու բերել, ապա՝ ընտանիքի համար: Հասկանալով, թե ինչպես կարող է դա հնչել, նա իր հրահանգներին կցում է այս առաջաբանը. *«Մի՛ վախեցիր»:* Այնուհետև հռչակում է հետևյալը.

«Որովհետև այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. «Սափորից ալյուրը չպիտի վերջանա, և կուժից յուղը չպակասի, մինչև այն օրը, որ Տերը անձրև տա երկրի երեսին»»:

ԻՆՉ ԿԱՆԻ ԱՅԴ ԿԻՆԸ: ԿՀԱՎԱՏԱ՞Մ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԵՎ ԿՏԱ՞Մ ՆՐԱՆ ԻՐ ՈՐԴՈՒ ՎԵՐՋԻՆ ԿԵՐԱԿՈՒՐԸ:

«Եվ նա գնաց և արեց Եղիայի խոսքի պես, և նա և կինը և իր տունը կերան բավական ժամանակ: Եվ սափորից ալյուրը չէր վերջանում, և կուժից յուղը չէր պակասում Տիրոջ այն խոսքի պես, որ ասաց Եղիայի ձեռքով»:

Նա հավատաց, և հատուկ ուշադրություն դարձրե՛ք արդյունքին. ամեն օր կերակուր կար Եղիայի, այդ կնոջ ու նրա ընտանիքի համար: Թո՛ւյլ տվեք փոխել մեկ բառ և ասել այսպես. «Ամեն օր կերակուր կար Աստծո առաջադրանքի համար, և կերակուր՝ այդ կնոջ ու նրա ընտանիքի համար»:

Նախորդ գլխում խոսեցինք տալու վախի մասին, որի էությունը սա է. եթե տաս Աստծո առաջադրանքների համար, ապա բավականաչափ չես ունենա քո կարիքների համար: Ինչպես տեսնում եք և միշտ էլ կտեսնեք, դա տեղի չի ունենում:

Այսպիսով՝ թո՛ւյլ տվեք հարցնել. «Արդյո՞ք վերջին կերակուրը տալը որևէ բան արժեցավ որբևայրու համար»: Ո՛չ: Դա փրկեց նրա կյանքը:

Այժմ, նախքան կանցնեմ մեր քննարկմանը, որը վերաբերում է «ՈՒՂԱՐԿՎԵՑ» բառին, ուզում եմ մեկ այլ հարց ուղղել: Ինչո՞ւ մարգարեն պնդեց, որ կինը *առաջ* իր համար շոթ պատրաստեր: Ինչո՞ւ *առանձին* պատրաստեր, այլ ոչ թե *միասին:* Նա նույնիսկ խնդրեց, որ որբևայրին սկզբում շոթը բերեր իրեն, *հետո* գնար ու պատրաստեր իրենց համար (հիշե՛ք, դուք ցանկանում եք լինել հոգևոր գիտնական և հարցեր տալ):

Այս բոլոր պատմությունները կենսականորեն կարևոր գիտելիքներ են հաղորդում Թագավորության օրենքների և գործառնությունների մասին: Մի՞թե Եղիան այնքան քաղցած էր, որ չէր

ցանկանում սպասել, մինչև կինը կերակուր պատրաստեր ամբողջ ընտանիքի համար: Ո՛չ, կար շատ կարևոր պատճառ, թե ինչու նա այդպես վարվեց: Մարգարեն գիտեր, որ երբ կինը տար իրեն առաջին շոթը, այդ գործողությամբ նրա ամբողջ ալյուրն ու յուղը կբերվեին Աստծո թագավորության և Նրա առաջադրանքի օրինական իրավասության ներքո: Թո՛ւյլ տվեք կրկնել:

Երբ այդ կինը մարգարեին (Աստծո առաջադրանքին) տվեց առաջին շոթը, նրա յուղն ու ալյուրը տեղափոխվեցին այլ թագավորություն: Այժմ դրանք մտան Աստծո Թագավորության իրավասության տակ: Միայն այդ ժամանակ էր, որ Աստված կարողացավ օրինականորեն բազմացնել ալյուրն ու յուղը:

Դուք կտեսնեք, որ նույն սկզբունքը գործում է ավելի ուշ՝ Հիսուսի ծառայության մեջ, երբ հինգ հացով և երկու ձկով Նա կերակրում է 5.000-ին:

Եթե հիշում եք պատմությունը, Հիսուսն աշակերտներին ասաց գնալ և տեսնել, թե ինչ ունեն: Նրանք վերադարձան և ասացին, որ ունեն ընդամենը հինգ հաց և երկու ձուկ: Հիսուսն աշակերտներին ասաց, որ Իր մոտ բերեն հացն ու ձուկը: Աստվածաշնչում գրված է, որ Նա վերցրեց և օրհնեց դրանք և այնուհետև վերադարձրեց աշակերտներին: Ես գիտեմ, որ Հիսուսը կրոնական ոչինչ չարեց, ուստի ինչո՞ւ Նա այդպես վարվեց:

Նա ստիպված էր, այլապես հացն ու ձուկը չէին կարող բազմանալ: Հասկանո՞ւմ եք, այդ ժամանակ հինգ հացն ու երկու ձուկն օրինականորեն գտնվում էին մարդկանց իշխանության տակ: Աստված օրինականորեն ոչինչ չէր կարող անել դրանց հետ: Բայց երբ հացն ու ձուկը հոժարակամ առաջարկվեցին Հիսուսին, և Նա օրհնեց, դրանք հայտնվեցին Աստծո Թագավորության օրինական իրավասության ներքո: Միայն այդ ժամանակ հացն ու ձուկը կարողացան բազմանալ:

Նույն սկզբունքը կարելի է տեսնել Ղուկասի 5-րդ գլխում, որտեղ Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսն ամբողջ գիշեր ձկնորսություն էին արել և ոչինչ չէին բռնել: Փոխ առնելով Պետրոսի նավը՝ Հիսուսը մի փոքր հեռանում է ափից և քարոզում բազմութ-

յանը, որից հետո Նա Պետրոսին ասում է, որ նավը դեպի խորը տանի և ուռկանը նետի որսի:

Ինչպես հիշում եք, նրանք երկու նավն այնքան շատ ձկներով լցրին, որ սկսեցին սուզվել: Երբ Հիսուսը փոխ առավ նավը, Նա իրականում փոխ էր առնում ձկնորսության բիզնեսը՝ այդ օրը քարոզելու համար: Այն պահին, երբ Նա վերցրեց նավը, ամբողջ բիզնեսը հայտնվեց Աստծո Թագավորության օրինական իրավասության ներքո: Երկինքն օրինականորեն գիտության խոսք ուղարկեց Հիսուսին այն մասին, թե որտեղ էին ձկները, այստեղից էլ՝ խոշոր որսը (ես միշտ ասում եմ, որ ցանկացած ոք կարող է ձուկ որսալ, եթե Հիսուսն ասի, թե որտեղ են ձկները և ինչպես որսալ: Սա նույն սկզբունքն է, որ օգտագործելու եք, երբ զոհաբերեք Աստծո առաջադրանքների համար):

Վերադառնանք Եղիայի պատմությանը: Այս որբևայրին, ըստ էության, համագործակցեց Եղիայի հետ՝ նրա առաջադրանքում, և այդպիսով ստացավ նույն վարձքը, ինչ Եղիան: Կերակրվեցին Եղիան ԵՎ որբևայրին ու նրա ընտանիքը: Հասկանո՞ւմ եք:

Մի փոքր ուշ ավելի շատ կխոսեմ այս սկզբունքի մասին, բայց ուզում եմ անդրադառնալ այս պատմության կարևորագույն բանալիին՝ «ՈՒՂԱՐԿՎԵՑ» բառին:

Եկե՛ք ամփոփենք: Աստված Եղիային առաջադրանք էր տվել: Նա մատակարարման կարիք ուներ Իր առաջադրանքն իրականացնելու համար: Մենք գիտենք, որ Եղիան մարգարե էր, ուստի Նա տանում էր Տիրոջ Խոսքն այնտեղ, ուր Աստված ուղարկում էր նրան: Բայց Աստված կարիք ուներ, որ Իր առաջադրանքը ֆինանսավորվեր, իսկ դա մշտապես ներառում է *մարդկանց:*

Այս դեպքում Աստված չկարողացավ Իսրայելում գտնել մի որբևայրու, որը կունենար հավատք՝ Նրան հնազանդվելու համար: Աստված գիտեր, թե ինչ էր ուզում անել, բայց Նրան անհրաժեշտ էր մեկը, ով համաձայնության կգար Երկնքի հետ, որպեսզի Նա կարողանար օրինականորեն անհրաժեշտ մատակարարում բերել Եղիային:

Հիշե՛ք, ոչ մի տեղ ուտելիք չկար: Մարդիկ ամենուրեք մահանում էին: Հարցը պարզապես սնունդ գտնելը կամ շուկա գնալը

չէր, որովհետև ընդհանրապես սնունդ չկար: Եղիայի մատակարարումը պետք է գար Աստծո Հոգուց:

Քանի որ Իսրայելում ոչ ոք չկար, որ հավատար Իրեն, Աստված ստիպված եղավ դուրս գալ Իսրայելից և մեկ այլ երկրում գտնել մի որբևայրու, որն ուներ հավատքի սիրտ: Եվ ինչպես ավելի վաղ ասացինք, Եղիան ուղարկվեց այս առանձնահատուկ որբևայրու մոտ, որովհետև Աստված գիտեր, որ նա կհավատար Իրեն:

Երբ այս կինը Աստծուն հատկացրեց առաջին տեղը և հնազանդվեց իրեն ուղղված Տիրոջ Խոսքին, երաշտի ամբողջ ժամանակահատվածում հոգ տարվեց ոչ միայն Աստծո առաջադրանքի՝ Եղիայի, այլև նրա ընտանիքի համար:

Այսպիսով՝ ահա պատմության բուն իմաստը...

Երբ Աստված ուզում է ինչ-որ բան իրականացնել, Նա նայում է, որ երկրի վրա գտնի մեկին, ում կարող է վստահել, մեկին, ով կհնազանդվի Իրեն և կիրականացնի Իր ծրագրերը: Նրան նաև անհրաժեշտ են մարդիկ, որոնք կֆինանսավորեն Նրա ծրագրերը:

Այսպիսով, թո՛ւյլ տվեք շատ հստակ ասել. եթե ուզում եք մեծ գաղափարներ ունենալ, եթե ուզում եք, որ Աստված ձեզ հրաշալի բիզնես-մտահղացումներ տա, ապա պետք է համապատասխանեք դրանք ստանալու պահանջներին: Աստված գիտի ձեր սիրտը, և Նա աչքի է անցկացնում երկիրը, որ գտնի նրանց, ում կարող է վստահել Իր առաջադրանքները: Նա հետևում է, որ տեսնի, թե ում կարող է վստահել՝ Իր առաջադրանքները ֆինանսավորելու համար: Այնուհետև ուղարկում է այդ մարդուն Իր ծրագիրը՝ անհրաժեշտ գումարները հավաքագրելու համար: Հասկանո՞ւմ եք:

Հիշե՛ք, Տիրոջ Խոսքն ՈՒՂԱՐԿՎԵՑ այս որբևայրուն, և դա փրկեց նրա կյանքը:

Հիշում եմ, թե ինչպես Տիրոջից խոսք ստացա՝ քայլ անելու և սկսելու իմ բիզնեսը՝ նոր առաջնահերթությամբ և հանձնարարությամբ: Ես արեցի դա, և դա փրկեց իմ կյանքը:

Աստված փնտրում է նրանց, ովքեր ունեն հնազանդ սիրտ՝

Նրա առաջադրանքները ֆինանսավորելու համար:

Վերանայենք այն սկզբունքները, որ տեսնում ենք այս պատմության մեջ:

1. Աստված երկրային տիրույթում ունի առաջադրանքներ, որոնք ցանկանում է իրականացնել:
2. Յուրաքանչյուր առաջադրանք մարդկանց կարիք ունի:
3. Յուրաքանչյուր առաջադրանք ֆինանսավորման կարիք ունի:
4. Աստված աչքի է անցկացնում երկիրը, որ գտնի մարդկանց, ովքեր կիրականացնեն Իր առաջադրանքները:
5. Աստված աչքի է անցկացնում երկիրը, որ գտնի նրանց, ովքեր կֆինանսավորեն Իր առաջադրանքները:
6. Երբ ֆինանսավորում ենք Աստծո առաջադրանքները, երկնքին օրինական իրավասություն ենք տալիս՝ ոչ միայն գործածելու մեզ Աստծո առաջադրանքները ֆինանսավորելու համար, այլև ապահովելու ավելցուկ՝ մեր անձնական կարիքները հոգալու համար:

Առատաձեռն լինելը երբեք թանկ չի արժենա ձեզ: Ես իմ եկեղեցուն ասում եմ. «Միշտ ասեք՝ այո՛»:

ԳԼՈՒԽ 4

Ո՞ՒՄ ՓՈՂՆ Է ԴԱ

Երբևէ գիտակցե՞լ եք, որ ձեր գումարից որոշ մաս ձերը չէ:

Գիտեմ, որ խենթ է հնչում, բայց երբևէ գիտակցե՞լ եք, որ հնարավոր է՝ Աստված դրել է այդ գումարը ձեր ձեռքում մեկ ուրիշի համար:

Հավանաբար չեք մտածել կյանքի մասին այդ տեսանկյունից, բայց պիտի մտածեք, որովհետև դա մեկ այլ բանալի է՝ ձեր կյանքում աճ ունենալու համար:

Մտածեք, թե ինչ եմ ասում: Մենք խոսում ենք Աստծո առաջադրանքները ֆինանսավորելու մասին, ճի՞շտ է: Եվ ասացինք, որ Աստված աչքի է անցկացնում երկիրը, որպեսզի գտնի մարդկանց, որոնք ունեն սիրտ Թագավորության համար և կֆինանսավորեն Նրա առաջադրանքները: Մենք գիտենք, որ փողը մարդկանց ձեռքերում է, և եթե Աստված պատրաստվում է ֆինանսավորել Իր առաջադրանքները, Նա պետք է դնի փողը նրանց ձեռքերում, ովքեր պատրաստ են բաց թողնելու այն, և առատաձեռն են թե՛ Նրա, թե՛ Նրա ժողովրդի հանդեպ:

Այսպիսով՝ ի՞նչ կա ձեր ձեռքերում: Երբ նայում եք, թե ինչ ունեք, գիտակցո՞ւմ եք, որ Աստված գուցե տվել է դա մեկ ուրիշի համար: Կամ, գուցե, տվել է, որ ֆինանսավորեք այն ծրագիրը, որ Նա ցանկանում է իրականացնել:

Իհարկե, իրավական տեսանկյունից, այն, ինչ ունեք, ձերն է, և դուք եք որոշում, թե ինչպես վարվեք: Բայց եթե Աստված պատրաստվում է գումարներ դնել մարդկանց ձեռքերում, ես ուզում եմ լինել Նրա կողմից հաստատված թեկնածուների ցանկում: Իսկ դո՞ւք:

> *«Բայց Նա, որ սերմ ցանողին սերմ է պարգևում, և հաց՝ կերակուրի համար, Նա կպարգևի և կշատացնի ձեր սերմունքը և կաճեցնի ձեր արդարության պտուղը: Դուք ամեն կերպ հարստացած կլինեք, որպեսզի առատաձեռն լինեք ամեն առիթով, և մեր միջոցով ձեր առատաձեռնությունը գոհություն կբերի Աստծուն»:*
>
> – Բ Կորնթացիների 9.10,11, NIV

Մենք արդեն նայել ենք այս տեքստին, բայց այստեղ մի բան կա, որը գուցե բաց եք թողել: Տասներորդ խոսքում ասվում է, որ Աստված սերմ ցանողին *պարգևում է* սերմ, և հաց՝ կերակուրի համար:

Մտածե՛ք այս մասին. Աստված սերմ ցանողին տալիս է սերմ, և հաց՝ կերակուրի համար: Հացը՝ կերակուրի համար, ներկայացնում է այն ամենը, ինչի կարիքն ունեք ձեր տանը՝ Աստծո սահմանած առատության կյանքով ապրելու համար: Բայց Նա *սերմնացանին* է *սերմ* տալիս:

Երբևէ այգի տնկե՞լ եք կամ խոտ ցանե՞լ եք ձեր բակում: Դուք սկսում եք՝ սերմը հողի մեջ դնելով, և ձեռքում եղածը ցանելուց հետո կրկին մեկ բուռ սերմ եք վերցնում: Այստեղ որոշակի հոսք կա. երբ բաց եք թողնում ձեռքում եղած սերմը, ձեր ձեռքը լցվում է նոր պաշարով, որը նույնպես ցանում եք: Այն արտահայտությունը, որ *Աստված սերմ է տալիս սերմ ցանողին*, ունի միևնույն նշանակությունը, ինչ Աստված սերմ է տալիս նրան, ով ցանելու գործընթացի մեջ է:

ԱՍՏՎԱԾ ՍԵՐՄ Է ՏԱԼԻՍ ՆՐԱՆ, ՈՎ ՇԱՐՈՒՆԱԿ ՑԱՆՈՒՄ Է:

Պողոսը շարունակում է՝ ասելով, որ Աստված նաև տալիս է մեզ հաց, որի կարիքն անշուշտ ունենք, բայց այս հատվածում շեշտը ցանելու վրա է և այն բանի, թե ինչ ազդեցություն ունի ցանելը մեր, ինչպես նաև նրանց կյանքում, ում հանդեպ առատաձեռն ենք: Ինչպես արդեն ասացինք, դա շարժում է մարդկանց սրտերը դեպի Աստված:

Ելնելով դրանից՝ կարծում եմ, որ բոլորս կարող ենք համաձայնել, որ Աստված ցանկանում է ցանել այնքան շատ սերմ, որքան հնարավոր է, որպեսզի կարողանա հսկայական հունձք ունենալ: Այսպիսով, եթե դուք Աստված լինեիք, ո՞ւմ սերմ կտայիք: Նրան, ով ծույլ է ու երբեք չի պատրաստվում ցանե՞լ, թե՞ նրան, ով եռանդուն կերպով ցանում է: Կարծում եմ՝ պատասխանն ակնհայտ է:

Երբ հավատարիմ ենք մեր ունեցածի մեջ, Աստված ասում է, որ կավելացնի մեր սերմունքը, որպեսզի կարողանանք ավելի շատ ցանել և ունենանք ավելի մեծ ազդեցություն երկրի վրա Իր Թագավորության համար:

Դուք նկատեցի՞ք, որ Պողոսն ասաց, որ երբ ցանում եք և հնձում, ձեր սերմունքն ավելանում է, որը հնարավորություն է տալիս ձեզ առատաձեռն լինելու ամեն առիթով: Եթե սա ճշմարիտ է (իհարկե՝ ճշմարիտ է), այդ դեպքում ձեր սերմունքն այն գումարն է, որ հենց հիմա ձեր ձեռքում է և ձեզ առատաձեռն լինելու հնարավորություն է տալիս: Ձեր սերմունքը պետք է պատրաստ լինի, նախքան դուք կկարողանաք առատաձեռնություն ցուցաբերել:

Հիշեցնեմ, որ այն գումարը, որ ձեր ձեռքում է, ամբողջությամբ ձերը չէ: Դրանից որոշ մաս Աստծուց տրվել է ձեզ՝ որպես սերմ: Ցանելու և հնձելու այս գործընթացը նման է հոսքի: Մենք ցանում ենք, այնուհետև հնձում, և քանի դեռ շարունակում ենք դա անել, քանի դեռ չենք ուտում մեր սերմը, մեր հունձքն ավելանում է, ավելանում է նաև ավելի առատաձեռն լինելու մեր կարողությունը:

Անշուշտ, երբ քաղցած եք և հացի կարիք ունեք, ձեր սերմի բիզնեսից նաև վերցնում եք այն, ինչ ձեզ անհրաժեշտ է: Երբ սերմի բիզնեսն աճում է, ավելանում է նաև դրանից հաց վերցնելու կարողությունը:

Բայց ես ուզում եմ, որ մի փոքր խորամուխ լինենք այս մտածելակերպի մեջ:

Թո՛ւյլ տվեք շեշտել այն միտքը, որ Աստված տալիս է Իր սերմը նրան, ով ունի ցանելու սիրտ, այլ ոչ թե նրան, ով մի օր գուցե կմտածի

ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ ԱՊՐԵԼ ՁԵՐ ԿՅԱՆՔԸ՝ ՏՆՕՐԻՆԵԼՈՎ ՄԻԱՅՆ ՁԵՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԹԵ՞ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԱՊՐԵԼ ՁԵՐ ԿՅԱՆՔԸ՝ ՏՆՕՐԻՆԵԼՈՎ ՁԵՐ ԵՎ ԱՍՏԾՈ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ:

այդ մասին: Նա Իր սերմը տալիս է սերմնացանին:

Ահա հարցը. ցանկանո՞ւմ եք ապրել ձեր կյանքը՝ տնօրինելով միայն *ձեր* գումարները, թե՞ ցանկանում եք ապրել ձեր կյանքը՝ տնօրինելով ձեր և Աստծո գումարները:

Ջեյմսը և Էլլան եկան մեր եկեղեցի, որովհետև լսում էին այնպիսի բաներ, որոնք երբեք չէին լսել ամիշների համայնքում, որտեղ մեծացել էին: Թագավորության գաղափարները նոր էին նրանց համար, և նրանք Թագավորության հրաշալի ուսանողներ էին: Ամուսինները կրկին ու կրկին լսում էին Թագավորության կյանքի մասին ուղերձները, որոնք ուսուցանվում էին «Հավատքի Կյանք» եկեղեցում:

Մի օր Ջեյմսը Տիրոջն ասաց, որ ուրիշներից լսում է պատմություններ այն մասին, թե ինչպես է Թագավորությունը հրաշալի բաներ անում նրանց կյանքում, և ցանկանում է, որ ինքն էլ նման վկայություն ունենա: Նա որոշեց ստուգել Թագավորության այն օրենքները, որոնց մասին լսում էր: Ջեյմսը կնոջ հետ մեկնեց արձակուրդի, և նրանք ժամանակի մեծ մասն անցկացրին՝ լսելով կրկնակի չափաբաժնի մասին ուղերձները, որոնք ես սովորեցնում էի այդ ժամանակաընթացքում: Նոր էր լույս տեսել իմ՝ *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Հանգստի զորությունը»* գիրքը, և ես սովորեցնում էի այդ գրքից: Ջեյմսը և կինը որոշում կայացրին, որ, նախքան սերմ ցանելը, խորամուխ են լինելու Խոսքի մեջ:

Նրանք որոշեցին ցանել սերմ՝ 10.000 դոլարի հունձք ստանալու համար, որն անհրաժեշտ էր որոշ վերանորոգման աշխատանքների և այն կարիքների համար, որոնք ունենում են բոլոր ընտանիքները, որտեղ կան մանկահասակ երեխաներ: Նրանք չգիտեին, թե որտեղից էր գումարը գալու, բայց մինչ այդ բավականաչափ ուսումնասիրել էին Թագավորությունը և զգում էին, որ ունեն հավատք դրա համար:

Այդ ժամանակ Ջեյմսն ուներ մեքենաների վերանորոգման իր սեփական գործը: 10.000 դոլարի համար սերմ ցանելուց կարճ ժամանակ անց, տնից դուրս գալիս, նա խոստովանեց Էլլային, որ կրկնակի չափաբաժնի մասին ուսումնասիրելուց հետո իսկա-

պես զգում է, որ իրենք պետք է հավատան կրկնակի չափաբաժնի համար: Նա ասաց, որ հավատում է 20.000 դոլարի հատուցման համար: Էլլան ասաց, որ մի փոքր ցնցված է, բայց համաձայնեց ամուսնու հետ: Երբ Ջեյմսը դուրս էր գալիս տնից, նա ասաց. «Շա՛տ լավ, 20.000 դոլար»:

Այդ օրը հերթական օրերից մեկն էր արհեստանոցում: Վերանորոգման գործով Ջեյմսին այցելեց նրա մշտական հաճախորդներից մեկը, և երբ Ջեյմսն ավարտեց պատվերը գրելը, նրա հաճախորդը նստեց Ջեյմսի աշխատասենյակում և պատմեց, թե վերջերս ինչպիսի հուսահատ իրավիճակում էր հայտնվել իր կովերի պատճառով: Պարզվում է, կովերը կոտրել էին ցանկապատը և փախել: Նրա ագարակը սահմանակից էր ազգային անտառին, ուստի կովերը թափառել էին այնտեղ, որտեղ ցանկացել էին: Ջեյմսի հաճախորդը տարեց էր: Նա շարունակեց իր խոսքը՝ ասելով, որ ծերանում է և անկարող է դառնում խնամել կովերին, ուստի ուզում է ազատվել դրանցից: Նրա հաջորդ խոսքերը ցնցեցին Ջեյմսին այն աստիճան, որ նա ստիպված եղավ հարցնել՝ արդյո՞ք ճիշտ լսեց ընկերոջը:

Ընկերն ասաց. «Վե՛րջ կովերին, և դա է պատճառը, որ այսօր բոլորին քեզ եմ տալիս: Այսօրվանից դրանք քոնն են»: Ջեյմսը չգիտեր ինչ ասել: Նա չուներ հողակտոր: Նա ապրում էր քաղաքում՝ 1000մ^2 հողատարածքի վրա, և աշխատում էր որպես ավտոմեխանիկ: Այո՛, նա մեծացել էր ամիշների մեջ և շրջապատված էր եղել կովերով, բայց դա շատ տարիներ առաջ էր: Նա պատրաստվում էր ասել՝ ո՛չ, երբ հիշեց իրենց սերմի մասին: Գուցե ինչ-որ բան կար այդտեղ, որ նա պետք է ստուգեր:

Ընկերոջը լրացուցիչ հարցեր տալուց հետո նա պարզեց, որ ագարակում կային 23 «Սև Անգուս» ցեղատեսակի կովեր և երեք ձի: Ջեյմսը հիշեց, որ որոշ ժամանակ առաջ ինչ-որ մեկն իրեն ասում էր, որ ուզում է գնել եղջերավոր անասունների նախիր: Նա չէր ցանկանում առանձին-առանձին կովեր գնել, այլ հետաքրքրված էր ամբողջ նախիրով: Ջեյմսը զանգեց այդ մարդուն, և վերջինս հաստատեց, որ իսկապես հետաքրքրված է դրանով: Այնուհետև Ջեյմսը հարցրեց, թե որքան էր նա պատրաստ վճարելու

նախիրի համար: Այդ մարդը մի պահ մտածեց, հետո պատասխանեց. «Օ՜հ, հավանաբար՝ 20.000 դոլար»:

Ջեյմսը չէր կարողանում հավատալ լսածին: Այս ամենը կատարվեց այն բանից հետո, երբ նա տնից դուրս եկավ և Էլլային ասաց կրկնակի չափաբաժնի մասին, որը ստացել էր Սուրբ Հոգուց: Նա ասաց, որ կովերին հավաքելը և բեռնատարով իրենց նոր տուն տանելը բավականին ծանր աշխատանք էր, բայց արեց դա: Հետո ասաց, որ միանգամայն համոզված է, որ Աստծո Թագավորությունը կարող է անել ցանկացած բան, և ինքն այլևս սահմանափակված չէ սեփական հնարավորություններով:

Երբ այդ օրը նա գնաց տուն և կովերի մասին պատմեց Էլլային, վերջինս ապշեց: Եթե Ջեյմսին ու Էլլային հարցնեք Աստծո շնորհքի մասին, ավելի լավ է՝ մի քանի ժամ տրամադրեք, որովհետև նրանք շատ բան կունենան ասելու:

Սա հրաշալի օրինակ է այն բանի, երբ Սուրբ Հոգին ցույց է տալիս մարդուն, թե որտեղ հնձի այն բերքը, որ ստացվում է Աստծո հանդեպ առատաձեռն լինելու արդյունքում: Երբ ցանում ենք, պետք է հիշենք, որ այն, ինչ Սուրբ Հոգին ցույց է տալիս, կարող է լինել, այսպես ասած, *խենթություն:* Նկատի ունեմ, որ Ջեյմսը ոչ մի կերպ չէր կարող հանգել այդ գաղափարին՝ մատիտն ու թուղթը ձեռքին, աշխատելով իր T-աձև սողնակով և մտովի դիտարկելով բոլոր տարբերակները:

Օրինակ բերենք Պետրոսին: Համոզված եմ, որ նույնիսկ ամենախելահեղ մտքերում նա երբեք չէր պատկերացնի, որ կարող է ձկան բերանում մետաղադրամ գտնել՝ հարկերը վճարելու համար, կամ ջրի ափով քայլող Վարդապետը կարող էր իրեն հստակ ասել, թե ուր նետեր ուռկանը՝ կյանքում անկրկնելի որս ունենալու համար:

Նայե՛ք Դրենդային և ինձ, որ ինը տարի շարունակ ապրել ենք պարտքերի, ճնշումների ու խառնաշփոթի մեջ: Անհնար էր պատկերացնել, որ օրերից մի օր կունենանք ընկերություն, որը կօգնի մարդկանց՝ ազատվել պարտքերից, կամ, առավել ապշեցնող, կունենանք *«Ֆինանսների կարգավորում»* հեռուստատեսային հաղորդումը, որը կհեռարձակվի բոլոր ժամային գոտիներում:

Երբեք չպետք է սահմանափակել Աստծուն:

Այսպիսով, վերհիշենք, որ Աստված սերմ է տալիս սերմնացանին՝ նրան, ով ցանում է և ցանկանում է ցանել:

Եկե՛ք առաջ շարժվենք: Այժմ, ուզում եմ՝ ուշադրություն դարձնենք, իմ կարծիքով, ամենախոր առակներից մեկին, որի միջոցով Հիսուսը սովորեցրեց, թե ինչպես է Աստված աշխատում մարդկանց հետ, և ինչպես պետք է նրանք համապատասխանեն Աստծո կողմից գործածվելու պահանջներին: Այս մեկն անկասկած ստիպում է ձեզ կանգ առնել և մտածել:

«Եվ Իր աշակերտներին էլ ասաց. «Մի հարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ, և նրանից գանգատ եղավ նրան, իբր թե նա վատնում է նրա ստացվածքը: Եվ նրան կանչեց և ասաց. «Սա ի՞նչ է, որ ես լսում եմ քեզնից. տո՛ւր քո տնտեսության համարը. որովհետև այլևս չես կարող տնտես լինել»:

Տնտեսն էլ իր մտքում ասաց. «Ի՞նչ անեմ, որ իմ տերը տնտեսությունն ինձնից առնում է. հերկել չեմ կարող, մուրալու ամաչում եմ: Գիտեմ՝ ինչ կանեմ, որ երբ տնտեսությունից դուրս գամ, ինձ ընդունեն իրենց տները»:

Եվ իր տիրոջ պարտականներին մեկ-մեկ իրեն մոտ կանչեց և ասաց առաջինին. «Ինչքա՞ն ես պարտական իմ տիրոջը»:

Նա էլ ասաց. «Հարյուր մար ձեթ»: Եվ նրան ասաց. «Ա՛ռ գիրդ և նստիր՝ շուտով գրի՛ր հիսուն»:

Հետո մյուսին ասաց. «Դո՞ւ ինչքան ես պարտական»: Նա էլ ասաց. «Հարյուր քոռ ցորեն»: Եվ նրան ասաց. «Ա՛ռ գիրդ և գրի՛ր ութսուն»:

Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որ իմաստությունով գործեց: Որովհետև այս աշխարհի որդիները լույսի որդիներից իմաստուն են իրենց ցեղի մեջ:

Եվ ես ասում եմ ձեզ. անիրավ մամոնայից բարեկամնե՛ր արեք ձեզ համար, որ երբ որ պակասվեք, հավիտենական բնակարանների մեջ ընդունեն ձեզ:

Քիչ բանի մեջ հավատարիմը շատ բանի մեջ էլ հավատարիմ է, և քիչ բանի մեջ անիրավը շատ բանի մեջ էլ անիրավ է: Արդ, թե որ անիրավ մամոնայի մեջ հավատարիմ չեղաք, ճշմարիտ հարստությունն ո՞վ կտա ձեր ձեռքը: Եվ եթե օտար բանի մեջ հավատարիմ չեղաք, ձերն ո՞վ կտա ձեզ:

Ոչ մի ծառա չի կարող երկու տիրոջ ծառայել, որովհետև կա՛մ մեկին կատի և մյուսին կսիրի, կա՛մ մեկին կպատվի և մյուսին կարհամարհի: Չեք կարող Աստծուն ծառայել և մամոնային»:

Այս բոլոր բաները լսում էին փարիսեցիները, որ արծաթասեր էին, և ծիծաղում էին Նրա վրա: Եվ նրանց ասաց. «Դուք եք, որ մարդկանց առջև ձեր անձերը արդարացնում եք, բայց Աստված գիտի ձեր սրտերը, որովհետև մարդկանց առջև բարձրը պիղծ է Աստծո առջև»»:

– Ղուկաս 16.1-15

Այս առակում դիտարկելու այնքա՛ն բան կա: Նախևառաջ՝ մենք տեսնում ենք, որ մի հարուստ սեփականատեր իր գործերի կառավարիչ (տնտես) էր նշանակել մեկին, ով, ակնհայտորեն, վատնում էր նրա ունեցվածքը, որի հետևանքով զրկվեց հետագա կառավարման իրավունքից: Իմանալով, որ կորցնում էր աշխատանքը՝ այս մարդն արագ կանչեց նրանց, ովքեր պարտական էին իր տիրոջը, և ասաց, որ նրանք կարող էին փակել իրենց հաշիվը հսկայական զեղչով, երբեմն՝ կես գնով, եթե միայն արագ գործեին:

Անշուշտ, սեփականատերը բոլորովին անտեղյակ էր, թե ինչ էր անում կառավարիչը: Բայց անիրավ կառավարիչը մտածում էր, որ եթե այդ մարդկանց շահավետ առաջարկ աներ, նրանք բարեհաճ կլինեին իր հանդեպ, երբ հեռանար տիրոջ մոտից, և հուսով էր, որ իրեն աշխատանք կառաջարկեին իրենց ձեռնարկությունում: Երբ տերը լսեց, թե ինչ էր արել անիրավ կառավարիչը, կանչեց նրան և.

***«Տերը գովեց անազնիվ տնտեսին, որ խորաթափանցորեն գործեց»* (NIV):**

«Խորաթափանցություն» բառի սահմանումն է. ունենալ կամ ցուցաբերել խելացի դատողություն կամ հնարամտություն՝ հատկապես գործնական հարցերում: Հակված լինել հմուտ և խորամանկ գործելակերպերի. ճարպիկ[11]:

Սեփականատերը տեսավ, որ կառավարիչն ընդունակ էր մշակելու և իրականացնելու այնպիսի ծրագիր, որն օգուտ կբերեր, այս դեպքում, ոչ թե տիրոջը, այլ հենց իրեն. մի բան, որը նա չէր տեսել կառավարչի կողմից՝ հօգուտ իրեն: Երբ հերթը հասավ սեփական անձի մասին հոգալուն, կառավարիչը ծրագիր մշակեց, այն էլ՝ շատ խելացի ու մանրակրկիտ: Նա նախաձեռնություն ցուցաբերեց անձնական գործերի և բարեկեցության հարցում, բայց նման բան չարեց իր տիրոջ համար: Թո՛ւյլ տվեք չափազանց ուղիղ լինել այստեղ. նա վարձկան էր:

Այժմ ուզում եմ շատ խիստ հարց ուղղել. արդյո՞ք դուք քրիստոնյա վարձկան եք:

Արդյո՞ք ավելի մտահոգված եք ձեր բարեկեցությամբ, քան Աստծո գործով: Արդյո՞ք ավելի մտահոգված եք ձեր անձնական հոգսերով ու կարիքներով, քան Աստծո հոգսերով ու կարիքներով: Արդյո՞ք վատնում եք Աստծո ունեցվածքը:

Ես գիտեմ, որ սրանք խիստ հարցեր են: Այդ է պատճառը, որ ասացի, որ այս առակը շատ խորն է, որովհետև այն անմիջապես դիպչում է սրտին և բացահայտում ցանկացած սխալ վերաբերմունք, որ կարող է թաքնված լինել այնտեղ:

Հիսուսը Հովհաննեսի 10.11-13 խոսքերում պատկերավոր ներկայացնում է, թե ինչ է վարձկանը.

> *«Ես եմ բարի Հովիվը: Բարի հովիվն իր անձը դնում է ոչխարների համար: Բայց վարձկանը, որ հովիվ չէ, որ ոչխարներն իրենը չեն, տեսնում է գայլին գալիս և թողնում է ոչխարները և փախչում, և գայլը հափշտակում է նրանց և ցրում է ոչխարներին: Եվ վարձկանը փախչում է, որովհետև վարձկան է և ոչխարների համար հոգս չունի»:*
>
> – Հովհաննես 10.11-13

11 Ամերիկյան ժառանգություն®Անգլերենի բառարան, հինգերորդ հրատարակություն

Աստվածաշնչի «NKJV» թարգմանության մեջ (խոսք 13) նույնպես գրված է.

> *«Վարձկանը փախչում է, որովհետև վարձկան է և հոգ չի տանում ոչխարների համար»:*

Անիրավ կառավարիչը զրկվեց տիրոջ գումարները տնօրինելու իրավունքից, որովհետև իրականում հոգ չէր տանում տիրոջ բարեկեցության համար. նա հոգ էր տանում միայն իր բարեկեցության համար: Անշուշտ, նա դեռևս ընդունակ էր գնալու և իր համար գումար վաստակելու, բայց այլևս հնարավորություն չէր ունենա տնօրինելու իր ԵՎ տիրոջ գումարները:

Ես հավատում եմ, որ մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ վարձկանի մտածելակերպը բուռն տարածում է գտնում Ամերիկայում և աշխարհում:

Համոզված եմ, որ եղել եք ռեստորանում և տեսել եք կեղտոտ սեղաններ ու կեղտոտ հատակ, իսկ ետևում նկատել եք մի քանի աշխատակցի, որոնք անգործության են մատնված: Կամ՝ մտել եք արագ սննդի ռեստորան, փակվելուց հավանաբար 30 րոպե առաջ, ու ցնցվել՝ տեսնելով, որ բոլոր աթոռները դրված են սեղաններին, իսկ աշխատակիցները, ժամացույցի մոտ շարք կանգնած, սպասում են, թե երբ են հեռանալու: Առանց հարցնելու՝ արդեն պարզ է, որ տերն այնտեղ չէ: Նրանք վարձկաններ են: Նրանց չի հոգում բիզնեսի շահույթը: Նրանք այնտեղ են՝ աշխատավարձ ստանալու համար, և վերջ:

Բազմաթիվ գործատուներ ինձ ասում են, որ իրավիճակն այնքան է վատացել, որ եթե որևէ աշխատակից պարզապես ժամանակին ներկայանա աշխատանքի, ապա կառանձնանա ամբոխի մեջ: Գործատուներին անհրաժեշտ են սեփականատերեր, ոչ թե վերցնողներ: Նրանք ցանկանում են ունենալ այնպիսի աշխատակիցներ, որոնք կաշխատեն և հոգ կտանեն այնպես, կարծես սեփական բիզնեսն են ղեկավարում: Նրանք ասում են, որ այն աշխատակիցը, որն այդպիսի վերաբերմունք է դրսևորում, մշտապես առաջխաղացում և պահանջարկ կունենա:

Նույնկերպ Աստված է վարվում. Նա փնտրում է մարդկանց, որոնք հոգում են այն բանի համար, ինչի համար Ինքն է հոգում, և ատում են այն, ինչ Ինքն է ատում:

Թագավորաց Առաջին գրքի 15-րդ գլխում Աստված Սավուղ թագավորին ասում է հարձակվել ամաղեկացիների վրա այն բանի համար, ինչ նրանք արեցին Իսրայելին Եգիպտոսից դուրս գալու ճանապարհին: Սավուղին ասվեց ողջ չթողնել թագավորին ու մարդկանց: Նրա զորքը իր հետ չպիտի բերեր որևէ կենդանի, բայց Սավուղն արեց այն, ինչ իրեն արգելվել էր.

> *«Բայց Սավուղը և ժողովուրդը խնայեցին Ագագին և ոչխարներին և արջառներից լավերին և գերերին և գառներին և բոլոր պատվական բաներին և չուզեցին նրանց բնաջինջ անել, այլ բնաջինջ արին բոլոր անարգ և անպիտան անասուններին»:*
>
> – Ա Թագավորաց 15.9

Ահա՛ թե ինչ ասաց Աստված 10-րդ և 11-րդ խոսքերում.

> *«Եվ Տիրոջ Խոսքը Սամուելին եղավ՝ ասելով. «Զղջացի, որ Սավուղին թագավոր եմ արել. որովհետև Ինձնից ետ դառավ և Իմ խոսքերը չկատարեց...»»:*

Այնուհետև տեսնում ենք, որ Ա Թագավորաց 16.1-ում Աստված խոսում է Սամուելի հետ Սավուղի մասին.

> *«Եվ Տերը Սամուելին ասաց. «Մինչև ե՞րբ պիտի Սավուղի համար սուգ անես. որովհետև Ես նրան մերժեցի, որ Իսրայելի վրա չթագավորի. եղջյուրդ յուղով լցրո՛ւ և ե՛կ քեզ ուղարկեմ բեթլեհեմացի Հեսսեի մոտ, որովհետև նրա որդիներից մեկին ինձ համար թագավոր տեսա»»:*

Ինչպես անիրավ կառավարիչը որակազրկվեց սեփականատիրոջ գործերը կառավարելու իրավունքից, այնպես էլ որակազրկվեց Սավուղը: Եվ գիտե՞ք՝ ինչ. դուք և ես նույնպես կարող ենք որակազրկվել:

Ինչ է Աստված փնտրում: Ո՞ւմ Նա կվստահի:

> *«Եվ նրան փոխելով՝ Դավթին նրանց համար թագավոր կանգնեցրեց, որ նրա համար էլ վկայություն տվեց և ասաց. «Հեսսեի որդի Դավթին գտա Իմ սրտի պես մարդ, որ Նա Իմ ամբողջ կամքը կանի»»:*
>
> – Գործք 13.22

Եթե մենք կարող ենք որակազրկվել, կարող ենք նաև որակավորում ստանալ: Գուցե ասեք. «Շա՛տ լավ, Գա՛րի, իսկ ինչպե՞ս անեմ դա»: Այս առակը պատասխանում է ձեր հարցին:

> *«Քիչ բանի մեջ հավատարիմը, շատ բանի մեջ էլ հավատարիմ է, և քիչ բանի մեջ անիրավը, շատ բանի մեջ էլ անիրավ է: Արդ թե որ անիրավ մամոնայի մեջ հավատարիմ չեղաք, ճշմարիտ հարստությունն ո՞վ կտա ձեր ձեռքը: Եվ եթե օտար բանի մեջ հավատարիմ չեղաք, ձերն ո՞վ կտա ձեզ:*
>
> *Ոչ մի ծառա չի կարող երկու տիրոջ ծառայել. որովհետև կա՛մ մեկին կատի և մյուսին կսիրի, կա՛մ մեկին կպատվի և մյուսին կարհամարհի. չեք կարող Աստծուն ծառայել և մամոնային»:*
>
> – Ղուկաս 16.10-13

Թո՛ւյլ տվեք պարզ խոսել. դուք պետք է հանձնեք հավատարմության քննություն: Եթե վստահելի եք քչի մեջ, վստահելի կլինեք նաև շատի մեջ: Քննությունը միշտ սկսվում է ֆիզիկականից և տեղափոխվում հոգևոր ոլորտ: Դուք պետք է վստահելի լինեք աշխարհիկ հարստությունը տնօրինելու մեջ, նախքան Աստված կվստահի ձեզ Իր հարստությունը: Եթե դուք վստահելի չեք մեկ ուրիշի ունեցվածքում, ո՞վ կտա ձեզ ձերը: Իհարկե՝ ո՛չ Աստված:

Շա՛տ լավ, ահա և առակի կիրառությունը մեր անձնական կյանքում:

Քրիստոնյաների մեծ մասն Աստծուն տալիս է մնացորդները:

Քրիստոնյաների մեծ մասը նայում է իր բյուջեին և որոշում. «Սա այն է, ինչ ես կարող եմ տալ»: Մինչդեռ, նրանք որևէ խնդիր չունեն նույն օրը բոլորովին նոր մեքենա գնելու համար:

Ես չեմ փորձում ստիպել որևէ մեկին դատապարտված զգալ, և Աստծուն, անկասկած, չի հետաքրքրում, որ դուք գեղեցիկ մեքենա ունեք: Ես պարզապես հարցնում եմ. «Ուզում եք տնօրինել միայն ձեր գումարները, թե՞ ձեր և Աստծո»:

Եթե «Google»-ում տեղեկություն փնտրեք այն մասին, թե որքան է զոհաբերում միջին քրիստոնյան, գուցե ապշեք: Ես տեսել եմ մի վիճակագրություն, որի համաձայն միջին քրիստոնյան եկեղեցուն շաբաթական տալիս է 13 դոլարից մի փոքր ավելի[12]:

Ես բազմաթիվ վիճակագրական տվյալներ եմ ուսումնասիրել զոհաբերության վերաբերյալ, և բոլորն էլ հիասթափեցնող են եղել: Ինչպես ասացի, քրիստոնյաների մեծը մասը տալիս է Աստծուն իր մնացորդները: Կրկին, խնդրո՛ւմ եմ, հասկացե՛ք, ես չեմ փորձում դատապարտություն բերել կամ մեղքի զգացում առաջացնել: Ես պարզապես շեշտում եմ այն միտքը (կարծում եմ, որ Աստծո Խոսքը հաստատում է իմ տեսակետը), որ Աստված չի փնտրում վարձկաններ. Նա փնտրում է սեփականատերեր:

Երկրորդ՝ Աստված չի փնտրում մարդկանց, որոնք տալիս են հարկադրված՝ մեղքի զգացումից դրդված: Աստված սիրում է ուրախ տվողին՝ համաձայն Բ Կորնթացիների 9.7-ի:

Սավուղը որակազրկվեց՝ չանելով այն, ինչ Աստված խնդրեց, բայց Դավիթն ընտրվեց, որովհետև նա հնազանդվելու էր և անելու էր այն, ինչ Աստված անհրաժեշտ կհամարեր:

Այսպիսով՝ թույլ տվեք նոր տեսանկյուն առաջարկել: Ի՞նչ կլինի, եթե մեր աշխարհը վերևից ներքև շրջենք և որոշենք, նախևառաջ, ապրել Աստծո համար ու լինել մարդիկ, որոնք ապրում են մնացորդներով: Ես միայն կարող եմ կռահել այն, որ ձեր մնացորդները շուտով հանկարծակիի կբերեն ձեզ, և դուք կապրեք օրհնված կյանքով:

Դա գործեց Ռ. Ջ. Լետերնոյի կյանքում: Համեստ սկիզբ և ըն-

12 https://www.pastorrickypowell.com/life_matters_with_pastor_/2009/10/ startling-statistics

դամենը յոթերորդ դասարանի կրթություն ունենալով՝ նա կարողացավ ինքնակրթվել և ժամանակի ընթացքում հիմնեց արտադրական կայսրություն: Նրա հողաշարժ մեքենաներն օգնեցին հաղթելու Երկրորդ համաշխարհային պատերազմը և կառուցելու ժամանակակից Ամերիկայի մայրուղային ենթակառուցվածքը: Կյանքի վերջում նա 300 գյուտի հեղինակ էր[13]:

Ո՞րն էր նրա գաղտնիքը. նա տալիս էր Աստծուն իր վաստակածի 90%-ը[14]:

Ես չեմ ասում, որ դուք անեք նույնը: Սա մի համաձայնագիր էր, որ նա և Աստված կնքեցին, երբ նա 30 տարեկան էր և մխրճված էր պարտքերի մեջ:

Նա դարձրեց Աստծուն իր բիզնես-գործընկերը (ինչպես ինքն է անվանում), և դա արդյունավետ եղավ:

Երբ Աստված կանչեց ինձ եկեղեցի հիմնելու, ես արդեն ունեի իմ «Ֆորվարդ ֆայնենշլ գրուպ» ընկերությունը: Այն մեծ հաջողությունների էր հասել և մեր հիմնական մատակարարի հետ դարձել էր համար մեկը երկրի 5.000 գրասենյակների մեջ: Երբ Աստված կանչեց ինձ հովվության, ես Նրան հարցրի. «Իսկ ի՞նչ է լինելու «Ֆորվարդ ֆայնենշլ գրուպ» ընկերության հետ: Արդյո՞ք պիտի փակեմ այն և կենտրոնանամ եկեղեցին հովվելու վրա»:

Տերը պատասխանեց. *«Ո՛չ, շարունակի՛ր զբաղվել այդ գործով, քանի որ այն օգնում է շատերին»:* Այդպես էլ արեցի:

Պետք է խոստովանեմ, որ երբեմն դժվար էր լինում համատեղել, բայց տարիների ընթացքում մեր ընկերությունն օգնել է հազարավոր մարդկանց: Երբ ստանձնեցի հովվությունը, ենթադրում էի, որ ընկերությունն անկում կունենա արտադրողականության մեջ, քանի որ ես կտրուկ կրճատել էի իմ ներգրավվածությունը: Բայց երբ Դրենդան ու ես մեր կյանքը նվիրեցինք Աստծո հանձնարարությունները կատարելուն, տեղի ունեցավ ճիշտ հակառակը: Թեև ընկերությունում աշխատում էի միայն ազատ ժամանակ, այն շարունակում էր գերազանց արդյունքներ տալ:

---

13 http://centerforfaithandwork.com/article/who-was-rg-letourneau

14 https://centerforfaithandwork.com/article/why-rg-letourneau-gave-90-percent

Երկրում գործող հարյուրավոր գրասենյակների մեջ մենք զբաղեցնում էինք առաջին հնգյակը կամ տասնյակը և հայտնի էինք ամենուր: Սակայն ես ստիպված էի ժպտալ՝ գիտենալով, որ ընկերությունում աշխատել էի ոչ լրիվ դրույքով, իսկ հովվություն արել էի ավելի քան լրիվ դրույքով: Աստված պատվեց ինձ բարեհաճությամբ և իմաստությամբ, որպեսզի նրանք, ովքեր ամբողջ սրտով հետամուտ էին փողին, ստիպված լինեին կանգ առնել և զարմանալ, թե ինչպես էի ես անում դա:

Հիշում եմ՝ մի համաժողովի ժամանակ մասնակիցներից մեկը, որ նստած էր կողքիս, հարցրեց, թե որքան ժամանակ էի հատկացնում մարքեթինգին: Ես ստիպված եղա ժպտալ, երբ պատասխանեցի՝ ոչ մի ժամանակ: Այնուհետև նա հարցրեց. «Այդ դեպքում ինչպե՞ս եք այդքան շատ գործունեություն ծավալում»: Ես ասացի, որ մեր աշխատանքի մասին տեղեկանում են մարդկանցից, և Աստված օրհնում է մեզ: Նա շարժեց գլուխը, քանի որ չկարողացավ հասկանալ ինձ:

Մի անգամ մեր մատակարարներից մեկի նախագահը զանգեց ինձ և ցանկացավ իմանալ, թե արդյո՞ք կխոսեի համաժողովի մասնակիցների հետ այն մասին, թե ինչպես էի կարողանում այդպիսի մեծ արդյունքներ ունենալ: Ես ասացի, որ ուրախությամբ կանեմ դա: Այնուհետև նա հարցրեց, թե ինչպես էր մեր ընկերությունն աշխատում, և ինչպես էինք վարում մեր բիզնեսը: Իհարկե, ես ստիպված եղա ասել, թե ինչպես ենք մենք վստահում Աստծուն, և ինչպես է Նա բարեհաճությամբ օրհնում մեզ: Երբ նրան ասացի, որ ես շաբաթական աշխատում եմ ընդամենը մի քանի ժամ և հիմնական ժամանակն անցկացնում եմ հովվական ծառայության մեջ, նա ասաց. «Ես կարծում էի, թե դուք ունեք հստակ մշակված մարքեթինգային մանրամասն ռազմավարություն և կխոսեք այն մասին, թե ինչպես է դա գործում: Չեմ կարծում, որ սա այն է, ինչ կար իմ մտքում, բայց ես գնահատում եմ համաժողովին խոսելու ձեր պատրաստակամությունը»: Օ՜հ, դա կորուստ էր նրանց համար: Ես կարող էի օգնել նրանց, որոնք ներկա էին այդ համաժողովին:

Այս գրքում ես ասել եմ, որ եթե դուք հոգ տանեք Աստծո գործի

համար, Աստված էլ հոգ կտանի ձեր գործի համար:

Այսպիսով, թույլ տվեք հիշեցնել այն հարցը, որով սկսեցինք այս գլուխը. «Ո՞ւմ փողն է դա»:

Արդյո՞ք կգերադասեք տնօրինել միայն ձեր գումարները, ինչպես պատահեց անիրավ կառավարչի հետ, թե՞ ուզում եք նաև տնօրինել Աստծո գումարները: Երբ տնօրինում եք Աստծո գումարները, Աստծո իմաստությամբ և շնորհքով խթանվում է ձեր սերմի բիզնեսը, որը թույլ է տալիս, որ այդ աճին զուգընթաց շատանա նաև ձեր հացի հունձքը:

Ես համոզված եմ, որ Աստծուն չի հետաքրքրում, որ դուք միլիոններ ունեք, քանի դեռ ձեր սիրտը նվիրված չէ Նրան:

ԱՍՏՎԱԾ ՏԵՍՆՈՒՄ Է ԴԱ: ԱՄԵՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԿԱՏԱՐԵԼԻՍ ԴՈՒՔ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՔ ՀԱՋՈՐԴ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ, ԱՅՆՊԵՍ ՈՐ՝ ԵՐԲԵՔ ՄԻ՛ ԱՆԱՐԳԵՔ ՓՈՔՐ ՍԿԻԶԲԸ:

Հիշե՛ք, այդ ամենը սկսվում է փոքր առաջադրանքներով, երբ ոչ ոք չգիտի ձեր անունը: Թեև մտածում եք, որ ոչ մեկին չի հետաքրքրում ձեր ոչ լրիվ դրույքով աշխատանքը, սակայն Աստված տեսնում է դա: Ամեն առաջադրանք կատարելիս դուք պատրաստվում եք հաջորդ առաջադրանքի համար, այնպես որ՝ երբեք մի՛ անարգեք փոքր սկիզբը:

Մոտեցե՛ք դրան այնպես, կարծես դա ձերն է, և տվե՛ք ձեր լավագույնը: Ես երաշխավորում եմ, որ դուք կփայլեք՝ ինչպես աստղը երկնքում, և կկանգնեք առաջխաղացման ու բարեհաճության դիրքում:

ԳԼՈՒԽ 5

ԴՈՒՔ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՔ

Ինչպես գիտեք, շուրջ 40 տարի ֆինանսական գործունեություն եմ ծավալում: Տարիների ընթացքում շատերն են ինձ հարցրել, թե ինչպես սեփական գործ սկսեն, և թե ինչն է ստիպում, որ գործն աճի:

Անշուշտ, կան շատ բաներ, որ մարդիկ պետք է իմանան, բայց ամենակարևոր բանը, որ կարող եմ ասել՝ նրանց *գործընկեր* է անհրաժեշտ:

Տարիներ շարունակ լինելով հովիվ՝ հանդիպել եմ շատ մարդկանց, որոնք մտածել են, որ հրաշալի կլինի գործ սկսել եկեղեցական մտերիմ ընկերոջ հետ, բայց հետո ամեն բան փուլ է եկել: Ընկերները նեղացել են միմյանցից և շատ անգամներ նույնիսկ դադարել են իրար հետ խոսելուց, և այդ փոխհարաբերությունը խզվել է: Քանի որ բազմիցս եմ սա տեսել, հազվադեպ եմ առաջարկում, որ գործ սկսեք ձեր ընկերոջ հետ, քանի դեռ սահմանները հստակ գծված և գրված չեն:

Սակայն, կա մի Գործընկեր, Ում մշտապես պնդում եմ, որ ընտրեք. Աստծուն:

Նախորդ գլխում խոսեցինք մի կնոջ մասին, ով ընդունեց Եղիա մարգարեին և տվեց նրան իր վերջին կերակուրը: Մենք տեսանք, թե ինչպես հավատքի այդ գործողությունն ամեն օր կերակուր տվեց մարգարեին՝ Աստծո առաջադրանքին, նաև կնոջ ընտանիքին: Նա համագործակցեց մարգարեի հետ նրա առաջադրանքի

մեջ, և այն օծությունը և մատակարարումը, որ կային առաջադրանքի վրա, դարձան նրանը: Նրանք գործընկերներ էին:

Այս գրքում մենք խոսում ենք Աստծո հանդեպ առատաձեռն լինելու և Նրա առաջադրանքների մեջ ցանելու մասին: Ես նաև ասացի, թե ինչպես է առատաձեռնությունը բացում մարդկանց սրտերը՝ և՛ ձեր, և՛ Աստծո առջև:

Այս գլխում ցանկանում եմ խոսել Աստծո Թագավորության մեկ այլ հզոր սկզբունքի մասին, որը կմղի ձեր ֆինանսները դեպի բոլորովին նոր մակարդակ: Դա համագործակցության սկզբունքն է:

> *«Եվ եղավ, երբ որ ժողովուրդը Նրա վրա կիփվում էր Աստծո Խոսքը լսելու, և Ինքը Գեննեսարեթի ծովակի մոտ կանգնած էր, և երկու նավ տեսավ՝ ծովակի մոտ կանգնած, ձկնորսներն էլ նրանցից դուրս էին եկած և ուռկանները լվանում էին: Եվ Նա մտավ այն նավերից մեկի մեջ, որ Սիմոնինն էր, և խնդրեց նրան նավը ցամաքից մի քիչ ներս տանել: Նստեց և նավից սովորեցնում էր ժողովուրդներին:*
>
> *Եվ երբ որ խոսելուց դադարեց, Սիմոնին ասաց. «Նավը դեպի խո՛ր տար, և ձեր ուռկանները գցե՛ք որսի»:*
>
> *Եվ Սիմոնը պատասխանեց և ասաց Նրան. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց Քո խոսքի համար ուռկանը կգցեմ»:*
>
> *Եվ երբ որ այս արին, ձկների մի մեծ բազմություն ներս փակեցին, և նրանց ուռկանը պատռվում էր: Եվ նշան էին անում մյուս նավի մեջ լինող ընկերներին, որ գան իրենց օգնեն, և նրանք եկան և երկու նավը լցրին, մինչև որ թաղվում էին»:*
>
> – Ղուկաս 5.1-7

Գիտեմ, որ ավելի վաղ հիշատակել եմ այս պատմությունը, երբ խոսում էի նավերի և ձկնորսական բիզնեսի մասին, որոնք փոխեցին թագավորությունները (կամ՝ իրավասությունները), երբ Պետրոսն (Սիմոնը) իր նավը փոխ տվեց Հիսուսին, որպեսզի վերջինս քարոզեր այնտեղից: Նաև նշեցի անհավանական որսի մասին,

որ գրեթե խորտակում էր երկու նավերը: Հիշե՛ք, Պետրոսն ասաց, որ ամբողջ գիշեր ձկնորսություն էր արել և ոչինչ չէր բռնել: Այժմ, ընդամենը մի քանի ժամ անց, նա այնքան ձուկ էր որսացել, որ չէր կարողանում ուռկանը քաշել: Ո՞րն էր տարբերությունը: Անշուշտ՝ Թագավորությունը, բայց նաև՝ *համագործակցությունը:* Թո՛ւյլ տվեք բացատրել:

> *«Եվ երկու նավ տեսավ՝ ծովակի մոտ կանգնած, ձկնորսներն էլ նրանցից դուրս էին եկած և ուռկանները լվանում էին: Եվ Նա մտավ այն նավերից մեկի մեջ, որ Սիմոնինն էր, և խնդրեց նրան նավը ցամաքից մի քիչ ներս տանել»:*

Հստակ պատկերացնենք տեսարանը: Որտե՞ղ էին նրանք և ի՞նչ էին անում, երբ Հիսուսը մոտեցավ նրանց: Նրանք ձուկ չէին որսում. ափին կանգնած՝ ուռկաններն էին լվանում՝ ամբողջ գիշեր ձկնորսություն անելուց և ոչինչ չբռնելուց հետո:

Հիսուսը, նկատելով, որ նավերն ազատ էին, հարցնում է Պետրոսին, թե արդյո՞ք կարող է նավը ցամաքից մի փոքր հեռու տանել, որպեսզի կարողանա նավից քարոզել բազմությանը: Որտե՞ղ էին Հակոբոսն ու Հովհաննեսը՝ նրա գործընկերները, մինչ նա Հիսուսին նավով մի փոքր հեռու էր տանում: Նրանք ափին էին՝ մյուս նավով և իրենց ուռկաններով:

Քարոզելուց հետո Հիսուսը Պետրոսին ասաց, որ դեպի խորը գնա և ուռկանները գցի որսի: Եվ դուք գիտեք պատմությունը: Նա այնքան ձուկ որսաց, որ ուռկանները գրեթե պատռվում էին: Ուստի՝ Պետրոսը կանչեց իր գործընկերներին, որ օգնեն ձկները հանելու: Աստվածաշունչն ասում է, որ երկու նավերը գրեթե սուզվում էին, որովհետև երկուսն էլ լիքն էին ձկներով:

> *«Եվ երբ որ այս արին, ձկների մի մեծ բազմություն ներս փակեցին, և նրանց ուռկանը պատռվում էր: Եվ նշան էին անում մյուս նավի մեջ լինող ընկերներին, որ գան, իրենց օգնեն, և նրանք եկան և երկու նավը լցրին, մինչև որ թաղվում էին»:*

Ահա ամենավճռորոշ հարցը. որքա՞ն հավատք գործադրեցին Հակոբոսն ու Հովհաննեսը, որպեսզի նրանց նավերն այնքան լցվեին, որ գրեթե սուզվեին:

Մտածե՛ք այդ մասին. նրանք դեռևս ափին էին՝ իրենց ուռկաններով: Պետրոսն էր, որ համաձայնեց իր նավը տրամադրել Հիսուսին: Նա էր, ով ասաց. *«Բայց Քո խոսքի համար ուռկանը կգցեմ»:* Այնպես որ, հարցին, թե՝ որքա՞ն հավատք գործադրեցին Հակոբոսն ու Հովհաննեսը, ճիշտ պատասխանն է՝ ոչ մի: Նրանք չինձեցին ձկների հսկայական որսը *իրենց* հավատքի պատճառով. դա եղավ Պետրոսի հավատքի շնորհիվ: Պետրոսը պարզապես կանչեց ափին գտնվող իր գործընկերներին, որպեսզի նրանք գային և օգնեին հավաքելու ձկները:

Զարմանալի է, որ նրանց նավը լեփ-լեցուն էր <u>ճիշտ</u> այնպես, ինչպես Պետրոսինը:

> *«Եվ Սիմոնը պատասխանեց և ասաց Նրան. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց <u>Քո խոսքի համար</u> ուռկանը կգցեմ»»:*

Ուստի, եթե Պետրոսի հավատքն էր, որ նավը լցրեց ձկներով, այդ դեպքում ինչո՞ւ Հակոբոսի և Հովհաննեսի նավը լցվեց նույն քանակությամբ ձկներով, որքան Պետրոսի նավը:

Մեր տեքստը պատասխանում է այդ հարցին. որովհետև նրանք *գործընկերներ* էին:

«Գործընկեր» բառի սահմանումը «Collins» անգլերեն բառարանում հետևյալն է.

> **Մարդ, որը բաժնեկցում կամ գործակցում է մեկ ուրիշի հետ որևէ գործողության կամ ձեռնարկման մեջ՝ սովորաբար կիսելով ռիսկերն ու շահույթը:**

Գործընկերությունը կամ համագործակցությունը իրավաբանական միավոր է և կիսում է բիզնեսի ռիսկերը, ծախսերը և շահույթը: Այսպիսով՝ երբ Պետրոսը Հիսուսին տրամադրեց իր նավը, իրականում իրավական առումով նա Հիսուսին փոխ տվեց ոչ

թե պարզապես նավը, այլ *բիզնեսը:* Տեխնիկական առումով, այն նավը, որ Պետրոսը թույլ տվեց Հիսուսին օգտագործել, պատկանում էր նաև Հակոբոսին և Հովհաննեսին, և նրանց համագործակցության շնորհիվ երկու նավերն էլ հավասարաչափ լցվեցին:

Ինչպես Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը նույնպես ունեցան նույն հունձքը, թեև այդ իրավիճակում նրանք ընդհանրապես հավատք չգործադրեցին: Համոզված եմ, որ նրանք ուրախ էին, որ այդ օրը Պետրոսն իրենց գործընկերն էր: Ի՞նչ կարծիքի եք: Ես կարծում եմ, որ այդպես էր: Թո՛ւյլ տվեք այս սկզբունքի վերաբերյալ բերել անձնական օրինակ:

Դրենդան ու ես ունենք 24 հեկտար գեղեցիկ հողատարածք՝ անտառով, ճահճուտով և խոտհարքով: Այն կատարյալ վայր է եղնիկներ որսալու համար: Մեր հողատարածքի շուրջը մշակաբույսեր են ցանված, և անտառն ու ճահճուտը բնական մագնիս են եղնիկների համար:

Ես իմ աշխատասենյակը կառուցել եմ ավտոտնակի վրա: Այնտեղ կան փայտե գրադարակներ և ներկառուցված գազի բուխարի: Այն հանգիստ, հարմարավետ, քարանձավային տիպի աշխատասենյակ է, որտեղ ես սիրում եմ աշխատել: Միակ բանը, որ պակասում էր, արու եղջերուի գեղեցիկ գլուխն էր գրասեղանիս վերևում: Անկեղծ ասած՝ երբեք չեմ հետաքրքրվել խոշոր արու կենդանիների որսով, քանի որ ես մսատու կենդանիների որսորդ էի: Եվ երբեք չէի կրակել արու եղջերուի, որն այնքան մեծ լիներ, որ արժանանար ցուցադրման:

Հինգ տարի էր, ինչ ապրում էինք այդ տանը, երբ Դրենդան պնդեց, որ խոշոր արու եղջերու որսամ իմ աշխատասենյակի համար: Մինչև այդ պահը հողատարածքում երբեք չէի տեսել խոշոր եղջերու: Ես որսորդություն էի արել եղնիկների բոլոր որսաշրջաններին և որսացել էի մի քանի գեղեցիկ ութճյուղանի եղջյուրներով եղջերուներ, բայց ո՛չ այնպիսին, որի գլուխը հարմար լիներ պատին փակցնելու համար:

Բայց այդ տարի որքան շատ էի մտածում այդ մասին, այնքան ավելի էի համաձայնում Դրենդայի հետ: Ես Դրենդային ասացի, որ մտադիր եմ աշխատասենյակիս պատի համար խոշոր եղջե-

րու որսալ: Հիշեցնեմ, ես երբեք խոշոր արու եղջերու չեմ տեսել անտառում: Մեր խոհանոցի պատուհանը նայում է անտառին ու դաշտին, ու ես երբեք այդպիսի եղջերու չեմ տեսել:

Այսպիսով՝ Դրենդան ու ես սերմ ցանեցինք խոշոր արու եղջերուի համար: Իմ սերմի չեկի վրա գրեցի, որ ցանում եմ տասճյուղանի եղջյուրներով կամ ավելի մեծ եղջերուի համար: Մենք աղոթեցինք այդ սերմի համար և դրեցի այն գրասեղանին՝ փոստով ուղարկելու համար: Այդ ծրարը մնաց այնտեղ երեք օր, և ես պարզապես չէի կարողանում ուղարկել այն: Ես գիտեի, որ չունեի հավատք այդ տասճյուղանի եղջյուրներով եղջերուի համար: Ես ունեի հավատք ութ, վեց կամ չորսճյուղանի եղջերուի համար, բայց դժվարանում էի տեսնել այդ խոշոր արու եղջերուին այն հավատքով, որն ասում է. «Ես գիտեմ, որ գիտեմ, երբ դուրս գամ որսի, որսալու եմ տասճյուղանի եղջյուրներով կամ ավելի մեծ արու եղջերու»:

Ես ունեի բավականաչափ փորձառություն Թագավորության հետ, որպեսզի իմանայի, որ հավատքով չէի գործում: Ուստի՝ պատռեցի այդ չեկը և փոխարինեցի մեկ ուրիշով, որի վրա գրեցի «չորսճյուղանի կամ ավելի մեծ» և ուղարկեցի:

Այն գիշեր, երբ պատրաստվում էի դուրս գալ որսի, Դրենդային պատմեցի, թե ինչ էի արել: «Ես պարզապես չունեմ հավատք այդ խոշոր արու եղջերուի համար»,- ասացի: Նա նայեց ինձ և ասաց. *«Դու* ունես հավատք եղնիկի համար, իսկ *ես* կունենամ հավատք հաղթանշանային եղջերուի համար: Աստված կարող է առատությամբ անել բոլոր բաներից ավելի, քան խնդրում ես կամ մտածում»:

Լույսը բացվեց անտառում սկյուռների գանչյունով ու թռչունների ճռվողյունով, և աշնան տերևների հոտը հիշեցրեց ինձ եղնիկների որսորդությունները: Շատ երկար չէի նստել այնտեղ, գուցե 20 րոպե, երբ լսեցի անտառով անցնող եղջերուի ձայնը: Եղջերուն գալիս էր ուղիղ իմ ծառի ուղղությամբ, և ես պատրաստվեցի կրակելու:

Երբ կենդանին մոտեցավ, տեսա, որ այն չորսեղջյուրանի էր, ճիշտ այնպիսին, ինչպիսին սովորաբար որսում եմ, որովհետև

դրանց միսը շատ համեղ է: Եղջերուն կանգ առավ գրեթե 23 մետր հեռավորության վրա գտնվող բացատում, և ես արձակեցի նետը: Տհաճությամբ տեսա, թե ինչպես նետը բարձր դիպավ ու հետ ընկավ. ես գիտեի, որ պետք է հետևեմ եղջերուին:

Եղջերուն սլացավ անտառի միջով, այնուհետև ցատկեց եգիպտացորենի դաշտի մեջ, որը սահմանակից էր անտառին, և անհետացավ: Ես դեռևս լսում էի, թե ինչպես է նա սլանում եգիպտացորենի դաշտով, և գիտեի, որ նա այնքան արագ է վազում, որ ինձ երկարատև աշխատանք էր սպասում նրա հետևից գնալու համար: Մոտավորապես 20 րոպե սպասեցի ծառի դիտակետում, այնուհետև որոշեցի ծառից իջնել և հետազոտել նետը: Կարող եմ ասել, որ հաստատ հարվածել էի եղջերուին, որովհետև արյան հետք էր մնացել:

Երբ հետևեցի արյան հետքին, քաջալերվեցի, որովհետև այն բավականին ակնառու էր: Բայց գրեթե 100 մետր հետո հետքը չորացավ: Ես այս ու այն կողմ նայեցի, բայց արյան որևէ կաթիլ չգտա: Երկու ժամ փնտրելուց հետո հասկացա, որ եղջերուն անհետացել է: Ես այնքան հիասթափված էի: Նախևառաջ՝ ես երբևէ չեմ ցանկանում եղջերու վիրավորել ու կորցնել, և երկրորդ՝ հիասթափված էի իմ կրակոցից:

Երբ եգիպտացորենի դաշտից սկսեցի քայլել տան ուղղությամբ, մի միտք ծագեց. *«Ես դեռ հնարավորություն ունեմ, գուցե վախեցնեմ եղջերուին, երբ փուն գնամ եգիպտացորենի դաշտով, այնուհետև ճահճուտով»:*

Ամեն դեպքում, լիցքավորեցի արբալետս: Եվ երբ դանդաղորեն անցնում էի մոլախոտերի հեղեղատի երկայնքով, հանկարծ մի եղջերու ցատկեց ու ծառս եղավ իմ առջև: Չհասկանալով, թե ով եմ ես՝ եղջերուն կանգ առավ և հետ նայեց: Քանի որ ես քողածածկող հագուստով էի, եղջերուն (ես կարողացա տեսնել, որ այն արու էր) վարանեց, քանի որ չէր կարողանում զանազանել ինձ: Այդ ամենը կատարվեց մի ակնթարթում, բայց ես կարողացա տեսնել եղջյուրները, թեև չէի կարող ասել, թե որքան մեծ էին դրանք կամ քանի ճյուղանի էին:

Ես գիտեի, որ ունեի մի ակնթարթ՝ որոշում կայացնելու հա-

մար: Նա դուրս էր իմ աղեղի հասանելիության սահմաններից գրեթե 50 մետրով: Ես առաջ ձգվեցի, նշան բռնեցի մեջքի վերևի հատվածի վրա և արձակեցի նետը:

Եղջերուն անմիջապես վայր ընկավ, երբ նետը մխրճվեց նրա մարմնի մեջ: Ես ցնցված էի: Մի՞թե դա հենց նոր պատահեց:

Երբ մոտեցա եղջերուին, առաջին բանը, որ ասացի, սա էր. «Դրենդայի հավատքը»: Դա խոշոր եղջերու էր: Այն ուներ 26 ճյուղ՝ չհաշված կախ աճած ճյուղերը: Այդքան խոշոր եղջերու երբեք չէի տեսել: Ասել, որ ես ցնցված էի, ճշգրիտ չէր ներկայացնի այդ պահը:

Ինչպես կռահում եք, եղջերուն այժմ իմ աշխատասենյակում է՝ գրասեղանի վերևում: Բայց ես ուզում եմ մի պահ խոսել այս եղջերուի մասին: Ինչպե՞ս կամ ինչո՞ւ այն հայտնվեց:

Չորսճյուղանին հայտնվեց ճիշտ ժամանակին, չնայած ես փչացրի որսը: Բայց Դրենդան ասաց, որ հավատում է հաղթանշանային եղջերուի համար:

Նա ուներ առավելություն իմ հանդեպ: Նա եղջերու չի որսում, այնպես որ, նրա համար հաղթանշանային եղջերու որսալը նույնքան հեշտ է, որքան չորսճյուղանի եղջյուրներով եղջերուն, քանի որ բոլորն էլ եղջերու են նրա համար: Քանի որ նա որսորդություն չի անում, նրա համար չկար անհնարինության պատնեշ: Մեր հողատարածքում ես երբեք չէի տեսել խոշոր ութճյուղանի եղջերու, բայց նրա հավատքը հիմնված չէր այն բանի վրա, թե ինչ կար հողատարածքում: Նա հավատում էր, որ Աստված կարող է բերել այդ եղջերուին:

Այս որսը տեղի ունեցավ եղջերուների բազմացման շրջանում, ինչպես ասում են, սեռական ակտիվության շրջանում, երբ արուները կարող են կիլոմետրերով ճանապարհորդել էգեր փնտրելու նպատակով: Ուստի, միշտ կա հնարավորություն, որ կենդանիների սեռական ակտիվության շրջանում կտեսնեք արու եղջերուների, որոնց սովորաբար չեք տեսնում ձեր հողատարածքում:

Դրենդայի հավատքը բերեց այդ եղջերուին, թեև ես չունեի հավատք այդ հաղթանշանային եղջերուի համար:

Ուզում եմ, որ կրկին կարդաք. ես չունեի հավատք այդ հաղթանշանային եղջերուի համար:

Գիտեմ, թե ինչ եք մտածում. *«Սպասի՛ր, Գա՛րի: Ես խճճվեցի: Եթե դու չունեիր հավատք այդ եղջերուի համար, այդ դեպքում ինչո՞ւ այն հայտնվեց»:*

Նույնը պատահեց Հակոբոսի և Հովհաննեսի հետ, երբ Պետրոսի հավատքով լցվեց նրանց նավը:

Դա է համագործակցության զորությունը:

Թո՛ւյլ տվեք ևս մեկ օրինակ բերել, այնուհետև կարող ենք խոսել այդ մասին:

> *«Գոհանում եմ իմ Աստծուց ամեն ժամանակ, որ ձեզ հիշում եմ, որ ամեն ժամանակ իմ բոլոր աղաչանքներում ձեր ամենի համար աղոթք եմ անում ուրախությունով՝ ձեր Ավետարանին հաղորդ լինելու համար այն առաջին օրից մինչև հիմա: Եվ հաստատ համոզված եմ սրան, թե Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը:*
>
> *Ինչպես որ պետք է ինձ մտածել այս բանը ձեր ամենի համար. որովհետև ձեզ իմ սրտի մեջ ունեմ իմ կապանքներում և Ավետարանի ջատագովության և հաստատության ժամանակ, որ <u>դուք՝ ամենդ, ինձ հետ շնորհքին հաղորդ եղաք</u>»:*
>
> – Փիլիպեցիների 1.3-7

Պողոսն ասում է, որ ուրախությամբ է հիշում Փիլիպեայի եկեղեցուն՝ իր ծառայության մեջ նրանց շարունակական համագործակցության համար: Նա շարունակում է՝ հաստատելով, որ նրանց համագործակցության շնորհիվ այժմ նրանք բաժնեկից են Աստծո այն շնորհքին, որ իր ծառայության վրա է:

Հիշե՛ք, մենք ասացինք, որ շնորհքն Աստծո զորությունն է կամ Աստծո կարողությունը, որը Պողոսի վրա էր՝ նրան հանձնարարված առաջադրանքն իրականացնելու համար: Փիլիպեայի եկեղեցին կիսում էր առաջադրանքի ծախսերը, և Հակոբոսի ու Հով-

հաննեսի նման կիսում էր նաև այն օծությունը և շնորհքը, որ այդ առաջադրանքի վրա էին:

Այժմ բացենք չորրորդ գլուխը, և դուք կտեսնեք այն զարմանալի արդյունքը, որ տալիս է համագործակցությունը.

> *«Սակայն, լավ արիք, որ հաղորդ եղաք ինձ իմ նեղությունում: Դուք ինքներդ էլ, փիլիպեցիներ, գիտեք, որ Ավետարանի սկզբում, երբ որ Մակեդոնիայից դուրս եկա, ոչ մի եկեղեցի հաղորդություն չարեց ինձ տալու կամ առնելու հաշվով, բայց միայն դուք: Որովհետև Թեսաղոնիկեի մեջ էլ մի երկու անգամ ինձ պետք եղած բաները ուղարկեցիք: Իբր ոչ թե տուրքն եմ ուզում, այլ պտուղն եմ ուզում, որ ավելանա ձեր հաշվին: Բայց ես ամեն բան առել եմ և առատություն ունեմ. լիքն եմ, որ Եպափրոդիտոսի ձեռքով ընդունեցի այն, որ ձեզնից է՝ անուշ հոտ, ընդունելի պատարագ՝ Աստծուն հաճելի: Եվ իմ Աստված լրացնի ձեր ամեն կարոտությունն Իր հարստության չափով՝ փառքով Քրիստոս Հիսուսում»:*
>
> – Փիլիպեցիների 4.14-19

Պողոսը հենց նոր էր մեկ այլ աջակցություն ստացել փիլիպեցիների եկեղեցուց: Լսե՛ք, թե ինչ է նա ասում նրանց. *«Իմ* Աստված լրացնի ձեր ամեն կարոտությունը»:

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը չասաց. «*Ձեր* Աստված լրացնի ձեր կարիքները, քանի որ դուք առատաձեռն եք եղել իմ հանդեպ»: Ո՛Չ: Նա ասաց. *«Իմ* Աստված լրացնի ձեր կարիքները»:

Հասկանո՞ւմ եք, փիլիպեցիները Պողոսի հետ գործընկերներ էին, և իբրև գործընկեր, նրանք բաժնեկից էին այն շնորհքին, որ Պողոսի առաջադրանքի վրա էր: Պողոսը հռչակում էր, որ նրանց կարիքները կլրացվեն *իր* հավատքի շնորհիվ, ինչպես Պետրոսի հավատքի շնորհիվ Հակոբոսն ու Հովհաննեսը որսացին այդ ձկներին:

Հուսով եմ, դուք կարողանում եք տեսնել այս սկզբունքի առավելությունը:

Ենթադրենք՝ դուք մեքենայի կարիք ունեք և համագործակցում եք մեզ հետ՝ որպես ծառայության: Ենթադրենք նաև, որ մեքենան արժե 30.000 դոլար: Երբ ցանում եք GaryKeesee.com կայքում, դուք հասկանում եք, թե ինչ է համագործակցությունը. դուք բաժնեկից կամ հաղորդ եք լինում այն օծությանը և շնորհքին, որ մեր ծառայության վրա է:

Որպես ծառայություն՝ մենք կարող ենք հեշտությամբ համաձայնության գալ այդ 30.000 դոլարի շուրջ, որովհետև մենք վաղուց հաղթահարել ենք 30.000 դոլարի շեմը: Մենք հեշտությամբ ունենք հավատք 30.000 դոլարի համար, քանի որ այժմ տարեկան միլիոնավոր դոլարներ ենք ծախսում: Բայց ժամանակին մենք ստիպված էինք հավատալ Աստծուն 30.000 դոլարի համար, որն այդ ժամանակ կարծես հսկայական սար լիներ:

Այսպիսով, եթե ինձ հարցնեք, թե արդյո՞ք կարող եմ հավատալ Աստծուն 30.000 դոլարի համար, պատասխանը կլինի՝ միանշանակ: Երբ մենք համաձայնության մեջ ենք և հանդիսանում ենք գործընկերներ, Պողոսի նման ես էլ կարող եմ հռչակել, որ ձեր կարիքները լրացված են ոչ թե *ձեր*, այլ *իմ* հավատքի շնորհիվ:

Ակնհայտ է՝ դուք պետք է հավատք ունենաք, երբ ցանում եք սերմ 30.000 դոլարի համար, և պետք է ունենաք վստահություն ոչ միայն Աստծո Խոսքի, այլև մեր հանդեպ: Դուք պետք է ունենաք հավատք իմ հանդեպ, վստահ լինեք, որ ես օծված եմ և կանչված Աստծուց, որ ես գործում եմ սրբությամբ, և պետք է կարողանաք տեսնել *ակնառու արդյունքներ* իմ կյանքում և իմ ծառայության մեջ: Եթե նայեք, թե ինչ ենք մենք անում և որտեղից ենք սկսել, կիմանաք, որ ես ունեմ հավատք 30.000 դոլարի համար:

Գուցե դուք չունեք հավատք 30.000 դոլարի համար, բայց մենք կարող ենք համագործակցել և տեսնել զարմանահրաշ բաներ: Նույնը վերաբերում է հաղթանշանային եղջերուին: Դրենդան որսի գնալու նախորդ գիշերն ասաց. «Դու հավատում ես եղնիկի համար, իսկ ես կհավատամ հաղթանշանային եղջերուի համար»: Ահա թե ինչպես է համագործակցությունը գործում:

Այսպիսով՝ թույլ տվեք սահմանել մի քանի հիմնավոր կանոն՝ տալով հետևյալ հարցը. եթե պատրաստվում եք հիմնել համա-

կարգչային ընկերություն, կցանկանա՞ք, որպես գործընկեր, ունենալ մեկին, ով չունի փող և սովորում է համակարգչային գիտության դասընթացի առաջին կիսամյակում, թե՞ նրան, ով կառուցել է համակարգչային գործունեությամբ զբաղվող մուլտիմիլիոնդոլարանոց ընկերություն և ունի ֆինանսներ՝ օգնելու ձեզ, որպեսզի ընթացք տաք ձեր ընկերության գործունեությանը:

Անշուշտ, այստեղ շատ փոփոխական մեծություններ կան, և ես ընդամենը օրինակ եմ բերում: Բայց, արտաքուստ, կարծում եմ, որ ակնհայտորեն կընտրեք նրան, ով ունի փորձառություն, ստուգված նվաճումների ցանկ և սնանկանալու եզրին չէ: Նույնը վերաբերում է այն բանին, երբ ցանկանում եք ցանել ծառայության մեջ:

Խնդրո՛ւմ եմ, իմ ասածը մի՛ շփոթեք որևէ մեկի հետ համագործակցելու հարցում Աստծո անմիջական առաջնորդության հետ: Այդպիսի առաջնորդությունը գերազանցում է նրան, ինչի մասին խոսում եմ: Շատ անգամներ Աստված կառաջնորդի ձեզ համագործակցելու Իր առաջադրանքներում, բայց երբեմն դո՛ւք պետք է ընտրեք: Ես խոսում եմ հատկապես այն մասին, երբ ցանելն *ընտրություն* է, որ դուք կատարում եք. դուք ցանում եք, երբ հունձքի կարիք ունեք և ցանկանում եք տեղափոխվել դեպի հաջորդ մակարդակ:

Ես ցանում եմ այն առաջադրանքների մեջ, որոնց հավատում եմ՝ հստակ նպատակ ունենալով արագացնել այն միջոցների հոսքը, որոնք անհրաժեշտ են իմ անձնական կյանքում: Մի կանոն, որը երբեք չեմ խախտում, այն է, որ երբ ցանկանում եմ արագացնել իմ հունձքը, ես մշտապես ցանում եմ այն առաջադրանքի մեջ, որտեղ կա հասկացողություն հավատքի ու համաձայնության մասին: Այսպիսի զոհաբերությունը *թիրախային* զոհաբերություն է և չպետք է շփոթել աղքատներին տալու հետ:

Կարիքավորներին տալը Աստծո սրտի թելադրանքն է, և դա ունի հատուցում, բայց ես փնտրում եմ համագործակցություն այնպիսի առաջադրանքի հետ, որն ունի հավատքի վկայություն, որն ընդունակ է համաձայնելու ինձ հետ:

Մտածե՛ք այդ մասին այսպես. եթե խնդրեի որևէ մեկին (ով

մեկ ժամվա ընթացքում 3 դոլար է վաստակում և արդեն մի քանի տարի է՝ դրամազուրկ է) համաձայնել ինձ հետ 10 միլիոն դոլարի համար, ի՞նչ հավանականություն կար, որ այդ համաձայնությունը տեղի կունենար:

Ես կարող եմ ծառայել ցանկացած մարդու, և ես կանչված եմ դա անելու, բայց երբ խոսքը վերաբերում է համաձայնությանը, պիտի լինի համաձայնություն: Հողագործն իր սերմը չի ցանում ցանկացած դաշտի մեջ: Նա փնտրում է ճիշտ հող, որը պահանջում է նրա նախատեսած բերքը: Ես խոսում եմ այստեղ՝ երկրային տիրույթում, ինչ-որ մեկի հավատքի, ինչ-որ մեկի օծության հետ համագործակցելու մասին:

Մեկ այլ բան, որ ցանելիս փնտրում եմ, աստվածային այնպիսի առաջադրանք է, որն ունի նույն պտուղը, ինչի համար հավատում եմ Աստծուն:

Օրինակ, իմ ընկերությունն ունի երկու ինքնաթիռ: Նախքան դրանցից որևէ մեկը գնելը՝ ես ցանեցի աստվածային այնպիսի առաջադրանքի, այնպիսի ծառայության մեջ, որ գիտեի, որ անցյալում վճարել է բազմամիլիոն դոլարանոց տասնյակ ինքնաթիռների համար: Երբ ասում եմ շատ, նկատի ունեմ՝ *շատ*, և բոլորն էլ վճարվել են կանխիկ գումարով: Այդ ծառայություններն ունեին ակնառու արդյունք, երբ խոսքը վերաբերում էր ինքնաթիռներին: Ես գիտեի, որ նրանք կարող էին հեշտությամբ համաձայնել ինձ հետ և հավատքով կանգնել ինքնաթիռի համար: Ես չէի համագործակցի այնպիսի ծառայության հետ, որն ասում էր, որ ինքնաթիռները թանկ են, կամ՝ չարժե ինքնաթիռ ունենալ, կամ՝ ինքնաթիռ ունենալը սատանայից է: Այդտեղ չկա որևէ համաձայնություն: Ո՛չ, ես ցանկանում էի համաձայնության մեջ լինել մի ծառայության հետ, որը հասկանում էր, թե որտեղ էի ես, կարող էր ինձ հետ հավատալ Աստծուն ինքնաթիռի համար և ուներ պտուղ՝ դա ապացուցելու համար:

Ես ինքնաթիռ եմ վարում 19 տարեկանից և սովորել եմ թռչել քաղաքից դուրս գտնվող 914 մետր երկարությամբ մանրախիճային թռիչքուղուց: Ամբողջ կյանքում ինքնաթիռներ եմ վարձել, մինչև այն օրը, երբ մտածեցի. *«Հեյ, գիտե՞ք ինչ: Ես պարզապես*

պետք է սերմ ցանեմ և հավատամ Աստծուն իմ սեփական ինքնաթիռի համար»:

Հենց այդպես էլ արեցի: Ես հստակ գիտեի, թե ինչ ինքնաթիռի համար էի ցանում, ուստի չեկի վրա գրեցի այդ ինքնաթիռի անունը, և Դրենդան ու ես համաձայնեցինք դրա շուրջ: Այնուհետև ուղարկեցինք չեկը այն ծառայությանը, որի մասին հենց նոր հիշատակեցի:

Անցավ գրեթե մեկ ամիս, և ես հերթական այցելություն ունեի բժշկի մոտ: Երբ այդ օրը խոսում էի բժշկի հետ, նա հենց այնպես հարցրեց. «Կարո՞ղ է պատահաբար ճանաչեք մեկին, ով կցանկանար ինքնաթիռ գնել»:

Ես մի փոքր զարմացա այդ հարցից, քանի որ կյանքում երբեք որևէ մեկն ինձ չէր հարցրել՝ արդյո՞ք գիտեմ որևէ մեկին, ով կցանկանար ինքնաթիռ գնել: Ես հարցրի, թե ինչպիսի ինքնաթիռ է, և դա հենց այն ինքնաթիռն էր, որի համար ես սերմ էի ցանել:

Ակնհայտորեն դա գրավեց իմ ուշադրությունը: Ես գնացի և նայեցի ինքնաթիռը, կապ հաստատեցի սեփականատիրոջ հետ, և նա ինձ տարավ թռիչքի: Դա հրաշալի էր: Միայն մեկ խնդիր կար. այդ պահին ես չունեի անհրաժեշտ գումար այն գնելու համար:

Բայց Աստված ծրագիր ուներ: Նախորդ աշնանը (այդ ժամանակ մարտ ամիսն էր) հորիցս ստացել էի մի տուն, որը գարնանը մտադիր էի վերածել գրասենյակային շենքի: Հայրս ասաց, որ անցած ձմեռ ջուրն անջատել էր, և ես երբեք չէի ստուգել այն:

Ինքնաթիռը տեսնելուց ընդամենը մի քանի օր հետո եղբայրս զանգեց և ասաց, որ տունն ավերվել է: Նա հայտնեց, որ տան ամբողջ գիպսաստվարաթուղթը փնասվել է, և մեծ մասը պոկվել է պատերից:

Ակնհայտորեն ջուրն անջատված չէր եղել, և ձմռանը խողովակները սառել էին: Մարտ ամիսն էր, եղանակը տաքացել էր, և ջուրը շարունակ լցվել էր տան մեջ, ով գիտի, որքան ժամանակ, համենայն դեպս՝ մի քանի շաբաթ:

Եղբայրս տեղյակ չէր, որ ես արդեն պայմանագիր էի կնքել

շինարարական ընկերության հետ՝ տունը գիպսաստվարաթղթից և արտաքին երեսպատումից մաքրելու վերաբերյալ, որը վերակառուցման գործընթացի մի մաս էր՝ այն գրասենյակային նոր համալիրի վերածելու նպատակով:

Այժմ, ամենահրաշալի բանը, որ տեղի ունեցավ. ապահովագրական ընկերությունը վճարեց ջրի պատճառած վնասի դիմաց, և դա այն կանխիկ գումարն էր, որը վճարեցի իմ ինքնաթիռի համար:

Ինքնաթիռը ձեռք բերվեց կանխիկ գումարով:

Այնպես որ՝ հիշե՛ք, համագործակցությունը հզոր հոգևոր սկզբունք է, որի մասին արժե տեղյակ լինել, և որից պետք է օգտվել:

ԳԼՈՒԽ 6

ՏԱՍԱՆՈՐԴԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ես հաճախ եմ ստանում էլեկտրոնային նամակներ մարդկանցից, որոնք փորձում են ինձ համոզել, որ Թագավորության այս օրենքի՝ տասանորդի ժամանակն անցել է, և այն այլևս ուժի մեջ չէ:

Սակայն, ես այնքան կարևոր եմ համարում Թագավորության այս սկզբունքը, որ դրան նվիրել եմ մի ամբողջ գլուխ:

Գիտեմ, որ եթե մեծացել եք եկեղեցական միջավայրում, լսել եք տասանորդի մասին: Բայց նաև գիտեմ, որ այն, ինչ լսել եք, հավանաբար, ամբողջությամբ ճշգրիտ չէ, և կարևոր է, որ, նախքան շարունակելը, շտկենք որոշ հին կրոնական մտածելակերպեր տասանորդի մասին:

Նախևառաջ, եթե չգիտեք, «տասանորդ» նշանակում է մեկ տասներորդ: Բառն օգտագործվել է, որպեսզի Աստծո ժողովրդին նկարագրվի եկամտի այն քանակը, որը նա պետք է տար Աստծո գործին, այսինքն՝ մեկ տասներորդը կամ տասանորդը:

Տասանորդի այս բացատրությունը տրված է շատ պարզ բառերով, և ես ուզում եմ այս գլխում առավել խորը ուսումնասիրել այս թեման: Բայց եթե այս գաղափարը նոր է ձեզ համար, ապա տասանորդը, ըստ էության, Աստծուն մեկ տասներորդը տալն է:

Երկրորդ, երբ մարդկանց մեծ մասը մտածում է տասանորդի մասին, մտածում է նաև Հին կտակարանի և Մովսեսի օրենքի մասին, որտեղ տասանորդը պարտադիր պահանջ էր ամբողջ Իսրայելում՝ բոլոր քաղաքացիների համար:

Այսօր, Քրիստոսի մարմնում մեծ խառնաշփոթ է տասանորդի

շուրջ. ինչ է այն, և արդյո՞ք դեռևս ուժի մեջ է, թե՞ վերացել է Հիսուսի գալստյան հետ:

Դուք հավանաբար լսել եք, որ երբ Աստված ինձ ասաց, որ հնարավորության սահմաններում ամեն բան սովորեմ այն մասին, թե ինչպես է Նրա Թագավորությունը գործում, ես իսկապես դարձա հոգևոր գիտնական: Ես ուզում էի իմանալ, թե ինչպես է ամեն բան գործում, և տասանորդը լուրջ հարց էր, որին պետք է պատասխանեի:

Այսպիսով՝ նայենք տասանորդին, որտեղից է այն եկել, ինչ է անում, և ինչու է արդիական նաև այսօր:

Չնայած մենք շատ ակնհայտորեն տեսնում ենք, որ տասանորդը Մովսեսի օրենքում գրավոր պահանջ էր, սակայն տասանորդը չի սկսվել Մովսեսի օրենքով: Տասանորդի ծագումը գտնելու համար պետք է վերադառնանք սկիզբ՝ դեպի Ադամի ու Եվայի կյանքը:

Ինչպես արդեն նշել եմ, Ադամն արարվեց և դրվեց երկրի վրա որպես երկրի իշխան՝ Աստծո Թագավորության անունից:

> *«Մի քիչ ցած արիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան և Քո ձեռքի գործերի վրա կանգնեցրիր նրան: Ամեն բան հնազանդ արիր նրա ոտքերի տակ. որովհետև ամենը, որ հնազանդեցրեց նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան...»:*
>
> – Եբրայեցիների 2.7,8ա

Ադամը պսակված էր փառքով և պատվով, և երկրի վրա չկար մի բան, որ հնազանդ չլիներ նրան: *«Պսակված»* արտահայտությունը հրաշալի պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես էր այդ ամենը գործում:

Եթե նայեք երկրային թագավորին, ապա նա պսակ կամ թագ է կրում, թեև նա ընդամենը մարդ է, թագը ցույց է տալիս, որ ամբողջ կառավարությունը սատարում է նրա խոսքերին: Այդպես էլ Ադամի հետ էր: Նա ղեկավարում էր երկիրը լիարժեք իշխանությամբ, և երկինքը սատարում էր այն ամենին, ինչ նա անում էր:

Մենք պետք է հիշենք, որ նա մարդ էր և իշխում էր միայն լիազորված իշխանության միջոցով: Նա ուներ իրեն սատարող Աստծո Թագավորության փառքը (զորությունը) և պատիվը (դիրքը և իշխանությունը):

Հետաքրքիր է, որ սատանան արդեն երկրի վրա էր, երբ Ադամն արարվեց, քանի որ նա վայր նետվեց երկիր՝ նախքան մարդու արարումը: Սատանան արհամարհում էր այս համեստ արարածին (բնական տեսանկյունից), որն իշխում էր իր վրա՝ Աստծո Թագավորության անունից: Նա ուզում էր ճանապարհ գտնել այդ իշխանությունն Ադամից վերցնելու, ըստ էության, Ադամի՝ կառավարման իշխանությունը վերացնելու համար:

Իհարկե, սատանան չուներ զորություն՝ խարխլելու կամ տապալելու Ադամի դիրքը, ուստի նա ստիպված եղավ մշակել ծրագիր՝ Եվային խաբելու և հավատացնելու, որ Աստծուն չի կարելի վստահել, և որ Ադամի հետ պետք է ապստամբել Աստծո դեմ ու հետևել իրեն:

Սատանայի ծրագիրը հաջողվեց: Ադամը և Եվան ապստամբեցին Աստծո դեմ և կորցրին իրենց իշխանության դիրքը: Այդ պահին, քանի որ ամբողջ երկրային տիրույթն Ադամի իշխանության տակ էր, ըստ էության, Ադամն Աստծուն հեռացրեց երկրից, քանի որ խոսքը վերաբերում էր Աստծո հոգևոր իշխանությանը, և մարդը բաժանվեց Աստծուց:

Այդ պահին շատ բան կատարվեց հոգևոր առումով, բայց ես ժամանակ չունեմ անդրադառնալու դրան, քանի որ ցանկանում եմ կենտրոնանալ մեր թեմայի՝ տասանորդի վրա: Դիտարկենք այն պահը, երբ Ադամն ու Եվան մեղանչեցին, և պարզենք, թե ինչ կատարվեց:

> *«Եվ Ադամին ասաց. «Որովհետև դու լսեցիր քո կնոջ խոսքին և կերար այն ծառից, որի համար պատվիրեցի քեզ՝ ասելով՝ նրանից չուտես, անիծյալ լինի երկիրը քո պատճառով, նեղությունով ուտես նրանից կյանքիդ բոլոր օրերում: Եվ նա փուշ ու տատասկ բուսցնի քեզ համար, և դաշտի խոտն ուտես: Երեսիդ քրտինքով հաց ուտես, մինչև որ եկ դառնաս դեպի երկիրը, որովհետև*

նրանից առնվեցիր. նրա համար, որ հող էիր դու, և դեպի հողը դառնաս»»:

– Ծննդոց 3.17-19

Առաջին հայացքից տեսնում ենք, որ մարդը կորցրեց իր դիրքը (վռնդվեց պարտեզից), այդ ժամանակվանից նրա նպատակը դարձավ գոյատևելը, և նա պետք է գոյատևեր տանջալի աշխատանքով ու քրտինքով: Աստված նաև ասաց, որ նա վերադառնալու է դեպի հողը, որ մի օր նա *մահանալու է:* Մահվան և տանջանքով գոյատևման գաղափարները բոլորովին օտար էին Ադամի համար, և աշխարհ մուտք գործեցին վախն ու անհուսությունը:

Ինչպես տեսնում եք, և ինչպես Ադամը պարզեց, աշխարհն արմատապես փոխվեց:

Այժմ ցանկանում եմ՝ բացենք Ղուկասի 4-րդ գլուխը, որտեղ կգտնենք ևս մեկ շատ կարևոր փոփոխություն, որ տեղի ունեցավ:

«Եվ սատանան Նրան մի բարձր սար հանեց և աշխարհի բոլոր թագավորությունները ցույց տվեց Նրան մի վայրկյանի մեջ: Եվ սատանան ասաց Նրան. «Այս ամբողջ իշխանությունը և սրանց փառքը քեզ կտամ, որ ինձ է տրված, և ում որ կամենում եմ, տալիս եմ սրան: Արդ, Դո՛ւ, եթե իմ առջև ընկած երկրպագություն անես, բոլորը Քոնը կլինի»»:

– Ղուկաս 4.5-7

Այս հատվածում սատանան պնդում է, որ ամբողջ հարստությունը, որ պատկանում է երկրի թագավորություններին (պետություններին), իր իրավասության տակ է, և հաստատում է, որ այդ իշխանությունն իրեն է տրվել: Այդ հայտարարության մեջ նա ճիշտ է, քանի որ Ադամն էր, որ իր ապստամբությամբ այդ իշխանությունը տվեց նրան:

Ուշադրություն դարձրեք, որ այս խոսքում ասվում է, որ աշխարհի թագավորությունների կամ պետությունների ամբողջ փառքն այժմ սատանայի իրավասության տակ է: Ինչն է պետության փառքը. նրա *հարստությունը:*

Երկրային տիրույթում բոլոր դրամների վրա թագավորության, պետության անուն է դրոշմված, ուստի փողն ամբողջությամբ երկրային թագավորության մաս է կամ գտնվում է նրա իրավասության ներքո: Այժմ սատանան պնդում է, որ պետությունների ամբողջ փողը կամ հարստությունն իր իրավասության տակ է, և կարող է տալ նրան, ում ցանկանում է: Պարզ ասած՝ սատանան պնդում է, որ իրավասություն ունի պետությունների հարստության և բարգավաճման նկատմամբ: Սա շատ կարևոր է, քանի որ մենք պարզելու ենք, որ տասանորդը, այդ փաստի հետ կապված, յուրահատուկ նպատակ ունի:

> *«Եվ Ադամը կենակցեց իր կնոջ՝ Եվայի հետ, և նա հղացավ և ծնեց Կայենին և ասաց. «Մարդ ստացա Տիրոջով»: Եվ դարձյալ ծնելիս ծնեց նրա եղբայր Աբելին:*
>
> *Աբելը ոչխարների հովիվ էր, բայց Կայենը երկրագործ էր: Եվ եղավ, որ օրեր անցնելուց հետո, Կայենը երկրի պտուղներից մի քանիսը Եհովային ընծա մատուցեց: Եվ Աբելն էլ մատուցեց իր ոչխարների անդրանիկներից պարարտները: Եվ Եհովան Աբելին և նրա ընծային բարեհաճությամբ նայեց: Բայց Կայենին և նրա ընծային բարեհաճությամբ չնայեց: Եվ Կայենը շատ բարկացավ և երեսը կախեց:*
>
> *Եվ Եհովան Կայենին ասաց. «Ինչո՞ւ ես բարկացել և ինչո՞ւ ես երեսդ կախել: Չէ՞ որ եթե անես այն, ինչ ճիշտ է, կընդունվես. բայց եթե չանես այն, ինչ ճիշտ է, մեղքը դռանդ մոտ պառկած է և քեզ է փափագում, բայց դու իշխի՛ր նրա վրա»»:*
>
> – Ծննդոց 4.1-7, NIV

Շատ լավ, ի՞նչ էր կատարվում այնտեղ: Սա երեխաների առաջին սերունդն էր: Ինչո՞ւ էին նրանք ընծա մատուցում: Այն ժամանակ չկար գրավոր օրենք, որ պահանջեր անել դա, ուստի ինչո՞ւ էին նրանք անում:

Մենք կարող ենք ենթադրել, որ Կայենին և Աբելին ընծա մատուցել *սովորեցրել* էին նրանց ծնողները՝ Ադամն ու Եվան: Կա-

րող ենք նաև ենթադրել, որ Աստված չի անում ինչ-որ բաներ հենց այնպես՝ զուտ որպես արարողակարգ, և պետք է լիներ *օրինական* պատճառ, թե ինչու էին Ադամն ու Եվան սովորել ընծա մատուցել:

Եթե նայեք տեքստին, կտեսնեք, որ մեծ տարբերություն կար երկու տղաների մատուցած ընծաների միջև: Այժմ, մի՛ կառչեք նրանից, թե ինչ նրանք զոհաբերեցին. մեկը՝ կենդանիներ, մյուսը՝ բույսեր, որովհետև կարևորը դա չէր: Կարևորն այն է, թե *ինչպես* էին նրանք զոհաբերում այն, ինչ ունեին, և, առաջին հերթին, ինչու էին դա անում:

Ուշադրություն դարձրեք, որ Կայենը տվեց երկրի պտուղներից «մի քանիսը»: Բայց Աբելը բերեց իր ոչխարների «անդրանիկներից պարարտները»: Տեսնո՞ւմ եք տարբերությունը: Մի դեպքում՝ «մի քանիսն» էր, մյուս դեպքում՝ «լավագույն բաժինը»՝ ոչխարների անդրանիկներից պարարտները:

Ինչո՞ւ Աբելը բերեց պարարտները և ինչո՞ւ անդրանիկներից:

Աստված, հավանաբար, Ադամին ասել էր այս զոհաբերության պահանջները:

Հասկանո՞ւմ եք: Այստեղ առաջին անգամ է, որ երևում է տասանորդը:

Եթե ուսումնասիրեք տասանորդը Մովսեսի Օրենքում, այն մշտապես եղել է **<u>լավագույնից</u>** տրված **<u>առաջին</u>** տասը տոկոսը: Այս պատմության մեջ կարող եք հստակ տեսնել, որ Աբելը տալիս էր տասանորդ՝ *առաջինը (անդրանիկը)* և *լավագույնը:* Սակայն, Կայենն ուրախ չէր, որ ստիպված էր հրաժարվել իր բերքի *որոշ* մասից և պատվել Աստծուն, ուստի որոշեց բերել պտուղներից «մի քանիսը», այլ ոչ թե առաջինը կամ լավագույնը:

Ակնհայտորեն Կայենը գիտեր, թե ինչ աներ և ինչպես տասանորդ մատուցեր Տիրոջը, քանի որ Աստված նրան ասաց. «*Չէ՞ որ եթե անես այն, ինչ ճիշտ է, կընդունվես. բայց եթե չանես այն, ինչ ճիշտ է, մեղքը դռանդ մոտ պառկած է և քեզ է փափագում, բայց դու իշխի՛ր նրա վրա»:*

Բայց Կայենը մերժեց Աստծո քաջալերանքը՝ անելու այն, ինչ

իրեն սովորեցրել էին, և փոխարենը սպանեց Աբելին՝ իր եղբորը: Հավանաբար նա մտածել էր, որ Աբելին հեռացնելով՝ կարող էր վերահսկել և՛ դաշտը, և՛ անասուններին, կամ, գուցե, նրա ագահությունը դրդեց նրան բերելու միայն մի քանի պտուղ՝ ցուցաբերելով հնազանդության վարք, բայց սրտով հեռու լինելով Աստծուց: Ես միայն ենթադրում եմ: Մեկ բան, որ հաստատ գիտենք, այն է, որ Կայենը չցանկացավ տասանորդ տալ, ինչպես որ իրեն սովորեցրել էին:

Այս պահին գուցե հարցնեք. «Ինչո՞ւ առաջին հերթին տասանորդ: Ինչո՞ւ Աստված պահանջեց, որ նրանք տասանորդ տային»: Ես կպատասխանեմ այդ հարցերին, բայց, նախևառաջ, տեսնենք, թե էլ ինչ կարող ենք սովորել տասանորդի մասին, նախքան կանդրադառնանք այդ հարցերին:

Հաջորդ անգամ, երբ տասանորդն ի հայտ է գալիս, այն ժամանակ է, երբ, ըստ էության, առաջին անգամ օգտագործվում է *«տասանորդ»* բառը:

> *«Եվ Սոդոմի թագավորը դիմավորեց նրան, երբ որ նա Քոդողագոմորի և նրա հետ լինող թագավորների կոտրելուց ետ էր դառել դեպի Շավե ձորը, այսինքն՝ թագավորի ձորը: Եվ Սաղեմի թագավոր Մելքիսեդեկը հաց և գինի դուրս բերեց, և նա Բարձրյալ Աստծո քահանա էր: Եվ օրհնեց նրան և ասաց. «Օրհնյա՛լ լինի Աբրամը՝ երկնքի և երկրի Արարիչ Բարձրյալ Աստծուց: Եվ օրհնյա՛լ լինի Բարձրյալ Աստված, որ քո թշնամիներին քո ձեռքը մատնեց»: <u>Եվ նա ամենից տասանորդ տվեց նրան»:</u>*
>
> – Ծննդոց 14.17-20

Այն հարցը, որ պետք է այստեղ տանք, սա է. որտեղի՞ց Աբրահամը գիտեր տասանորդ տալու մասին և ինչո՞ւ:

Ակնհայտորեն տասանորդը փոխանցվել էր սերնդեսերունդ՝ Ադամի ժամանակներից սկսած: Եվ մենք գիտենք, որ Ադամը սովորել էր տասանորդի մասին հենց Աստծուց՝ ապստամբությունից հետո: Այստեղ մենք տեսնում ենք, որ օգտագործվում է «տասանորդ» բառը՝ նշելով, որ տասանորդ տրվեց:

Շատերը կասեն, որ տասանորդը Մովսեսի Օրենքի մեջ էր մտնում՝ նկատի ունենալով, որ Նոր կտակարանի հավատացյալը տասանորդ տալու կարիք չունի: Երկու դեպքերը, որ նշեցի՝ կապված Կայենի և Աբելի, այնուհետև՝ Աբրահամի հետ, ապացուցում են, որ տասանորդը տրվել է *նախքան* Մովսեսի Օրենքը գրվելը: Օ՜, ես համաձայն եմ, որ տասանորդը ներառվել էր Մովսեսի Օրենքում, և Իսրայելի ժողովրդից պահանջվում էր տասանորդ տալ: Բայց տասանորդն այնպիսի բան էր, որ ժողովուրդն արդեն անում էր, երբ ասպարեզ իջավ Մովսեսը:

Այսպիսով՝ ինչո՞ւ տասանորդը գրվեց Մովսեսի Օրենքի մեջ: Իսրայելցիները նոր էին դուրս եկել Եգիպտոսից, երբ գրվեց Մովսեսի Օրենքը, որը նպատակ ուներ կառավարելու Իսրայելի նորաստեղծ պետության հասարակական կյանքը: Բոլոր իրավական և կարգավորող պահանջները սահմանվում էին վարքագծի գրավոր կանոնագրքում, որով մարդիկ պետք է ապրեին: Այսպես՝ տասանորդը գրվեց Մովսեսի Օրենքում, որպեսզի երաշխավորվեր, որ այն դառնար ժողովրդի հասարակական կյանքի մասը: Տասանորդն այնքան կարևոր էր, որ Աստված գրեց այն երկրի օրենքում: Քիչ հետո կպարզենք, թե ինչու էր Աստված ցանկանում, որ այն անպայման գրվեր, բայց եկեք նայենք ևս մի քանի օրինակ տասանորդի վերաբերյալ:

> *«Եվ հիմա այսպես է ասում Զորաց Տերը. «Ձեր ուշը դարձրե՛ք ձեր ճանապարհներին: Սերմել եք շատ, բայց բերել եք քիչ, կերել եք, բայց չեք կշտացել, խմեցիք, բայց ծարավը չհանգցրիք, հագնվեցիք, բայց չտաքացաք, և վարձկանը վարձի համար գործում է ծակված քսակով»:*
>
> *Այսպես է ասում Զորաց Տերը. «Ձեր ուշը դարձրե՛ք ձեր ճանապարհներին: Վե՛ր ելեք սարը և փայտ բերե՛ք և տունը շինե՛ք. այն ժամանակ Ես կհավանեմ դրան և կփառավորվեմ»,- ասում է Տերը: «Նայեցիք շատին, և ահա քիչ եղավ, և բերիք տուն, բայց Ես փչեցի միջին: Ինչի համար,- ասում է Զորաց Տերը,- Իմ տան համար, որ ավերակ է. իսկ ձեզնից յուրաքանչյուրը վազ է տալիս իր տան համար: Սրա համար (ձեր պատճառով) ձեզ վրա*

երկինքը պիտի արգելի ցողը, և երկիրը պիտի արգելի իր պտուղը: Եվ Ես երաշտ կանչեցի երկրի վրա և սարերի վրա և ցորենի վրա և քաղցուի վրա և յուղի վրա և երկրի բերքի վրա և մարդկանց վրա ու անասունների վրա և ձեռքի ամբողջ վաստակի վրա»»:

– Անգե 1.5-11

Այս հատվածում Անգե մարգարեն հանդիմանում է Իսրայելի ժողովրդին Բաբելոնի աքսորից վերադառնալուց հետո տաճարը չվերակառուցելու համար: Նրանք չէին բարգավաճում, կարոտության մեջ էին, բերքը լավ չէր, և ամբողջ ազգը տառապում էր: Աստված ժողովրդին ասում է, որ ուշադրություն դարձնի **<u>իր ճանապարհներին</u>**՝ ակնարկելով, որ կար ինչ-որ բան, որ նրանք անում էին կամ չէին անում, որն էլ կարոտության պատճառ էր դառնում:

Աստված ասում է. *«**<u>Ձեր պատճառով</u>** ձեզ վրա երկինքը պիտի արգելի ցողը»:* Նա ասում է, որ Ինքը ստիպված եղավ երաշտ կանչել **<u>նրանց</u>** արարքների պատճառով: Նրանք բոլորը կառուցում էին իրենց տները, իսկ Աստծո տունն ավերակ էին թողել: Սա ակնարկում է, որ նրանք տասանորդ չէին տալիս:

Հասկանո՞ւմ եք, տասանորդը պետք է բերվեր ղևտացիների՝ քահանաների մոտ, և օգտագործվեր տաճարի ծառայության համար: Քանի որ այն չէր բերվում ղևտացիների մոտ, և տաճարը չէր կառուցվում, Աստված ստիպված էր հետ քաշել Իր օրհնության ձեռքը:

Հասկացե՛ք՝ Աստծո կամքը չէր, որ Նա հետ քաշեր Իր օրհնությունը Իսրայելի ժողովրդից: Նա չուներ ընտրություն, քանի որ դա իրավական հարց էր, որի հիմքում տասանորդն էր:

Երբ շարունակում ենք կարդալ երկրորդ գլուխը, տեսնում ենք, որ ակնհայտորեն մարդիկ սկսում են ականջ դնել մարգարեի խոսքերին:

«Ուրեմն, մի լավ ո՛ւշ դարձրեք այս օրից դեպի առաջ, քանի որ քար քարի վրա դրված չէր Տիրոջ տաճարում: Երբ որ մեկը գալիս էր սրանից առաջ քսանանոց դեզի

մոտ, այն ժամանակ փասն էր դառնում. գնում էր կարասի մոտ հիսուն հանելու, և քսան էր դառնում: Ես զարկեցի ձեզ խորշակով ու դալուկով և կարկուտով, ձեր ձեռքի բոլոր գործերը, և դուք դեպի Ինձ չեք գալիս,- ասում է Տերը:- Մեկ ձեր ուշադրությունը դարձրե՛ք այս օրից և էլ առաջուց իններորդ ամսի քսանչորսերորդ օրից, այսինքն՝ այն օրից, որ հիմնվեց Տիրոջ փաճարը, դարձրե՛ք ձեր ուշադրությունը: Մի՞թե սերմը դեռ ամբարում է, և թզենին ու նոնենին և ձիթենին պտուղ չե՞ն բերել. այս օրից ի վեր պիտի օրհնեմ»:

– Անգե 2.15-19

Երբ տաճարին կրկին հատկացրին առաջին տեղը, Աստված նրանց ասաց, որ նշեն այդ օրն ու ժամը, որովհետև նրանք կտրուկ աճ էին տեսնելու իրենց բարգավաճման մեջ: Նա ցանկանում էր, որ նրանք նշեին դա՝ քաջալերելով ու խթանելով նրանց հիշել այդ փոփոխությունը, որպեսզի այլևս չդադարեին տասանորդ տալուց՝ ոչ թե Իր, այլ իրենց իսկ օգտի համար:

Այստեղ կան իրական բանալիներ, որոնք քիչ անց հասկանալի կդառնան, բայց առաջին բանը, որ ցանկանում եմ՝ գիտակցեք, այն է, որ տասանորդն *իրավական* հարց է: Աստված *ստիպված էր* հետ քաշել Իր ձեռքը, երբ նրանք չէին տալիս տասանորդ. Նա ոչ թե այդպես էր *ցանկանում*, այլ *ստիպված էր:*

«Որովհետև Ես՝ Տերս, չեմ փոփոխվի, և դուք, ո՛վ Հակոբի որդիներ, չեք սպառվի: Ձեր հայրերի օրերից ի վեր խոտորել եք Իմ պատվերներից և դրանք չեք պահել. եկ դարձեք դեպի Ինձ, և Ես էլ կդառնամ դեպի ձեզ,- ասում է Զորաց Տերը:

Բայց դուք ասում եք. «Ի՞նչ բանում եկ դառնանք»:

Մի՞թե մարդ Աստծուն կկողոպտի, որ դուք Ինձ կողոպտում եք.

Բայց դուք ասում եք. «Ի՞նչ բանում ենք Քեզ կողոպտում»:

Տասանորդում և ընծայում: Անեծքով դուք անիծված

եք, որովհետև դուք Ինձ կողոպտել եք, ամբողջ ազգդ: Ամբողջ տասանորդը տարեք գանձատունը, որ Իմ տանը պաշար լինի, և Ինձ մեկ փորձեք սրանով,- ասում է Զորաց Տերը,- թե արդյոք չեմ բացի ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափի ձեզ համար, մինչև որ նրա համար տեղ չլինի: Եվ Ես պիտի կշտամբեմ վնասատուներին, որ չապականեն ձեր բերքը, և ձեզ համար անպտուղ չլինի որթը այգում,- ասում է Զորաց Տերը:- Եվ ձեզ պիտի երանեն բոլոր ազգերը, որովհետև դուք պիտի ցանկալի երկիր լինեք,- ասում է Զորաց Տերը»:

– Մաղաքիա 3.6-12, NKJV

Այստեղ տեսնում եք մեկ այլ մարգարեի, որը հանդիմանում է ժողովրդին՝ հաստատելով, որ նրանք կողոպտում են Աստծուն՝ զրկելով Նրան իրենց օրհնելու կարողությունից: Նա ասում է, որ ամբողջ ազգն անեծքի տակ է այն բանի պատճառով, ինչ *չի* անում: Նրանց պատվիրված է ամբողջ տասանորդը բերել գանձատուն, որ Աստծո տանը պաշար լինի:

Հիշեցնեմ, որ տասանորդը պետք է տարվեր ղևտացիների՝ քահանաների մոտ: Մարդիկ բերում էին որոշ ընծաներ, բայց ո՛չ ամբողջ տասանորդը (հիշե՛ք Կայենի մեղքը): Տերն ասում է, որ եթե նրանք բերեն ամբողջ տասանորդը, երկնքի օրհնությունը դարձյալ նրանցը կլինի: Երկինքն օրինական իրավասություն կունենա տեղաշարժվելու նրանց մեջ: Աստված ասում է, որ եթե նրանք վերադառնան Իր մոտ տասանորդով, այդ ժամանակ այնպիսի օրհնություն կունենան, որ չեն կարողանա տեղավորել:

Շատ լավ, կանգ առնենք և մի պահ խոսենք այս մասին, նախքան ավելի հեռու կգնամ:

Մենք տեսանք, որ տասանորդը հստակ կերպով երևան եկավ հենց սկզբում, և այժմ կարող ենք հասկանալ, թե ինչու: Մենք տեսնում ենք, որ տասանորդն Աստծուն օրինական իրավասություն է տալիս կանգնելու Աստծո ժողովրդի և ուտողի, այսինքն՝ սատանայի միջև և հանդիմանելու նրան:

Ըստ էության, Աստված ասում էր. «Ձեռքերդ քաշի՛ր, սատանա՛: Դու չես կարող դիպչել նրանց ունեցվածքին»:

Երբ Ադամը մեղանչեց, սատանան մեծ սիրով կցանկանար նրան սովամահ անել և բնաջնջել երկրի երեսից: Բայց Աստված անմիջապես ներդրեց տասանորդը՝ Ադամին ու Եվային պաշտպանելու համար: Երբ Ադամն ու Եվան ընտրեցին տասանորդ տալ, դրանով Աստծուն հատկացրին առաջին տեղը: Նրանք ընտրեցին Աստծուն:

Հիշենք, որ սատանան մուտք ստացավ երկրային տիրույթ նույն ձևով: Համոզելով Ադամին ու Եվային Աստծո փոխարեն հավատալ իրեն՝ նա օրինական մուտք ստացավ: Ուստի, տասանորդ տալը՝ ունեցածի տասը տոկոսն Աստծուն տալը, օրինական իրավունք տվեց Աստծուն՝ պաշտպանելու Ադամի և Եվայի մատակարարումը:

ՏԱՍԱՆՈՐԴԸ ՆԵՐԴՐՎԵՑ ՈՐՊԵՍ ՕՐԻՆԱԿԱՆ ՑԱՆԿԱՊԱՏ ԱԴԱՄԻ ԵՎ ԵՎԱՅԻ ՇՈՒՐՋ, ԵՎ ԱՅՍՕՐ ԷԼ ԱՅՆ ԳՈՐԾՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՕՐԻՆԱԿԱՆ ՎԱՀԱՆ ՄԵՐ ՇՈՒՐՋԸ:

Մենք պետք է հիշենք, որ տասանորդն օրենք էր, որը միայն վերաբերում էր երկրի վրա սատանայի տարածքում մարդու մատակարարմանը: Այն չփոխեց նրա կարգավիճակը հոգևոր վերականգնում բերելու առումով: Ո՛չ, նախքան դա տեղի կունենար, առաջին հերթին պետք է կատարվեր մեղքի պատարագ: Բայց տասանորդը թույլ տվեց, որ Աստված հետ պահեր սատանային մարդկանց տրամադրվող մատակարարումը գողանալուց, և թույլ կտար նրանց գոյատևել երկրի վրա:

Շատերն ասում են, որ տասանորդը Հին կտակարանի օրենք է, որը չեղյալ է համարվել Հիսուսի կատարած զոհի շնորհիվ: Բայց մենք տեսանք, որ տասանորդի օրենքը ներդրվեց դեռևս մարդու մեղանչման ժամանակ, նախքան կգրվեր Մովսեսի Օրենքը:

Տասանորդը ներդրվեց որպես օրինական ցանկապատ Ադամի և Եվայի շուրջ, և այսօր էլ այն գործում է որպես օրինական վահան մեր շուրջը:

Տասանորդը երկրային տիրույթի օրենք է և ուժի մեջ է այնքան ժամանակ, քանի դեռ սատանան արձակված է երկրի վրա, ինչպես և ներկայումս կա: Քանի դեռ սատանան այստեղ է, տասանորդի օրենքը ուժի մեջ է:

Մեկ այլ բան, որ կարող եք տեսնել եկեղեցում, այն է, որ կան մարդիկ, որոնք տասանորդ են տալիս, սակայն չեն բարգավաճում: Սրա պատճառը տասանորդի վերաբերյալ սխալ ուսմունքն է: Մարդիկ կարծում են, որ եթե պարզապես տասանորդ տան, Տիրոջ օրհնությունն այնպիսի բարգավաճում կբերի, որ չեն կարողանա տեղավորել իրենց շտեմարաններում: Երբ նրանք սկսում են տասանորդ տալ և չեն տեսնում իրենց հորդացող բարգավաճումը, եզրակացնում են, որ տասանորդը չի գործում: Բայց նրանց ենթադրությունը ճիշտ չէ, և մենք պետք է առավել ուշադիր նայենք մեր տեքստին, որպեսզի պարզենք, թե ինչու:

Աստված ժողովրդին ասաց, որ եթե տասանորդ տաք. *«Ես պիտի կշտամբեմ վնասատուներին, որ չապականեն **ձեր բերքը**, և ձեզ համար անպտուղ չլինի **որթը այգում**»:*

Հասկանո՞ւմ եք: Գրված է, որ երկնքի պատուհանները կբացվեն, և Աստված կօրհնի *նրանց* բերքը: Ասելիքս այն է, որ *դուք* պետք է ինչ-որ բան աճեցնեք տասանորդի ցանկապատի ներսում:

Տասանորդն ինքնին բարգավաճում չի բերում: Այն միայն պաշտպանում է այն, ինչ անում եք ցանկապատի ներսում:

Այնպես որ, եթե դուք ունեք լոլիկի երեք սածիլ, դրանք աճելու են: Բայց եթե ձեր ունեցածն ընդամենը երեք սածիլ է, ապա դուք կունենաք երեք խոշոր թփեր, բայց սաստիկ չեք բարգավաճի:

Ինչ *դուք* կառուցում եք կամ աճեցնում ցանկապատի ներսում, դա էլ պատճառ է դառնում, որ հեղեղվեք առատությամբ:

Ցավոք, սխալ ուսմունքի հետևանքով Աստծո ժողովրդից շատերը տասանորդ են տալիս, ապա նստում, սառույցով թեյ ըմպում ու սպասում առատության հեղեղին: Հեղեղը կսկսվի այն ժամանակ, երբ հասկանանք մեր դերը այս գործընթացում:

Այսպիսով, եկե՛ք ամփոփենք:

1. Տասանորդն աշխարհ եկավ հենց սկզբից՝ մարդու մեղանչման ժամանակ:
2. Այն գրվեց Մովսեսի Օրենքի մեջ, որովհետև Մովսեսի Օրենքը թելադրում էր, թե ինչպես պետք է Իսրայելի ժողովուրդն

ապրեր: Աստված, ցանկանալով համոզված լինել, որ կարող է օրինել նրանց, գրեց այն այդ օրենքի մեջ, որպեսզի երաշխավորի նրա շարունակականությունը: Տասանորդի օրենքը չի վերացել: Բայց տասանորդի հանդեպ օրինական պահանջը վերացել է: Այժմ մենք ունենք *ընտրություն*՝ տասանորդ տալու և օգտվելու դրա առավելությունից:

3. Տասանորդի օրենքը երկրային տիրույթի օրենք է և կմնա այնքան ժամանակ, քանի դեռ սատանան արձակված է:

4. Տասանորդն ինքնաբերաբար բարգավաճում չի բերում, բայց թույլ է տալիս Աստծուն հետ պահել սատանային այն ամենին միջամտելուց, ինչ դուք աճեցնում կամ կառուցում եք տասանորդի ցանկապատի ներսում:

5. Տասանորդը որևէ առնչություն չունի ձեր Երկինք գնալու կամ չգնալու հետ: Դուք կգնաք Երկինք, եթե կանչեք Հիսուսի անունը: Բայց տասանորդը կազդի ձեր բարգավաճման վրա այստեղ՝ երկրային կյանքում:

6. Տասանորդը պատկանում է Աստծո գանձատանը: Հին կտակարանում այն միջոց էր Աստծուն ծառայող քահանաներին կերակրելու և նրանց կարիքները հոգալու համար: Այսօր էլ նույնն է: Տասանորդը պետք է տրվի ձեր եկեղեցուն: Աստված նշանակել է տասանորդը՝ ծառայության կարիքները հոգալու համար:

   Մարդիկ կան, որոնց դուր չի գալիս իրենց եկեղեցին, և ինձ հարցնում են, թե արդյո՞ք պետք է տասանորդ տան այնտեղ: Իմ պատասխա՞նը. գտե՛ք նոր եկեղեցի, այնպիսին, որ սովորեցնում է հավատքի և Թագավորության մասին:

   Եթե դուք չեք կողմնորոշվում եկեղեցիների միջև, կարող եք տասանորդ տալ այն ծառայությանը, որից կերակրվում եք, բայց Աստծո լավագույն ցանկությունն է, որ դուք լինեք լավ եկեղեցում: Եթե ձեր տարածքում չկան այդպիսի եկեղեցիներ, այդ դեպքում կարող եք տասանորդ տալ կրկին այնտեղ, որտեղից կերակրվում եք:

7. Դուք չեք կարող անուն տալ ձեր տասանորդին: Օրինակ, տասանորդը ցանելիս չեք կարող ասել. «Ես ցանում եմ իմ տասանորդը՝ որպես սերմ_____ համար»: Տասանորդն արդեն ունի իր առաջադրանքը: Դուք կարող եք անուն տալ զոհաբերությանը, բայց ոչ՝ տասանորդին:

8. Տասանորդը ձեր վաստակածի 10 տոկոսն է: Դա նախքան հարկերն է: Հիշեք, Աստված Մաղաքիայի միջոցով ասաց. «Ամբողջ տասանորդը տարեք գանձատունը»: Ինը տոկոսը տասանորդ չէ: Վեց տոկոսը տասանորդ չէ: Տասանորդը 10 տոկոսն է: Եթե դուք ասում եք, որ ի վիճակի չեք վճարելու այդ 10 տոկոսը, արեք այն, ինչ Աստված ասում էր Իսրայելին, երբ նրանք չէին բերում ամբողջ տասանորդը. «Մեկ Ինձ փորձեք սրանում»,- ասաց Նա:

9. Տվեք ձեր տասանորդը հավատքով՝ իմանալով, որ Աստված կպատվի այն:

10. Ինչպե՞ս իմանամ, թե ինչից տասանորդ տամ: Իմ համընդհանուր մոտեցումը սա է. արդյո՞ք դա հարկվող եկամուտ է:

11. Եթե հարկվող եկամուտ է, այդ դեպքում ես տասանորդ եմ տալիս դրանից: Իմ բիզնեսից տասանորդ տալի՞ս եմ: Կրկին, այն հարկվո՞ղ է: Ես չեմ տալիս տասանորդ իմ բիզնեսի համախառն եկամտից: Ես ցանում եմ իմ բիզնեսից, ինչպես ցանկանում եմ, բայց դա տասանորդ չէ: Երբ իմ բիզնեսից փող եմ դուրս հանում, այդ ժամանակ տասանորդ եմ տալիս նրանից, ինչ հանում եմ:

12. Իսկ ի՞նչ անեմ, եթե այս պահին չունեմ եկեղեցի: Դուք կարող եք տասանորդ տալ նրան, ով ձեզ հոգևոր կերակուր է տալիս, մինչև որ եկեղեցի գտնեք: Այո՛, շատերն իրենց հիմնական եկեղեցին համարում են հեռավար եկեղեցին՝ ժամանակակից ուղիղ հեռարձակումների և ֆեյսբուքյան ուղիղ եթերների շնորհիվ: Եթե ձեր քաղաքում չկա Աստվածաշնչին հավատացող լավ եկեղեցի, ապա կարող եք տասանորդ տալ հեռավար եկեղեցուն: Հենց այդ պատճառով գյուղական վայրերում բնակվող մարդկանցից շատերը

Faithlifechurch.org եկեղեցին դարձրել են իրենց հարազատ եկեղեցին:

Շա՛տ լավ, եկե՛ք առաջ շարժվենք:

Տերն ինձ ցույց տվեց, որ քրիստոնյաների մեծ մասը տալիս է իր տասանորդը՝ որպես հաշիվ, որը պարտք է (եթե տալիս է, իսկ մեծ մասը չի էլ տալիս): Սա նշանակում է, որ նրանք հավատք չեն գործադրում այն բանում, ինչ անում են, այլ պարզապես գիտեն, որ տասանորդ են պարտք, և վճարում են այնպես, ինչպես հաշիվները կփակեին:

Թեև լավ է, որ տասանորդ եք տալիս, բայց ձեր տասանորդը պետք է տաք հավատքով: Այլապես, ձեր գործողությունը կբխի իրավական տեսանկյունից, այլ ոչ թե հիմնված կլինի հավատքի վրա:

Թող Աստծո յուրաքանչյուր խոսքը ձեզ համար լինի հայտնություն այն մտադրության մասին, որ Նա ունի ձեր հանդեպ: Տասանորդը ծանր բեռ չէ՝ կրելու համար, և այն տալը չպետք է ցավալի լինի: Աստված չի փորձում որևէ բան *վերցնել* ձեզնից, ընդհակառակը, Նա փորձում է ինչ-որ բան *հասցնել* ձեզ: Մենք պետք է հավատանք և հասկանանք տասանորդի առավելությունը և ուրախանանք դրանով: Տասանորդը երկրպագության գործողություն է, որը հռչակում է, որ Աստված է մեր աղբյուրը: Այն ունի հստակ սահմանված օգուտներ, որոնք ստանալու համար պետք է հավատանք, երբ տասանորդ ենք տալիս:

Ես մշտապես առաջարկում եմ, որ ընտանիքն իր տասանորդն արդեն պատրաստած լինի, երբ գալիս է եկեղեցի: Նաև առաջարկում եմ, որ նախքան եկեղեցի գալը, ընտանիքի անդամները դնեն իրենց ձեռքերը տասանորդի վրա, հռչակեն դրա օգտակար լինելու զորությունը և հայտարարեն, որ երկնքի պատուհանները բաց են, ու սատանային արգելված է դիպչել հունձքին: Նրանք նաև պետք է հռչակեն, որ սատանան չի կարող գողանալ իրենցից, և այն, ինչի վրա դնում են իրենց ձեռքերը, հաջողություն կունենա, Հիսուսի անունով:

Եվ վերջում, թույլ տվեք ավարտել տասանորդի մասին մեր քննարկումը՝ դիտարկելով, թե ինչ է գրված դրա մասին Նոր կտակարանում: Օ՜, այո՛, այստեղ նշվում է տասանորդի մասին: Ավելի վաղ կարդացինք հետևյալ հատվածը.

> *«Եվ Սոդոմի թագավորը դիմավորեց նրան, երբ որ նա Քոդողագոմորին և նրա հետ լինող թագավորներին կոտորելուց ետ էր դառել դեպի Շավե ձորը, այսինքն՝ Թագավորի ձորը: Եվ Սաղեմի թագավոր Մելքիսեդեկը հաց և գինի դուրս բերեց, և նա Բարձրյալ Աստծո քահանա էր: Եվ օրհնեց նրան և ասաց. «Օրհնյա՛լ լինի Աբրամը՝ երկնքի և երկրի Արարիչ Բարձրյալ Աստծուց: Եվ օրհնյա՛լ լինի Բարձրյալ Աստված, որ քո թշնամիներին քո ձեռքը մատնեց»: Եվ նա (Աբրամը) ամենից տասանորդ տվեց նրան»:*
>
> – Ծննդոց 14.17-20

Այժմ, տեսնենք, թե ինչ է ասում Եբրայեցիների թղթի հեղինակը տասանորդի մասին:

> *«Որովհետև այս Մելքիսեդեկը Սաղեմի թագավոր էր, Բարձրյալ Աստծո քահանա, որ դիմավորեց Աբրահամին, երբ որ նա թագավորներին կոտորելուց ետ էր դառնում: Եվ օրհնեց նրան, որին Աբրահամը բոլոր բաներից տասանորդ էլ տվեց: Նա առաջ թարգմանվում է «արդարության թագավոր» և հետո «Սաղեմի թագավոր», որ է՝ «խաղաղության թագավոր»: Անհայր, անմայր, առանց ազգահամարի, որ ո՛չ օրերի սկիզբ ունի, և ո՛չ կյանքի վերջ. այլ՝ Աստծո Որդու նման եղած կենում մնում է քահանա մշտնջենավոր:*
>
> *Հիմա տեսե՛ք, թե քանի մեծ էր սա, որին Աբրահամ նահապետն էլ տասանորդ տվեց այն ավարից: Եվ Ղևիի որդիներից նրանք, որ ընդունում են քահանայությունը, հրաման ունեն ժողովրդից տասանորդ առնելու օրենքի համեմատ, այսինքն՝ իրենց եղբայրներից. թեպետ և նրանք էլ Աբրահամի երանքից են ելած: Բայց նա, որի*

ազգահամարը նրանցից չէր, տասանորդ առավ Աբրահամից և օրհնեց նրան, որ խոստմունքներն ուներ: Հիմա առանց որևէ հակառակության՝ նվազը լավագույնիցն է օրհնվում: Եվ այստեղ մահկանացու մարդիկ են առնում տասանորդ, բայց այնտեղ Նա, որ վկայվեց, թե կենդանի է»:

– Եբրայեցիների 7.1-8

Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք, որ այս տեքստում ասվում է. *«…այստեղ մահկանացու մարդիկ են առնում տասանորդ»*՝ վկայակոչելով Հին կտակարանի ղևտացիներին: Այնուհետև շարունակում է. *«…բայց այնտեղ Նա, **որ վկայվեց, թե կենդանի է**»:*

Մելքիսեդեկն արդարության թագավոր էր, խաղաղության թագավոր, անմայր կամ անհայր, չունենալով ոչ օրերի սկիզբ, ոչ կյանքի վերջ. այլ՝ Աստծո Որդու նման մնում է քահանա մշտնջենավոր: Մելքիսեդեկը Հիսուս Քրիստոսն էր, որ այդ օրը կանգնած էր Աբրահամի առջև: Բայցևայնպես, այդ պահին նա հայտնի չէր որպես Հիսուս:

Հիշե՛ք, Հովսեփին հրեշտակն ասաց, որ մանկանը Հիսուս անվանի, երբ Նա ծնվի: Հիսուս անունը նշանակում է Փրկիչ, ինչը ցույց է տալիս, թե Ով էր Նա լինելու մեզ համար: Քրիստոսը Հիսուսի ազգանունը չէ: Երբ ասում ենք Հիսուս Քրիստոս, մենք բառացիորեն ասում ենք Օծյալ Փրկիչ: Հիսուսը հայտնի չէր Հիսուս անունով, երբ կանգնեց Աբրահամի առջև, որովհետև այդ ժամանակ Աստծո ծրագիրը դեռևս ծածկված էր սատանայից:

Մելքիսեդեկ անունը մի անուն էր, որը պարզապես արտացոլում էր, թե ով էր Նա՝ Արդարության Թագավոր և Խաղաղության Իշխան: Ինչևէ, մարգարեական առումով, Մելքիսեդեկը հռչակում էր Աբրահամի ապագան՝ նրան հաց ու գինի մատուցելով, ինչը խոսում էր նոր ուխտի մասին (հացը՝ Նրա մարմինը, որ կոտրվեց մեզ համար, և գինին՝ Նրա արյունը, որ թափվեց մեզ համար), որն ավելի ուշ կնքվելու էր Աբրահամի ժառանգների հետ և իրականացնելու էր այն խոստումը, որ Աստված տվեց Աբրահամին նրա ժառանգների վերաբերյալ Ծննդոց 12-րդ գլխում:

Ինչ վերաբերում է տասանորդին, Եբրայեցիների թղթում ասվում է, որ տասանորդն այժմ վերցնում է «Նա, որ վկայվեց, թե կենդանի է»: Այժմ տասանորդ է վերցնում Հիսուսը՝ Նա, Ով վկայվեց, թե կենդանի է: Նա է թագավորների Թագավորը և տերերի Տերը:

Այնպես որ՝ հիշե՛ք, տասանորդի օրենքը դեռ ուժի մեջ է այսօր: Միակ բանը, որ փոխվել է, քահանայությունն է: Հին կտակարանում Ղևիի ցեղն էր հավաքում տասանորդ՝ Աստծո գործի համար: Այսօր, Իր եկեղեցուց տասանորդ է հավաքում Հիսուսը (Ով Հուդայի, ոչ թե Ղևիի ցեղից էր, ինչը ցույց է տալիս, որ քահանայության նոր կարգ հաստատվեց)՝ ծառայության գործի համար: Իհարկե, ես գիտակցում եմ, որ Հիսուսն անձամբ այստեղ տասանորդ չի հավաքում: Բայց հիշե՛ք, որ Աստվածաշունչն ասում է, որ եկեղեցին Քրիստոսի մարմինն է՝ նկատի ունենալով Նրա իրավական արտահայտությունը երկրի վրա, ինչպես որ մեր մարմինը իրավական արտահայտություն է տալիս մեզ այստեղ: Երբ տալիս ենք Նրա եկեղեցուն՝ Նրա մարմնին, փաստացի տալիս ենք Քրիստոսին: Այն ժամանակ Հին ուխտի ներքո Ղևտացիներն էին տասանորդ հավաքում Աստծո ծառայության համար, իսկ հիմա եկեղեցին է տասանորդ հավաքում Աստծո ծառայության համար:

ՏԱՍԱՆՈՐԴՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՑԱՆԿԱՊԱՏ Է ՁԵՐ ԿՅԱՆՔԻ ՇՈՒՐՋԸ, ՈՐԸ ԹՈՒՅԼ ՉԻ ՏԱԼԻՍ ՍԱՏԱՆԱՅԻՆ ԳՈՂԱՆԱԼ ՁԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ:

Որպես ամփոփում՝ տասանորդն օրինական ցանկապատ է ձեր կյանքի շուրջը, որը թույլ չի տալիս սատանային գողանալ ձեր մատակարարումը: Հիշե՛ք, տասանորդն ինքնին ձեզ բարգավաճում չի բերում: Ձեր բարգավաճումը որոշվում է նրանով, թե ինչ եք անում այդ ցանկապատի *ներսում:*

Տասանորդը օրենք է, որը կենսական անհրաժեշտություն է ձեր ֆինանսական կյանքի համար: Այս է պատճառը, որ ես այսքան ժամանակ հատկացրի՝ խոսելով Թագավորության այս կարևոր օրենքի մասին:

Այնպես որ, հաջորդ անգամ, երբ եկեղեցում լինեք, և հովիվն ասի, որ տասանորդ հավաքելու ժամանակն է, դուք ուրախությունից պետք է աղաղակեք, որովհետև այժմ գիտեք տասանորդի օգտակար լինելը:

ԳԼՈՒԽ 7

ԴՈՒՔ ՔՍԱԿԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՔ ՄԱՍ 1

Իմ լավագույն ընկերներից մեկը՝ հովիվ Պիտեր Մորթլոկը, հովվում է Նոր Զելանդիայի Օքլենդ քաղաքի «City Impact Church» եկեղեցին: Նա հիանալի ծառայություն է կառուցել և ունի ամենամեծ եկեղեցիներից մեկը Նոր Զելանդիայում:

Մեր ընկերության ամբողջ ընթացքում մենք, հավանաբար, 20 կամ ավելի մոտոցիկլետային շրջագայություններ ենք կատարել Հյուսիսային Ամերիկայում և Նոր Զելանդիայում: Նա էր, որ համոզեց ինձ գնել «Հարլի» մակնիշի մոտոցիկլետ: Տարիներ շարունակ ես վարել եմ «Հոնդա» մակնիշի մոտոցիկլետ, բայց երբ ճամփորդում էինք, նա միշտ պնդում էր, որ ես «Հարլի» վարձեմ: Սկզբում «Հարլին» ինձ այնքան դուր չէր գալիս, որքան «Հոնդան», բայց եթե դուք բավականաչափ տեղյակ եք «Հարլի» մոտոցիկլետներից, ապա մի քանի տարի առաջ դրանց նախագծման մեջ կատարվեցին խոշոր փոփոխություններ, որոնք ինձ դուր եկան: Այնպես որ, անցյալ տարի Դրենդան ինձ համար գնեց նոր «Հարլի» մոտոցիկլետ, որով մենք սիրում ենք ճամփորդել:

Մեր զբոսանքների ժամանակ նկատել էի, որ հովիվ Պիտերի ուսերից միշտ կախված էր կաշվե պայուսակ, որը ես անվանում էի տղամարդու քսակ: Մի օր, երբ դրամապանակի վրա նստելն արդեն ցավ էր պատճառում ինձ, ես նրան հարցրի իր պայուսակի մասին: Մեր քննարկումը հանգեցրեց նրան, որ Պիտերը ծննդյանս օրվա առթիվ ինձ նվիրեց այդպիսի մի պայուսակ: Այդ պայուսակներն այստեղ՝ Նահանգներում, այնքան ընդունված

չեն, որքան Եվրոպայում և Նոր Զելանդիայում, բայց ինձ դուր են գալիս:

Սովորաբար, ինձ թվում էր, թե մշտապես կորցնում եմ արևային ակնոցներս՝ մոռանալով, թե որտեղ եմ դրել: Բայց այն օրվանից, երբ սկսեցի տղամարդու պայուսակ կամ քսակ («բարսետկա») օգտագործել, ինչպես կուզեք՝ անվանեք դա, այլևս չեմ կորցնում իմ ակնոցները: Այժմ լիովին հասկանում եմ, թե ինչու են կանայք սիրում կանացի պայուսակ կրել: Ամեն բան այդ պայուսակի մեջ է: Դա հրաշալի է: Ես չեմ փորձում համոզել ձեզ գնել տղամարդու պայուսակ, բայց ուզում եմ առաջարկել, որ մտածեք այդ մասին:

Գիտեի՞ք, որ Հիսուսը մեզ պատվիրեց քսակ կրել:

> *«Եվ դուք մի՛ որոնեք, թե ինչ ուտեք կամ ինչ խմեք, և մի՛ գրգռվեք: Որովհետև այդ բոլոր բաներն աշխարհի հեթանոսներն են որոնում. բայց ձեր Հայրը գիտի, որ դրանք ձեզ պետք են: Սակայն Աստծո արքայությունը խնդրեք, և այդ բոլորը կավելանան ձեզ:*
>
> *Մի՛ վախեցիր, փո՛քր հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց, որ արքայությունը տա ձեզ: Ձեր ստացվածքը ծախեք և ողորմություն տվեք. <u>ձեզ համար</u> չհնացող <u>քսակներ շինեք</u>՝ անպակաս գանձ՝ Երկնքում, որտեղ գողը չի մոտենում, և ո՛չ էլ ցեցն է ապականում: Որովհետև որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն»:*
>
> – Ղուկաս 12.29-34

Չեմ կարծում, որ Հիսուսը նորաձևության գաղափար էր առաջ քաշում, ընդհակառակը, Նա ներկայացնում էր մի գործընթաց, որը պետք է հասկանալ (եթե ցանկանում եք, «քսակ» բառը կարող ենք փոխարինել «դրամապանակ»-ով):

Հիսուսը շեշտադրում էր այն միտքը, որ ձեզ անհրաժեշտ է ունենալ մուտք դեպի ձեր գանձը:

Օրինակ, ես կարող էի բանկում ունենալ մեկ միլիոն դոլար, բայց դա ինձ ոչ մի օգուտ չէր տա, եթե չկարողանայի մուտք գոր-

ծել իմ հաշվեհամարի մեջ և օգտագործել այդ դոլարները, ճի՞շտ է: Այս է պատճառը, որ ձեզ մոտ դրամապանակ եք պահում. դա ձեր մուտքի դուռն է դեպի ձեր միջոցները:

Դրամապանակը կորցնելը սթրես է, որ կարող է պատահել: Ես մշտապես հետևում եմ, որ նման բան չպատահի: Իմ դրամապանակը, որն իմ պայուսակի մեջ է, մշտապես ինձ հետ է:

Հիսուսի խոսքերից մեջբերված այս հատվածում գտնում ենք հսկայական իմաստություն և Թագավորության բանալի սկզբունքներ, որոնք վերաբերում են այն ֆինանսներին, որ ունեք Թագավորության մեջ: Նախևառաջ՝ «մի՛ վախեցիր» արտահայտությունն օգտագործվում է ավելի քան մեկ անգամ: Հիսուսն ասաց, որ Աստված գիտի այն ամենը, ինչի կարիքն ունենք, և հատուկ ցուցումներ տվեց այն մասին, թե ինչպես կարող է Նրա մատակարարումը հասանելի դառնալ մեզ:

> *«Եվ դուք մի՛ որոնեք, թե ինչ ուտեք կամ ինչ խմեք, և մի՛ գրգռվեք: Որովհետև այդ բոլոր բաներն աշխարհի հեթանոսներն են որոնում. բայց ձեր Հայրը գիտի, որ դրանք ձեզ պետք են: Սակայն Աստծո արքայությունը խնդրեք (կամ՝ փնտրեք), և այդ բոլորը կավելանան ձեզ»:*

Հիսուսը հորդորում է չանհանգստանալ, որովհետև Աստված լուծել է այդ հարցը. Նա գիտի, թե ինչ է ձեզ հարկավոր: Բայց հետո Հիսուսը տվեց հրահանգ:

> *«Սակայն Աստծո արքայությունը խնդրեք (փնտրեք), և այդ բոլորը կավելանան ձեզ»:*

Հիսուսն ասում էր, որ Աստված ունի պատասխանը, բայց գոյություն ունի դրա նկատմամբ օրինական պահանջ ներկայացնելու գործընթաց: Աստված ունի պատասխանը, ԲԱՅՑ դուք պետք է իմանաք, թե ինչպես է գործում Թագավորությունը՝ նախքան դրա համար պահանջ ներկայացնելը:

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը չասաց, որ առաջ Աստծուն փնտրենք, այլ՝ *Թագավորությունը:* Կարծում եմ՝ շատերս

մեկնաբանել ենք այս խոսքը՝ նկատի ունենալով, որ առաջ Աստծուն փնտրենք, բայց այդպես չի ասվում: Հիսուսը շատ հստակ արտահայտվեց: Եթե միայն Աստծուն փնտրելը լիներ պատասխանը, ապա Նա կասեր. «Փնտրե՛ք *Աստծուն*, և այդ ամենը կտրվի ձեզ»: Աստված գիտի, թե ինչի կարիք ունեք, բայց կա օրինական գործընթաց, որը պետք է տեղի ունենա՝ նախքան այն, ինչ երկինքն ունի, կկարողանա օրինականորեն փոխանցվել ձեզ այստեղ՝ երկրային տիրույթում:

Հիշեցնեմ, որ Աստծո Թագավորությունը կառավարություն է Իր Թագավորով: Թագավորի իշխանությունն ու կամքը Թագավորության յուրաքանչյուր քաղաքացու հանդեպ իրականացվում են Թագավորության օրենքների կիրառման միջոցով:

Իմ նախորդ չորս գրքերում ես ժամանակ եմ հատկացրել՝ անդրադառնալու Թագավորության կյանքի, հավատքի և իրավասության հարցերին: Ինչո՞ւ: Որովհետև այս սկզբունքները բացարձակապես կարևոր են հաջողություն ունենալու և Թագավորության կյանքը հասկանալու համար: Իմ բոլոր գրքերում ես ներկայացրել եմ Թագավորության այս բանալի բաղադրիչները՝ գիտակցելով, որ շատերը կարող են գրքերից որևէ մեկը վերցնել, և նրանց անհրաժեշտ կլինի իմանալու այն հիմնավոր գիտելիքները, որոնք, ըստ էության, փոխեցին իմ կյանքը:

Դուք պետք է իմանաք, թե ինչպես է Թագավորությունը գործում:

Այս գլխում ներկայացված նյութը վերցված է իմ՝ «Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարի մյուս գրքերից: Եթե կարդացել եք դրանք, ապա ազատ կարող եք անցնել ութերորդ գլխին: Եթե չեք կարդացել կամ ցանկանում եք վերանայել Թագավորության այս հիմնական և կենսական կարևոր սկզբունքները, ապա մնացե՛ք ինձ հետ յոթերորդ գլխում:

Իրավասության հարցը

Ինչպես ավելի վաղ նշեցի, ես ապրում եմ քաղաքից դուրս՝ Օհայոյի գեղատեսիլ վայրերից մեկում՝ շուրջ 24 հեկտար զբաղեցնող հողատարածքում: Սկզբում այն 22 հեկտար էր, բայց

հարևանս վաճառեց ինձ մի հողակտոր, որը սահմանակից էր իմ հողատարածքին, և ամբողջը դարձավ 24 հեկտար: Վերջին 22 տարում մենք իսկապես վայելում ենք այս հողատարածքը: Եղնիկներ որսալու համար՝ անտառ, բադեր որսալու համար՝ ճահճուտ, ճագարներ ու փասիաններ որսալու համար դաշտեր ունենալը, ինչպես նաև մեր մոտոամենագնացներով շրջելն իսկապես օրհնություն են:

Եթե ուշադիր նայեք իմ տարածքին, ապա կգտնեք «ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է» ցուցանակներ հողատարածքի ամբողջ պարագծով: Ցուցանակները նրա համար են, որ մարդիկ իմանան, թե որտեղից է սկսվում իմ սեփականության սահմանը: Օհայոյում օրենքն ասում է, որ այն մարդը, որը ցանկանում է լինել իմ հողատարածքում, պետք է ունենա գրավոր համաձայնության ձևաթուղթ: Եթե հողատարածքում գտնվելու ընթացքում նա չունենա այդ ձևաթղթից, ապա կհամարվի օրինախախտ և կարող է օրինականորեն դուրս հանվել տարածքից՝ միաժամանակ ենթարկվելով տույժերի ու տուգանքների:

Այսպիսով՝ կարճ ասած...

Դուք չեք կարող զբաղեցնել մի բան, որի նկատմամբ չունեք օրինական իրավասություն:

Ինչպես ասացի, իմ կողմից ստորագրված գրավոր համաձայնության ձևաթուղթ ունենալը կտա ձեզ օրինական մուտք դեպի իմ հողատարածք: Եթե որևէ մեկը կանգնեցներ ձեզ իմ հողատարածքում և հարցներ, թե ինչ գործ ունեք այդտեղ, ու դուք պատասխանեիք, որ ես ձեզ թույլ եմ տվել, որ այդտեղ որսորդություն անեք, ապա դա բավարար չէր լինի: Օրենքն ասում է, որ դուք պետք է ունենաք ստորագրված ձևաթուղթ այնտեղ մուտք գործելու համար:

Նույն գործընթացն անհրաժեշտ է այն դեպքում, եթե գնայիք բանկ և պահանջեիք ձեր փողը. ձեզնից կխնդրեին ցույց տալ անձը հաստատող փաստաթուղթ կամ նույնականացման քարտ: Մանրածախ առևտրի գործակատարն ունի նույն իրավունքը՝ խնդրելու ձեր նույնականացման քարտը, երբ դուք օգտագործում

եք վարկային քարտ՝ ապրանքի դիմաց վճարելու համար: Նույնականացման քարտ ներկայացնելը նախատեսված չէ խոչընդոտելու ձեր հաշիվներից օգտվելու իրավունքը. այն նպատակ ունի պաշտպանել ձեզ ուրիշներից, որոնք խաբեությամբ փորձում են մուտք գործել ձեր հաշիվների մեջ:

Երբ Հիսուսն ասաց, որ սկզբում Թագավորությունը փնտրեք, Նա, ըստ էության, ասում էր. *«Ուսումնասիրե՛ք Թագավորության օրենքները, որպեսզի իմանաք ձեր օրինական իրավունքները և օրինական ու արդյունավետ գործեք՝ որպես Թագավորության քաղաքացիներ»:* Իմացե՛ք, թե ինչն է ձերը, և ինչպես օգտվեք դրանից: Այդ ժամանակ այն ամենը, ինչի կարիքն ունեք, կավելանա ձեզ:

ԻՄԱՑԵ՛Ք, ԹԵ ԻՆՉՆ Է ՁԵՐԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵՔ ԴՐԱՆԻՑ: ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉԻ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՔ, ԿԱՎԵԼԱՆԱ ՁԵԶ:

Մեկ այլ օրինակ բերեմ: Ենթադրենք ես ունեմ հավատարմագրային հիմնադրամ որդուս համար: Երբ նա մեծանա, և հաշվեհամարը նրան փոխանցելն օրինական դառնա, ես նրան պետք է ասեմ, թե որ բանկում է այն, ցույց տամ, թե ինչպես հաշվից կանխիկացում կատարի և ինչպես հաշվին ներդրումներ անի: Թեև օրինական առումով դա նրա հաշվեհամարն է, նա դեռևս պատասխանատվություն պետք է կրի օրենքի իրավական գործընթացի առջև՝ այն գործածելու թույլտվություն ունենալու համար:

Թո՛ւյլ տվեք ամփոփել ասածս: Երբ Հիսուսը պատվիրեց փնտրել Թագավորությունը, Նա ասում էր, որ սովորենք, թե ինչպես է Թագավորությունը գործում՝ հղում անելով Թագավորության այն օրենքներին և գործընթացներին, որոնք պետք է սովորենք, որպեսզի օրինականորեն տեր լինենք նրան, ինչն արդեն մերն է: Ինչպես տեսանք բանկային հաշվի իմ օրինակում, դուք կարող եք ունենալ օրինական իրավասություն դրամական միջոցների հանդեպ, բայց դեռևս չեք կարող օգտվել դրանցից, որովհետև չեք հետևել դրանցից օգտվելու օրինական գործընթացին: Օրինակ՝ եթե ձեր անձնագիրը թողնեիք տանը, ապա երբ գնայիք բանկ, ձեզ թույլ չէին տա հաշվից գումար հանել, չնայած որ դա ձեր փողն է:

Իրավասության հարցը հասկանալը Թագավորության մեջ արդյունավետ կերպով գործելու նախապայման է:

Համոզված եմ, որ լսել եք այսպիսի պատմություն. հանրաճանաչ մեկը հիվանդանում է, և նրա համար աղոթքի կոչ է արվում: Միլիոնավոր մարդիկ միաբան աղոթում են այս մարդու բժշկության համար, բայց նա մահանում է: Ինչո՞ւ:

Կա՛մ ինչ-որ մեկը ձեզ ասում է, որ իր տատիկը մահացավ, թեև աղոթում էին նրա համար, և հիմա ուզում է իմանալ, թե ինչու այդպես եղավ, կա՛մ մեկ ուրիշն ասում է, որ գումար է ցանել ֆինանսական կարիքի համար, սակայն շարունակում է ընչազուրկ մնալ: Արդյո՞ք կան պատասխաններ այսպիսի հարցերի համար:

Նախքան կպատասխանեմ, եկե՛ք ընդունենք, որ մենք չգիտենք այն ամենը, ինչ տեղի է ունենում հոգևոր ոլորտում, և ես չեմ ձևացնում, թե գիտեմ: Ինչևէ, Աստծո Խոսքի վրա հիմնվելով, մենք գիտենք, որ եթե որևէ մեկը հիվանդ է, Հիսուսն արդեն գին է վճարել նրա բժշկության համար: Մենք գիտենք, որ եթե առատաձեռն լինենք և տանք, Աստվածաշունչն ասում է, որ կստանանք: Մինչդեռ առօրյայում տեսնում ենք, որ շատերի կյանքում Աստծո Խոսքը չի գործում այնպես, ինչպես գրված է: Արդյո՞ք պետք է մեղադրել Աստծուն:

Երբ այս գլխում քննարկեմ այս թեման, դուք կպարզեք, որ պատասխանը միանշանակ ՈՉ է: Եթե այդպես է, ապա ո՞րն է խնդիրը: Ընդհանուր առմամբ, մարդկանց մեծ մասը մեղադրում է Աստծուն ողբերգությունների համար: Նրանք գիտեն, որ Աստված ունի զորություն՝ դադարեցնելու վատ բաները, սակայն չի անում, ուստի նրանք ենթադրում են, որ Աստված *ընտրում է* չանել: Այստեղից էլ հետևյալ սխալ ուսմունքն է. «Աստված թույլ է տալիս, որ վատ բաներ պատահեն լավ մարդկանց հետ»: Մարդիկ հավատում են, որ եթե Աստված չդադարեցրեց կամ չմիջամտեց, ուրեմն հաստատ թույլ է տվել դա: Բայց եթե դուք ունեք այն հասկացողությունը, որ Աստված միշտ բարի է և չի կարող ստել, ապա կիմանաք, որ խնդիրն Աստծո մեջ չէ, այլ՝ մեկ այլ տեղ, և կսկսեք ձեր որոնումները՝ պատասխանը գտնելու համար:

Երբ մտնում եք սենյակ, որտեղ մութ է, դուք ինքնաբերաբար

չեք պնդում, որ էլեկտրաէներգիայի ընկերությունը թերացել է իր պարտականություններում: Ո՛չ, դուք միացնում եք անջատիչը, իսկ եթե դա չի օգնում, ստուգում եք էլեկտրական լամպը: Դուք հասկանում եք, որ, ամենայն հավանականությամբ, խնդիրը *ձեզ* մոտ է:

Եթե իմանայիք, որ *երբեք* չի կարող Աստծո մեղավորությունը լինել, քանի որ Նա տվել է մեզ Իր Խոսքը և խոստումները, որոնք հայտնում են Նրա կամքը մեր հանդեպ, այդ դեպքում կսկսեիք ջանասիրաբար փնտրել այն կարճ միացումը, որը կտրում է Աստծո պատասխանը:

Աշակերտները ցուցաբերեցին այս մտածելակերպը, երբ չկարողացան տղայի միջից հանել դևը: Այս պատմությունը գրված է Մատթեոսի 17.14-23 խոսքերում: Փոխանակ հարցնելու, թե ինչու Աստված ընտրեց թողնել այդ դևին այնտեղ՝ նրանք Հիսուսին հարցրին. «Ինչո՞ւ *մենք* չկարողացանք հանել նրան»: Սա պիտի լինի մեր առաջին հարցը, երբ թվում է, թե հանգամանքները հակասում են Աստծո Խոսքին:

Այսպիսով, կենսականորեն կարևոր է, որ մենք, նախևառաջ, իմանանք, որ Աստված բարի է: Երկրորդ՝ որ Նա չի խաբում: Դուք պետք է կարդաք Աստվածաշունչը և հարցեր տաք, եթե ցանկանում եք իմանալ, թե ինչպես է Թագավորությունը գործում: Հիշե՛ք, աստվածաշնչյան այդ հրաշալի պատմությունները գրված են նպատակով. Հիսուսը փորձում է ինչ-որ բան ցույց տալ ձեզ:

Կրկնեմ, Աստծո Թագավորությունը թագավորություն է և գործում է օրենքներով ու սկզբունքներով, որոնք երբեք չեն փոխվում: Այդ սկզբունքները, ինչպես ասացի, կարելի է սովորել և օգտագործել այնպես, ինչպես հողագործն է հասկանում ցանքի և հունձքի օրենքները երկրային տիրույթում և օգտագործում է դրանք՝ բարգավաճելու համար: Քանի որ Թագավորությունը գործում է օրենքներով, որոնք տրված են յուրաքանչյուր քաղաքացու՝ հասկանալու և Թագավորության մեջ գործածելու համար, *ցանկացած ոք* կարող է սովորել դրանք:

Երբեմն, այս օրենքների իմացությունը կարող է կյանքի ու մահվան հարց լինել:

Մարկն ու Հանան եկան մեր եկեղեցի: Նրանք ցանկանում էին երեխա ունենալ: Մինչ այդ՝ բժիշկները Հանային ասել էին, որ տարբեր առողջական խնդիրների պատճառով գրեթե անհնար կլիներ, որ հղիանար: Բայց «Հավատքի կյանք» եկեղեցում նա սկսեց լսել Աստծո բարության մասին և սովորեց Թագավորության օրենքները և որոշ ժամանակ անց իմացավ, որ հղի է: Նա ցնցված էր: Բայց շուտով որովայնի շրջանում սուր ցավեր զգաց, մի քանի անգամ ցավն այնքան ուժգին էր, որ ուշաթափվեց:

Հերթական նոպայից հետո Հանան ցանկացավ հետազոտվել, ուստի այցելեց իր բժշկին: Բժիշկը տեղում չէր, բայց հերթապահ բժիշկը ցանկացավ ուլտրաձայնային հետազոտություն կատարել, որպեսզի տեսներ, թե ինչ է կատարվում:

Բժիշկն արյան մի մեծ գունդ տեսավ և ասաց, որ նա վիժել է: Չկար սրտի բաբախ:

Բժիշկն առաջարկեց նրան հաջորդ օրը գալ, որպեսզի մահացած երեխային հեռացներ արգանդից, բայց Հանան հրաժարվեց: Փոխարենը, նրա ամուսինը՝ Մարկը, քաջալերեց նրան Աստծո Խոսքով և Աստծո խոստումներով և հորդորեց մի կողմ չդնել իր վստահությունն Աստծո Խոսքի հանդեպ՝ երեխայի վերաբերյալ:

Հանգստյան օրերին եկեղեցին աղոթեց Հանայի համար, և նա համոզվեց, որ ունենալու է առողջ երեխա՝ անկախ նրանից, թե ինչ էր ասել բժիշկը:

Երկուշաբթի նա այցելեց իր անձնական բժշկին, քանի որ վերջինս տեղում չէր եղել այն օրը, երբ նա գնացել էր նրա աշխատասենյակ: Բժիշկն առաջարկեց ևս մեկ ուլտրաձայնային հետազոտություն անցնել: Նա կարծես ապշեց, երբ հայացքը սևեռեց ուլտրաձայնային էկրանին և անմիջապես նայեց այն տեսածրված պատկերներին, որոնք արվել էին մի քանի օր առաջ: Այնուհետև Հանային դիմեց հետևյալ խոսքերով. «30 տարի է՝ զբաղվում եմ այս գործով և երբեք նման բան չեմ տեսել: Անցյալ շաբաթվա տեսածրային պատկերում տեսնում եմ արյան մեծ գունդ և սրտի բաբախի բացակայություն: Իսկ այսօր տեսնում եմ, որ արյան գունդն անհետացել է, և ձեր արգանդում անթերի սրտի բաբախով անթերի երեխա է ապրում»:

Մի քանի ամիս անց Հանան ծնեց մի հիասքանչ աղջիկ, որին անվանեց Էվելին: Մի օր, հետաքրքրվելով, թե ինչ է նշանակում «Էվելին» անունը, նա փնտրեց, և, ի զարման իրեն, հայտնաբերեց, որ այն նշանակում է *կյանք:* Այսօր, երբ գրում եմ այս տողերը, Հանան սպասում է երկրորդ երեխային, որը ցանկացած պահի կարող է ծնվել:

Այս զարմանահրաշ պատմությունն ակնհայտորեն Աստծո գործն է: Բայց որպես հոգևոր գիտնական՝ հենց հիմա դուք պետք է մտածեք մի քանի հարցերի վերաբերյալ, ինչպես օրինակ. «Ինչո՞ւ դա տեղի ունեցավ: Արդյո՞ք Հանան Աստծո սիրելիներից մեկն է: Արդյո՞ք Աստված պարզապես պատահականորեն ընտրեց բժշկել նրա մարմինը»: Սրանք հարցեր են, որոնց պետք է պատասխանել:

Սովորական քրիստոնյայի համար սա հրաշք է: Բայց ես քաջալերում եմ մարդկանց վերանայել «հրաշք» բառը, քանի որ այն արտասովոր բան է ենթադրում: Թագավորության մեջ, սակայն, սա պարզապես Թագավորության օրենքի գործառույթ էր:

Եթե ես քար նետեի, և այն ընկներ, դուք կմտածեիք, որ ես խելագար եմ, եթե բացականչեի. «Ա՜յ քեզ բան, տեսա՞ք դա: Քարն ընկավ գետնին: Դա հրա՞շք է»: Դուք չեք համաձայնի, որ դա հրաշք է, որովհետև գիտեք, որ այդ գործողությունը պարզապես ձգողության օրենքի գործառույթն է, և դա գործում է միևնույն կերպով *ամեն անգամ յուրաքանչյուրի համար:* Քարը *միշտ* կընկնի:

Այսպիսով, որպես հոգևոր գիտնականներ՝ մենք պետք է փնտրենք պատասխաններ կատարվածի վերաբերյալ. հոգևոր պատասխաններ, որոնք կհայտնեն Թագավորության օրենքը կամ օրենքները, որ առկա էին պատմության մեջ:

Աստվածաշնչում ամենահզոր պատմություններից մեկը, որ կօգնի մեզ գտնելու պատասխաններ հավատքի և իրավասության վերաբերյալ, գրված է Ղուկասի Ավետարանի 8-րդ գլխում.

> *«… Եվ Նրա գալու ժամանակ ժողովուրդները նեղում էին Նրան: Եվ մի կին կար՝ տասներկու տարի շարունակ տեռապեսության մեջ, որ իր ամբողջ ինչքը բժիշկներին*

ծախսելով չէր կարողացել ոչ մեկից բժշկվել: Սա մոտ եկավ ետևից, Նրա հանդերձի ծայրին դիպավ, և իսկույն Նրա արյան վազելը կանգնեց:

Եվ Հիսուսն ասաց. «Ո՞վ է, որ Ինձ դիպավ»:

Եվ երբ որ ամենքն ուրանում էին, Պետրոսը և Նրա հետ լինողներն ասացին. «Վարդապե՛տ, ժողովուրդները սեղմում են Քեզ և նեղում, և Դու ասում ես՝ «Ո՞վ է, որ ինձ դիպավ»»:

Եվ Հիսուսը ասաց. «Մեկը դիպավ Ինձ. որովհետև Ես իմացա, որ զորություն դուրս եկավ Ինձնից»:

Եվ երբ որ տեսավ կինը, որ ծածուկ չմնաց, դողալով եկավ, Նրա առջև ընկավ և ամբողջ ժողովրդի առջև պատմեց Նրան, թե ինչ պատճառով Նրան դիպավ, և թե ինչպես իսկույն բժշկվեց: Նա էլ ասաց նրան. «Քաջացի՛ր, դո՛ւստր, քո հավա՛տքը բժշկեց քեզ, գնա՛ խաղաղությունով»»:

– Ղուկաս 8.42բ-48

Այս պատմության մեջ տեսնում ենք մի կնոջ, ով տարիներ շարունակ ծանր հիվանդ էր և չէր կարողացել առողջանալ: Ետևից մոտենալով Հիսուսին՝ դիպավ Նրա հանդերձին և իսկույն բժշկվեց: Պատմության մեջ կան մի քանի շատ խորիմաստ ակնարկներ Թագավորության գործունեության վերաբերյալ, որոնցից կարող ենք սովորել, և որոնք լույս կսփռեն պատասխաններից մի քանիսի վրա, որ փնտրում ենք:

Նախևառաջ՝ Հիսուսին շրջապատող ամբոխի մեջ գտնվող մարդիկ բոլորն էլ դիպչում էին Նրան, ինչպես պատմության մեջ է ասվում, ամբոխը նեղում էր Նրան և սեղմում: Երբ Հիսուսը հարցրեց՝ ո՞վ դիպավ Ինձ, Պետրոսը զարմացավ Նրա հարցից, որովհետև, *բոլորն* էին դիպչում Նրան: Բայց Հիսուսն ասաց, որ այդ մարդն այլ կերպ դիպավ Իրեն. Նա զգաց, թե ինչպես Սուրբ Հոգու զորությունը հոսեց Իրենից:

Այս պատմությունը կարդալուց հետո ձեր հոգում պետք է հնչեն բոլոր տեսակի զանգերն ու սուլիչները՝ մղելով ձեզ կանգ առնել և

մտածել, թե ինչ կատարվեց հենց նոր: Ձեր միտքն անմիջապես պետք է անցնի հետաքննական ռեժիմի՝ անհամար հարցերով: Որպես հոգևոր գիտնականներ՝ մենք պետք է իմանանք, թե ինչու *այս* կինը բժշկվեց և ուրիշ ոչ ոք: Ենթադրում եմ, որ այնտեղ կային շատ մարդիկ, որոնք ֆիզիկապես դիպչում էին Նրան և նույնպես հիվանդ էին, սակայն չբժշկվեցին: Այսպիսով՝ մենք պետք է հարցնենք. «Ինչո՞ւ օծությունը հոսեց միայն դեպի այդ կինը, այլ ոչ թե դեպի նա, ով այդ պահին հպվում էր Հիսուսին»:

Ավանդական կրոնական պատասխանն այն է, որ նա բժշկվեց, որովհետև Հիսուսը բժշկեց նրան: Բայց իսկապե՞ս Նա բժշկեց նրան: Արդյո՞ք Հիսուսը նպատակաուղղված ծառայում էր այդ կնոջը, երբ նա բժշկվեց: Արդյո՞ք Նա ձեռքերը դրեց նրա վրա: Արդյո՞ք Նա հրամայեց, որ հիվանդությունը հեռանա նրա մարմնից: Պատասխանն է՝ ո՛չ: Իրականում, Հիսուսը նույնիսկ չգիտեր, որ նա այնտեղ էր: Նա ստիպված էր հարցնել, թե ով դիպավ Իրեն:

Այսպիսով՝ արդյո՞ք Հիսուսն ընտրեց բժշկել նրան այդ պահին: Կրկնեմ, Նա նույնիսկ չգիտեր, որ այդ կինն այնտեղ էր: Իսկ ինչպե՞ս նա բժշկվեց: Ինչո՞ւ նա բժշկվեց: Որպես հոգևոր գիտնականներ՝ մենք կարող ենք բացառել այն միտքը, որ նա Աստծո հատուկ զավակներից մեկն էր կամ հատուկ կապ ուներ Հիսուսի հետ, որովհետև Գործք առաքելոցի 10.34-ում ասվում է, որ Աստված աչառ չէ:

Կարող ենք նաև ենթադրել, որ քանի որ Հիսուսը նույնիսկ չգիտեր, որ նա այնտեղ էր, Նա ոչ մի մասնակցություն չուներ այդ օրը բժշկվելու նրա որոշման մեջ: Մենք կարող ենք համաձայնել, որ Հիսուսն օծության ջրամբարն էր, բայց Նա մասնակցություն չուներ այն որոշման մեջ, որ *այդ կինը* կայացրեց այդ պահին բժշկվելու համար:

Հիսուսը հստակ ասում է, թե ինչպես նա միացավ Թագավորության իշխանությանն ու զորությանը: Նա ասաց. «*Դո՛ւստր, քո հավա՛տքը բժշկեց քեզ: Գնա՛ խաղաղությունով»:* Այս նախադասությունը հայտնում է այն ամենը, ինչ հարկավոր է իմանալ, և պատասխանում է մեր այն հարցին, թե ինչու և ինչպես նա այդ օրը ստացավ բժշկություն: Որպես հոգևոր գիտնականներ՝ ավե-

լի ուշադիր նայենք այս պատմությանը և տեսնենք՝ արդյո՞ք կարող ենք գտնել հուշումներ այն մասին, թե ինչու նա ստացավ իր բժշկությունը:

Նախևառաջ՝ Հիսուսը նրան անվանում է *դուստր*՝ նկատի ունենալով, որ նա Իսրայելի ժողովրդի մի մասնիկն էր, Աբրահամի ժառանգորդը: Որպես Աբրահամի զավակ՝ նրան էր պատկանում այն օրհնությունը, որ տրվեց Աբրահամին, և այն ուխտի առավելությունները, որ Աստված կնքեց Աբրահամի հետ:

> *«Եվ ասաց. «Եթե իրավ լսես քո Եհովա Աստծո ձայնին, և ինչ որ Նրա աչքի առջև ուղիղ է, անես, և Նրա պատվիրաններին ականջ դնես և Նրա բոլոր կանոնները պահես, այն ախտերից ոչ մեկը քեզ վրա չեմ բերի, որոնք եգիպտացիների վրա բերի. որովհետև Ես եմ Եհովան՝ քո Բժիշկը»»:*
>
> – Ելից 15.26

Այսպիսով, երբ Հիսուսն այդ կնոջը դուստր անվանեց, նշանակում էր, որ նա ուներ օրինական իրավունք այն ամենի հանդեպ, ինչը ներառված էր Աստծո հետ Աբրահամի կնքած ուխտի մեջ: Բայց միայն այս փաստը չի կարող լինել միակ պատճառը, որ նա բժշկություն ստացավ, քանի որ այդ օրը նրանք, ովքեր նեղում էին Հիսուսին, ունեին միևնույն իրավասությունը: Պետք է լիներ մեկ այլ պատճառ, որը ստիպեց, որ Աստծո Թագավորության զորությունը հոսեր: Հիսուսը հայտնում է ևս մեկ պատճառ, թե ինչու նա ստացավ իր բժշկությունը: Փաստացի, Նա ասաց, որ *հենց* դա էր պատճառը, որ նա անձամբ ստացավ իր պատասխանը:

Նա ասաց, որ *նրա հավատքը* բժշկեց նրան:

Այնպես որ, այժմ մենք գիտենք, թե ինչն էր պատճառը, որ նա կարողացավ ստանալ իր պատասխանը. նա ուներ ստանալու օրինական իրավունք, քանի որ Աբրահամի դուստրն էր, և նրա հավատքն այն անջատիչն էր, որի շնորհիվ զորությունը հենց այդ պահին հոսեց նրա մարմնի մեջ:

Այն փաստը, որ նա դուստր էր, կարելի է համեմատել այն բանի հետ, որ էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունը լա-

ների միջոցով հոսանքը հասցրել է ձեր տուն: Հոսանքը հասանելի է, բայց չի նշանակում, որ ձեր տան լույսերը կմիանան: Որպեսզի լույսերը միանան, դուք նաև պետք է միացնեք անջատիչը:

Այսպիսով, որպես Աբրահամի օրինական ժառանգորդ, այս կինն ուներ բժշկվելու օրինական իրավունք: Բայցևայնպես, քանի որ նա ուներ իրավասություն երկրի և իր սեփական կյանքի վրա, նա պետք է անձամբ միացներ անջատիչը՝ այդ զորությունն արձակելու համար:

Բայց որտեղ է անջատիչը: Ինչպե՞ք միացնենք այն:

Պարզելու համար պետք է սահմանենք մեր հասկացությունները:

Ի՞նչ է հավատքը

Հավատքը մի հասկացություն է, որը քրիստոնյաներն անխնա այս ու այն կողմ են նետում, և ես համոզված եմ, որ շատերը, եթե ոչ՝ մեծ մասը, չգիտեն, թե ինչ է իրականում հավատքը, ինչու է այն անհրաժեշտ, ինչպես իմանան, որ հավատքի մեջ են, և ինչպես ստանան հավատք: Եթե հավատքն այն անջատիչն է, որ թույլ տվեց օձությանը հոսել և բժշկել այս կնոջը, այդ դեպքում մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք հավատքին:

Հավատքի սահմանումը գտնում ենք Հռոմեացիների 4-րդ գլխում:

> *«Որ առանց հույսի՝ հույսով հավատաց, թե շատ ազգերի հայր կլինի. ինչպես ասվեց, թե՝ այնպես պիտի լինի քո զավակը: Եվ չտկարացավ հավատքով, այսինքն՝ մտիկ չարեց իր մարմնին, որ արդեն մեռած էր՝ ինքը իբրև հարյուրամյա լինելով, և ո՛չ էլ՝ Սառայի արգանդի մեռած լինելուն: Եվ Աստծո խոստմունքի համար չերկմտեց անհավատությունով, այլ զորացավ հավատքով և Աստծուն փառք տվեց: Եվ իր մտքում համոզված էր (անգլերենում՝ լիովին համոզված էր), թե Նա, որ խոստացավ, կարող է և անել»:*
>
> – Հռոմեացիների 4.18-21

Եկեք հասկանանք այս պատմության համատեքստը: Աբրահամն ու Սառան չէին կարող երեխա ունենալ: Ես նկատի չունեմ, որ բեղմնավորվելու հետ կապված դժվարություններ կային, և նրանք պետք է շարունակեին իրենց փորձերը: Ես նկատի ունեմ, որ նրանք գրեթե 100 տարեկան էին, և ամեն բան վերջացած էր: Նրանք ֆիզիկապես անկարող էին երեխա ունենալ. դա անհնար էր: Մինչդեռ Աստված Աբրահամին երեխա էր խոստացել, թեև բնական տեսանկյունից դա միանգամայն անհնար էր:

Աստվածաշունչն ասում է, որ Աբրահամը *լիովին համոզված* էր, որ Աստված ի զորու է անելու այն, ինչ ասել է՝ չնայած բնական փաստերին, որոնք այլ բան էին հաստատում: Ահա և հավատքի մեր սահմանումը. լիովին համոզված լինել, որ Աստված ի զորու է անելու այն, ինչ խոստացել է:

Ես ձևակերպում եմ դա այսպես. **«Սրտով համաձայն լինել Երկնքի հետ»**: Ոչ թե պարզապես մտովի համաձայնել Աստծո ասածին, այլ *լիովին համոզված* լինել դրանում:

Հավատքի մեր սահմանումը

Բարձրաձայն ասա՛ ինձ հետ, որպեսզի համոզվես, որ հասկանում ես. հավատքը լիովին համոզված լինելն է այն բանում, ինչ Աստված ասում է: Դա սրտով ու մտքով Երկնքի հետ համաձայնություն ունենալն է, *լիովին համոզված լինելը:*

Ինչո՞ւ է հավատքն անհրաժեշտ

Ինչո՞ւ Աստված չի կարողանում բուժել հիվանդանոցում գտնվող բոլոր հիվանդներին, երբ Նա ցանկանում է դա: Ինչո՞ւ Նա չի դադարեցնում պատերազմները: Ինչո՞ւ Նա չի ուղարկում հրեշտակներին՝ Ավետարանը քարոզելու: Վստահ եմ, որ նախկինում լսել եք այս բոլոր հարցերը: Պատասխանն է՝ Նա չի կարող:

Այնպես չէ, որ Աստված չունի *զորություն*՝ դա անելու: Նա չունի *իրավասություն*՝ դա անելու համար:

Որպեսզի հասկանանք, թե ինչ եմ ասում, պետք է նայենք Եբրայեցիների թղթին:

«Մեկը վկայեց մեկ տեղ՝ ասելով. «Մարդն ի՞նչ է, որ Դու հիշես նրան, կամ՝ մարդու որդին, որ այցելես նրան: Մի քիչ ցած արիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան և Քո ձեռքի գործերի վրա կանգնեցրիր նրան: Ամեն բան հնազանդ արիր նրա ոտքերի տակ»:

Որովհետև ամենը, որ հնազանդեցրեց նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան. բայց հիմա տակավին չենք տեսնում, թե ամեն բան հնազանդված է նրան»:

– Եբրայեցիների 2.6-8

Աստված մարդուն տվեց լիարժեք օրինական իրավասություն ամբողջ երկրային տիրույթում, երբ նա դրվեց երկրի վրա: Չկար մի բան, որ չլիներ նրա իրավասության ներքո: Նա տիրում էր այս տիրույթում բացարձակ իրավասությամբ և իշխանությամբ: Նրա՝ իշխանությամբ կառավարելու կարողությունը սատարում էր այն կառավարությունը, որը դրել էր նրան երկրի վրա: Ըստ էության, նա տիրում էր Աստծո Թագավորության լիազորված իշխանությամբ: Նա կրում էր այդ կառավարության թագը (պսակը), որը ներկայացնում էր Աստծո փառքը, օծությունը և պատվի կամ իշխանության այն դիրքը, որ նա ուներ:

Իհարկե, նա բառացիորեն չէր կրում իսկական մետաղյա թագ, բայց ուներ թագ կամ պսակ այն իմաստով, ինչ դա ենթադրում է: Որպեսզի լավ պատկերացում կազմեք, թե ինչի է սա նման, մտածե՛ք երկրային թագավորի մասին: Թեև նա մարդ է և իր մեջ չի կրում իրական զորություն, բայց կրում է թագ, ինչը ցույց է տալիս, որ նա ներկայացնում է ոչ միայն իրեն, այլև մի ամբողջ թագավորություն և կառավարություն: Նրա խոսքերն ունեն իշխանություն միայն այն պատճառով, որ դրանք սատարվում են իր ներկայացրած կառավարության և թագավորության բոլոր ուժերի և բնական ռեսուրսների կողմից:

Մտածե՛ք երթևեկությունն ուղղորդող ոստիկանի մասին. նա կանգնեցնում է կցորդով հսկա բեռնատարը ընդամենը մի քանի խոսքով. «Կանգնի՛ր՝ օրենքի անունից»:

Այո՛, բեռնատարը շատ ավելի մեծ է, քան մարդը, և նա ինքնին չի կարող համեմատվել բեռնատարի հետ: Բայց բեռնատարը կանգ է առնում ոչ թե մարդու պատճառով, այլ այն կրծքանշանի, որ նա կրում է, և որը ներկայացնում է այն կառավարությունը, որ սատարում է նրան: Այս դեպքում կառավարությունը շատ ավելի մեծ է, քան այդ կրծքանշանը կրող մարդը: Բեռնատարի վարորդը չի վախենում *մարդուց,* նա վախենում է կառավարությունից, որն այդ մարդը ներկայացնում է, ուստի և կանգնեցնում է բեռնատարը: Նույնը ճշմարիտ է այստեղ: Ադամն իշխում էր այն ամենի վրա, ինչ ստեղծված էր երկրային տիրույթում: Աստծո զորությունն ու իշխանությունը՝ ներկայացված փառքի և պատվի պսակով, վստահություն էին հաղորդում մարդուն, որ իր խոսքերն ունեն իշխանություն Աստծո Թագավորության անունից:

> *«Երկինքների երկինքը **Տիրոջն** է, և Նա երկիրը **մարդկանց որդիներին** տվեց»:*
>
> – Սաղմոս 115.16

Երկրի վրա մարդու իրավասության այս սկզբունքը խիստ կարևոր է Թագավորության օրենքը հասկանալու համար, հատկապես, թե ինչու է Աստծուն անհրաժեշտ հավատք՝ տվյալ իրավիճակում օրինական իրավասություն ձեռք բերելու համար:

> *«Հիսուսն էլ նրանց ասաց. «Մի մարգարե անարգ չէ, բայց միայն իր հայրենիքի և իր ազգականների և իր տան մեջ»: Եվ **չէր կարողանում այնտեղ ոչ մի զորություն անել**, բայց միայն մի քանի հիվանդների վրա ձեռք դրեց և բժշկեց: Եվ նրանց անհավատության համար զարմանում էր…»:*
>
> – Մարկոս 6.4-6

Եթե փողոցում մարդկանց հարցնեի՝ արդյո՞ք Հիսուսը կարող է որևէ բան անել, նրանք հավանաբար կպատասխանեին, որ կարող է: Այնուհետև, եթե հարցնեի, թե արդյո՞ք Աստվածաշնչում կա որևէ տեղ, որ Հիսուսը փորձեց, բայց չկարողացավ հրաշքներ անել, ապա ի՞նչ կպատասխանեին նրանք:

Հավաստիացնում եմ, որ կասեին, որ Աստվածաշնչում չկա նման տեղ, մինչդեռ հենց նոր կարդացիք դրանցից մեկը: Հիսուսը չէր կարողանում բժշկել նրանց: Իբրև հոգևոր գիտնական՝ ես ուզում եմ իմանալ, թե ինչու:

ԵՐԿԻՆՔԸ ՉՈՒՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ ՎՐԱ, ՔԱՆԻ ԴԵՌ ՈՐԵՎԷ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԿԱՄ ԿՆՈՋ ՍԻՐՏ ԼԻՈՎԻՆ ՀԱՄՈԶՎԱԾ ՉԷ ԱՅՆ ԲԱՆՈՒՄ, ԻՆՉ ԵՐԿԻՆՔՆ ԱՍՈՒՄ Է, ՈՐԸ ԵՎ ԿՈՉՎՈՒՄ Է ՀԱՎԱՏՔ:

Պատասխանը պարզ է. Նա չէր կարող, և այժմ դուք գիտեք, որ պատճառն այն էր, որ նրանք չունեին հավատք, համաձայնություն երկնքի հետ, հետևաբար երկինքն էլ չուներ օրինական իրավասություն այդ իրավիճակում:

Համոզված եղեք, որ հստակ պատկերացում կազմեք այն մասին, ինչ բացահայտեցինք:

Երկինքը չունի իրավասություն երկրի վրա, քանի դեռ որևէ տղամարդու կամ կնոջ սիրտ լիովին համոզված չէ այն բանում, ինչ երկինքն ասում է, որը և կոչվում է ՀԱՎԱՏՔ:

Վերադառնալով մեր նախորդ օրինակներից մեկին՝ ենթադրենք, որ ինչ-որ մեկը, որին ճանաչում եք, և որը հայտնի է ամբողջ աշխարհում, հիվանդ է: Միլիոնավոր մարդկանց խնդրում են աղոթել նրա համար: Մարդիկ աղոթում են, բայց նա մահանում է: Մի՞թե Աստծո Խոսքը ձախողվեց: Ո՛չ: Դա անհնար է: Ուստի՝ մենք պետք է գտնենք մեր պատասխանը մեկ ուրիշ տեղ:

> *«Եվ աղոթք անելիս շատախոս մի՛ եղեք՝ ինչպես հեթանոսները, որովհետև նրանք կարծում են, թե իրենց շատ խոսելու համար կլսվեն: Արդ նրանց մի՛ նմանվեք. որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ բաներ պետք են ձեզ՝ Նրանից խնդրելուց առաջ»:*
>
> – Մատթեոս 6.7,8

Շատերը հավատում են, որ որքան շատ լինեն աղոթողները, այնքան մեծ հնարավորություն կա, որ Աստված կլսի և կշտապի օգնել: Հուսով եմ, որ մինչև այժմ այնքան եմ խոսել այս թեմայով, որ դուք գիտեք, որ սա բոլորովին սխալ է: Եվ երբ ասում եմ, որ

չկար հավատք, հիմնականում խոսում եմ այն մասին, որ նա, ով Աստծուց որևէ բան է ուզում ստանալ, պետք է ունենա հավատք: Դուք կհամաձայնեք, որ Մարկոսի 6-րդ գլխում նկարագրված պատմության մեջ Հիսուսը մեծ հավատք ուներ, սակայն չկարողացավ բժշկել մարդկանց:

Այսպիսով՝ եթե մենք խոսեինք հիվանդ ընկերոջ մասին, որի համար աղոթում են միլիոնավոր մարդիկ, ապա ձեզ կհարցնեի. «Ինչ է *նա* (հիվանդ ընկերը) *ասում»:*

Մենք կարող էինք ունենալ 20 *միլիարդ* աղոթող, բայց եթե հիվանդն ասում է, որ ինքը մահանալու է, ուրեմն կմահանա:

Դիտարկենք մեր օրինակը, որ հենց նոր տեսանք Մարկոսի 6-րդ գլխում: Մենք գիտենք, որ Հիսուսն ուներ բժշկելու հավատք, բայց Նա չէր կարող որևէ բան անել մարդկանց համար, եթե նրանց հավատքը ներգրավված չլիներ:

Բազմաթիվ մարդիկ մոտեցել են ինձ և ասել, որ իրենց տատիկը կամ պապիկը կամ որևէ հարազատ հիվանդ է, և նրանց համար աղոթում են, բայց ոչինչ տեղի չի ունենում: Ես մշտապես հարցնում եմ. «Ինչ է ասում տատիկը: Ինչ է ասում պապիկը: Արդյո՞ք կա հավատք»:

Հասկանո՞ւմ եք, դուք չունեք հոգևոր իշխանություն մեկ այլ մարդու վրա: Դուք կարող եք ծառայել նրան, բայց նա պետք է ներգրավվի դրանում: Մարդկանց համար աղոթելիս ես ասում եմ, որ նրանք փոխեն իրենց պատկերը: Ես խոսում եմ այն պատկերի մասին, որ մտովի տեսնում են իրենց իրավիճակի վերաբերյալ: Ես ուզում եմ այդ պատկերը փոխել մահից դեպի կյանք:

> *«Եվ Հովհաննեսին պատմեցին իր աշակերտներն այս բոլոր բաների մասին: Եվ Հովհաննեսն իր աշակերտներից երկուսին կանչեց իր մոտ, ուղարկեց Հիսուսի մոտ և ասաց. «Դո՞ւ ես այն, որ գալու է, թե՞ ուրիշին սպասենք»:*
>
> *Այն մարդիկ էլ, Նրա մոտ գալով, ասացին. «Հովհաննես Մկրտիչը մեզ ուղարկել է Քեզ մոտ և ասում է. «Դո՞ւ ես այն, որ գալու է, թե՞ ուրիշին սպասենք»»:*

Եվ այն ժամին շատերին բժշկեց հիվանդություններից և հարվածներից և չար ոգիներից և շատ կույրերի տեսնել շնորհեց: Եվ Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Գնացեք Հովհաննեսին պատմեք՝ ինչ որ տեսաք և լսեցիք. որ կույրերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբվում են, խուլերը լսում են, մեռելները հարություն են առնում, աղքատներին Ավետարան է քարոզվում»»:

– Ղուկաս 7.18-22

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը հղում չարեց Սուրբ գրքից: Նա կարող էր ասել. «Գնացեք և Հովհաննեսին ասեք այս կամ այն Խոսքը»: Ո՛չ, Նա նրանց ասաց, որ Հովհաննեսին պատմեն այն բոլոր բարի գործերը, որ կատարվում էին Աստծո Թագավորության զորությամբ և իշխանությամբ:

Ընկերոջը կամ հարազատին օգնելու համար դուք նույնը կանեիք: Ձեր ընկերոջը, ով հիվանդ է, պատմե՛ք այն մասին, թե ինչպես Հիսուսը բժշկեց ինչ-որ մեկին: Եթե հնարավոր է, պատմե՛ք նրան ինչ-որ մեկի մասին, ով բժշկվել է նույն հիվանդությունից, ինչով նա է տառապում: Այդպիսի պատկեր հաղորդելը ոգեշնչում և հույսով է լցնում նրան: Հույսը միշտ իր հետ պատկեր է կրում, և այն պատկերը, որ ուզում եք՝ ձեր ընկերը կամ հարազատը տեսնի, այն է, որ կա բժշկություն այդ հիվանդությունից:

Հենց որ ձեր ընկերը կամ հարազատը տեսնի, որ հնարավոր է բժշկվել, ձեզ կհարցնի, թե ինչպես է դա հնարավոր: Սա այն պահն է, որին դուք սպասում էիք. այժմ նա բաց է՝ ստանալու ուսուցում Աստծո Խոսքի և Թագավորության սկզբունքների վերաբերյալ: Նախևառաջ՝ հարկ կլինի, որ նրան բերեք Թագավորություն, եթե վերստին ծնված չէ, երկրորդ՝ որոշ ժամանակ անցկացնեք նրա հետ՝ բացատրելով բժշկությանը վերաբերող սուրբգրային խոսքերը: Եթե հնարավոր է, թողեք նրան որոշ նյութեր՝ ամրապնդելու համար այն ամենը, ինչ ասացիք: Մենք տեսել ենք, թե ինչպես է ավելանում այն մարդկանց թիվը, որոնք ազատագրվում և բժշկվում են տարբեր հիվանդություններից՝ կատարելով այս քայլերը: Մեկ այլ բան, որ անում եմ նախքան աղոթելը, այն է, որ նրանց

հարցնում եմ, թե ինչու են մտածում, որ երբ աղոթենք իրենց համար, կբժշկվեն: Ես ուզում եմ, որ նրանց հավատքը խարսխվի Աստծո Խոսքի վրա, ոչ թե՝ պարզապես աղոթքի գործողության:

Մենք գիտենք, թե ինչ է հավատքը. համաձայնություն Երկնքի հետ, ձեր սիրտը լիովին համոզված է այն բանում, ինչ Աստված ասում է: Այժմ մենք նաև հասկանում ենք, որ Աստծուն օրինական իրավասություն է տրվում երկրի վրա այն մարդու միջոցով, որը համաձայնության մեջ է Երկնքի հետ:

Ինչպե՞ս ենք հավատք ստանում

«Հետևաբար, հավատքը գալիս է ուղերձը լսելուց, իսկ ուղերձը լսվում է Քրիստոսի մասին խոսքի միջոցով»:

– Հռոմեացիների 10.17, NIV

Հավատքը գալիս է Աստծո Խոսքը լսելուց: Ինչպե՞ս: Այդ ի՞նչ գործընթաց է: Մի՞թե Խոսքը լսելը միակ պահանջն է, որ մարդու հոգում հավատք ձևավորվի:

Որպեսզի հասկանանք, թե ինչպես է գալիս հավատքը, և ինչ նկատի ունի Հռոմեացիների 10.17-ը, մենք կարող ենք նայել Մարկոսի 4-րդ գլուխը: Ես մշտապես ասում եմ, որ եթե ձեր Աստվածաշունչը նետեք օդ, ապա երբ այն վայր ընկնի, պետք է բացվի Մարկոսի 4-րդ գլուխը. ահա թե որքան կարևոր է այս գլուխը:

Մարկոսի 4.13-ում Հիսուսն ասաց, որ եթե դուք չհասկանաք այն, ինչ Նա սովորեցնում է այդ առակում, ապա չեք կարողանա հասկանալ *ամեն* առակ, որ գրված է Աստվածաշնչում: Ես կասեի, որ դա չափազանց կարևոր է: Ինչո՞ւ է այս գլուխն այդքան կարևոր: Որովհետև այն մեզ հայտնում է, թե ինչպես է երկինքը փոխգործակցում երկրի հետ, ինչպես է այն իրավասություն ստանում, և որտեղ է դա տեղի ունենում: Ձեր կյանքում չկա ավելի կարևոր բան, քան իմանալը այն, ինչ սովորեցնում է այս ամբողջ գլուխը:

Այս գլխում Հիսուսը պատմում է երեք առակ այն մասին, թե ինչպես է հավատքն առաջանում մարդու հոգում, որը, ինչպես

գիտեք, անհրաժեշտ պայման է, որպեսզի երկինքն օրինականորեն ներխուժի Երկիր: Գլխում ներկայացված երեք պատմություններն են սերմնացանի առակը, սերմ գցող մարդու առակը և մանանեխի հատի առակը:

Սկսենք երկրորդ պատմությունից, որ Հիսուսը պատմում է Մարկոսի 4-րդ գլխում. այն սերմ գցող մարդու պատմությունն է:

> *«Եվ ասում էր. «Այսպես է Աստծո արքայությունը, որպես թե մի մարդ սերմ գցեր հողի մեջ: Եվ գիշեր-ցերեկ քնի և վեր կենա, և սերմը բուսնի և աճի այնպես, որ նա չգիտի: Որովհետև երկիրն ինքն իրեն պտուղ է բերում՝ առաջ խոտը, հետո հասկը, և նրանից հետո լցված ցորեն հասկի մեջ: Բայց երբ որ պտուղը կտա, շուտով կուղարկի մանգաղը, որովհետև հունձքը հասել է»»:*
>
> – Մարկոս 4.26-29

Առաջին բանը, որ պետք է անենք, մեր հասկացությունները սահմանելն է: Ո՞րն է այն *սերմը*, որի մասին խոսում է Հիսուսը, և ո՞րն է հողը: Ըստ էության, Հիսուսը սահմանում է այս երկու հասկացությունները նույն գլխի նախորդ՝ սերմնացանի մասին առակում:

Սերմն Աստծո Խոսքն է, իսկ հողը՝ մարդու սիրտը կամ հոգին: Այսպիսով՝ այս առակում Հիսուսն ասում է, որ մարդը ցանում է Աստծո Խոսքը իր սրտի մեջ: Այնուհետև, երկիրը կամ մարդու *սիրտը ինքն իրեն* սկսում է ծնել հավատք կամ երկնքի հետ համաձայնություն: Սա մարդկային հոգու բնական գործընթացն է և գործառույթը. ինչ դնում եք այնտեղ, աճելու է:

Նախքան առաջ անցնելը՝ խիստ կարևոր է, որ հիշեք, թե որն է հավատքի մեր սահմանումը. *երբ որևէ տղամարդու կամ կնոջ սիրտը լիովին համոզված է այն բանում, ինչ ասում է երկինքը:*

Այստեղ պետք է հիշել, որ երկնքի հետ համաձայնությունը նույնը չէ, ինչ Աստծո Խոսքի հետ մտովի համաձայնելը: Աստվածաշունչն ասում է, որ Աբրահամը *լիովին համոզված* էր: Որպեսզի հստակ պատկերացում կազմեք, թե ինչ է նշանակում լիովին համոզված լինել, ենթադրենք՝ ես ձեզ ասում եմ ցատկել Նյու Յորքի

«Էմփայր Սթեյթ Բիլդինգ» երկնաքերից: Ձեզ համոզելու համար ասում եմ, որ եթե բավականաչափ ուժեղ թափահարեք ձեր թևերը, ապա կկարողանաք ապահով իջնել Երկիր: Դուք կծիծաղեք, որովհետև ԳԻՏԵՔ, թե ինչ կպատահի ձեզ հետ: Դուք լիովին համոզված եք հետևանքի մեջ: Ահա թե ինչի է նման լիովին համոզված լինելը: Դուք *գիտեք,* համոզված եք, որ այլ կերպ չի կարող լինել. դուք կմահանաք, եթե ցատկեք:

Մեկ այլ իրավիճակ քննարկենք և տեսնենք, թե ինչպես կվարվեք այդ դեպքում: Ենթադրենք՝ դուք ունեք շատ տեսանելի, խոշոր ուռուցք ձեր մարմնում, և բժիշկն ասում է, որ ձեզ ապրելու մեկ ամիս է մնացել: Դուք տառապում եք քաղցկեղով: Իրականում, բժիշկն ասում է, որ այդ տեսակի քաղցկեղն այնքան հազվադեպ է, որ չկա մեկը, ով ունեցել է նման ախտորոշում և ողջ է մնացել:

Այժմ, ենթադրենք, դուք գիտեք, թե ինչ է գրված Ա Պետրոսի 2.24-ում:

> *«Որ Ինքը մեր մեղքերն Իր մարմնում խաչափայտի վրա բարձրացրեց, որ մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք, որ Նրա խոցերով բժշկվեցիք»:*
>
> – Ա Պետրոս 2.24

Աստվածաշունչը տալիս է մեզ պատասխանը, բայց դուք և ես ունենք լուրջ խնդիր. մենք մեծացել ենք խավարի թագավորությունում, և մեր շուրջն ամենուրեք այլասերվածություն է ու մահ: Մենք մեծացել ենք վախի թագավորությունում և լիովին համոզված ենք եղել նրանում, ինչ վախն ասում է: Վերոհիշյալ օրինակում մեզ սովորեցրել են, որ քաղցկեղը կարող է սպանել: Բոլոր լրատվամիջոցներով ապացուցվում է, որ դա ճիշտ է: Ուստի՝ ինչպե՞ս ենք պատրաստվում փոխել մեր համաձայնությունը: Ինչպե՞ս կարող ենք լիովին համոզվել նրանում, ինչ Աստված է ասում: Իրականում, մեր ուժերով չենք կարող: Բայց Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր, և երբ այն տնկում եք ձեր հոգում, ինքնըստինքյան, ձեր հոգին և Խոսքը սկսում են ստեղծել համաձայնություն այն բանի հետ, ինչ երկինքն ասում է:

«Եվ ասում էր. «Այսպես է Աստծո արքայությունը, որպես թե մի մարդ սերմ գցեր հողի մեջ: Եվ գիշեր-ցերեկ քնի և վեր կենա, և սերմը բուսնի և աճի այնպես, որ նա չգիտի: Որովհետև ***երկիրն ինքն իրեն պտուղ է բերում****՝ առաջ խոտը, հետո հասկը, և նրանից հետո լցված ցորեն հասկի մեջ: Բայց երբ որ պտուղը կտա, շուտով կուղարկի մանգաղը, որովհետև հունձքը հասել է»»:*

– Մարկոս 4.26-29

Ինքն իրեն երկիրը (ձեր սիրտը) համաձայնություն է առաջացնում: Ուշադրություն դարձրեք, որ դուք չեք կարող աղոթել հավատքի համար. այն ձեր սրտի և Խոսքի գործառույթն է: Նայելով այս տեքստին՝ կարող ենք տեսնել, որ մեր սրտի և երկնքի համաձայնությունը գործընթաց է: Դա անմիջապես տեղի չի ունենում: Այս պատկերավոր օրինակը մեզ ասում է, որ սկզբում, երբ մեր սիրտն ընդունում է Խոսքը, հավատքն սկսում է աճել այնպես, ինչպես աճում է նոր տնկված սերմի ծիլը: Այնուհետև այն վերածվում է ցողունի, ապա ձևավորվում է գլխիկը կամ հասկը: Այստեղ է, որ սկսվում է ձևավորվել սերմը կամ պտուղը: Բույսի կյանքի այս փուլում դեռևս ուտելու ոչինչ չկա: Բույսը դեռ չի տվել իր հասուն, հասած պտուղը, բայց այն աճում է:

Այդպես էլ Աստծո Խոսքն է: Երբ հավատքն աճում է, բնական տիրույթում դեռևս ոչ մի տեսանելի փոփոխություն չկա: Դեռևս չկա համաձայնություն, բայց հաստա՛տ իմացեք, որ բույսն աճում *է,* հավատքը ձևավորվում *է,* և համաձայնությունը հաստատվում *է:* Հիսուսը շարունակում է՝ բացատրելով, որ երբ սերմը գլխիկում լիովին հասունանում է կամ հասնում, նշանակում է՝ հունձքը հասել է, կա համաձայնություն, և կա հավատք:

Երբ հողի մեջ սերմ եք ցանում, ծլարձակման գործընթացի միջոցով բույսը սկսում է աճել, բայց դեռևս պտուղ չկա: Բույսը շարունակում է աճել, քանի դեռ մնում է ճիշտ միջավայրում: Երբ այն հասունանում է, տալիս է իր պտուղը:

Պատկերացրեք՝ եգիպտացորեն եք աճեցնում: Այն եգիպտացորենի հասկ է արձակում, բայց սկզբում դա ընդամենը մի փոքրիկ հասկ է, որի վրա չկա ոչ մի հասած եգիպտացորեն, որ կա-

րելի է ուտել: Բայց որոշ ժամանակ անց հասկի վրա եղած եգիպտացորենը հասնում է: Փորձե՛ք ըմբռնել միտքը: Այն պահին, երբ հասկի վրա եղած եգիպտացորենի հատիկը համընկնում է այն եգիպտացորենի հատիկի հետ, որը ցանվել է հողի մեջ, տեղի է ունենում համաձայնություն:

Երբ հասկի միջի սերմը հասունանա, այն կունենա ՃԻՇՏ նույն տեսքը, ինչ հողի մեջ ցանված սերմը:

Եթե եգիպտացորեն ցանեք, հասկի միջի հասուն սերմը կհամընկնի այն սերմի հետ, որ ցանել եք: Դրանք նույնն են, նույն տեսքը և նույն համն ունեն, այնպես որ՝ անկարելի է տարբերել:

Այսպիսով՝ թո՛ւյլ տվեք շրջասության ենթարկել այն, ինչ Հիսուսն ասում է: Երբ լսում ենք Աստծո Խոսքը (տե՛ս Հռոմ. 10.17), ըստ էության, այն ցանում ենք մեր հոգևոր մարդու, մեր սրտի մեջ: Եթե պահենք այդ Խոսքը մեր սրտում, այն կաճի և կհասունանա, և երբ հասունանա, մեր սիրտը լիովին համոզված կլինի այն բանում, ինչ ասում է երկինքը: Երկինքն ու երկիրը համընկնում են, և երկինքը օրինական իրավասություն է ստանում երկրային տիրույթում այն մարդու միջոցով, որը լիովին համոզված է: Մեր մտքերն ու համոզմունքները ճիշտ և ճիշտ համընկնում են այն ամենին, ինչ ասում է երկինքը: Սա մտավոր գործունեության արգասիք չէ: Մենք սկսում ենք հավատալ ճիշտ այնպես, ինչպես հավատում ենք, որ քարը կընկնի, եթե ցած նետենք: Երկինքը երկնային տիրույթից Խոսք է ցանում երկրային տիրույթ, որտեղ առաջանում է համաձայնություն, և հաստատվում է Աստծո կամքը: Եթե երկինքն ասում է, որ դուք բժշկված եք, ապա երբ այդ Խոսքը հասունանում է ձեր սրտում, դուք տեսնում եք միայն այն, ինչ ասում է երկինքը: Այլևս ոչ մի վախ: Երբ փակում եք ձեր աչքերը, ձեզ տեսնում եք բժշկված: Այս է պատճառը, որ Եբրայեցիների 11.1-ում ասվում է.

> *«Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը և <u>չերևացող բաների ապացույցն է</u>»:*

Հնարավոր է՝ դուք դեռ չեք տեսնում դա բնական տիրույթում,

բայց տեսել եք ձեր հոգում, և դա այնքան իրական է, որ կարծես ձեռքում պահած լինեք: Այդ համաձայնությունը կոչվում է հավատք, և հավատքն այդ պատկերն իրական կդարձնի այստեղ՝ երկրի վրա, ձեր անձնական կյանքում:

Բայց Մարկոսի 4-րդ գլուխն այստեղ կանգ չի առնում: Սովորեցնելով, թե ինչպես է մեր սիրտը համաձայնության գալիս երկնքի հետ, և ինչպես է առաջանում հավատքը՝ այն մեզ թելադրում է, թե ինչպես հնձենք բերքը:

> *«Բայց երբ որ պտուղը կտա, շուտով **կմոտեցնի մանգաղը**, որովհետև հունձքը հասել է»:*
>
> – Մարկոս 4.29, NIV

Ուշադրություն դարձրեք, որ թեև սիրտը համաձայնության մեջ է երկնքի հետ, և կա հավատք, դեռևս ոչինչ տեղի չի ունենում: Ինչո՞ւ: Ինչպես շարունակ ասում եմ, դուք ունեք օրինական իրավասություն այստեղ՝ երկրային տիրույթում:

Հիշո՞ւմ եք մեր քննարկումն արյունահոսող կնոջ մասին, որի պատմությունը գրված է Ղուկասի 8-րդ գլխում: Հիսուսն ասում է. «Դո՛ւստր, *քո* հավա՛տքը բժշկեց քեզ»: Այն ժամանակ ես ձեզ ասացի, որ երբ Հիսուսն օգտագործեց «դուստր» բառը, Նա նկատի ուներ երկնքի առջև օրինական դիրքը: Այդ կինն Աբրահամի դուստրն էր: Նա ուներ օրինական իրավունքներ: Ես դա համեմատեցի էլեկտրականությանից հոսանքի լարերը ձեր տուն բերելու հետ: Հոսանքը կա և հասանելի է, բայց դեռ պետք է միացնեք լույսերը: Նույն կերպով, երբ հավատքը հաստատվում է, զորությունը հասանելի է, բայց ոչինչ տեղի չի ունենում, մինչև չեք միացնում անջատիչը:

ԴՈՒՔ պետք է արձակեք Աստծո Թագավորության զորությունն այստեղ՝ երկրային տիրույթում, որովհետև միայն դուք՝ երկրի վրա ապրող կինը կամ տղամարդը, կարող եք օրինականորեն անել դա: Հենց այս սկզբունքն է գործում այն ժամանակ, երբ փրկվում եք, ինչպես նշված է Հռոմեացիների 10.10-ում:

«Քանի որ, սրտով հավատում ենք արդարանալու համար, և բերանով դավանում ենք փրկվելու համար»:

– Հռոմեացիների 10.10

Մարդը սրտով հավատում է Խոսքին և արդարանում: «Արդարացումն» իրավական եզրույթ է, որը նշանակում է օրենքի կիրառում: Այնպես որ, երբ տղամարդու կամ կնոջ սիրտը համաձայնության մեջ է երկնքի հետ, երբ այդ տղամարդը կամ կինը հավատում է երկնքի խոսքերին, նա արդարանում է երկնքի և երկրի առջև: Այժմ երկինքն օրինականորեն կարող է մուտք գործել նրա կյանքի *մեջ* և նրա կյանքի *միջոցով* ազդեցություն թողնել երկրի վրա Աստծո Թագավորության անունից: Բայց տարօրինակն այն է, որ թեև դա այժմ օրինական է, և մարդը հավատքի մեջ է, դեռևս ոչինչ տեղի չի ունենում: «Բայց, Գա՛րի, դուք ասացիք, որ եթե ես հավատքի մեջ լինեմ, դա երկնքին օրինական իրավասություն կտա այստեղ»: Ճիշտ է, բայց երբ կա հավատք, ինչ-որ մեկը պետք է արձակի երկնքի իշխանությունն այստեղ: Եկե՛ք ևս մեկ անգամ նայենք մեր Խոսքին:

ԵՐԲ ՀԱՎԱՏՔԻ ՄԵՋ ԵՔ ԿԱՄ ԱՐԴԱՐԱՑԵԼ ԵՔ, ԱՅԺՄ ԵՐԿԻՆՔՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՐԵՆ ԿԱՐՈՂ Է ՆԵՐԽՈՒԺԵԼ ԵՐԿԻՐ:

*«Քանի որ, սրտով հավատում ենք արդարանալու համար, **<u>և բերանով դավանում ենք փրկվելու համար</u>**»:*

– Հռոմեացիների 10.10

Երբ հավատքի մեջ եք կամ արդարացել եք, այժմ երկինքն օրինականորեն կարող է ներխուժել Երկիր: Բայց ուշադրություն դարձրեք, որ հետո ասվում է, որ *բերանով* դավանում եք և փրկվում: Տեսնո՞ւմ եք այս խոսքի երկու մասերը: Երկնքի գործն է Խոսքը բերել ձեր սրտի մեջ, որտեղ այն համաձայնություն է ծնում այստեղ՝ երկրային տիրույթում: Այնուհետև, երբ համաձայնությունը կամ հավատքը կա, պետք է վարվեք այդ համաձայնության հիման վրա և արձակեք երկնքի իշխանությունը ձեր իրավիճակի մեջ, որպեսզի իրականում ստանաք այն, ինչ ասում է երկինքը:

Մարկոսի 4-րդ գլխի մեր սուրբգրային խոսքում ասվում է, որ երբ հունձքը հասնում է, մարդն (երկրի վրա) ուղարկում է մանգաղը: Հենց նա պետք է գործի Աստծո Խոսքի հիման վրա, երբ հավատքը կա, և, ըստ էության, ստանա իր հունձքը:

Թո՛ւյլ տվեք հետ գնալ և մի պահ խոսել Մարկոսի 4-րդ գլխում հիշատակված մանգաղի մասին: Ես կարծում եմ, որ եկեղեցական աշխարհի մեծ մասին չեն սովորեցրել, թե ինչպես օգտագործեն մանգաղը՝ նկատի ունենալով, որ նրանց չեն սովորեցրել՝ ինչպես հնձեն այն, ինչի կարիքն ունեն: Ես նույնպես չգիտեի դա, մինչև Տերը չսովորեցրեց ինձ, թե ինչպես է Թագավորությունը գործում: Իմ առաջին հայտնությունը Թագավորության մեջ տեղի ունեցող այս կարևորագույն գործընթացի մասին ստացել եմ տարիներ առաջ, երբ ինձ հրավիրել էին քարոզելու Ատլանտայում գտնվող մի եկեղեցում՝ չորեքշաբթի երեկոյան հավաքույթին:

Եկեղեցին այնքան էլ մեծ չէր, բայց դա խնդիր չէր ինձ համար: Ես սիրում եմ մարդկանց սովորեցնել Թագավորության մասին: Երբ եկեղեցի հասա, ինձ համար տարօրինակ էր, որ դռները փակ էին, և ոչ ոք չկար: Տասը րոպեից ծառայությունը սկսվում էր:

Իմ հետևից մեքենայի բարձր ձայն լսեցի և հետ նայելով՝ տեսա մի հին, բաց թափքով մեքենա, որ շարժվում էր եկեղեցու ետնամասի ծառուղով: Ես ոչինչ չմտածեցի այդ առումով: Վերջին հաշվով՝ ես Ատլանտայի կենտրոնում էի:

Մինչ սպասում էի, շենքի ետևից մի մարդ մոտեցավ և ներկայացավ որպես հովիվ: Նա ներողություն խնդրեց ուշանալու համար, պատճառն այն էր, որ իր հին մեքենայի շարժիչը չէր միանում: Նա ինձ ասաց, որ ստիպված էր մեքենան իջեցնել զառիվայրով, քանի որ ընթացաշարժիչն անսարք էր: Նա շարունակեց՝ ասելով, որ երբեմն շարժիչն ընդհանրապես չի միանում, և ինքը ստիպված է լինում ութ կիլոմետր քայլել՝ եկեղեցի հասնելու համար:

Պետք է խոստովանեմ, որ մի փոքր զարմացած էի այս խոսակցությունից: Այնուհետև նա բացատրեց, որ իր ծառայությունը հիմնականում սոցիալական օգնության ծառայություն է, որն ամեն ամիս կերակրում է հազարավոր մարդկանց, միայն այդ

տարածքում ամսական շուրջ 10.000 բաժին կերակուր է բաժանվում:

Երբ հովիվը խոսում էր, ես վրդովվում էի: Ահա Աստծո մարդ, որն ամեն ամիս կերակրում է 10.000 մարդու, բայց նույնիսկ չունի վայելուչ մեքենա: Ես կարող էի հոգալ այդ մասին: Ես տանն ունեի բավականին նոր մեքենա, որի վազքը 32.000 կիլոմետր էր, և այն կարող էի նվիրել նրան:

Ես նրան հայտնեցի իմ մտադրությունը և ասացի, որ իմ աշխատակիցներից մեկի հետ այդ մեքենան կուղարկեմ Ատլանտա: Իհարկե, նա հուզվեց: Այդ երեկո նրան և նրա փոքր եկեղեցուն սովորեցրի Աստծո Թագավորության մասին, նաև՝ թե ինչպես է այն գործում ֆինանսական ոլորտում: Ես գիտեի, որ խիստ կարևոր էր, որ նրանք սկսեին ցուցադրել Թագավորությունը նրանց, ովքեր ծայրահեղորեն դրա կարիքն ունեին:

Երբ տուն վերադարձա, կարգադրեցի, որ մեքենան տանեն Ատլանտա: Երբ իմ աշխատակազմի անդամներից մեկը եկավ մեքենան տանելու, ես գիտեի, որ հոգևոր գործարք էի կատարում երկնքում: Գիտեի, որ քանի որ այդ մեքենան բաց էի թողնում Աստծո Թագավորության մեջ, ես կարող էի հավատալ Աստծուն այն մեքենայի համար, որի կարիքն ինքս կունենայի:

Ես մեքենաների սիրահար չեմ, նկատի ունեմ, որ չեմ տարվում դրանցով: Ոմանք այդպիսին են, բայց ես՝ ոչ: Ուստի, երբ իմ աշխատակազմի անդամը եկավ այն տանելու, ձեռքս դրի մեքենայի վրա և ասացի. «Հայր, ես բաց եմ թողնում այս մեքենան Ատլանտայում գործող այս ծառայության համար: Այն բաց թողնելով՝ ես ցանում եմ սերմ և հավատում եմ, որ ստանում եմ...»: Ես չկարողացա մտաբերել, թե ինչ մեքենա էի ուզում, ուստի ասացի, որ այդ մասին կհայտնեմ:

Հաջորդ մի քանի ամիսներին առանձնապես շատ չէի մտածում մեքենայի մասին, բայց մի առավոտ հարցրի Դրենդային, թե ինչպիսի մեքենա կցանկանար ունենալ: Մի փոքր մտածելուց հետո նա ասաց, որ լավ կլիներ, եթե ծալվող տանիքով մեքենա լիներ: Ես հարցրի, թե ինչ տեսակի մեքենա էր ուզում, և մեզնից ոչ ոք չկարողացավ մտածել ծալվող տանիքով որևէ մեքենայի

մասին: Քանի որ մեքենան Դրենդայի համար էր, ես ուզում էի, որ նա անպայման ստանար այն մեքենան, որն իրեն դուր էր գալիս, ուստի նրան հորդորեցի ստուգել առցանց կամ նայել շուրջը և ինձ տեղյակ պահել, եթե գտնի այն մեքենան, որն իրեն դուր կգա: Այդ ընթացքում մենք որևէ մեկին չասացինք նոր մեքենա ունենալու մեր ցանկության մասին, բայց մեքենայով շրջելիս մեր աչքերը բաց էինք պահում՝ փնտրելով այն մեքենան, որը կգրավեր մեր ուշադրությունը:

Մի օր գնում էինք տեղական ռեստորաններից մեկում ճաշելու, և հանկարծ Դրենդան բացականչեց.

– Ահա՛ այն:

– Ի՞նչը,- հարցրի ես:

– Այն մեքենան, որն ինձ դուր է գալիս:

Նա մատնացույց արեց ավտոկայանատեղիի մյուս կողմը: Ես շրջանցեցի ավտոկայանատեղին և կանգ առա «BMW 6 Ci» մակնիշի ծալվող տանիքով մեքենայի ետևում: Անշուշտ, գեղեցիկ մեքենա էր, և ավելացնեմ նաև, որ շատ թանկ արժեր: Ես գովեցի նրա ճաշակը և ասացի, որ գեղեցիկ մեքենա է:

Դուք պետք է իմանաք, որ Դրենդան ու ես սովորություն չունենք մեծ գումարներ վճարել մեքենաների համար: Ինչպես ասացի, ես երբեք չեմ եղել մեքենայի սիրահար: Գործելով ֆինանսների ոլորտում՝ գիտեմ նաև, թե որքան արագ են դրանք արժեզրկվում, և մշտապես լավագույն տարբերակն այնպիսի մեքենա գնելն է, որը մեկից երկու տարեկան է: Այնպես որ՝ ես մտադիր էի գնել քիչ օգտագործված մեքենա:

Մեկ շաբաթ անց եկեղեցուց մի մարդ զանգեց և ասաց. «Ես գտել եմ Դրենդայի մեքենան»: Ես շփոթվեցի, քանի որ մենք ոչ ոքի չէինք պատմել «BMW» մակնիշի մեքենայի մասին, որ տեսել էինք ռեստորանում ճաշելու օրը:

Ես հարցրի, թե ինչ մեքենա է, և նա պատասխանեց՝ «BMW 6 Ci» մակնիշի ծալվող տանիքով մեքենա: Նա ասաց, որ մեքենա վարելիս տեսել էր այն, և Տերն ասել էր, որ դա Դրենդայի մեքենան է:

– Շա՛տ լավ, դու գրավեցիր իմ ուշադրությունը,- ասացի ես:

Մեքենան մեկ տարեկան էր և գերազանց վիճակում: Պատմությունն ավարտվեց նրանով, որ ես կանխիկ գումարով գնեցի այն: Դրենդան ստացավ իր մեքենան: Ինչպե՞ս դա պատահեց: Եկե՛ք պատմությունը համեմատենք այն բանի հետ, ինչ սովորեցինք հավատքի մեջ լինելու և մանգաղը մոտեցնելու մասին:

Երբ մեքենաս տվեցի, ես հավատքի մեջ էի: Բայց երբ Դրենդան բարձրաձայն ասաց. «Ահա՛ այն», նա մոտեցրեց մանգաղը, և մի քանի օր անց մեքենան հայտնվեց:

Թեև լսեցի, թե ինչպես նա բացականչեց՝ ահա՛ այն, ես երբեք նրա հռչակումը չկապեցի Մարկոսի 4-րդ գլխի և մանգաղի հետ: Բայց հաջորդ պատմությունը հստակ ցույց տվեց այս սկզբունքը:

Ես մի քանի անգամ նշել եմ, որ ունեմ 24 հեկտար սեփական հողատարածք: Հողատարածքի շուրջ 4 հեկտարը ճահճուտ է: Ես սիրում եմ որսորդություն անել աշնանը, բայց այստեղ՝ Օհայոյում, երբևէ բադի որս չէի արել, չնայած ավագ դպրոցի տարիներին բադեր որսացել եմ: Մի տարի, թեև ճահճուտը լի էր ջրով, բադերը մեծ երամներով թռչում էին դեպի ճահճուտը: Օրական հարյուրավոր բադեր թռչում-գալիս էին այդտեղ՝ գիշերը թառելու համար: Ուստի՝ մի գիշեր վերցրի հրացանս, դուրս եկա և մի քանի բադ որսացի ճաշի համար: Այդ աշուն թե՛ տղաներս, թե՛ ես բադի հրաշալի որս ունեցանք:

Մեկ բան, որ նկատեցի, այն էր, որ շատ անգամներ բադերը իմ որսորդական հրացանի առավելագույն հեռահարության սահմանին էին գտնվում: Բադեր որսալիս՝ օրինականորեն թույլատրվում է օգտագործել պողպատե գնդակ՝ ավանդական կապարե գնդակի փոխարեն: Կապարե գնդակն ավելի ծանր է և շատ ավելի հեռու է պահպանում իր ուժը, քան պողպատե գնդակը, այդ իսկ պատճառով բադի որսորդության ժամանակ առաջանում է հեռահարության խնդիր: Բայց այդ աշնանը, բադի որս անող մի քանի ընկերների հետ զրուցելիս իմացա, որ կային նոր հրացաններ, որոնք նախատեսված էին հատուկ բադի որսի համար: Դրանք ընդունակ էին արձակելու ավելի ծանր գնդակներ, նաև քողածածկված էին: Ինձ շատ հետաքրքրեց նման հրացան գնե-

լու միտքը, բայց դեկտեմբեր ամիսն էր, և բադերի որսաշրջանն ավարտվում էր, այնպես որ՝ շատ չմտածեցի դրա մասին:

Հունվարի սկզբին ինչ-որ բան գնելու նպատակով պատահաբար մտա սպորտային ապրանքների մեր տեղական «Կաբելաս» խանութը և հիշեցի բադի որսի համար նախատեսված հրացանների մասին: Ցանկանալով տեսնել, թե ինչպիսին են դրանք՝ անցա հրացանների բաժնի կողքով և տեսա նոր հրացանների մի ամբողջ ենթաբաժին՝ նախատեսված ջրլող թռչունների որսի համար: Հիշում եմ, առանց մտածելու, մատնացույց արի այն հրացանը, որն, իմ կարծիքով, ամենալավն էր, և բարձրաձայն ասացի. «Տեր, ես կունենամ այդ հրացանը»: Ես դա ասացի՝ առանց մտածելու. այդ խոսքերը պարզապես դուրս եկան իմ շուրթերից: Բադերի որսաշրջանը բացվում էր աշնանը, ուստի ես մտադիր չէի գնելու այդ հրացանը, մինչև չմոտենար որսաշրջանի ժամանակը:

Երկու շաբաթ անց ինձ հրավիրեցին քարոզելու մի գործարար համաժողովում: Երբ ավարտեցի խոսքս, ընկերության տնօրենը մոտեցավ ինձ, որպեսզի շնորհակալություն հայտնի, և ասաց, որ ինձ համար նվեր ունեն: Ապշեցուցիչ է, բայց նա հանեց ճիշտ այն հրացանը, *ճիշտ այն մոդելը*, որ ես մատնացույց էի արել երկու շաբաթ առաջ «Կաբելաս» խանութում: Իհարկե, ես անակնկալի եկա նման հրաշալի նվերից, բայց նաև գիտեի, որ դա զուգադիպություն չէր: Ես հիշում էի, թե ինչ էի ասել «Կաբելաս» խանութում, և հասկացա, թե ինչ էի արել: Ես մոտեցրել էի մանգաղը:

Ինչպես արդեն ասացի, *կենսականորեն կարևոր է,* որ հասկանաք այն, ինչ կարդացիք այս գլխում, որովհետև դա կտա ձեզ կարողություն՝ Աստծուց ստանալու ցանկացած բան: Այն ամենը, ինչ ստանալու եք Աստծուց, անցնելու է այս նույն գործընթացի միջով, ուստի համոզված եղեք, որ հասկանում եք, թե ինչ հենց նոր կարդացիք: Կրկի՛ն կարդացեք, եթե դրա կարիքը կա: Դա այնքա՛ն կարևոր է:

ԳԼՈՒԽ 8

ԴՈՒՔ ՔՍԱԿԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՔ ՄԱՍ 2

Մենք ստիպված էինք այսքան շեղվել, որովհետև գիտեմ, որ ձեզ համար շատ կարևոր է ըմբռնել, թե ինչի մասին է Թագավորությունը: Կրկնեմ. քրիստոնյաների մեծ մասը չունի հասկացողություն երկրային տիրույթում Թագավորության օրինական գործունեության մասին, ինչպես նաև այն օրինական դիրքի մասին, որ քրիստոնյաներն ունեն Թագավորության մեջ: Այժմ դուք գիտեք, թե ինչու ստիպված եղա անցում կատարել դեպի հավատքի և իրավասության թեման: Առանց այդ հիմնարար հասկացողության՝ դուք գաղափար չէիք կազմի, թե ինչի մասին է Ղուկասի Ավետարանի սուրբգրային այն խոսքը, որտեղ ասվում է, որ առաջ փնտրեք Թագավորությունը, և այդ բոլոր բաները կավելանան ձեզ:

Այժմ, երբ գիտեք, թե ինչ է դա նշանակում, վերադառնանք *մեր տեքստին.

> *«Եվ դուք մի՛ որոնեք, թե ինչ ուտեք կամ ինչ խմեք, և մի՛ գրգռվեք: Որովհետև այդ բոլոր բաներն աշխարհի հեթանոսներն են որոնում. բայց ձեր Հայրը գիտի, որ դրանք ձեզ պետք են: Սակայն Աստծո արքայությունը խնդրե՛ք (փնտրեք), և այդ բոլորը կավելանան ձեզ:*
>
> *Մի՛ վախեցիր, փո՛քր հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց, որ Արքայությունը տա ձեզ: Ձեր ստացվածքը ծախե՛ք և ողորմություն տվեք. ձեզ համար չհնացող քսակ-*

<u>ներ շինեք</u>՝ անպակաս գանձ՝ երկնքում, որտեղ գողը չի մոտենում, և ո՛չ էլ ցեցն է ապականում: Որովհետև, որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն»:

– Ղուկաս 12.29-34

Կրկին, Հայրն արդեն գիտի, թե ինչ է ձեզ պետք, և այն ամենը, ինչի կարիքը ունեք, արդեն մատակարարվել է Հոր կողմից և արդեն ձերն է, բայց դուք պետք է իմանաք և հասկանաք երկնքից ստանալու օրինական գործընթացը, որպեսզի վայելեք այն ամենը, ինչ Նա ունի ձեզ համար:

32-րդ խոսքը ներկայացնում է այն անհավանական ժառանգությունը, որ ստացել եք՝ որպես Թագավորի որդի կամ դուստր: Նա ասում է. ***«Ձեր Հայրը հաճեց, որ Արքայությունը տա ձեզ»:***

«Նույն Ինքը՝ Հոգին, վկայություն է տալիս մեր հոգուն, որ մենք Աստծո որդիներ ենք: Եվ եթե որդիներ, ապա ժառանգներ էլ, Աստծո ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ. որ եթե Նրա չարչարանքներին կցորդ ենք, փառքին էլ մասնակից լինենք»:

– Հռոմեացիների 8.16,17

Պողոսն ասում է, որ մենք ժառանգակիցներ ենք Քրիստոսի հետ: Որպես որդի կամ դուստր՝ դուք ունեք ժառանգություն՝ Թագավորությունը:

Կա՛նգ առեք և մի պահ մտածե՛ք այդ մասին: Դուք արդեն օրինական իրավունք ունեք այն ամենի հանդեպ, ինչ Թագավորությունն ունի: Հարկ չկա, որ աղաչեք. դա արդեն ձերն է:

Օ՜, որքան հույս եմ փայփայում, որ իսկապես կառչեք այդ պնդումից: Սա է պատճառը, որ Բ Կորնթացիների 1.20-ում ասվում է.

«Որովհետև անկախ նրանից, թե որքան խոստումներ է Աստված տվել, դրանք «այո» են Քրիստոսում: Եվ Նրա միջոցով «ամեն» է ասվում մեր կողմից Աստծո փառքի համար»:

– Բ Կորնթացիների 1.20, NIV

Սա է պատճառը, որ իմ վերջին՝ *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Մատակարարման զորությունը»* գրքում ասացի, որ Տերունական աղոթքը օրինական պահանջի կամ հայցադիմումի ձևաչափով է: Այն չի խնդրում, երբ ասում է. *«Մեր ամեն օրվա հացը տո՛ւր մեզ այսօր»:* Սա հարց չէ. սա պահանջ է:

Ինչպես հարկ չկա, որ իմ երեխաներն աղաչեն ինձ նախաճաշի համար (նրանք վարվում են այնպես, կարծես դա իրենցն է. «Հայրի՛կ, փոխանցի՛ր ձուն»), այնպես էլ Թագավորության մեջ է. Հիսուս Քրիստոսի միջոցով դուք արդեն ունեք օրինական իրավունք ամեն բանի հանդեպ:

Բացի նրանից, որ դուք ունեք օրինական մուտք այն ամենի մեջ, ինչ Թագավորությունն ունի, դուք նաև Թագավորության քաղաքացի եք, որը շատ ավելի մեծ առավելություններ է ենթադրում, ճիշտ այնպես, ինչպես ձեր քաղաքացիությունը Միացյալ Նահանգներում ունի առավելություններ, որոնցից միայն քաղաքացին կարող է օգտվել:

> *«Ուրեմն, այսուհետև այլևս օտար և պանդուխտ չեք, այլ՝ սուրբերի հետ քաղաքացիներ և Աստծո ընտանիքներ»:*
>
> – Եփեսացիների 2.19

Ի վերջո խոսենք քսակից: Հիսուսն ասաց, որ դուք քսակի կարիք ունեք, հիշո՞ւմ եք:

> *«Ձեր ստացվածքը ծախե՛ք և ողորմություն տվե՛ք. <u>ձեզ համար</u> <u>չհնացող քսակներ շինեք</u>՝ անպակաս գանձ՝ երկնքում, որտեղ գողը չի մոտենում, և ո՛չ էլ ցեցն է ապականում: Որովհետև որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն»:*
>
> – Ղուկաս 12.33,34

Ձեզ համար քսակներ շինեք՝ անպակաս գանձ երկնքում, որտեղ ոչ ոք չի կարող խլել այն ձեզնից: Հենց սկզբից հստակեցնենք մեկ բան. Հիսուսը չի ասում, որ պետք է վաճառեք այն ամե-

նը, ինչ ունեք, և մնաք ընչազուրկ, մինչև որ գնաք երկինք: Հիշե՛ք, նույն Պողոսը գրեց Բ Կորնթացիների 9-րդ գլուխը, որտեղ ասաց, որ մենք հարստանանք ամեն ձևով, որպեսզի առատաձեռն լինենք ամեն առիթով: Այնպես որ՝ Պողոսը չի ակնարկում, որ փող կամ նյութական բաներ ունենալը մեղք է և սխալ: Հիսուսն ասում է, որ եթե փողը և նյութական բաները *տիրում են ձեզ,* ավելի լավ կլինի վաճառել դրանք և ձեր սիրտն ուղղել դեպի այն գանձը, որը չեք կարող կորցնել, և որը հավիտենական է:

Մենք մեծացել ենք՝ փողը կուռք դարձնելով: Փողն օգնում է ապահովելու մեզ այն ամենով, ինչի կարիքն ունենք կյանքում, սակայն, ինչպես շատ-շատերն են հայտնաբերել, փողը թշվառ աստված է դառնում: Ահա թե ինչու Պողոսը Տիմոթեոսին ասաց պատվիրել հարուստներին, որ տան և լինեն առատաձեռն, որպեսզի հոգևորապես առողջ մնան: Այնքան հեշտությամբ է սիրտը նայում փողին՝ որպես կուռքի: Ագահության հակաթույնը առատաձեռնությունն է. հաճախակի՛ կիրառեք այն:

> *«Ներկա աշխարհի հարուստներին պատվիրի՛ր, որ չգոռոզանան, և ո՛չ էլ ունայն մեծության (հարստության) վրա հույս դնեն, այլ՝ կենդանի Աստծո վրա, որ ամեն բան տալիս է մեզ առատապես վայելելու համար: Բարի գործեն, բարի գործերով հարստանան, առատաձեռն և կարոտներին հաղորդող լինեն: Իրենց անձերի համար բարի հիմք գանձեն հանդերձյալի համար, որ հավիտենական կյանք ձեռք բերեն»:*
>
> – Ա Տիմոթեոս 6.17-19

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը Տիմոթեոսին ասում է *պատվիրել,* ոչ թե *առաջարկել* հարուստներին, որ առատաձեռն լինեն, և աղքատներին՝ որ հաղորդ լինեն: Հիշե՛ք, փողն անհրաժեշտ է, բայց այն կյանք չէ:

Այսպիսով՝ որտե՞ղ է ձեր գանձը:

Տալը ոչ միայն փափկեցնում է ձեր սիրտն Աստծո և մարդկանց հանդեպ, այլև թուլացնում է ձեր սրտին տիրելու փողի կարողութ-

յունը: Սիրտը հակված է նախանձելու և երկրպագելու այն ամենին, ինչ դնում եք նրա առջև, ուստի մենք չենք կարող թույլ տալ, որ մեր սրտերն աննպատակ թափառեն: Մեր սրտերը պետք է կենտրոնացած պահենք Աստծո վրա՝ որպես մեր աղբյուրի: Տալը հակադրվում է ագահությանը, որն այնքան հեշտորեն տիրում է մեր սրտին:

Այսպիսով՝ ինչո՞ւ պետք է տանք: Ինչո՞ւ Աստված չի կարող ֆինանսապես օգնել մեզ՝ առանց մեր տալու: Սա լավ հարց է, որի պատասխանը գտնում ենք Ղուկասի 4-րդ գլխում:

Նախևառաջ՝ Աստված փող չունի, ինչպես արդեն ասել եմ: Երկրորդ՝ Նա տվեց Ադամին լիարժեք և բացարձակ իշխանություն երկրի վրա, ինչպես շարադրված է Եբրայեցիների 2.7,8-ում:

> *«Եվ սատանան Նրան մի բարձր սար հանեց և աշխարհի բոլոր թագավորությունները ցույց տվեց Նրան մի վայրկյանի մեջ: Եվ սատանան ասաց Նրան. «<u>Այս ամբողջ իշխանությունը և սրանց փառքը</u> Քեզ կտամ, որ ինձ է տրված, և ում որ կամենում եմ, տալիս եմ սրան: Արդ, Դո՛ւ, եթե իմ առջև ընկած երկրպագություն անես, բոլորը Քոնը կլինի»:*
>
> *Եվ Հիսուսը նրան պատասխանեց և ասաց. «Գնա՛ հետիս, սատանա՛. որովհետև գրված է, թե քո Տեր Աստծուն պետք է երկրպագություն անես և Նրան միայն պաշտես»»:*
>
> – Ղուկաս 4.5-8

Սուրբգրային այս միջադեպը տեղի է ունենում այն ժամանակ, երբ սատանան անապատում փորձում է Հիսուսին: Սատանան Հիսուսին ասում է, որ աշխարհի բոլոր ազգերի ամբողջ իշխանությունը և փառքը տրվել է իրեն: Այո՛, դա ճիշտ է: Այդ դիրքն ուներ Ադամը, բայց հանձնեց սատանային, երբ դավաճանություն գործեց Աստծո Թագավորության դեմ:

Երկրի փառքը նրա հարստությունն է, և այժմ պետություններ-ի հարստության վրա իշխելու կարողությունը տրվեց սատանային: Մի՛ շփոթվեք. տեքստը չի ասում, որ սատանան *իշխանութ-*

յուն ստացավ հենց երկրի շքեղության վրա: Աստծունն է երկիրը և նրա լիությունը: Բայց տեքստում ասվում է, որ սատանան ունի *օրինական պահանջ* պետությունների հարստության հանդեպ:

Եթե նայեք դրամին, ապա կտեսնեք, որ այն միշտ հատվում կամ տպագրվում է այն պետության կողմից, որն ունի լիակատար իշխանություն իր արժույթի վրա: Ադամի արարքի պատճառով Աստված չի կարող օրինական պահանջ ներկայացնել պետության արժույթի հանդեպ կամ կեղծել այն: Սակայն, եթե Աստված երկրի վրա կարողանա գտնել որևէ մեկին, ով հավատում է Իրեն և պատրաստ է գումար ցանելու Իր իրավասության և իշխանության մեջ, այդ դեպքում Նա կստանա օրինական մուտքի թույլտվություն և կկարողանա միջամտել տվյալ իրավիճակին:

Հիշեցնեմ, որ Աստված փող չունի, ուստի ինչ նկատի ունեմ՝ ասելով, որ Նա կարող է ներգրավվել մեր ֆինանսների մեջ: Չնայած Աստված չի կարող անել այնպես, որ փողը կախարդական ձևով հայտնվի ձեր ձեռքում (դա կլիներ անօրինական, քանի որ սատանան ունի օրինական պահանջ), Նա կարող է օգնել, որ դուք ձեռք բերեք կամ ստեղծեք հարստություն:

Ինչպես այն պատմություններում, որոնք ավելի վաղ վկայակոչեցի այս գրքում, առատաձեռնությունը երկնքին օրինական իրավասություն է տալիս ցուցումներ և ուղղություն իջեցնել այն մարդու ֆինանսական բնագավառում, ով տալիս է: Հիշե՛ք Ղուկասի Ավետարանի 5-րդ գլխում գրված ձկների պատմությունը: Քարոզչության նպատակով առևտրային նավը Հիսուսին տրամադրելու Պետրոսի պատրաստակամությունը օրինական դուռ բացեց Սուրբ Հոգու համար՝ մատնացույց անելու այն ձկներին, որոնք հասանելի էին խոր ջրերում:

Աստծուն տալը բացում է փոխադարձության դուռը՝ շատ կարևոր մի օրենք Թագավորության մեջ: Մենք ցանում ենք այն, ինչ հնձում ենք:

Կարճ ասած՝ մեզ համար քսակներ ենք շինում՝ Թագավորության և Աստծո գործի մեջ ներդնելով: Մեր զոհաբերությունը մեզ տալիս է մուտքի թույլտվություն դեպի երկնքի հարստությունները: Դրա պատճառով է, որ Պողոսը «զոհաբերությունն» անվա-

նեց քսակ: Սա փոխում է ամեն բան մեր կյանքում: Մենք այլևս սահմանափակված չենք մեր հասկացողությամբ: Ինքը՝ Աստված, այժմ օգնում է մեզ բարգավաճելու:

> *«Դուք ամեն կերպ հարստացած կլինեք, որպեսզի առատաձեռն լինեք ամեն ձևով, ինչը մեր միջոցով գոհություն է բերում Աստծուն»:*
>
> – Բ Կորնթացիների 9.11, ԵՀՎ

Ուշադրություն դարձրեք, որ Աստվածաշունչն ասում է, որ դուք *հարստացած* կլինեք, այլ ոչ թե ձեր ուժերով և իմաստությամբ պետք է *պայքարեք*, որ հարուստ *դառնաք:* Ո՛չ, դուք ունեք նոր գործընկեր՝ Սուրբ Հոգուն, ու Նա ավելին գիտի, քան դուք:

Հիշում եմ լարվածության այն ինը տարիները, երբ ապրում էինք աղքատության մեջ: Փողը, կամ ավելի ճիշտ կլինի ասել, բավականաչափ փող չունենալու վախը ամուր տիրել էր իմ սրտին: Թեև ես քրիստոնյա էի, սակայն Աստծո հանդեպ իմ վստահությունն այնքան չէի խորացրել, որ սիրտս կտրվեր խորտակված երկրի անեծքի համակարգից ունեցած կախվածությունից: Ես վստահում էի սխալ գանձի: Այդ պահին ես վստահում էի *ինքս ինձ*, դա, անկասկած, վատ ընտրություն էր՝ վստահություն ունենալու համար:

Աստված ստիպված էր սովորեցնել ինձ, թե ինչպես ինձ համար քսակ պատրաստեմ՝ Իր շնորհքի և կարողության մեջ մուտք գործելու համար: Թեև կարծում եմ, որ բոլոր ինձ ճանաչողները գիտեն, թե ինչպես Աստված արեց դա, ուզում եմ այստեղ կրկին պատմել այդ պատմությունը, այն դեպքում, եթե չգիտեք, թե ինչպես դա եղավ: Աստված հրաշալի ռազմագետ է. Նա հստակ գիտի, թե ինչպես հասնի յուրաքանչյուրիս:

Ես սիրում եմ եղնիկներ որսալ, բայց տարիներ շարունակ դատարկաձեռն տուն էի վերադառնում: Դուրս էի գալիս, նստում ցրտին և օրեր շարունակ ոչինչ չէի որսում: Հարցը միայն որսորդություն սիրելը չէր. ես ունեի երեխաներ, որոնց պետք էր կերակրել, և այդ նպատակով կարող էի նաև օգտագործել եղնիկի միսը: Թեև անցյալում որոշ հաջողություններ ունեցել էի, բայց տարի-

ներ էին անցել այն ժամանակվանից, երբ եղնիկների հաջող որսաշրջան էի ունենում և որսի միս էի տուն բերում:

Մի օր, երբ մտածում էի եղնիկների առաջիկա որսաշրջանի մասին, լսեցի Տիրոջ ձայնը: Նա ասաց. «Ինչո՞ւ թույլ չես տալիս, որ քեզ ցույց տամ, թե ինչպես ստանաս քո եղջերուն այս տարի»:

Ես ապշեցի: *«Ցույց տալ ինձ, թե ինչպես ստանամ իմ եղջերուն այս տարի՞»:* Ի՞նչ է դա նշանակում: Այդ խոսքերի վերաբերյալ աղոթելով՝ ես զգացի, որ պետք է ֆինանսական սերմ կամ ընծա ցանեմ՝ այդ եղջերուն որսալու նպատակով: Զգացի, որ Տերն ասում է, որ երբ ցանեմ իմ եղջերուի համար, պետք է հավատամ, որ արդեն ստացել եմ, նախքան այն կորսամ՝ համաձայն Մարկոսի 11.24-ի:

> *«Սրա համար ասում եմ ձեզ, թե՝ ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք, և կլինի ձեզ»:*
>
> – Մարկոս 11.24

Թեև ես՝ որպես քրիստոնյա, մշտապես զոհաբերել և աջակցել եմ իմ եկեղեցուն, ինձ համար անսովոր էր նպատակաուղղված սերմ ցանելը և հավատալը, որ ստանում եմ աղոթելու պահին:

Ես մի չեկ վերցրի և նշումների բաժնում գրեցի. «Իմ 1987 թվականի եղջերուի համար»: Այնուհետև ձեռքերս դրեցի այդ չեկի վրա ու հռչակեցի, որ ստացա իմ եղջերուին, և այն ուղարկեցի մի ծառայության, որին վստահում էի:

Այդ ժամանակ ես ապրում էի Օկլահոմա նահանգի Տալսա քաղաքում, որտեղ որս անելու տեղ չկար, բայց իմ ընկերներից մեկը, ով մեր եկեղեցուց էր, Գոհության տոնի կապակցությամբ հրավիրեց ինձ իր տատիկի տուն, որը քաղաքից դուրս էր գտնվում: Նա ասաց, որ ագարակի շուրջ եղնիկներ են լինում: Այսպիսով՝ Գոհության օրվա առավոտյան ընտանիքով ճանապարհ ընկանք՝ համեղ կերակուրներ ճաշակելու, հրաշալի հաղորդակցություն ունենալու և իմ եղջերուն որսալու ակնկալիքով:

Ընկերս իրականում չգիտեր, թե ուր ուղղորդեր ինձ, բայց այն-

տեղ անտառին սահմանակից մի արոտավայր կար, և նա առաջարկեց գնալ այդ արոտավայրը ու նստել մի մեծ ծառի տակ:

Այժմ, ուզում եմ, որ պատկերացնեք տեսարանը: Ես նստած էի հնձած արոտավայրում, որի մեջտեղում մի մեծ ծառ կար: Երբ հետ եմ նայում, հասկանում եմ, որ պարզապես նստած էի բաց դաշտում՝ մի ծառի կողքին: Երբ լուսացավ, մտածեցի. *«Բաց դաշտում նստելն արդյունք չի տա: Ես պետք է գտնեմ ավելի լավ վայր՝ նստելու համար»:*

Երբ մտածում էի վեր կենալու և անտառի ուղղությամբ շարժվելու մասին, անտեղյակ էի, թե ինչ էր կատարվում իմ հետևում՝ ծառի մյուս կողմում: Ես չգիտեի, որ մի եղջերու դաշտով վազում էր: Ծառն իմ և եղջերուի միջև էր, այնպես որ՝ եղջերուն չէր տեսնում ինձ, իսկ ես՝ նրան: Նա վազեց դեպի ծառը, որսաց իմ հոտը և հանկարծակի կանգ առավ՝ փորձելով հասկանալ, թե ինչ է կատարվում:

Երբ եղջերուն կանգնեց և նայեց ծառի շուրջը, մեր հայացքները խաչվեցին: Նա ընդամենը 5 մետր էր հեռու ինձնից: Առանց ժամանակ կորցնելու՝ նա բարձր փնչացրեց և մեծ արագությամբ սլացավ:

Պետք է խոստովանեմ, որ ես հիանալի դիպուկահար չեմ: Ես փորձում էի հարմար դիրք գրավել հզոր արագությամբ ինձնից փախչող սպիտակապոչ եղջերուի նկատմամբ, սակայն դա ինձ նշանառության մեծ հնարավորություն չէր տալիս: Բացի այդ՝ 30-06 գնդակի տրամաչափով անսպասելի կրակոց արձակելն ամենահեշտ բանը չէր: Բայց երբ քաշեցի ձգանը, եղջերուն ընկավ և անշարժացավ: Ես ցնցված էի: Հրացանի ձայնից ընկերս եկավ և շնորհավորեց ինձ, քանի որ տեսավ եղջերուին՝ գետնին ընկած: Ես չէի ասել ընկերոջս, թե ինչ էր Տերն ասել, բայց նայեցի նրան և ասացի. «Չեմ կարծում, որ այս եղջերուն որսացի իմ որսորդական մեծ հմտությունների շնորհիվ»:

Իմ որսորդական բաճկոնի գրպանից հանեցի այն թուղթը, որը գրել էի այդ չեկն ուղարկելու օրը: Այնտեղ գրված էր. «Ես հավատում եմ, որ ստանում եմ իմ 1987 թվականի եղջերուն, Հիսուսի անունով»: Դրա վրա գրված էր նաև իմ աղոթքի ամսաթիվն ու

ժամը: Թուղթը ցույց տվի ընկերոջս և պատմեցի, թե ինչ էր Տերն ասել:

Այդ դեպքը գրավեց իմ ուշադրությունը: Առանց կասկածի՝ ես գիտեմ, որ այդ եղջերուն Աստծուց էր: Իհարկե, երբ այդպիսի բան եք տեսնում, ձեր միտքը փորձում է ներշնչել, որ դա պատահականություն է: Բայց վերջին 34 տարիներին ես հնձել եմ իմ եղջերուներին՝ օգտագործելով նույն մեթոդը, ինչ օգտագործեցի 1987 թվականի այդ եղջերուի համար՝ սովորաբար ավելի պակաս, քան մեկ ժամ անտառում գտնվելով:

Այդ օրը Գեննեսարեթի ծովակի մոտ Աստված նույն մեթոդն օգտագործեց՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին հասնելու համար: Աստվածաշունչն ասում է, որ նրանք ապշեցին իրենց տեսածից:

> *«Որովհետև ահ պատեց նրան և ամենքին էլ, որ նրա հետ էին, այն ձկների որսի համար, որ բռնեցին: Այնպես էլ Զեբեդեայի որդիներին՝ Հակոբոսին և Հովհաննեսին, որ Սիմոնի ընկերներն էին, և Հիսուսը Սիմոնին ասաց. «Մի՛ վախեցիր, այսուհետև մարդիկ որսող կլինես»: Եվ նավերը հանեցին ցամաքը, բոլոր բաները թողեցին և Նրա ետևից գնացին»:*
>
> – Ղուկաս 5.9-11

Նրանք այնքան զարմացած էին, որ թողեցին ամեն բան և հետևեցին Հիսուսին: Նրանք տեսան ավելի լավ, շատ ավելի լավ գործելակերպ:

Երբ Աստված ցույց տվեց ինձ Թագավորությունը, և՝ թե ինչպես պատրաստեմ ինձ անհրաժեշտ քսակը (մուտք դեպի երկնքում ունեցած իմ գանձը), իմ սիրտն ավելի վստահ դարձավ իմ երկնային ռեսուրսների, քան ձեռքումս ունեցածի մեջ:

Աստված ինձ սովորեցրեց, որ կարող եմ ցանել ցանկացած կարիքի համար, և Նա կտա ինձ ծրագիր՝ կա՛մ փող վաստակելու, կա՛մ այն ձեռք բերելու համար:

Այս գրքում բավականաչափ տեղ չկա հաղորդելու այն բոլոր

զարմանահրաշ բաները, որ տեսել եմ Թագավորության ներգործության արդյունքում, բայց կարող եմ ասել, որ Դրենդան ու ես տեսել ենք բավականին անհավատալի բաներ, որ տեղի են ունեցել ֆինանսական ոլորտում: Լիովին և բացարձակ սնանկ վիճակից մինչև ֆինանսապես ազատ լինելը և տարիների ընթացքում միլիոններով ծառայությանն աջակցելն իսկապես զարմանահրաշ բան է:

Առանձնահատուկ հունձքի համար հավատքով ցանելը առաջին բանն էր, որ Աստված սովորեցրեց ինձ, երբ սկսեցի սովորել Թագավորության մասին: Թեև ժամանակս չի բավականացնում՝ այս գրքում անդրադառնալու ամեն ինչին, սակայն իմ մյուս գրքերում կգտնեք պատմություններ այն մասին, թե որքան առանձնահատուկ է Թագավորությունը, և որքան առանձնահատուկ պետք է լինի ձեր սերմը: Իմ՝ *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Մատակարարման զորությունը»* գիրքն առավել մանրամասն է անդրադառնում այն քայլերին, որոնք անհրաժեշտ են ձեր հավատքն արձակելու և ձեր սերմն առանձնահատուկ կերպով ցանելու համար: Քաջալերում եմ ձեռք բերել գրքի օրինակը և իմանալ ավելին այս թեմայի մասին:

Այս գիրքն անդրադառնում է Թագավորության մի քանի բանալի սկզբունքների, որ Աստված սովորեցրեց ինձ առատաձեռն լինելու և տալու վերաբերյալ: Հուսով եմ, որ դրանք կքաջալերեն և կոգեշնչեն ձեզ՝ իմանալու ավելին և լինելու այն, ինչ Աստված նախատեսել է ձեզ համար:

ԳԼՈՒԽ 9

ՉԱՓԻ ՕՐԵՆՔԸ

Ամիսներ առաջ Դրենդան ու ես 15.000 դոլար ցանեցինք մի ծառայության մեջ: Երբ պատրաստվում էի արձակել իմ հավատքը, Սուրբ Հոգին հիշեցրեց Բ Կորնթացիների 9.10,11 խոսքերը: Դրանից հետո մի քանի օր շարունակ չէի կարողանում գլխիցս հանել սուրբգրային այդ խոսքերը:

> *«Բայց Նա, որ սերմ ցանողին սերմ է պարգևում, և հաց՝ կերակուրի համար, Նա կպարգևի և կշատացնի ձեր սերմունքը և կաճեցնի ձեր արդարության պտուղը: Դուք ամեն կերպ հարստացած կլինեք, որպեսզի առատաձեռն լինեք ամեն առիթով, և մեր միջոցով ձեր առատաձեռնությունը գոհություն կբերի Աստծուն»:*
>
> – Բ Կորնթացիների 9.10,11, NIV

Ես խորհում էի այն հատվածի շուրջ, որտեղ ասվում է, որ Աստված սերմնացանին տալիս է սերմ և հաց՝ կերակուրի համար, և «հաց՝ կերակուրի համար» արտահայտությունը կարծես դուրս ցատկեց տողերից: Ես հասկացա, որ շատ-շատերը բախվում են վախին, երբ ուզում են տալ, որովհետև չեն հասկանում այս արտահայտությունը: Մարդկանց մեծ մասը մտածում է, որ երբ տալիս է, հրաժարվում է ինչ-որ բանից, որը *թանկ է արժենալու* իրեն: Բայց Աստված հիշեցնում էր, որ Ինքը ոչ միայն սերմ է տալիս ցանելու համար, այլև պարգևում է հաց՝ կերակուրի համար, կամ այն, ինչի կարիքը մարդն անձամբ ունի: Իհարկե, ես արդեն գիտեի դա, բայց զգում էի, որ Նա ուզում էր, որ ես ասեի դա մարդկանց. Նա տալիս է մեզ երկուսն էլ, և մենք չպետք է վախենանք տալուց:

15.000 դոլարը ցանելուց մի քանի շաբաթ անց՝ մի գիշեր, երբ պատրաստվում էի հանգցնել լույսերը և գնալ քնելու, հանկարծ միտք ծագեց ստուգել ինձ պատկանող մի քանի բաժնետոմս: Երբ տեղեկություններ հանեցի իմ հաշվի վերաբերյալ, տեսա, որ բաժնետոմսերի արժեքը որոշ չափով բարձրացել է:

Պատրաստվում էի հեռախոսս վայր դնել, երբ աչքս ընկավ մի բաժնետոմսի վրա, որն իմը չէր: Նախկինում տեսել էի այդ բաժնետոմսը և մի անգամ դիտարկել էի այն գնելու հարցը: Երբ ուսումնասիրեցի նախկին ցուցանիշները, տեսա, որ այն հաստատուն էր վերջին 12 ամիսներին, ուստի ոչինչ չարեցի:

Բայց ինչ-ինչ պատճառով այդ գիշեր այդ բաժնետոմսը կարծես գրավեց իմ ուշադրությունը: Տարօրինակ կերպով զգացի, որ պետք է գնեմ այդ բաժնետոմսից, ինչը բոլորովին բնորոշ չէր ինձ: Այսպիսով՝ ես 1.500 դոլար վճարեցի այդ բաժնետոմսի համար և վայր դրի լսափողը:

Դրենդան ու ես մի փոքր զրուցեցինք, և ես նրան պատմեցի բաժնետոմսի գնման մասին: Հետո հեռախոսս վերցրի, որ ցույց տամ նրան: Երբ բացեցի արժեթղթերի շուկայի էջը, ցնցվեցի: Ընդամենը մեկ ժամում բաժնետոմսի արժեքը բարձրացել էր 100 տոկոսից ավելի: Մենք մնացինք արթուն և զրուցեցինք՝ հետևելով, թե ինչպես են թվերը դանդաղորեն աճում:

Հաջորդ երեք ժամվա ընթացքում բաժնետոմսի արժեքը բարձրացավ՝ հասնելով 17.000 դոլարի, և այդ գնի վրա կանգ առավ: Ես Դրենդային ասացի. «Դա մեր 15.000 դոլարն է»:

Ես արագ վաճառեցի բաժնետոմսը և նկարեցի աճի ցուցանիշները: Բաժնետոմսի արժեքը մինչև առավոտ իջավ և այդ դեպքից հետո ամիսներ շարունակ այլևս չհասավ աճի այդ մակարդակին: Դա ամենատարօրինակ բանն էր, որ երբևէ տեսել եմ: Գիտեմ՝ Սուրբ Հոգին էր, Ով լուսավորեց այդ բաժնետոմսն ինձ համար, և ես Դրենդային ասացի, որ Աստված էր, որ հատուցում էր մեր սերմի դիմաց: Աստված տալիս է սերմ սերմնացանին, և Նա տալիս է հաց՝ ուտելու համար: Գիտեք, ինձ համար միևնույն է, թե ինչպես է Նա դա անում, բայց Նա անում է դա մշտապես:

Այնուամենայնիվ, հետաքրքիր էր: Բաժնետոմսը վաճառելուց

և իմ հաշվեհամարին գումարը փոխանցելուց հետո մտածեցի. *«Ա՛յ քեզ բան, եթե ես իմանայի, որ այն այդպես կբարձրանար, 1.500 դոլարից շատ ավելի կներդնեի»:* Երբ հետադարձ հայացք ես նետում, իրավիճակն ավելի հեշտ ես հասկանում: Այո՛, ես կարող էի ներդնել 10.000 դոլար, կամ, գուցե, ձեր գլխում միտք է ծագում. *«Իսկ ի՞նչ, եթե ներդնեի 100.000 դոլար: Պատկերացրեք, թե որքան գումար կշահեի այդ ներդրումից»:* Բայց ես չներդրեցի 100.000 դոլար: Ես չներդրեցի 10.000 դոլար: Ես նույնիսկ չներդրեցի 5.000 դոլար. ես ներդրեցի 1.500 դոլար: Իմ շահույթը սահմանափակվեց: Ես ներդրեցի 1.500 դոլար, ու թեև հաստատ կուզեի ավելին ստանալ, սակայն դա տեղի չէր ունենա, որովհետև ես ներդրել էի ընդամենը 1.500 դոլար:

Աստվածաշունչը Ղուկասի 6.38-ում ասում է, թե ինչ տեղի ունեցավ, և թե ինչու ես ավելի շատ գումար չվաստակեցի այդ գիշեր:

> *«Տվե՛ք, և կտրվի ձեզ. լավ չափով՝ թափ տրված, շարժված, լիփ-լիքը կտան ձեր գոգը, <u>որովհետև այն չափով, որ չափեք, նրանով կչափվի ձեզ</u>»:*
>
> – Ղուկաս 6.38

Հասկանո՞ւմ եք, ես սահմանեցի չափը, և այդ չափով չափվեց ինձ. այն ներուժը, որ ունեի այդ գիշեր, ուղիղ համեմատական էր նրան, ինչ ներդրեցի: Ես սահմանեցի չափը, և այդ նույն չափով շահույթ հնձեցի: Հիսուսն ասում է, որ այս նույն սկզբունքը վերաբերում է նաև ձեր զոհաբերությանը:

Ուզում եմ ցույց տալ մի պատմություն Աստվածաշնչում, որտեղ կիրառվեց այս սկզբունքը: Այս պատմությունից շատ ավելին կարող ենք սովորել չափի օրենքի մասին:

> *«Եվ մարգարեների որդիների կանանցից մեկն աղաղակեց դեպի Եղիսեն՝ ասելով. «Ծառադ՝ իմ մարդը, մեռել է, և դու գիտես, որ ծառադ երկյուղած էր Տիրոջից: Բայց պարտատերը եկել է, որ իմ երկու երեխաներին իր համար ծառաներ անի»:*
>
> *Եվ Եղիսեն ասաց նրան. «Ես քեզ ի՞նչ անեմ: Ասա՛ ինձ՝*

ի՞նչ ունես տանդ»:

Եվ նա ասաց. «Աղախինդ իր տանը ամենևին ոչինչ չունի՝ բացի մի յուղի ամանից»:

Եվ նա ասաց. «Գնա՛ դրսից՝ քո բոլոր դրացիներից, դատարկ ամաններ ուզի՛ր. քիչ չհավաքես: Եվ փունդ մտի՛ր ու դուռը քո եփևից և քո որդիների եփևից կողպի՛ր և յուղը ածի՛ր այն բոլոր ամանների մեջ և լցվածները վե՛ր առ»:

Եվ կինը գնաց նրա կշտից և դուռը կողպեց իր եփևից և իր որդիների եփևից: Նրանք իրեն ամաններ էին տալիս, և նա ածում էր: Եվ երբ որ ամանները լցվեցին, ասաց իր տղային. «Էլի՛ աման տուր ինձ», և նրան ասաց. «Էլ աման չկա»: Եվ յուղը դադարեց:

Եվ կինը եկավ ու պատմեց Աստծո մարդուն: Նա էլ ասաց. «Գնա՛, յուղը ծախի՛ր և պարտքդ վճարի՛ր և մնացածով ապրի՛ր դու և տղաներդ»»:

– Դ Թագավորաց 4.1-7

Սա մի հրաշալի պատմություն է՝ Թագավորության մասին բազում հայտնություններով:

Այս կինը գնում է մարգարեի մոտ՝ օգնություն խնդրելու: Նա պարտքերի մեջ է և գրեթե կորցնում է իր որդիներին: Բայց հետաքրքիրն այն է, որ մարգարեն իր գանձարանից գումար չի հանում: Փոխարենը՝ նա կնոջը շատ տարօրինակ հարց է տալիս. «Ի՞նչ ունես տանդ»:

Կարծում եմ, որ այդ հարցը հանկարծակիի բերեց կնոջը, քանի որ նրա պատասխանից կարելի է գրեթե զգալ նրա զարմանքը: «Ամենևին ոչինչ չունեմ»,- ասաց նա: Շեշտելու նպատակով նա ավելացնում է «ամենևին» բառը: Բայց, այնուամենայնիվ, նա նշում է, թե ինչ ունի: Ոչ շատ, բայց քիչ քանակությամբ յուղ ունի: Դա այն ամենն է, ինչ մարգարեն կարիք ուներ լսելու: Դա էր պատասխանը: Ուշադի՛ր նայեք նրա հրահանգներին:

«Գնա՛ դրսից՝ քո բոլոր դրացիներից, դատարկ ամաններ ուզի՛ր. <u>քիչ չհավաքես»:</u>

Քիչ չուզես: Որքա՞ն է դա: Կարծում եմ՝ կհամաձայնեք, որ ամանների քանակը, որ նա պիտի հավաքեր, բաց է քննարկման համար, քանի որ միայն այդ կինը կարող էր որոշել, թե ինչ էր դա նշանակում իր համար: Նա անշուշտ պարզելու էր, որ հաստատ բավականաչափ ամաններ չէր հավաքել:

> *«Եվ կինը գնաց նրա կշտից և դուռը կողպեց իր ետևից և իր որդիների ետևից: Նրանք իրեն ամաններ էին տալիս, և նա ածում էր: Եվ երբ որ ամանները լցվեցին, ասաց իր տղային. «Էլի՛ աման տուր ինձ», և նրան ասաց. «Էլ աման չկա»: Եվ յուղը դադարեց»:*

Ուշադրություն դարձրեք, թե երբ յուղը դադարեց. ոչ թե այն ժամանակ, երբ լրացավ ամանների մատնանշած թիվը, այլ՝ երբ ամանները վերջացան: Երբ բոլոր ամանները լցվեցին, նա որդուն ասաց, որ էլի աման բերի, իսկ վերջինս ասաց, որ էլ աման չկա: Համոզված եմ, որ կինը կցանկանար, որ դա շարունակվեր, սակայն նա հավաքել էր ընդամենը այդքան աման: Նրա աճը սահմանափակվեց ոչ թե Աստծո կողմից, այլ՝ իր իսկ մտածելակերպի:

Վստահ եմ, որ նա, հավանաբար, ցանկացավ ունենալ ավելի շատ ամաններ, շա՛տ ավելի: Ու եթե նա իսկապես հասկանար, թե ինչ էր տեղի ունենալու, անկասկած, կթակեր քաղաքի տների բոլոր դռները՝ ամաններ գտնելու համար: Նա նույնիսկ խնդրանքներ կուղարկեր այլ քաղաքներ՝ ամաններ հավաքելու համար:

Պատմությունը, այնուամենայնիվ, լավ ավարտ ունեցավ. կնոջ պարտքերը մարվեցին, և ընտանիքն ապրեց նրանով, ինչ մնացել էր յուղը վաճառելուց հետո:

Բայց ինչպիսի՞ արդյունք կարող էր լինել: Նա կարող էր մարել *նրանց* պարտքերը, ում ճանաչում էր, կառուցեր քաղաքային նոր հրապարակ և օգներ շատ մարդկանց:

Այսպիսով՝ ինչո՞ւ նա հավաքեց հենց այդքան աման: Կարծում եմ՝ պատասխանն այն է, որ նա ուներ գոյատևման մտածելակերպ: Նա կենտրոնացած էր ցավոտ կետի վրա. այն գումարի, որ պարտք էր, և նրա, թե ինչպես էր մեծացնելու որդիներին: Ցավից այն կողմ մտածելու փոխարեն՝ նա կենտրոնացած էր ցավը

վերացնելու վրա: Ես հավատում եմ, որ եթե նա հավաքեր հազար ամսան, բոլորն էլ կլցվեին: Նա էր չափը սահմանողը:

Աստված բոլորիս տալիս է նույն հնարավորությունը, ինչ տրվեց այս կնոջը: Մենք պետք է ընտրենք, թե ինչպես ենք ցանկանում սահմանել չափը:

Թո՛ւյլ տվեք բացատրել՝ վերանայելով մեր բանալի Խոսքը այս գլխի համար:

> *«Տվե՛ք, և կտրվի ձեզ. լավ չափով՝ թափ տրված, շարժված, լիփ-լիքը կտան ձեր գոգը, որովհետև այն չափով, որ չափեք, նրանով կչափվի ձեզ»:*
>
> – Ղուկաս 6.38

Բոլորս սիրում ենք մեջբերել այս Խոսքի առաջին մասը. որ եթե տանք, լիփ-լիքը կինձենք: Բայց հաճախ չենք կարողանում կարդալ վերջին մասը, որտեղ ասվում է, որ մենք կինձենք միայն *այն չափով, որ չափով տվել ենք:*

Ինչո՞ւ է այս սկզբունքն այսքան կարևոր ձեզ և ինձ համար: Թո՛ւյլ տվեք օրինակ բերել:

Ենթադրենք՝ դուք սկսնակ հողագործ եք, և ես ձեզ ասել եմ, որ ուզում եմ 136 տոննա ցորեն գնել: Մենք համաձայնում ենք գնի շուրջ, և դուք ձեր 4 հեկտար դաշտում պատրաստվում եք ցանել ցորեն՝ այդպիսի հունձք ստանալու համար:

Կարծում եմ՝ գիտեք, թե ինչ կկատարվի: Ձեզ չի բավականացնի հացահատիկի այն քանակը, որն անհրաժեշտ է մեր պայմանագրի պահանջը բավարարելու համար: Ինչո՞ւ: Որովհետև դուք գաղափար չունեք, թե որքան հեկտար տարածք է անհրաժեշտ 136 տոննա հացահատիկ ստանալու համար:

ՈՐՔԱ՞Ն ՇԱՏ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ ԵՆ ԲԵՌՆԱՏԱՐՆԵՐՈՎ ՇԱՐՔ ԿԱՁՄՈՒՄ՝ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՎ ԻՐԵՆՑ ԲԵՐՔԸ ՏԱՆԵԼ ՇՈՒԿԱ, ԲԱՅՑ ՏՆԿԵԼ ԵՆ ԼՈԼԻԿԻ ԸՆԴԱՄԵՆԸ ԵՐԿՈՒ ՍԱԾԻԼ:

Հողագործի օրինակում չափը հեկտարների այն քանակն է, որ նա օգտագործել է տնկելու նպատակով: Կնոջ դեպքում՝ ամսան-

ների այն քանակը, որ նա հավաքեց: Հիսուսի օրինակում՝ այն քանակը, որ մենք ցանում ենք:

Ուստի՝ եթե այն բերքը, որ ակնկալում ենք, հնարավոր չէ ստանալ այն չափով, որ սահմանել ենք, մենք ունենում ենք հիասթափություն, և հավանաբար, ովքեր քիչ պատկերացում ունեն այդ մասին, նույնիսկ կմեղադրեն Աստծուն Նրա Խոսքի թվացյալ ձախողման համար:

Այսպիսով՝ ահա «մեկ միլիոն դոլարի» հարց. եթե հողագործին անհրաժեշտ է 136 տոննա ցորեն, և նա գաղափար չունի, թե քանի հեկտար է հարկավոր ցանել, ապա ինչ պիտի անի:

Հարցնի այն հողագործին, ով գիտի:

Այժմ, այս սկզբունքը կիրառենք կյանքի իրավիճակներում, որոնք ես տեսնում եմ ամեն ժամանակ:

Մի ընտանիք ցանկանում է մարել 300.000 դոլարի հիփոթեք, և ամուսինն ու կինը գիտեն, որ պետք է սերմ ցանեն, համաձայնության գան և արձակեն իրենց հավատքը: Բայց որքա՞ն ցանեն: Ես մշտապես ստանում եմ այս հարցը: Որքա՞ն պետք է ցանեն, որ սահմանեն չափ 300.000 դոլարի հունձքի համար: Նրանք գաղափար չունեն, և հարկ կլինի, որ հարցնեն մեկից, ով գիտի, ու դա Սուրբ Հոգին է:

Բոլորս բազմիցս լսել ենք, թե ինչպես է Նա շշնջում այդ հարցի պատասխանը: Սովորաբար լավ ուսուցման բացակայության հետևանքով մենք անտեսում ենք այդ մեղմ ձայնը, ասես լսում ենք մի բան, որը չենք կարող անել: Օրինակ՝ որևէ բանի համար սերմ ցանելիս զգում եք, որ պիտի ցանեք 1.000 դոլար: Ձեր միտքն անմիջապես միջամտում է. «Ո՛չ, ես չեմ կարող դա անել», կամ՝ առավել վատ՝ սատանա՛, հետի՛ս գնա:

Մեկ բան, որ կարող եք համոզված լինել, այն է, որ <u>սատանան երբեք չի ասի, որ ավելի շատ ցանեք Թագավորության մեջ:</u> Նա լիովին տեղյակ է Թագավորության այս օրենքից: Այս պարագայում, քանի որ վստահություն չեք ձևավորել չափը սահմանելու սկզբունքի հանդեպ, դուք տեղի եք տալիս ձեր մտքերին և ցանում

ձեր սովորական 100 դոլարը: Եվ, անշուշտ, ինչպես ցորենի իմ օրինակում, դուք չեք ունենում այն հունձքը, որ ձեզ անհրաժեշտ էր:

Նախքան առաջ կշարժվենք, ես պետք է հստակեցնեմ մեկ բան.

Ձեր չափը չի որոշվում այն գումարով, որ ցանում եք:

Նայե՛ք Ղուկասի 21.1-4 խոսքերին.

> *«Եվ մտիկ տվեց, տեսավ հարուստներին, որ իրենց տուրքը գանձանակն էին գցում: Մի որբևայրի աղքատ կին էլ տեսավ, որ երկու լումա գցեց այնտեղ: Եվ ասաց. «Ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե այս աղքատ որբևայրին ամենից ավելի գցեց: Որովհետև նրանք ամենքն իրենց ավելացածներից գցեցին Աստծո ընծաների մեջ, իսկ սա իր կարոտությունից իր ամբողջ ապրուստը, որ ուներ, գցեց»:*

Ուշադրություն դարձրեք՝ Հիսուսն ասաց, որ այդ օրն աղքատ որբևայրին ավելի շատ տվեց, քան հարուստները: Հարուստներն ավելի մեծ գումարներ տվեցին, բայց Աստվածաշունչն ասում է, որ նրանք տվեցին իրենց ունեցած հարստությունից կամ իրենց ավելացածից: Աղքատ որբևայրին տվեց իր իսկ կյանքից, և դրա համար մեծ հավատք պահանջվեց:

Ավելացածից տալը հավատք չի պահանջում: Անշուշտ, ավելցուկից առատաձեռնությամբ տալը հրաշալի է, բայց այդ օրը մարդիկ կարողանում էին տեսնել, թե ինչ էին գցում գանձանակը, և հարուստները շատ անգամներ տալիս էին մարդկանց կողմից նկատվելու և իրենց մրցակիցների մեջ կրոնական դիրք ձեռք բերելու համար:

Այնպես որ, տված գումարի քանակով չափը սահմանելը ճշգրիտ բնորոշում չէ: Դա կարևոր բաղադրիչ է, բայց միակը չէ:

Մենք պետք է հասկանանք, որ այն, ինչ «շատ» է մեկի համար, պարտադիր չէ, որ շատ լինի մեկ ուրիշի համար:

Իմ ծառայության վաղ տարիներին հազար դոլար տալը

ՀՍԿԱՅԱԿԱՆ գումար էր ինձ համար: Իրականում, երբ սկսեցինք ծառայությունը, մենք ստիպված էինք այդ զոհաբերությունը տալ մի քանի ամսվա ընթացքում: Բայց մեր հնարավորություններն աճեցին, և մենք կարողացանք տալ ավելին՝ մեր հավատքի և վստահության աճին զուգընթաց:

Ահա թե ինչ եմ ասում մարդկանց. «Երբ ցանում եք մատակարարման համար, մի պահ կանգ առեք և հարցրեք Սուրբ Հոգուց, թե ինչ և որտեղ ցանեք»:

Սովորաբար, առօրյա կարիքների համար ցանելը չի պահանջում այնքան հավատք, որքան կպահանջեր խոշոր ճեղքման, օրինակ՝ տան գումարը մարելու համար ցանելը: Երբ ես ցանում եմ խոշոր բաների համար, միշտ ուզում եմ *զգալ* դա: Նկատի ունեմ, որ ես չեմ ուզում պարզապես տալ իմ հավելյալ գումարներից: Ես ուզում եմ ցանել այնքան, որ կարողանամ *զգալ* իմ հավատքի ներգրավվածությունը: Գումարը պետք է այնքան մեծ լինի, որ անհանգստություն պատճառի մարմնիս, և միտքս ասի. *«Վստահ ես դրանում»:*

Ես հայտնաբերել եմ, որ Սուրբ Հոգին կասի ձեզ գումարի չափը, երբ հարցնեք Նրան. պարզապես համոզված եղեք, որ իսկապես ուզում եք լսել Նրան:

Շատ անգամներ ես օգնության կարիք եմ ունեցել այս հարցում: Քանի որ հաշիվները ես եմ փակում, Դրենդայի համար միշտ հեշտ է լսել այն գումարի չափը, որ պետք է ցանենք, և չունենալ որևէ երկմտություն: Հիշո՞ւմ եք այն պատմությունը, որ պատմեցի մեր «Հավատքի Կյանք» եկեղեցու ուսումնական համալիրի համար առաջին անգամ 200.000 դոլար ցանելու մասին:

Ես չեմ պատմի այդ պատմության մանրամասները: Դա պետք է լիներ եռամյա պարտավորություն. ոչ թե պարտք, այլ նպատակ, որին պետք է հասնեինք այդ ժամանակահատվածում: Երբ եկավ այն օրը, որ պետք է հայտնի դարձնեինք մեր մտադրությունները և ցանեինք մեր նախնական սերմը, ես մտածեցի, որ 150.000 դոլարն այն գումարն էր, որ ցանկանում էի տալ: Բայց Դրենդան վիճեց ինձ հետ՝ ասելով, որ ինքը լսել է, որ պետք է տանք 200.000 դոլար: Ես անտեսեցի նրա ասածը և կանգ առա 150.000 դոլարի

վրա: Հավաքույթի ժամանակ նա պնդեց, որ տանք 200.000 դոլար, բայց ես հրաժարվեցի:

Երբ արդեն պատրաստվում էինք ցանել մեր սերմը, մեր եկեղեցուց մի հողագործ ոտքի կանգնեց և խնդրեց խոսել: Նա բոլորին քաջալերեց վստահել Աստծուն իրենց հունձքի համար: Նա շարունակեց խոսել՝ բացատրելով, որ, որպես հողագործ, գոյատևելու համար կախված է ցանելու և հնձելու օրենքներից, և նա պարզել է, որ դրանք վստահելի են: Նա ասաց, որ տարեկան 200.000 դոլար է ծախսում իր սերմը ցանելու համար: Այնուհետև շարունակեց՝ ասելով, որ սկզբում գուցե հիմարություն թվա 200.000 դոլարը հողի մեջ գցելը, որովհետև հենց ցանեցիր, այլևս ոչ մի կերպ հնարավոր չէ վերադարձնել այն: Բայց նա շեշտեց, որ ցանելու և հնձելու օրենքը միշտ գերազանցում է այն հունձքով, որը շատ ավելի մեծ է, քան 200.000 դոլարը, որ նա ծախսում է՝ իր դաշտերում ցանելու համար:

Դրենդան կողքից թեթև հրեց ինձ: Ես հասկացա ակնարկը. 200.000 դոլար, և դա այն էր, ինչ մենք ցանեցինք: Դուք հիշում եք, թե ինչպես Աստված շարժեց ընկերության փոխնախագահի սիրտը, որպեսզի այդ տարի տար մեզ տարեկան պարգևավճար, որը ճիշտ և ճիշտ 200.000 դոլար էր: Մեզնից նույնիսկ մեկ դրամ չպահանջվեց այդ սերմը ցանելու համար: Եվ ինչպես ասացի այդ գլխում, տարիներ են անցել, և այդ պարգևավճարը մինչև հիմա ուժի մեջ է, ու մենք 2 միլիոնից ավելի եկամուտ ենք ստացել դրանից:

Հասկանո՞ւմ եք, Դրենդայի միտքը լցված չէր մեր հաշիվներին վերաբերող մանրամասներով, և վախը գլուխ բարձրացնելու տեղ չուներ: Նա պարզապես լսեց Աստծուն: Իրականում, դա այն է, ինչ նաև պետք է անեմ: Բայց առաջին անգամն էր, որ մենք այդ չափին մոտ գումար էինք ցանում, այնպես որ՝ այո՛, ես տալիս էի վախով, երբ կանգ էի առել 150.000 դոլարի վրա: Շնորհակա՛լ եմ Աստծուց իմ կնոջ համար, ով քաջալերեց ինձ վստահել Տիրոջը ավելի մեծ գումարի համար:

Ցանելու համար *միշտ* հավատք է հարկավոր, *միշտ:* Ուստի, թույլ չտանք, որ վախը հետ պահի մեզ հնձելուց այն, ինչ Աստված փորձում է տալ:

«Որովհետև սա եմ ասում, թե՝ խնայելով սերմողը, խնայելով էլ կինձի, և առատությամբ սերմողը, առատությամբ էլ կինձի»:

– Բ Կորնթացիների 9.6

Այս տեքստում Պողոսը զոհաբերություն է հավաքում մեկ ուրիշ եկեղեցու համար և մարդկանց հիշեցնում է մի սկզբունք, որն ակնհայտորեն սովորեցրել էր նրանց. նրանք կինձեն այն, ինչ ցանեն, և այն չափով, որ չափով, որ ցանեն: Պողոսը հաստատում է չափը սահմանելու սկզբունքը:

Երբ Պետրոսն իր նավը տվեց Հիսուսին՝ այդ օրը լճում գործածելու համար, մենք տեսանք, որ Հակոբոսի և Հովհաննեսի նավը լցվեց այնքան հունձքով, որքան Պետրոսի հավատքը բերեց, որովհետև նրանք գործընկերներ էին: Բայց թույլ տվեք հարցնել. եթե Պետրոսն այդ օրն իր գործի մեջ դրած լիներ 1000 նավ, որքա՞ն նավ կլցվեր:

Եթե ասացիք՝ 1000, ուրեմն՝ ճիշտ եք:

Կրկին, տեսնում ենք, որ չափ է սահմանվում: Տրված չափը այն *փարան* է, որ Աստված կարող է լցնել: Ուստի՝ քաջալերում եմ ձեզ չափ սահմանել մեծ տեսիլքով: Դուք չեք ցանկանա հետ նայել և ասել. «Օ՜, այդ բաժնետոմսի արժեքը երեք ժամում բարձրացավ հազար տոկոսով: Երանի՜ ավելի շատ ներդրած լինեի»:

Այսպիսով՝ ինչո՞ւ այդ գիշեր ես ներդրեցի ընդամենը 1.500 դոլար այն բանից հետո, երբ Սուրբ Հոգին մղեց գնել այդ բաժնետոմսը: Կարծում եմ, ես չխնդրեցի Աստծուն ասել ինձ գումարի չափը: Ես գործում էի իմ հասկացողությունից ելնելով և բաղ թողեցի Նրա ձայնը:

Այժմ, խնդրում եմ, այս պատմության պատճառով չգնե՛ք մի խումբ բաժնետոմսեր: Ինչպես ավելի վաղ ասացի, ես շատ գումար չեմ ներդնում արժեթղթերի շուկայում: Բայց այդ գիշեր Աստված հստակ ցույց տվեց. Նա տալիս է սերմ՝ ցանելու համար, և հաց՝ կերակուրի համար, և դա հրաշալի հիշեցում էր այն մասին, որ *մենք* ենք սահմանում չափը:

Հուսով եմ՝ կհիշեք այս պատմությունը, երբ հաջորդ անգամ

Աստված թփթփացնի ձեր ուսը՝ որևէ առաջադրանք ֆինանսավորելու համար:

Մենք պետք է թույլ տանք, որ Աստված մարզի մեզ սրանում:

Հիշում եմ, երբ 2009 թվականին տնտեսական ճգնաժամի պատճառով Ֆլորիդայում անշարժ գույքի գներն ընկան: Այնտեղ մենք ունեինք ընկերներ, որոնք ապրում էին օվկիանոսի ափին, և մենք հաճախ էինք այցելում նրանց: Այդ ժամանակ ամբողջ Ֆլորիդայում առանձնատներ էին վաճառվում: Մի օր, երբ մեր ընկերոջ հետ քայլում էինք ջրափով, նա ասաց. «Ուզում եմ ձեզ ինչ-որ բան ցույց տալ»:

Մենք մոտեցանք մի տան, որի վրա «Վաճառվում է» ցուցանակ էր փակցված: Գինն ընդամենը 695.000 դոլար էր՝ սեփական տարածքում գտնվող երկու տների համար (այո՛, ճիշտ կարդացիք, երկու տուն ծովափին՝ 695.000 դոլարով: Երկուսն էլ տրվում էին կահավորված վիճակում: Կարծում եմ՝ կհամաձայնենք, որ դա շահավետ գնում էր): Տներից մեկը տրվում էր վարձակալության և մեծ եկամուտ էր բերում, քանի որ այդ տները գտնվում էին հենց ջրի ափին: Բայց ինձ համար խելքին մոտ չէր այդ պահին նման գումարներ ծախսելը, և ես մի կողմ դրեցի դրանք գնելու միտքը (գիտեմ, գիտեմ, այդքան էլ իմաստուն չէի): Ընկերս արդեն մի քանի տներ ուներ և այդ ժամանակ չէր ցանկանում ստանձնել ևս երկու տուն կառավարելու գործը: Նա մեզ տարավ ուղիղ այդ տների մոտ: Ամեն օր չէ, որ մուլտիմիլիոնատերը կհրավիրի ձեզ իր հետ խորհրդի և կասի. «Ահա թե ինչ ես կանեի»: Անշուշտ, Դրենդան ասում էր, որ մենք պետք է գնենք, բայց ես տեղից չշարժվեցի:

Կարող եք կռահել հետևանքը. այդ երկու տները վաճառվեցին և մի քանի տարի անց վերավաճառվեցին 3 միլիոն դոլարով:

Գիտե՞ք, թե որն էր ամենատխուր և ամենահիասթափեցնող բանը: Այդ օրը ես նույնիսկ չաղոթեցի դրա համար: Ես մի կողմ դրի Սուրբ Հոգու իմաստությունը: Անտեսեցի ընկերոջս և կնոջս խորհուրդը, ով շատ իմաստուն է: Ես ասում էի՝ ո՛չ, որովհետև գիտեի, որ դա կպահանջեր մեր ամբողջ կանխիկ գումարները, և տնտեսական ճգնաժամի պայմաններում պարզապես նպատա-

կահարմար չէի համարում դա անելը: Բայց ինչպես ասացի, ես Աստծուն չհարցրի այդ մասին, ինչը կոպիտ սխալ էր:

Դժբախտաբար ես բաց եմ թողել շատ հունձքեր (ոչ թե՝ բոլոր, այլ՝ շատ), և Աստված ստիպված է եղել աշխատել ինձ հետ այդ ուղղությամբ:

Տարիներ առաջ, մի օր՝ հանգստավայրում, Դրենդան պատահաբար հանդիպեց Քենեթ Քոփլանդին, և վերջինս հրավիրեց նրան նախաճաշի իր և կնոջ՝ Գլորիայի հետ:

Սեղանի շուրջ նստած՝ Քենեթն ասաց, որ ունի խոսք Դրենդայի և ինձ համար: Կինս հեռախոսով ձայնագրեց նրա ասածը, քանի որ ես նրա հետ չէի այդ ճամփորդությանը: Այն մոտավորապես այսպես էր հնչում.

«Ես փորձել եմ տալ ձեզ տներ ու հողատարածքներ, բայց դուք թույլ չեք տվել»:

ԹՈՒՅԼ ՄԻ՛ ՏՎԵՔ, ՈՐ ՎԱԽԸ ԽՈՍԻ ՁԵԶ ՀԵՏ, ԵՐԲ ՑԱՆՈՒՄ ԵՔ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՁԵՐ ՉԱՓԸ: ԵՂԵ՛Ք ՀԱՄԱՐՁԱԿ:

Դա հանդիմանությո՛ւն էր: Ես տեսա իմ սխալը՝ հետադարձ հայացք նետելով այն բազմաթիվ դեպքերին, երբ ասել էի՝ ոչ: Ուստի՝ այդ օրվանից որոշում կայացրի, որ այլևս բաց չեմ թողնի իմ հունձքը: Այդ որոշումը կայացնելուց հետո զարմանալի է, թե որքան արագ Աստված բերեց այն բաները, որոնց համար ես ցանել էի:

Թույլ մի՛ տվեք, որ վախը խոսի ձեզ հետ, երբ ցանում եք և սահմանում ձեր չափը: Եղե՛ք համարձակ: Դուք չեք իմանա, թե ինչպես Աստված իրականություն կդարձնի շատ բաներ, ինչպես որ, վստահ եմ, Դ Թագավորաց 4-րդ գլխում նկարագրված որբևայրին չէր կարող պատկերացնել, որ յուղը կարող էր շարունակ հոսել: Եթե նա պատկերացներ դա, նրա պատմությունը բոլորովին այլ ավարտ կունենար: Հավանաբար, այսօր կկարդայինք մի աղքատ որբևայրու մասին, որը դարձավ միլիարդատեր յուղի բիզնեսում:

Վերջապես, հիշե՛ք, դուք մշտապես ցանելու եք ավելի ու ավելի մեծ հունձքի մեջ: Այսօր դուք ապրում եք երեկվա հունձքից ստացածով, այնպես որ, արժե պահել դա մտքում, երբ ցանում եք:

Հիշե՛ք նաև, որ ամենախավար պահը միշտ ցանելուց հետո է: Սերմերի ամբարը դատարկ է, և սածիլները դեռ չեն բողբոջել: Բայց դուք կառչում եք Աստծո Խոսքից, ամուր կանգնում և Հոգով աղոթում ուղղության և այն հունձքի մանրամասների համար, որ Աստված բերում է:

Ուզում եմ ավարտել այս գլուխը մի պատմությամբ, որը բազմիցս պատմել եմ, բայց արժե կրկնել: Այն իմ առևտրական գործակալներից մեկի մասին է: Դա տեղի է ունեցել տարիներ առաջ, երբ նոր էի սովորում չափը սահմանելու սկզբունքը: Նա նոր տուն էր կառուցում, և, ինչպես պատահում է նորակառույցների մեծ մասի հետ, նա գերազանցեց իր բյուջեն: Ինչ-որ բան մշտապես փոխվում կամ ավելանում էր, որը փոփոխություն էր բերում վերջնական գնի մեջ:

Այս պարագայում ընկերս արդեն սպառել էր բանկի հատկացրած ամբողջ գումարը և այլևս գումար չուներ: Որքան հիշում եմ, նա չուներ ամբողջ գումարը՝ վճարելու խոհանոցի պահարանների համար: Կարծում եմ, նրան պակասում էր մոտավորապես 25.000 դոլար:

Մի երեկո, իմ ընկերության մյուս ներկայացուցիչներից մեկը նրա հետ գնաց եկեղեցական ծառայության: Ուղերձի վերջում քարոզիչը հատուկ նպատակով զոհաբերություն հավաքեց, և ես չգիտեի բոլոր մանրամասները, բայց այն ներկայացուցիչը, որ գնացել էր ծառայության տուն կառուցող գործակալի հետ, եկավ ինձ մոտ և ասաց, որ վերջինս այդ երեկո կարծես ինչ-որ բանի դեմ էր պայքարում:

Նա հայտնեց, որ այդ մարդը քայլեց դեպի եկեղեցու բեմահարթակ, տվեց իր զոհաբերությունը և վերադարձավ ու նստեց տեղը: Բայց նա խռովահույզ տեսք ուներ: Հետո վեր կացավ, գնաց առաջ և էլի գումար զոհաբերեց: Վերադառնալով իր տեղը՝ այս անգամ էլ ավելի խռովահույզ թվաց: Մի քանի րոպե նստեց, այնուհետև, հառաչելով, կրկին առաջ գնաց և էլի գումար զոհա-

բերեց: Այս անգամ, երբ վերադարձավ, կարծես խաղաղվեց, և հուզմունքն անհետացավ:

Այդ ամիս՝ ավելի ուշ, նա վկայություն տվեց այն մասին, որ այդ գիշեր եկեղեցում նա սերմ էր ցանում այն գումարի համար, որ անհրաժեշտ էր խոհանոցի պահարանները վճարելու համար: Եթե ճիշտ եմ հիշում, կահույքագործը որոշեց պահարանների գինը զեղչել 50 տոկոսով, և նա կարողացավ բավականաչափ գործարքներ կնքել, որպեսզի փակեր վերջնական հաշիվը:

Ի՞նչ էր կատարվում այդ երեկո: Ներկայացուցիչը, որ կառուցում էր իր տունը, ասաց, որ խաղաղություն չուներ, մինչև երրորդ անգամ չգնաց առաջ և չտվեց այն ամենը, ինչ ուներ: Հասկանո՞ւմ եք, նա աղոթում էր, թե ինչպես վճարեր այդ 25.000 դոլարը, և Սուրբ Հոգին առաջնորդում էր նրան՝ սահմանելու այն չափը, որն անհրաժեշտ էր իր հունձքի համար:

Այսպիսով՝ հաջորդ անգամ ցանելիս հիշե՛ք Թագավորության այս շատ կարևոր օրենքը՝ չափի օրենքը:

ԳԼՈՒԽ 10

ԱՌԱՏԱՁԵՌՆ ԹԱԳԱՎՈՐԸ

Վստահ եմ, որ բոլորս արել ենք այս բանը: Ինչ-որ մեկը մոտենում է մեզ և հաճոյախոսություն անում, իսկ մենք պատասխանում ենք մոտավորապես այսպես. «Օ՜, ես սա գնել եմ 5 դոլարով՝ ոչ պետքական իրերի բակային վաճառքից»:

Ինչո՞ւ ենք այդպիսի բան ասում: Ինչո՞ւ ենք ամոթ զգում որևէ գեղեցիկ բան ունենալու համար: Հետաքրքիր է և տխուր, որ երբ 20 տարի առաջ կառուցեցինք մեր նոր տունը՝ քաղաքից դուրս, մենք աղոթում էինք, որ այն ներքուստ մեծ լիներ, բայց արտաքուստ փոքր երևար: Մենք նոր հովիվներ էինք, եկեղեցուց որևէ եկամուտ չունեինք. մեր բիզնեսից ստացած շահույթն էր, որ օգտագործում էինք տունը կառուցելու համար, բայց ինչ-ինչ պատճառով մեզ թվում էր, թե մարդիկ կմտածեին, որ փողը վերցնում ենք եկեղեցուց: Այսպիսով՝ մենք կառուցեցինք տուն 715 քառակուսի մետր տարածքով, բայց եթե նայեք տանը, այն հիմնականում սովորական երկհարկանի տան տեսք ունի:

Հետագայում մենք հասկացանք, թե ինչ հիմարություն էր դա: Ինչո՞ւ պիտի ամաչեինք Տիրոջ օրհնությունից:

Իմ համաժողովներում ես օգտագործում եմ այս համանմանությունը:

Ենթադրենք՝ ես կեղտոտ ու մաշված հագուստով բարձրանում եմ բեմ և հայտարարում. «Այսօր տոնակատարություն է. Դրենդան ու ես մարեցինք մեր տան գումարը»: Այնուհետև պատմում եմ, թե որքան քրտնաջան ենք աշխատել (երբեմն՝ շաբաթական 80 ժամ) դրան հասնելու համար, բայց մեզ հաջողվեց դա:

Բոլորը կծափահարեն և կաղաղակեն: Ինչո՞ւ: Որովհետև ինչ-որ մեկը հաղթել է համակարգին: Կա՛ ելք:

Բայց եթե ես բարձրանայի բեմ և ասեի. «Այսօր մի անծանոթ մոտեցավ և մեկ միլիոն դոլար տվեց մեզ, և մենք վճարեցինք մեր տան գումարը», բոլորը կասեին, որ դա արդար չէ: Ինչո՞ւ: Որովհետև մենք մեծացել ենք տանջալի աշխատանքի և քրտինքի երկրային անեծքի համակարգում: Ահա թե ինչպես են մեզ սովորեցրել մատակարարում ստանալ: Անշուշտ, դա ստրկության համակարգ է, քանի որ մարդկանց մեծ մասը երբեք չի վերապրում իսկական ֆինանսական ազատության զգացում: Դրա պատճառով մեծ մասն այդպես էլ չի բացահայտում իր իսկական նպատակը, իր հոգևոր ԴՆԹ-ն: Քանի որ մենք ապրում ենք գոյատևման համակարգի ներքո, ֆինանսական որոշումների մեծ մասը կայացվում է *փողի*, ոչ թե *նպատակի* շուրջ: Մարդիկ երազում են ազատ լինել՝ իրենց երազանքներին ու նախասիրություններին հետևելու համար, բայց մեծ մասի կյանքում դա այդպես էլ տեղի չի ունենում:

Մի քանի տարի առաջ Աստված խոսեց ինձ հետ կրկնակի չափաբաժնից, նաև՝ թե ինչպես ենք այն ստանում: Կրկնակի չափաբաժինը մեզ ազատ է արձակում գոյատևման երկրային անեծքի համակարգից և գոյատևելու համար տանջալի աշխատանքին ու քրտինքին ապավինելու հակվածությունից:

Երկու խոսքով՝ կրկնակի չափաբաժին նշանակում է *ավելի, քան՝ բավական:* Ավելի, քան բավական ունենալը թույլ է տալիս ապրել առանց պարտքերի և լինել առաքելության մեջ՝ սեփական կյանքը փողի դիմաց վաճառելու փոխարեն:

Թեև տարիներ շարունակ իմ համաժողովներին խոսել էի կրկնակի չափաբաժնի մասին, բայց զգացի, որ Տերը ցանկանում էր ցույց տալ ինչ-որ բան դրա վերաբերյալ, որ դեռ չէի հասկացել: Գիտեի, որ կա ավելին, քան տեսնում էի, և խնդրեցի Սուրբ Հոգուն ցույց տալ, թե ինչ էր դա:

Ես սկսեցի ուսումնասիրել սուրբգրային այն խոսքերը, որոնք վերաբերում էին կրկնակի չափաբաժնին, և սպասել, որ Տերը ցույց տա, թե ինչ էի ես բաց թողնում: Նա գրավեց իմ ուշադրութ-

յունը՝ ամենատպավորիչ կերպով ցուցադրելով այն, ինչ փորձում էր հասկացնել ինձ, և ինչը երբևէ չէի կարող պատկերացնել:

Ես հեռախոսազանգ ստացա մի պարոնից, որին երբեք չէի հանդիպել: Նա մեր ծառայության գործընկերներից էր: Իմ գրքերը կարդալուց հետո նա հասկացավ, որ ես որսորդության սիրահար եմ, ուստի զանգեց ինձ և ասաց. «Ուզում եմ ձեզ համար հրացան գնել, դուք ո՞ր տեսակը չունեք»:

Այդ ժամանակ ես ունեի սովորական որսորդական հրացան, որն օգտագործում էի ամեն կենդանի որսալու համար՝ սկսած եղնիկներից մինչև բադեր, փասիաններ ու ճագարներ: Ունեի նաև 20 տրամաչափի հորիզոնական փողերով երկփողանի հրացան, որը հայրս էր գնել ինձ համար, երբ 16 տարեկան էի: Բայց ինձ մշտապես հետաքրքրել են այն երկփողանի հրացանները, որոնց փողերը տեղակայված են մեկը մյուսի վրա: Ես բազմիցս տեսել էի դրանք որսորդական ամսագրերում: Այդ հրացաններն ունեին գեղեցիկ փորագրություն, հիասքանչ փայտե կոթեր և կատարելության հասնող որակ: Ուստի՝ նրան ասացի, որ չունեմ երկփողանի հրացան՝ միմյանց վրա տեղակայված փողերով, և իրականում մշտապես ցանկացել եմ ունենալ այդպիսի հրացան: Ես ցնցված էի, երբ նա ասաց, որ կուղարկի ինձ այդ հրացանից: Դա, անշուշտ, անսովոր էր և շատ հուզիչ:

Եվ, իհարկե, մեկ շաբաթ անց եկեղեցու աշխատասենյակ բերեցին մի արկղ, և երբ բացեցի, այնտեղ ոչ թե մեկ, այլ *երկու* ամենագեղեցիկ երկփողանի հրացաններից էին, որ երբևէ տեսել էի:

Ես իսկույն զանգեցի իմ գործընկերոջը և շնորհակալություն հայտնեցի այդ հրաշալի նվերի համար:

Հաջորդ շաբաթ նա ուղարկեց ինձ ևս երկու հրացան: Այժմ ես ունեի չորս լավագույն հրացանները, որ երբևէ ունեցել էի: Ես կրկին զանգեցի նրան, ու նա ասաց, որ շատ հաճախ մարդիկ չեն զանգում և շնորհակալություն չեն հայտնում իր ուղարկած նվերների համար, իսկ քանի որ ես զանգել և շնորհակալություն էի հայտնել, նա մտածել էր, որ գուցե ևս երկու հրացան ուղարկի: Ես գիտեի, որ սա մի բան էր, որ Աստված ուզում էր հասկացնել: Նկատի ունեմ, որ դրանք միաժամանակ երկու-երկու էին գալիս,

իսկ ես Նրանից հարցնում էի կրկնակի չափաբաժնի մասին:

Կարճ ասած՝ ես սկսեցի փոստով հրացաններ ստանալ՝ մշտապես զույգերով: Շուտով ունեցա, հավանաբար, ՏԱՍՆՉՈՐՍ նոր հրացան՝ բոլորն էլ ամենաբարձր որակի: Դրանք էժանագին հրացաններ չէին: Արժեին հազարավոր դոլարներ:

Այնուհետև ինձ նվիրեցին երկու մարգարտե սպիտակ «Կադիլակ Էսկալադ» ամենագնացներ: Այդ ժամանակ մենք վարում էինք մեր տասը տարեկան «Հոնդա Պիլոտը», որը շատ էինք սիրում («Հոնդա»-ն միշտ էլ լավ մեքենա է), բայց դա Էսկալադ չէ:

Տարիներ շարունակ Դրենդան ցանկանում էր Լուի Վիտոնի փոքրիկ պայուսակ ունենալ, և մի քանի տարի առաջ, Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ, նրան այդպիսի մի պայուսակ նվիրեցի: Բայց այս տարի ծննդյան օրը նա ստացավ, միգուցե արդեն կռահեցիք, «Լուի Վիտոնի» ԵՐԿՈՒ պայուսակ՝ տարբեր մարդկանցից:

Այս ժամանակաշրջանում մենք ունեցանք նաև մեր երկրորդ ինքնաթիռը, ինչպես նաև երկու տուն օվկիանոսի ափին, և ի լրումն այդ ամենի, Սուրբ ծննդյանը մեզ նվիրեցին երկու սև ջրաքիսի վերարկու՝ յուրաքանչյուրը 10.000 դոլար արժողությամբ:

Թույլ տվեք դադար տալ և շեշտել, որ ես չեմ փորձում պարծենալ, որովհետև այդ ամենն իմ շնորհիվ չէր: Հրացանները պարզապես հայտնվեցին: Երկու սպիտակ «Էսկալադները» պարզապես հայտնվեցին: Պայուսակները պարզապես հայտնվեցին: Ջրաքիսի մուշտակները պարզապես հայտնվեցին:

Երկու տների պատմությունն, անշուշտ, ավելի ընդգրկուն է: Տարիներ առաջ մենք սերմ էինք ցանել ծովափնյա տան համար: Ես չգիտեի, և Դրենդան ինձ չէր ասել, որ մի քանի տարի առաջ անշարժ գույքի ամսագրում տեսել էր մի տուն, որը շատ էր հավանել: Նա մատնացույց էր արել նկարը և ասել. «Տե՛ր, ես ուզում եմ այդ տունը»: Այդ ժամանակ մենք ունեինք չափից շատ այլ ֆինանսական պարտավորություններ ու նախագծեր և չունեինք կանխիկ միջոցներ Ֆլորիդայում նոր տուն ձեռք բերելու համար, բայց գիտեինք, որ ճիշտ ժամանակին այն ի հայտ կգար:

Մի անգամ, երբ վազում էի, Տերը խոսեց ինձ հետ և ասաց. *«Վաղը Դրենդային ուղարկի՛ր Ֆլորիդա՝ Ֆլորիդայի իր տունը գնելու համար»:* «Վաղը» բառի մեջ որոշակի հրատապություն կար, ուստի ես ասացի. «Շա՛տ լավ, Տե՛ր»:

Դրենդան գնաց ֆլորիդա և նայեց 25 տարբեր տներ: Տների շարքում կար մեկը, որ գրավեց Դրենդայի ուշադրությունը. կարծես այն նրանը լիներ:

Ես թռա այնտեղ, նրա հետ նայեցի այդ տունը և համաձայնեցի, որ այն իսկապես հիասքանչ էր (այս ամբողջ ժամանակահատվածում նա մոռացել էր այն օրվա մասին, երբ մատնացույց էր արել անշարժ գույքի ամսագիրը և հռչակել, որ ինքն ունենալու է այդ տունը: Այդ օրվանից երեք տարի էր անցել, և մենք երբեք անձամբ չէինք տեսել նրա մատնանշած տունը):

Մենք հայտնեցինք մեր հետաքրքրվածությունը տունը գնելու հարցում, և մի օր, երբ Օհայոյի տանը նստած ուսումնասիրում էինք պայմանագրին վերաբերող որոշ տեսչական հաշվետվություններ, Դրենդան բացականչեց. «Դա իմ տո՛ւնն է»:

Ես հանկարծակիի եկա, քանի որ մենք պայմանագրի կնքման գործընթացում էինք, և ամեն բան ավարտին էր մոտենում:

– Իհա՛րկե, դա քո տունն է,- ասացի ես:

– Դու չես հասկանում,- ասաց նա,- դա *հենց այն տունն* է, որ մատնացույց արի անշարժ գույքի ամսագրում մի քանի տարի առաջ:

Ես հիշեցի, որ անշարժ գույքի ամսագիրը, որ նա աչքի էր անցկացնում երեք տարի առաջ, նույն քաղաքում տներ էր ներկայացնում: Մի՞թե հնարավոր է, որ դա նույն տունը լիներ: Դրենդան համոզված էր, որ դա նույն տունն էր, ու նա սկսեց թվարկել տան առանձնահատկությունները, որոնք գրավել էին նրա ուշադրությունը տարիներ առաջ: Դրանք համընկնում էին այդ տան հետ: Ես որոշ հետազոտություն կատարեցի, և պարզվեց, որ տունը, որ մենք գնում ենք, իսկապես դրվել էր վաճառքի հենց այն տարի և հենց այն ժամանակ, երբ Դրենդան մատնացույց էր արել և հռչակել, որ այն իրենն է լինելու: Բայց հետո, ինչ-ինչ պատճառով,

նրա հռչակումից անմիջապես հետո տան վաճառքը հանվել էր շուկայից:

Ուսումնասիրելով տան պատմությունը՝ հասկացա, որ այս ամբողջ ժամանակահատվածում այն հանված է եղել շուկայից և միայն մի քանի օր առաջ է կրկին դրվել վաճառքի: Զարմանալի չէ, որ Սուրբ Հոգին ասաց, որ նրան վաղը ուղարկեմ Ֆլորիդա:

Մենք գնեցինք ծովափնյա այդ տունը, և Դրենդան վերջապես տեր դարձավ իր տանը, մի բան, որ նա երազել էր ամբողջ կյանքում: Այնուհետև, նույն տարում մենք ժառանգեցինք երկրորդ ծովափնյա տունը Կանադայում: Ցնցող է:

Եթե չեք նկատել, այն ամենը, ինչ Աստված ուղարկեց մեզ, բարձրակարգ էր. բարձրակարգ՝ բառիս բուն իմաստով: Մենք մի փոքր ցնցված էինք այն ամենից, ինչ տեղի ունեցավ: Բայց Տերը խոսեց ինձ հետ. *«Ես գիտեմ, որ դու տասնչորս հրացանի ԿԱՐԻՔ չունես: Ես գիտեմ, որ դու երկու սպիտակ «Էսկալադի» կարիք չունես…»,* և Նա շարունակեց թվարկել ամբողջ ցանկը:

ՆԱ ՀԻՇԵՑՐԵՑ, ՈՐ ԻՆՔՆ ԱՅՆ ԱՍՏՎԱԾՆ Է, ՈՐ ՏԱԼԻՍ Է ԱՎԵԼԻ, ՔԱՆ ԲԱՎԱԿԱՆ Է, ՈՐ ԻՆՔԸ ԿՐԿՆԱԿԻ ՉԱՓԱԲԱԺՆԻ ԱՍՏՎԱԾ Է:

Այնուհետև ասաց. *«Ես չեմ ցանկանում, որ Իմ զավակները չքավորության գիտակցում ունենան: Նրանց է պատկանում ամբողջ ունեցվածքը, և Ինձ համար հաճելի է Իմ զավակներին բարիքներ տալը»:*

Նա հիշեցրեց, որ Ինքն այն Աստվածն է, որ տալիս է ավելի, քան բավական է, որ Ինքը կրկնակի չափաբաժնի Աստված է: Այնուհետև Նա շարունակեց՝ ասելով, որ Իր ժողովուրդը բավականաչափ համարձակ չէ իր մտքերում, բավականաչափ համարձակ չէ իր երազանքներում և սահմանափակում է այն, ինչ Ինքը կարող է անել իրենց համար:

Դրենդան ու ես հանկարծակիի եկանք այն ամենից, ինչ Տերը ցույց էր տալիս: Մենք հասկացանք, որ պետք է պատմենք մարդկանց կրկնակի չափաբաժնի մասին: Կրկնակի չափաբաժին տառացիորեն չի նշանակում ամեն ինչից երկու հատ. Տերն օգտագործում էր դա՝ իմ ուշադրությունը գրավելու համար: Կրկնակի

չափաբաժին՝ նշանակում է *ավելի, քան՝ բավական:*

Աստված ասաց, որ ես պետք է սովորեցնեմ սա իմ եկեղեցուն և պետք է պատմեմ այն ամենի մասին, ինչ Նա ուղարկեց մեզ, և թե ինչպես դա կատարվեց:

Դրենդան ու ես բավականին զուսպ ենք մեր ունեցածը ցուցադրելու հարցում, որովհետև նյութական բաները կյանք չեն, և մենք երբեք չենք ցանկացել շեշտադրում կատարել նյութական բաներ ունենալու կամ դրանց հետամուտ լինելու վրա: Մենք չփնտրեցինք այդ բաները. Աստվա́ծ ուղարկեց դրանք: Այսպիսով՝ գրեթե տասնմեկ շաբաթ մենք եկեղեցում սովորեցրինք կրկնակի չափաբաժնի մասին, և ես կարծում եմ, որ դա թերևս ունեցավ ամենախոր ազդեցությունը մեր ժողովրդի ֆինանսական ոլորտում, քան որևէ այլ դասաշար, որ ես սովորեցրել էի:

Բայց գիտեք՝ ինչ: Եղան մարդիկ, որոնք հեռացան եկեղեցուց, որովհետև վիրավորվեցին այն ամենից, ինչ ես կիսեցի նրանց հետ: Նրանք մտածում էին, որ այդ հրացանների, երկու «Էսկալադի» կամ երկու ծովափնյա տան կամ երկու ինքնաթիռի կամ երկու գեղեցիկ մուշտակների կարիքը ես չունեի: Նրանք կարծում էին, որ ես պարծենում եմ և մեծ կարևորություն եմ տալիս *նյութական բաներին:*

Բայց նրանք բաց թողեցին ամենակարևորը. Աստված մեզ ցույց էր տալիս, որ Ինքն ավելին է, քան բավական է: Նրա Թագավորությունը ծածկված չէ գոյատևմամբ, ինչպես երկրային տիրույթը: Նրա Թագավորությունը թագավորություն է, որտեղ ամեն բան ավելին է, քան բավական է, և Նա հաճույք է ստանում Իր զավակների համար շռայլորեն հոգ տանելուց:

Ես ստիպված էի մարդկանց հիշեցնել, որ ե́ս չարեցի դա: Աստվա́ծ արեց, որպեսզի հաստատեր այն միտքը, որ կարևորը ոչ թե այն է, որ բոլորը պետք է թանկարժեք մեքենա վարեն, այլ այն, որ մենք դադարենք վճիռներ կայացնելուց և Նրան սահմանափակելուց: Նա ցանկանում է, որ մենք դադարենք սովորության համաձայն «ոչ» ասելուց՝ սահմանափակելով Նրան այն ամենից, ինչ ցանկանում է անել: Նա ուզում է, որ մենք իմանանք, որ Ինքը «ավելի, քան՝ բավական»-ի Աստված է:

Այս բանը հասկանալը չափազանց կարևոր է առատաձեռն լինելու մասին մեր քննարկման մեջ: Դուք պետք է ունենաք ինչ-որ բան՝ առատաձեռն լինելու համար, հատկապես եթե ուզում եք առատաձեռն լինել *ամեն* առիթով: Ես գիտեմ, որ Նա գրավեց իմ ուշադրությունը, և ես սովորեցի երբեք չամաչել Աստծո բարության համար:

Հաջորդ աշնանը տեղական հովիվներից մեկը հարցրեց, թե արդյոք կարո՞ղ է որսորդություն անել իմ հողատարածքում: Ես մարդկանց մշտապես ասում եմ, որ թույլ չեմ տալիս որսորդություն անել իմ տարածքում, մինչև երեխաներիս հետ չենք որսում մեր եղնիկներին, դրանից հետո միայն թույլ եմ տալիս մի քանիսին որսորդություն անել իմ հողատարածքում՝ նախքան որսաշրջանի ավարտը: Այդ աշուն բոլորիս եղնիկներն արդեն սառցախցիկում էին, ուստի ես հրավիրեցի այդ հովվին մեր հողատարածք:

Այն օրը, երբ նա եկավ, դիմավորեցի նրան դրսում, որպեսզի մի քանի ցուցումներ տայի այն մասին, թե որտեղ պետք է որսորդություն աներ: Ես տեսա, որ նա գործածում էր թռչունների որսի համար նախատեսված հին հրացան, ինչը նշանակում էր, որ այն ուներ արույրից ելուստ՝ նշանառության համար: Այն նախատեսված չէր եղնիկներ որսալու համար: Պետք է շատ մոտ լինես եղնիկին, որպեսզի կարողանաս դիպուկ հարված հասցնել: Բայց, իհարկե, դուք կարող եք օգտագործել այն, ինչպես ինքս եմ օգտագործել իմ որսորդական կարիերայի ընթացքում:

Բայց մինչ այնտեղ նստած խոսում էի նրա հետ, հիշեցի, որ հրացաններից մեկը, որ Աստված ուղարկել էր ինձ, եղնիկ որսալու հրաշալի հրացան էր: Իրականում, այն բարձրակարգ հրացան էր: Ես զգացի, որ Սուրբ Հոգին ասում է. *«Ինչո՞ւ այս հովվին չես նվիրում եղնիկների համար նախատեսված որսորդական այն հրացանը, որ տվել են քեզ: Դու ունես եղնիկների մի քանի այլ հրացաններ, բայց նա չունի լավ հրացան՝ որս անելու համար»:*

Ես նվիրեցի նրան այդ որսորդական հրացանը, և նա այնքան երջանիկ էր: Այդ նվերը ցույց տվեց Աստծո բարությունը և նրան լցրեց Աստծո հանդեպ քաջալերանքով:

Հիշե՛ք, թե ինչ ասացի մի քանի գլուխ առաջ. ձեր փողի և ձեր

ունեցվածքի որոշ մասը ձեզ համար չէ: Աստված ուղարկել է դա՝ մեկ ուրիշի կարիքը լրացնելու համար:

Ես այս ամենն ասացի հետևյալ նպատակով. դուք բնակվում եք առատությամբ լի Թագավորության մեջ՝ առատաձեռն Թագավորի հետ, բայց երբեք չեք վայելի այն ամենը, ինչ Թագավորությունն ունի, եթե չկոտրեք այդ աղքատության ոգին, որ դրդում է ձեզ դիզել այն, ինչ ստանում եք:

Դուք, հավանաբար, դիտել եք դիզելու համախտանիշով տառապող մարդկանց մասին հեռուստահաղորդումը, որտեղ իրականում օպերատիվ միջոցառումներ են կիրառվում: Նրանց տները լցված են այնքան շատ անպետք իրերով, որ նույնիսկ անհնար է այնտեղ քայլել: Շատ դեպքերում տունը պետք է հիմնահատակ քանդել կամ վերակառուցել, որովհետև այն գտնվում է անմխիթար վիճակում: Այսպիսին է մեր սիրտը, երբ լցված ենք ագահությամբ և ցանկանում ենք ամեն բան դիզել նեղ օրվա համար: Փողից և ունեցվածքից չպետք է ամուր կառչել:

Իրականում դժվար է առատաձեռն լինել, երբ գոյատևմամբ եք տարված: Աստված ուզում է՝ իմանաք, որ Իր տանն առատություն է, այնպես որ՝ ազա́տ զգացեք առատաձեռն լինելու համար: Ձեր առատաձեռնությունը հրավիրում է մարդկանց Աստծո Թագավորության մեջ և բացում է նրանց սիրտը՝ ընդունելու Նրա բարությունն ու առատաձեռնությունը: Հիշե՛ք, Աստծո քաղցրությունն է, որ մարդկանց առաջնորդում է ապաշխարության:

> *«Որովհետև նման է Երկնքի արքայությունը մի տանուտեր մարդու, որ առավոտ կանուխ դուրս եկավ իր այգու համար մշակներ բռնելու: Եվ մշակների հետ օրը մի դահեկանի խոսելով՝ նրանց ուղարկեց իր այգին:*
>
> *Եվ ժամը երեքին մոտ դուրս եկավ, ուրիշներին տեսավ, որ հրապարակում պարապ կանգնել էին: Նրանց էլ ասաց. «Դուք էլ գնացե՛ք այգին, և ինչ որ արժան է, կտամ ձեզ»: Նրանք էլ գնացին:*
>
> *Եվ դարձյալ ժամը վեցին և իններին դուրս գալով՝ նույնպես արավ: Եվ ժամը տասնմեկին մոտ էլ դուրս գալով՝*

ուրիշներին գտավ՝ պարապ կանգնած, և ասաց նրանց. «Ինչո՞ւ եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»:

Նրան ասացին. «Որովհետև ոչ ոք մեզ չվարձեց»:

Նրանց ասաց. «Դուք էլ գնացե՛ք այգին, և ինչ որ արժան է, կառնեք»:

Եվ երբ որ իրիկուն եղավ, այգու տերն իր տան վերակացուին ասաց. «Մշակներին կանչի՛ր և նրանց վարձքը տո՛ւր՝ հետիններից սկսած՝ մինչև առաջինները»:

Եվ ժամը տասնմեկինները գալով՝ մի-մի դահեկան առան: Առաջիններն էլ եկան և կարծեցին, թե ավելին կառնեն, և նրանք էլ մի-մի դահեկան առան: Բայց երբ որ առան, տան տիրոջից տրտնջում էին և ասում. «Այդ հետինները մեկ ժամ գործեցին, և դրանց մեզ հետ հավասար արիր, որ օրի ծանրությունը և տաքությունը քաշեցինք»:

Նա էլ պատասխանեց նրանցից մեկին և ասաց. «Ընկե՛ր, ես չեմ զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանի համաձայնեցիր: Քոնը ա՛ռ և գնա՛: Բայց ես ուզում եմ, որ այս հետինին տամ՝ ինչպես քեզ: Կամ՝ մի՞թե ես իշխանություն չունեմ անելու՝ ինչ որ ուզեմ իմ ստացվածքին. կամ թե՝ քո աչքը չա՞ր է, որ ես բարերար եմ»:

Այսպես՝ հետիններն առաջիններ կլինեն, և առաջինները՝ հետիններ...»:

– Մատթեոս 20.1-16

Այսպիսով, ի՞նչ է ասում Հիսուսն այս առակում: Նախևառաջ՝ մենք պետք է ընդունենք, որ տանտերը ներկայացնում է Հորը, և այն բերքը, որ Նա ուզում է ստանալ, սոյա կամ եգիպտացորեն չէ, այլ՝ մարդկանց հոգիները: Մշակները մենք ենք, ում Նա ուղարկում է հունձքի դաշտ: Ես հավատում եմ՝ կա երկու բան, որ Հիսուսն ուզում է, որ մենք տեսնենք: Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, թե որքան ուժգին էր օգնություն գտնելու տանտիրոջ մտադրությունը:

«Որովհետև նման է Երկնքի արքայությունը մի տանուտեր մարդու, որ առավոտ կանուխ դուրս եկավ իր այգու համար մշակներ բռնելու»:

Նա վաղ արթնանում է մշակներ գտնելու համար և օրվա ընթացքում փորձում է գտնել ցանկացածի, ով կօգնի իր դաշտում: Այս գործողության մեջ կա հրատապություն: Հունձքը հասել է, և պետք է հավաքել, այլապես այն կվնասվի: Ուշադրություն դարձրեք, որ նա մշակ է վարձում նույնիսկ մեկ ժամով՝ նախքան օրվա ավարտը:

«Եվ դարձյալ ժամը վեցին և իններին դուրս գալով՝ նույնպես արավ: Եվ ժամը տասնմեկին մոտ էլ դուրս գալով՝ ուրիշներին գտավ՝ պարապ կանգնած, և ասաց նրանց. «Ինչո՞ւ եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»:

Նրան ասացին. «Որովհետև ոչ ոք մեզ չվարձեց»:

Նրանց ասաց. «Դուք էլ գնացե՛ք այգին, և ինչ որ արժան է, կառնեք»»:

Ահա առակի խորհուրդը: Ինչո՞ւ նա վճարեց նրանց՝ սկսելով վերջիններից: Պատասխանը կարելի է գտնել 15-րդ խոսքում.

«Եվ ժամը տասնմեկինները գալով՝ մի-մի դահեկան առան: Առաջիններն էլ եկան և կարծեցին, թե ավելին կառնեն, և նրանք էլ մի-մի դահեկան առան: Բայց երբ որ առան, տան տիրոջից տրտնջում էին և ասում. «Այդ հետինները մեկ ժամ գործեցին, և դրանց մեզ հետ հավասար արիր, որ օրի ծանրությունը և տաքությունը քաշեցինք»:

Նա էլ պատասխանեց նրանցից մեկին և ասաց. «Ընկե՛ր, ես չեմ զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանի համաձայնեցիր: Քոնը ա՛ռ և գնա՛: Բայց ես ուզում եմ, որ այս հետինին տամ՝ ինչպես քեզ: Կամ՝ մի՞թե ես իշխանություն չունեմ անելու՝ ինչ որ ուզեմ իմ ստացվածքին. կամ թե՝ նախանձո՞ւմ ես, որ ես առատաձեռն եմ»» (NIV):

ՆԱԽԱՆՁՈ՞ՒՄ ԵՍ, ՈՐ ԵՍ ԱՌԱՏԱՁԵՌՆ ԵՄ:

Այս առակը կարդալով՝ կարող էինք մտածել. *«Էյ, դա արդար չէ»:* Եվ դուք իրավացի կլինեիք, երբ դրան նայեիք երկրային անեծքի համակարգում աշխատանքային ժամերի դիմաց դոլարներ վաստակելու տեսանկյունից: Բայց ինչպես արդեն ասել եմ, դա Աստծո մտածելակերպը չէ: Տանտերն ուզում էր վստահ լինել, որ նրանք, ովքեր ավելի ուշ եկան այդ օրը և անարդար կերպով չափից շատ վճարվեցին, տեսնեին իր առատաձեռնությունը և ցանկանային շարունակել աշխատել իր համար: Ավելին՝ նա ուզում էր, որ նրանք վերադառնային իրենց բոլոր ընկերների մոտ և ասեին, թե որքան էին իրենք վճարվել, և որքան առատաձեռն էր նա եղել նրանց հանդեպ: Այսպիսով՝ ո՞րն է առակի հետևությունը: Աստծո գործը մարդկանց հետ է, ու եթե դուք ներգրավվեք Նրա գործի մեջ, Նա շատ առատաձեռն է և շռայլորեն կվարձատրի ձեզ:

ԱՍՏԾՈ ԳՈՐԾԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ Է, ՈՒ ԵԹԵ ԴՈՒՔ ՆԵՐԳՐԱՎՎԵՔ ՆՐԱ ԳՈՐԾԻ ՄԵՋ, ՆԱ ՇԱՏ ԱՌԱՏԱՁԵՌՆ Է ԵՎ ՇՌԱՅԼՈՐԵՆ ԿՎԱՐՁԱՏՐԻ ՁԵԶ:

Մի՞թե հնարավոր է հեշտորեն ստանալ Աստծուց:

Հիսուսը պատմում է Աստվածաշնչի ամենազարմանալի առակներից մեկը ստանալու մասին: Գիտեմ, որ լսել եք «Անառակ որդու» առակը:

Ուզում եմ, որ կարդաք այն, այնուհետև կխոսենք դրա մասին: Մնացե՛ք ինձ հետ: Մենք գրեթե ավարտում ենք գիրքը, և ես չեմ ուզում ձեզ թողնել, մինչև չլսեք սա: Այս պատմությունը գրված է Ղուկասի Ավետարանի 15-րդ գլխում: Բավականին երկար տեքստ է, բայց խնդրում եմ, ժամանակ հատկացրեք՝ այն վերանայելու համար:

> *«Եվ ասաց. «Մի մարդ երկու որդի ուներ: Եվ նրանցից փոքրն ասաց հորը. «Հայր, տո՛ւր ինձ՝ ինչ որ բաժին կհասնի ինձ սրացվածքիցդ»»: Եվ նա ապրանքը բաժանեց նրանց:*

Եվ շատ օր չանցած՝ փոքր որդին բոլոր բաները ժողովեց, հեռու երկիր գնաց և այնտեղ իր ստացվածքը վատնեց՝ անառակ ապրելով: Եվ երբ որ բոլորը հատցրեց, սաստիկ սով եղավ այն երկրում, և ինքը սկսեց չքավորել: Եվ գնաց այն երկրի քաղաքացիներից մեկի մոտ մտավ: Եվ նա նրան ուղարկեց իր հանդը, որ խոզ արածեցնի: Եվ նա ցանկանում էր իր փորը լցնել այն եղջյուրներով, որ խոզերն ուտում էին, բայց ոչ ոք չէր տալիս նրան:

Եվ ինքն իրեն գալով՝ ասաց. «Քանի՛ վարձկաններ ունի իմ հայրը՝ հացով լցված, և ես այստեղ սովամահ կորչում եմ: Վեր կենամ, գնամ իմ հոր մոտ և նրան ասեմ. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առջև: Եվ այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Ինձ քո վարձկաններից մեկի պես արա»»: Եվ վեր կացավ, եկավ իր հոր մոտ:

Եվ դեռ որ նա հեռու էր, հայրը տեսավ նրան, և գութը շարժվեց, և վազեց, նրա վզովն ընկավ և համբուրեց նրան:

Եվ որդին ասաց նրան. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առջև և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»:

Հայրն էլ ասաց իր ծառաներին. «Առաջին պատմուճանը հանե՛ք և հագցրե՛ք նրան և մատանի դրե՛ք նրա ձեռքին և կոշիկներ՝ նրա ոտքերին: Եվ մսացու եզը բերե՛ք, մորթե՛ք, և ուտենք՝ ուրախ լինենք: Որ այս իմ որդին մեռած էր և կենդանացավ և կորած էր և գտնվեց»: Եվ սկսեցին զվարճանալ:

Եվ նրա մեծ որդին հանդում էր, և երբ որ եկավ, տանը մոտեցավ, երգերի և պար գալու ձայնը լսեց: Եվ ծառաներից մեկին կանչեց իր մոտ, հարցնում էր, թե այդ ի՞նչ է: Նա էլ ասաց նրան՝ թե եղբայրդ եկել է, և քո հայրը մսացու եզը մորթեց, որովհետև ողջ և առողջ ընդունեց նրան:

Եվ նա բարկացավ և չէր ուզում ներս մտնել, բայց հայրը դուրս եկավ, աղաչում էր նրան: Նա էլ պատասխանեց և ասաց հորը. «Ահա այսքան տարի է, որ քեզ ծառայում եմ և քո պատվերից երբեք դուրս չեմ եկել, բայց ինձ

երբեք մի ուլ չտվիր, որ իմ բարեկամների հետ ուրախ լինեի: Իսկ երբ որ այդ քո որդին եկավ, որ քո սրացված-քը պոռնիկների հետ կերավ, մսացու եզը մորթեցիր դրա համար»:

Նա էլ ասաց նրան. «Որդյա՛կ, դու ամեն ժամանակ ինձ հետ ես, և այն, ինչ որ իմն է, քոնն է: Բայց ուրախ լինել և խնդալ պետք էր, որ այս քո եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»»:

– Ղուկաս 15.11-32

Նախ՝ պետք է հասկանանք, թե ինչու կրտսեր որդին հեռացավ հոր տնից: Պատասխանն այն է, որ նա իր հոր մասին ուներ նույն սխալ պատկերացումը, ինչ՝ ավագ որդին: Հիշե՛ք, ավագ որդին ասաց, որ ամբողջ կյանքը ծառայել է հորը և նույնիսկ մի ուլ չի ստացել, որ իր ընկերների հետ ուրախանա: Ավագ եղբոր համար հայրը խիստ վերակացու էր: Այդ դեպքում գուցե հարցնեք, թե ինչու նա չհեռացավ կրտսեր եղբոր հետ: Սա միայն իմ կարծիքն է, բայց հրեական սովորության համաձայն, ավագ որդին ժառանգում էր կրկնակի բաժին, երբ հայրը մահանում էր: Կրտսեր որդուն տրված չէր այդ արտոնությունը: Ուստի, կարծում եմ, ավագ որդին ինչ-որ բան ուներ ստանալու, այդ պատճառով էլ մտածեց, որ արժե մնալ:

Կրտսեր որդին ցանկանում էր գտնել ավելի փարթամ արոտավայրեր և դուրս գալ հոր իշխանությունից, ուստի վերցրեց իր բաժին ժառանգությունը և հեռացավ: Բայց երբ հեռացավ, հայտնվեց մի աշխարհում, որին չէր սպասում: Երբ դրամները վերջացան, նա պարզեց, որ այն երկիրը, որտեղ նա փախել էր, լիովին սնանկ է: Սաստիկ սով սկսեց ամբողջ երկրում: Կերակուրի կարոտ լինելով՝ նա արեց մի բան, որը բոլորովին խորթ էր իր համար: Նա վաճառեց իրեն որպես վարձկան՝ կերակուրի դիմաց: Առաջին անգամն էր, որ նրա կյանքում ծնունդ առավ վարձկանի մտածելակերպը: Նախկինում նրա համար հոգ էին տանում նրա ով լինելու, այլ ոչ թե այն բանի համար, թե ինչ էր նա անում: Այժմ, ստիպված լինելով աշխատել, միակ գործը, որ կարողացավ գտնել, խոզերին կերակրելն էր՝ կեղտոտ ու նողկա-

լի աշխատանք հրեայի համար: Աստվածաշունչն ասում է, որ նա այնքան քաղցած էր, որ փափագում էր այն կոճոնների, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք նրան չէր տալիս: Ինչո՞ւ: Որովհետև բոլորը միևնույն նավակում էին, ինչպես ինքը՝ ընչազուրկ և գոյատևման պայքարի մեջ: Որևէ բան ծանո՞թ է ձեզ: Ինչևէ, մի օր նա ուշքի եկավ ու հիշեց, որ նույնիսկ իր հոր տան ծառաներն ունեին ավելին, քան բավական է ուտելու համար:

> *«Եվ ինքն իրեն գալով՝ ասաց. «Քանի՞ վարձկաններ ունի իմ հայրը՝ հացով լցված, և ես այստեղ սովամահ կորչում եմ: Վեր կենամ, գնամ իմ հոր մոտ և նրան ասեմ. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առջև: Եվ այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Ինձ քո վարձկաններից մեկի պես արա»»: Եվ վեր կացավ, եկավ իր հոր մոտ»:*

Գիտակցելով, որ տանը շատ կերակուր կա՝ նա վճռեց վերադառնալ հոր տուն՝ ոչ թե որպես որդի, այլ որպես ստրուկ, որպես վարձկան: Նա որոշեց հոր առջև խոստովանել իր սխալը և մեղքը և աղաչել, որ թույլ տա իրեն վերադառնալ որպես ծառա: Սակայն, երբ նա մոտեցավ իր տանը, հայրը դրսում էր: Որդուն տեսնելով՝ հայրն ընդառաջ վազեց, գրկեց ու համբուրեց նրան:

> *«Եվ դեռ որ նա հեռու էր, հայրը տեսավ նրան, և գութը շարժվեց, և վազեց, նրա վզովն ընկավ և համբուրեց նրան»:*

Հստակ պատկերացում կազմենք, թե ինչ է տեղի ունենում, որովհետև այս պատմությունը համանման է Հայր Աստծո և մեր միջև փոխհարաբերությանը: Այս որդին եկել էր ուղիղ խոզերի փարախից: Հրեական օրենքով՝ նա համարվում էր անմաքուր: Այն պահին, երբ հայրը գրկեց նրան, նույնպես դարձավ անմաքուր, բայց արեց դա պատրաստակամությամբ՝ հանուն որդու սիրո: Հիմարության համար կրտսեր որդուն հանդիմանելու և պատժելու փոխարեն՝ հայրը ծածկեց նրան ընտիր պատմուճանով: Այնուհետև մատին դրեց կնիքով մատանին, ինչը նշանակում էր, որ նրա իշխանությունը՝ որպես որդի, վերականգնվեց:

Հաջորդը՝ կոշիկներ հագցրեց, ինչը նշանակում էր, որ նա մուտք ստացավ դեպի ամբողջ կալվածք: Այս սովորույթի մասին դուք կգտնեք Հռութի 4.7-ում:

> *«Եվ Իսրայելի մեջ առաջուց այս էր ազգականության իրավունք կատարելու ու ծախու առնելու գործերի մեջ, որ ամեն բան հաստատվի, մարդը իր կոշիկը հանում էր և իր ընկերոջը տալիս, և այս Իսրայելի մեջ վկայություն էր լինում»:*

Եվ վերջում մսացու եզ մորթեցին ու նրա համար խնջույք կազմակերպեցին:

Կրտսեր որդին վերադարձավ՝ հույս ունենալով, լավագույն դեպքում, լինել վարձկան, բայց հայրը վերականգնեց նրան՝ որպես որդի:

> *«Եվ որդին ասաց նրան. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առջև և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»:*
>
> *Հայրն էլ ասաց իր ծառաներին. «Առաջին պատմուճանը հանե՛ք և հագցրե՛ք նրան և մատանի դրե՛ք նրա մատին և կոշիկներ՝ նրա ոտքերին: Եվ մսացու եզը բերե՛ք, մորթե՛ք, և ուտենք՝ ուրախ լինենք: Որ այս իմ որդին մեռած էր և կենդանացավ և կորած էր և գտնվեց»: Եվ սկսեցին զվարճանալ»:*

Բայց ես ուզում եմ, որ դուք տեսնեք պատմության հաջորդ մասը:

> *«Եվ նրա մեծ որդին հանդում էր, և երբ որ եկավ, տանը մոտեցավ, երգերի և պար գալու ձայնը լսեց: Եվ ծառաներից մեկին կանչեց իր մոտ, հարցնում էր, թե այդ ի՞նչ է: Նա էլ ասաց նրան, թե եղբայրդ եկել է, և քո հայրը մսացու եզը մորթեց, որովհետև ողջ և առողջ ընդունեց նրան:*
>
> *Եվ նա բարկացավ և չէր ուզում ներս մտնել, բայց հայրը դուրս եկավ, աղաչում էր նրան: Նա էլ պատասխա-*

նեց և ասաց հորը. «Ահա այսքան տարի է, որ քեզ ծառայում եմ և քո պատվերից երբեք դուրս չեմ եկել, բայց ինձ երբեք մի ուլ չտվիր, որ իմ բարեկամների հետ ուրախ լինեի: Իսկ երբ որ այդ քո որդին եկավ, որ քո ստացվածքը պոռնիկների հետ կերավ, մսացու եզը մորթեցիր դրա համար»:

Նա էլ ասաց նրան. «Որդյա՛կ, դու ամեն ժամանակ ինձ հետ ես, և այն, ինչ որ իմն է, քոնն է: Բայց ուրախ լինել և խնդալ պետք էր, որ այս քո եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»»:

Երբ ավագ որդին մոտեցավ տանը, հրաժարվեց ներս մտնելուց, հենց որ իմացավ, թե ինչ է կատարվում: Ուշադրություն դարձրեք, թե ինչ նա ասաց. *«Ահա այսքան տարի է, որ **ստրուկի պես աշխատում եմ** քեզ համար և քո պատվերից երբեք դուրս չեմ եկել, բայց ինձ երբեք մի ուլ չտվիր, որ իմ բարեկամների հետ ուրախ լինեի»* (Ղուկաս 15.29, NIV)*:* Նա ասում էր, որ իր հայրը խիստ վերակացու էր, և ինչ անվանեց իրեն. ստրուկ: Իսկ ինչ անվանեց նրան հայրը 31-րդ խոսքում. «Որդիս»: Ինչ եմ ուզում ասել այս ամենով:

Դուք մեծացել եք Աստծո մասին նույն մտածելակերպով, ինչ ունեին այս երկու տղաները իրենց հոր մասին՝ համարելով, որ նա խիստ վերակացու է, և նրան ծառայելու մեջ ոչ մի վարձք չկա: Կրոնը սովորեցրել է, որ դուք պետք է աշխատեք Աստծո համար, որպեսզի ընդունվեք: Բայցևայնպես, կրտսեր որդու պատկերացումն իր հոր մասին փոխվեց, երբ հայրը հետ ընդունեց նրան առանց պատժի և ընդունեց որպես որդի և ոչ թե ստրուկ: Ավագ որդու փոխհարաբերությունը հոր հետ հիմնված էր այն բանի վրա, ինչ նա անում էր, հետևաբար նա ստրուկի պես աշխատում էր նրա համար և մշտապես փորձում էր ամեն բան ճիշտ անել: Երբ ձեր ինքնությանը նայեք ձեր արածի պրիզմայի միջով, ապա մշտապես կթերանաք և սխալ կգնահատեք ձեզ շրջապատողներին՝ համարելով, որ նրանք երբեք ուրախ չեն ձեզ հետ: Բայց, ճիշտն ասած, ավագ եղբայրն էր խիստ վերակացու ինքն իր համար, քանի որ չկարողացավ ընդունել հոր բարությունը: Երբ նա

հորը մեղադրում է անարդար լինելու մեջ և ասում, որ հայրն իրեն նույնիսկ մի ուլ չի տվել ընկերների հետ կիսելու համար, հայրն ասում է հետևյալը.

> *«Որդյա՛կ, դու ամեն ժամանակ ինձ հետ ես, և այն, ինչ որ իմն է, քո՛նն է»:*

Նա չասաց՝ ի՛մ ստրուկ: Նա նրան անվանեց որդի: Որդին կալվածքի համասեփականատեր է. նա ընտանիքի մաս է: Ստրուկը չունի ժառանգություն: Հասկանո՞ւմ եք, ավագ որդուն արդեն հասանելի էր այն ամենը, ինչ կալվածքը ներառում էր: Բայց հոր մասին խեղաթյուրված պատկերացումը և ինքն իր մասին սխալ տեսանկյունը թույլ չտվեցին նրան հանգստանալ և վայելել այն, ինչն արդեն իրենն էր, որովհետև նա իրեն դիտում էր որպես վարձկան:

Ինչո՞ւ այսքան ժամանակ տրամադրեցի՝ այս մասին խոսելու համար: Որովհետև վարձկանները շատ դժվարությամբ են կարողանում Աստծուց ստանալ: Նրանք մշտապես մտածում են, որ պետք է վաստակեն Նրա բարեհաճությունը, և քանի որ նրանք թերանում են, ամաչում են, վախենում և անարժան զգում՝ Հորից որևէ բան ստանալու: Մինչև չուղղեք ձեր մասին այս տեսանկյունը, երբեք չեք կարողանա հեշտորեն ստանալ Հորից: Եվ հիշե՛ք, մենք պետք է կարողանանք հեշտորեն ստանալ, եթե պատրաստվում ենք լինել առատաձեռն՝ ինչպես մեր Հայրը:

Դուք չեք կարող վաստակել ձեր ճիշտ դիրքն Աստծո մոտ. դա սիրո պարգև է, որ տրվում է ձեզ: Ինձ դուր է գալիս այն, ինչ գրված է Մատթեոսի 3.16,17 խոսքերում:

> *«Եվ մկրտվելուց հետո Հիսուսը շուտով դուրս եկավ ջրից: Եվ ահա երկինքը բացվեց Նրա համար, և Նա տեսավ Աստծո Հոգին, որ վայր էր իջնում աղավնու պես և գալիս Նրա վրա: Եվ ահա երկնքից ձայն եկավ, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի որդին, Որին Ես հավանեցի»»:*

Սա այն պահն էր, երբ Հիսուսը սկսում էր Իր ծառայությունը: Նա դեռ ոչինչ չէր արել Աստծո գովասանքին արժանանալու հա-

մար, բայց ուշադրություն դարձրեք, թե ինչ ասաց Աստված. Նա սիրում էր Նրան և հավանում էր:

Հիշո՞ւմ եք երկու ավազակներին, որոնք խաչվում էին Հիսուսի հետ: Մեկն ասաց. «Հիշի՛ր ինձ, երբ գաս Քո թագավորությունով»: Հիսուսը պատասխանեց. «Ճշմարի՛տ ասում եմ քեզ, դու այսօր Ինձ հետ դրախտում կլինես»: Ի՞նչ արեց նա՝ դրան արժանանալու համար: ՈՉԻՆՉ:

Երբ կանչում ենք Հիսուսի անունը, Աստվածաշունչն ասում է, որ մենք վերստին ծնվում ենք և խավարի թագավորությունից տեղափոխվում Աստծո Թագավորություն: Ի՞նչ արեցինք՝ դրան արժանանալու համար: ՈՉԻՆՉ:

Ավարտելով այս գլուխը՝ խնդրում եմ, հիշե՛ք, որ ես արժանի չէի այն ամենին, որ Աստված ուղարկեց ինձ այդ տարի: Նա փորձում էր օգնել ինձ հասկանալու, որ ես ստացա ամբողջ Թագավորությունը, երբ կանչեցի Հիսուսի անունը: Հարկ չկա, որ ես վաստակեմ այն: Ես պարզապես պետք է ընդունեմ Նրա բարությունն ու առատաձեռնությունը: Հենց որ կարողանաք ընդունել Նրա առատաձեռնությունը, կկարողանաք առատաձեռն լինել Նրա բարությամբ:

ԳԼՈՒԽ 11

ԽՈՍՏՈՒՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՌԱՏԱՁԵՌՆ ԵՆ

Բիլը և կինը՝ Էյփրիլը, 14 տարի է՝ զբաղվում են ջրմուղագործության ընտանեկան փոքր բիզնեսով: Որպես «Հավատքի կյանք» եկեղեցու անդամներ՝ նրանք տեսել են եկեղեցու աճը, որ տեղի է ունեցել տարիների ընթացքում, ինչպես նաև ականատես են եղել հաղթանակի բոլոր պատմություններին: Ուստի, երբ նրանք իմացան, որ պատրաստվում ենք ընդլայնել «Հավատքի կյանք» եկեղեցին, ավելի մեծ հասարակական ազդեցություն ունենալու նպատակով, անմիջապես համաձայնեցին մասնակցություն ունենալ այդ գործին:

Էյփրիլն ասաց, որ պատրաստ էր տալու 10.000 դոլար ընդլայնման ծրագրի համար, բայց լիովին ապշած էր, երբ Բիլը տուն եկավ մթերային խանութից և ասաց, որ Տերն ասել է տալ ոչ թե 10.000, այլ՝ 75.000 դոլար:

Նրանք գաղափար չունեին, թե ինչպես էր դա հնարավոր, բայց Էյփրիլը համաձայնեց տալ 75.000 դոլար: Կրկնեմ, նրանք չունեին գումար կամ որևէ գաղափար, թե որտեղից էր գալու այդ գումարը:

Մի քանի շաբաթ անց նրանք զանգ ստացան քաղաքային ջրի վարչությունից, որը տեղեկացրեց, որ հիմնանորոգման նախագիծ է իրականացնում և ուզում է իմանալ, թե արդյո՞ք հետաքրքրված չեն դրանով: Նրանք համաձայնեցին հայտ ներկայացնել և ձեռնամուխ եղան անհրաժեշտ իրավական քայլերին ու թղթաբանական աշխատանքին: Էյփրիլն ասաց, որ պայմանագիրը 100

էջից ավելի էր, և իրենք պետք է ստորագրեին նաև պարտավորագիր: Այդ ամենն ավարտին հասցնելը բավականին բարդ գործընթաց էր, բայց նրանց հաջողվեց դա անել: Նրանք պարզեցին, որ միակ ընկերությունն էին, որ հայտ էր ներկայացրել նախագծի համար, և գաղափար չունեին, թե ինչպես կամ ինչու էին հենց իրենց հետ կապ հաստատել:

Երբ ներկայացրին պայմանագիրը, քաղաքապետարանը կանչեց նրանց և ասաց, որ իր կարծիքով նրանք չափազանց փոքր ընկերություն են այդ աշխատանքը կատարելու համար, քանի որ աշխատանքը պետք է իրականացվեր 200 տներում՝ ընդամենը 75 օրում: Բայց որոշ քննարկումից հետո նրանք համոզեցին քաղաքապետարանին, որ կարող են կատարել այդ առաջադրանքը:

Բիլն ասում է, որ դա «բոլորը միասին» ծրագիր էր, որում թիմն աշխատում էր մինչև ուշ գիշեր, ինչպես նաև շաբաթ օրերին: Բայց գիտե՞ք՝ ինչ: Նրանք ժամանակին ավարտեցին այն և կարողացան առատաձեռնորեն տալ 75.000 դոլար եկեղեցու ծրագրի համար, ինչպես նաև ընթացքում մարել ամբողջ սպառողական պարտքը: Նրանք ցնցված էին:

Հասկանո՞ւմ եք, Աստված ուներ ավելի մեծ ծրագիր Բիլի և Էյփրիլի համար, քան նրանք ունեին իրենց համար: Նա գիտեր, թե ինչպիսին էր նրանց սիրտը Իր հանդեպ, բայց ցանկանում էր լայնացնել նրանց սահմանները, ընդլայնել նրանց կարողությունը:

Արդեն իսկ հավանություն ստանալով կառավարության պատվերով իրականացվող աշխատանքների համար և հաջողությամբ ավարտելով քաղաքի համար նախատեսված պայմանագրային աշխատանքը՝ այժմ նրանց առջև լայն դուռ էր բացված՝ ապագայում ավելի խոշոր պայմանագրերի համար:

Աստված սիրում է ընդլայնել մարդկանց սահմանները: Նա գիտի մեր ներուժը, բայց ինքներս հաճախ չենք գիտակցում մեր սեփական ներուժը և սովորաբար մի փոքր հրման կարիք ենք ունենում: Սա օրինաչափություն է, որին պետք է վարժվեք:

«Որովհետև ինչպես մի մարդ, որ օտար երկիր էր գնում, իր ծառաներին կանչեց և իր ունեցածը նրանց

հանձնեց: Եվ մեկին հինգ քանքար տվեց և մյուսին՝ երկու, և մյուսին՝ մեկ, յուրաքանչյուրին իր կարողության չափով, և շուտով գնաց: Եվ այն հինգ քանքար առնողը գնաց, նրանցով բան արեց և ուրիշ հինգ քանքար էլ շահեց: Այնպես էլ նա, որ երկուսն առավ, ուրիշ երկուսն էլ շահեց: Իսկ այն մեկն առնողը գնաց, գետինը փորեց և իր տիրոջ արծաթը թաքցրեց»:

– Մատթեոս 25.14-18

Մենք կարդացել ենք այս առակը, բայց ուզում եմ մատնանշել մի բան, որին ուշադրություն չենք դարձրել:

Նկատեք, որ երբ տերն իր ծառաներին առաջադրանք տվեց, գրված է, որ առաջադրանքները տրվեցին «յուրաքանչյուրին՝ իր կարողության չափով»: Հինգ քանքար ստացողին վստահվեց հինգ քանքար, ինչը նշանակում է, որ նա ընդունակ էր տնօրինելու հինգ քանքար: Եթե նա ունենար ավելի մեծ կարողություն կամ հնարավորություն, տերը նրան ավելին կտար: Նույնը վերաբերում է մյուս երկու ծառաներին:

Բայց ահա, թե ինչ կատարվեց: Հինգ քանքար ունեցողն ավելացրեց քանքարները՝ հասցնելով տասի: Այդ ընթացքում ի՞նչ տեղի ունեցավ: Պարզ բառերով ասած՝ նրա կարողությունը կամ հնարավորությունը հինգերորդ մակարդակից հասավ տասներորդ մակարդակի: Պատասխանատվություն և կառավարում ստանձնելու նրա կարողությունն ավելացավ: Նա շատ ավելի արժեքավոր դարձավ տիրոջ համար և իրեն դրեց հետագա առաջխաղացման դիրքում:

Այժմ, տեսնենք տիրոջ իմաստությունը: Նա գիտեր հինգ քանքար ունեցող ծառայի բնավորությունը: Նա գիտեր, որ ծառան ուներ ներուժ՝ այդ մակարդակին հասնելու համար: Չնայած տերը տվեց նրան հինգ քանքար, որը նրա կարողության մակարդակն էր տվյալ պահին, բայց այն առաջադրանքը, որ ծառան սկսեց հինգ քանքարով, կբերեր ավելի մեծ հունձք և կիրեր նրան դեպի կառավարման հնարավորության նոր մակարդակ:

Տերը գիտեր, որ իր ծառային ավելի արժեքավոր դարձնելու միակ միջոցը թույլ տալն էր, որ նա լայնացներ իր սահմանները

և բացահայտեր իր կարողությունը: Այս նույն գործընթացն է, որ Աստված օգտագործում է՝ մեզ ավելի արժեքավոր դարձնելու և մեր կոչմանը նախապատրաստելու համար:

> *«Քիչ բանի մեջ հավատարիմը, շատ բանի մեջ էլ հավատարիմ է, և քիչ բանի մեջ անիրավը, շատ բանի մեջ էլ անիրավ է»:*
>
> – Ղուկաս 16.10

Ինչպես ասացի նախորդ գլուխներից մեկում, չկան փոքր առաջադրանքներ: Դուք աճելու եք դրանցից յուրաքանչյուրի միջով, և յուրաքանչյուրն ավելացնելու է ձեր կարողությունը հաջորդ առաջադրանքը կատարելու համար:

Ինքս բազմիցս անցել եմ այս ընթացքով, և ամեն անգամ գայթակղվում եմ այս մտքով. *«Ո՛չ, ես չեմ կարող սա անել: Ես չգիտեմ ինչպես անել, կամ՝ ես չունեմ ժամանակ»:* Բայց ամեն անգամ էլ ասում եմ. «Այո՛, ես լայնացնում եմ իմ սահմանները», և ավելի ընդունակ եմ դառնում իմ ներուժին հասնելու համար:

Մարդիկ կարող են նայել իմ կյանքին ու մտածել. *«Օ՜, հավանաբար այնքան հեշտ է, երբ ազատ ես պարտքերից, հաղորդաշար ես հեռարձակում հեռուստատեսությամբ, ունես անձնական օդանավ: Ինչպիսի՜ կյանք»:* Այո՛, համաձայն եմ, ինչպիսի՜ կյանք. դա հրաշալի և փառավոր կյանք է: Բայց դուք չգիտեք, թե ինչպես է իմ կյանքը դարձել այսպիսին: Դուք չգիտեք, թե ինչպիսի հաստատակամություն է պահանջվել, շատ անգամներ ծայրահեղ ճնշման ներքո, կարողության այս մակարդակին հասնելու համար:

Եվ ես շարունակում եմ աճել, իսկ Աստված շարունակում է տալ ինձ առավել մեծ առաջադրանքներ: Ես զգում եմ, որ մշտապես լայնացնում եմ իմ սահմանները ավելի մեծ ծրագրերով, որոնց իրականացման համար ավելի շատ գումար է անհրաժեշտ: Բայց ես չեմ փոխանակի այդ ճնշումը (և երբեմն քաոսը) աշխարհի հետ, որովհետև այդ համակարգի միջոցով է Աստված մարզում ինձ՝ օգնելով իրականացնել այն ամենը, ինչի համար կանչված եմ:

Եթե կարողանայի տալ ձեզ մեկ խորհուրդ, ապա դա կլիներ հետևյալը. ՄԻ՛ ՀԱՆՁՆՎԵՔ: Թո՛ւյլ տվեք, որ Աստված լայնացնի ձեր սահմանները՝ դարձնելով այն անձնավորությունը, որ սահմանված եք լինելու:

Աստված միշտ հասնում է Իր նպատակին: Նա երբեք չի ձախողվում: Ձեր ապագան ձեր առջև է, և դուք պետք է համառելով առաջ գնաք:

Թույլ կտա՞ք, որ Աստված լայնացնի ձեր սահմանները:

Չորեքշաբթի երեկոյան աղոթքի ծառայության էի: Դուստրս առաջնորդում էր աղոթքը, երբ հանկարծ կանգ առավ, նայեց ինձ և սկսեց մարգարեանալ: Ահա թե ինչ ասաց.

> *«Տերն ասում է. «Հունձքը չափազանց մեծ է քեզ համար: Ես լայնացնում եմ քո սահմանները: Միայն Իմ Հոգով կարող ես հասկանալ, թե ինչ է լինելու: Քայլ կանեմ, թույլ կտամ, որ առաջնորդեմ քեզ դժվար բաների մեջ, որոնք վեր են քո հասկացողությունից՝ անհնարինի մեջ»»:*

Ես մտածեցի. *«Օ՜, ո՛չ, ես գիտեմ, թե ինչ է սա նշանակում»:* Դա առաջին անգամը չէր:

Ես գնահատում եմ այն փաստը, որ Աստված հարցնում է ինձ՝ արդյոք թույլ կտամ, որ առաջնորդի ինձ դժվար բաների, անհնարին բաների մեջ: Ես գիտեմ, որ դրանք դառնում են հիասքանչ պատմություններ, երբ անցնում ես դրանց միջով, և Աստված միշտ հայտնում է Իրեն:

Բայց գիտեմ նաև սահմանները լայնացնելու ցավը, այն գինը, որ պետք է վճարես, որպեսզի գնաս այնտեղ, որտեղ երբեք չես եղել: Բայց... և սա մեծ ԲԱՅՑ է, գիտեմ նաև Աստծո բարությունը և Նրա առաջխաղացման համակարգը, ուստի անմիջապես ասացի՝ ԱՅՈ՛:

Աստված ցանկանում է դուրս բերել այն ներուժը, որ դրել է ձեր մեջ: Դա է միակ ճանապարհը ձեր կոչմանը հասնելու համար: Նա ստիպված է լայնացնել ձեր սահմանները: Ինչպե՞ս է Աստված լայնացնում մեր սահմանները: *Ճնշման միջոցով:*

Եթե փչում եք փուչիկը և օդը դուրս թողնում, այն ձգվում է, ավելի մեծանում: Նույնը կատարվում է ձեզ և ինձ հետ: Երբ ենթարկվում ենք ճնշման և չենք հանձնվում, մեր կարողությունը մեծանում է: Կարողություն՝ նշանակում է ավելի մեծ ծրագրեր և, իմիջիայլոց, ավելի մեծ ստուգումներ: Հաճելի է խոսել առատաձեռն լինելու մասին, քանի դեռ Աստված չի ասում տալ 100.000 դոլար, կամ՝ սիրելի մեքենան: Ձեր վստահությունն Աստծո հանդեպ պետք է աճի, պետք է աճի նաև ձեր կարողությունը:

Երբ այդ ծառայության ժամանակ Աստծուն ասացի՝ այո՛, դրանից մի քանի շաբաթ անց հասկացա, թե ինչի մասին էր Նա խոսում: Մեր հեռուստահաղորդումը եթեր էր հեռարձակվում շաբաթական մեկ անգամ, և մեզ առաջարկեցին հեռարձակվել *ամենօրյա* ռեժիմով: Դա հրաշալի էր հնչում, բայց նման փոփոխությունը մի քանի հարցեր էր առաջ բերում: Առաջին՝ մեր եթերաժամանակի արժեքը անմիջապես բարձրանալու էր 500 %-ով, իսկ մենք հազիվ էինք կարողանում վճարել շաբաթական սակագինը: Երկրորդ՝ մենք ստիպված էինք լինելու պատրաստել և խմբագրել շաբաթական հինգ հաղորդում, իսկ մենք չունեինք հեռուստատեսային բաժին: Այդ ժամանակ մենք շաբաթական մեկ հաղորդում էինք մատակարարում այն ընկերությանը, որը գալիս և մեկ շաբաթում ձայնագրում էր չորս հաղորդում ընթացիկ ամսվա համար: Ամբողջ աշխատանքն այդ ընկերությունն էր անում՝ սկսած հաղորդումները խմբագրելուց մինչև դրանք հեռուստատեսային ցանց ուղարկելը: Բայց հետո հասկացա, որ այդ ամենը պետք է տեղափոխել տուն, որպեսզի կարողանայինք վերահսկել: Իսկ ավելի մեծ խնդիրն այն էր, որ Դրենդան ու ես չգիտեինք ինչպես ստեղծել հեռուստատեսային բաժին: Բայց մեծ ջանքերի շնորհիվ մեզ հաջողվեց դա անել:

Փողի տեսանկյունից՝ մենք ավարտին էինք հասցնում «Հիմա» կենտրոնի՝ եկեղեցու ուսումնական համալիրի վերանորոգումը, և լրացուցիչ գումար չկար հեռուստատեսային բաժին ստեղծելու համար: Հեռուստաարտադրության տեսանկյունից՝ անհրաժեշտ էր գնել նկարահանող սարքավորումներ և վարձել համապատասխան աշխատակազմ: Լինում էին օրեր, երբ ամեն բան

անհնարին էր թվում: Բայց Աստված հավատարիմ էր և շարունակում էր քաջալերել Դրենդային ու ինձ, և մենք հրելով առաջ էինք շարժվում:

Մեր ամենամեծ խոչընդոտն ի հայտ եկավ մոտավորապես չորս ամիս անց, երբ իմացանք, որ եթերաժամանակի համար կես միլիոն դոլարի հաշիվ ունենք փակելու: Դա հատկապես ծանր էր այն պատճառով, որ մեր հեռուստահաղորդումն ուներ *«Ֆինանսների կարգավորում»* անվանումը:

Ես մտածում էի՝ կկարողանա՞նք մնալ հեռուստատեսության մեջ, թե՞ ոչ: Ես զգում էի, որ չէի կարողանա ազնվությամբ շարունակել, եթե չփակեի եթերաժամանակի հաշիվը: Այդ ժամանակ ստիպված էի պայքարել բազմաթիվ կասկածների դեմ: Բայց կրկին, Աստված հավատարիմ է, իսկ Դրենդան այնպիսի քաջալերանք էր ինձ համար:

Այդ շաբաթ երազում Աստված ցույց տվեց, որ բոլոր հաշիվները կփակվեն միանվագ, ինչը, կասեի, որ բնականում անհնար էր: Բայց այդ շաբաթավերջին եկեղեցին ստացավ ամբողջ 500.000 դոլարը. եթերաժամանակի հաշիվները փակվեցին, և այդ ժամանակից ի վեր դրանք ընթացիկ են:

Դա անհավանակա՞ն ճամփորդություն էր:

Մենք փոխվեցինք՝ անցնելով այդ ընթացքը: Այժմ հեռարձակում ենք *երկու* ամենօրյա հաղորդում և միլիոններ ծախսում Ավետարանը տարածելու համար: Մենք հետ ենք նայում այն ամենին, ինչին բախվել ենք, և դա այնքան էլ մեծ չի թվում, որքան այն ժամանակ էր: Միշտ պետք է հիշեք այն, ինչ սովորեցինք առաջին գլխում. Աստծո շնորհքը գործում է ձեզ հետ: Այս տարիներին Աստծո հետ քայլելով՝ ես իսկապես հասկացա, թե ինչու է Պողոսի թղթերի մեծ մասը սկսվում հետևյալ խոսքերով.

«Շնորհք և խաղաղություն ձեզ՝ Աստված մեր Հորից և Տեր Հիսուս Քրիստոսից»:

Մենք պետք է հիշենք, որ մենակ չենք: Նրա շնորհքը՝ այդ գերբնական զորությունը, գործում է մեր կյանքում: Իսկապես խիզախություն է հարկավոր ասելու՝ այո՛, և քայլ անելու դեպի ան-

հայտը, բայց արժե դա անել. ես կարող եմ վկայել դա:

Դրենդան ու ես շրջագայել ենք աշխարհով՝ քարոզելով Ավետարանը: Մեր աչքերի առջև տեղի են ունեցել բոլոր հրաշքները, որ արձանագրվել են Նոր կտակարանում: Տեսել ենք, թե ինչպես են փոխվել հազարավոր մարդկանց կյանքեր, և ճաշակել ենք երկրի բարիքը: Չկա ավելի լավ տեղ, քան նպատակը:

Իմ աղոթքն է, որ դուք ավելանաք ամեն բարի գործի մեջ, որ Աստված տալիս է ձեզ, և հիշեք, թե որքան կարևոր է առատաձեռն լինելը:

Ավարտին՝ ուզում եմ ներկայացնել իմ ամենասիրելի Սաղմոսներից մեկը.

> *«Ալելուիա: Երանելի է այն մարդը, որ Տիրոջից վախենում է և Նրա պատվիրանները շատ հավանում է: Նրա զավակը զորավոր կլինի երկրի վրա. ուղիղների ցեղը կօրհնվի: Ապրանք և հարստություն կլինի նրա տանը, և նրա արդարությունը կմնա հավիտյան: Խավարի մեջ լույս է ծագում ուղիղների համար. ողորմած, գթած և արդար է: Երանի՜ այն մարդուն, որ ողորմած է և փոխ է տալիս և իր բանը շինում է իրավունքով, որովհետև նա տեղից հավիտյան չի շարժվի. հավիտենական հիշատակի համար կլինի արդարը: Չար համբավից չի վախենա. նրա սիրտը պատրաստ է, որ Տիրոջը հուսա: Նրա սիրտը հաստատված է և չի վախենա, մինչև որ նայի իր նեղիչների վրա: Նա փռեց և աղքատներին տվեց. նրա արդարությունը կմնա հավիտյան. նրա եղջյուրը կբարձրանա փառքով: Ամբարիշտը կտեսնի և կբարկանա, իր ատամները կկրճտացնի և կհալվի. ամբարիշտների ցանկությունը կկորչի»:*
>
> – Սաղմոս 112.1-10

Ինձ դուր է գալիս այն մասը, որտեղ ասվում է, որ ամբարիշտները կբարկանան: Վերջին խոսքը միշտ Աստծունն է: Հաջողությունը միշտ էլ ամենամեծ վրեժխնդրությունն է:

Եթե գիտեք իմ պատմությունը, ապա կիմանաք, որ ավագ

դպրոցի քննությունից կտրվել եմ 1.3 միջին միավորով: Երբ Աստված կանչեց ինձ քարոզելու և ասաց, որ սովորեմ քոլեջում, ես անհամբեր չէի սպասում դրան:

Առաջին տարին՝ անգլերենի դասին, ես պետք է ռեֆերատ գրեի: Իմ դասախոսը հետ վերադարձրեց աշխատանքս, որի առաջին էջին մի մեծ «F» («անբավարար» գնահատական) էր գրված՝ հետևյալ նշումով. «Մի՞թե հնարավոր է, որ դուք նույնիսկ ավագ դպրոց եք հաճախել»: Ես ստիպված էի ուսուցիչ վարձել, որպեսզի օգներ ինձ սովորելու այն, ինչը երբեք չէի սովորել ավագ դպրոցում: Երբ լույս տեսավ իմ առաջին գիրքը, ես էլեկտրոնային նամակ ստացա անգլերենի դասախոսից: Նամակում գրված էր. «Մի՞թե հնարավոր է, որ սա այն նույն Գարի Կիսին է, ով սովորում էր իմ դասարանում»: Նա ցնցված էր, որ ես գիրք էի գրել:

Հե՛յ, թող Աստված և դուք ցնցեք բոլոր ձեր ընկերներին:

Մի անձնավորություն, որի հետ սովորել էի ավագ դպրոցում, մի օր կանգ առավ իմ ընկերության գրասենյակի մոտ և ասաց. «Ես պարզապես չեմ հասկանում: Գարին դուրս մնաց ավագ դպրոցից, իսկ հիմա հեռուստատեսությամբ ելույթ է ունենում աշխարհով մեկ»:

ՍՈՎՈՐԵ՛Ք, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ, ԵՎ ԴՈՒՔ ԿՎԱՅԵԼԵՔ ԱՅՆ ՀՐԱՇԱԼԻ ԿՅԱՆՔԸ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ԽՈՍՏԱՑԵԼ Է:

Ես սիրում եմ այսպիսի պատմություններ, և Աստված նույնպես սիրում է այսպիսի պատմություններ: Այնպես որ՝ հիշե՛ք, ձեր պատմությունը չի ավարտվել: Ջա՛նք թափեք առատաձեռն լինելու ամենուրեք, քանի որ դուք ներկայացնում եք Աստծո սիրտը: Սովորե՛ք, թե ինչպես է Թագավորությունը գործում, և դուք կվայելեք այն հրաշալի կյանքը, որ Աստված խոստացել է:

– Գարի Կիսի

«Որովհետև այս գրքի ծառայությունը ոչ թե միայն սուրբերի պակասությունն է լրացնում, այլև շատերի գոհությունը շատացնում է Աստծո համար: Որ այս ծառայության փորձով Աստծուն փառավորեն ձեր՝ Քրիստո-

սի Ավետարանին հնազանդ դավանության համար, և այն առատաձեռնության համար, որ կիսում եք նրանց և ամենի հետ: Եվ ձեզ համար նրանց աղոթքով, նրանց սրտերը կփափագեն ձեզ՝ Աստծո այն անգերազանցելի շնորհքի համար, որ ձեզանում է: Եվ շնորհակալություն Աստծուն Նրա անպատմելի պարգևի համար»:

– Բ Կորնթացիների 9.12-15

Եթե ցանկանում եք իմանալ ավելին «Ֆորվարդ Ֆայնենշլ Գրուպ» (Forward Financial Group) ընկերության կամ ապահով ներդրումների մեր ռազմավարությունների մասին, այցելե՛ք forwardfinancialgroup.com կամ զանգե՛ք 1-(888)-397-3328 հեռախոսահամարով:

Եթե ցանկանում եք իմանալ ավելին մեր «Ֆինանսական հեղափոխության» համաժողովների մասին, կամ եթե ցանկանում եք համաժողով անցկացնել, զանգե՛ք մեզ (740) 964-7400 համարով և խնդրե՛ք վարչական անձնակազմին:

Գարի Կիսիի
«Ձեր ֆինանսական հեղափոխությունը»
գրքաշարի գրքերը

Համաձայնության զորությունը
Հանգստի զորությունը
Մարտավարության զորությունը
Մատակարարման զորությունը

Աստված ցանկանում է, որ դուք օրհնված լինեք և բարգավաճեք, որպեսզի կարողանաք առատաձեռն լինել ամեն առիթով:

Դուք երբեք ազատ չեք լինի, մինչև ֆինանսապես ազատ չլինեք: Եվ ինչպես Դրենդան ու ես ասել ենք վերջին 30 տարիներին, դուք երբեք չեք բացահայտի, թե ով եք իրականում, և չեք քայլի դեպի ձեր կյանքի հոգևոր նպատակը, մինչև չկարգավորեք ձեր ֆինանսական բնագավառը:

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ

Ես ապացուցել եմ դա, և նույնն արել են հազարավոր մարդիկ: Աստծո շնորհքը հասանելի է՝ ձեզ օգնելու համար: Կան բաներ, որոնք դուք կանչված եք անելու, սակայն առանց ֆինանսների երբեք չեք կարողանա իրականացնել դրանք: Դուք պետք է ֆինանսական ազատություն ստանաք ոչ միայն ձեզ և ձեր ընտանիքի համար, այլև այն նպատակով, որ մարդիկ կարողանան տեսնել, թե ինչպես է Աստծո Թագավորությունը գործում ձեր կյանքում:

Մարդիկ պատասխաններ են փնտրում: Նրանք իրական բան են փնտրում: Նրանք հուսահատորեն կարիք ունեն տեսնելու Թագավորությունը, այլ ոչ թե կրոն:

Աստված բարի է և առատաձեռն: Երբ մենք առատաձեռն ենք, կիսում ենք Աստծո սիրտը մարդկանց հանդեպ: Ինչպես մի կում սառը ջուրը՝ սաստիկ շոգին, այնպես էլ առատաձեռն լինելը սփոփանք և հույս է բերում աղքատության անապատում գտնվող աշխարհին:

Սա Գարի Կիսիի հեղինակած «Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարի հինգերորդ և վերջին գիրքն է, որում կբացահայտեք, թե ինչպես կարող եք համագործակցել Աստծո հետ Նրա առաջադրանքներում և վերապրել հաջողության անհավանական նոր մակարդակներ:

Կարդալով այս ուշագրավ գիրքը՝ ձեռք բերեք հստակ հասկացողություն առատաձեռնության վերաբերյալ Թագավորության հզոր սկզբունքի մասին և իմացեք, թե ինչպես է այն գործում: Գիրքը լի է թարմ հայտնություններով, Աստծո Խոսքից բերված ազդեցիկ օրինակներով, ինչպես նաև Գարիի և այն մարդկանց անձնական ոգեշնչող պատմություններով, որոնք առատաձեռնության զորությունը կիրառել են իրենց կյանքերում և արդյունքում արմատական փոփոխություններ տեսել:

Առատաձեռնությունը մարդկանց ցույց է տալիս ձեր և Աստծո սիրտը նրանց հանդեպ:

Գարի Կիսին հեղինակ է, քարոզիչ, գործարար, ֆինանսական մասնագետ և հովիվ, որի ձգտումն է օգնել մարդկանց հաղթելու կյանքում, հատկապես հավատքի, ընտանիքի և ֆինանսների բնագավառներում: Գարին և կինը՝ Դրենդան, ստեղծել են մի քանի հաջողակ ընկերություններ և «Հավատքի կյանք՝ հիմա» ծառայության հիմնադիրներն են, որը թողարկում է երկու հեռուստատեսային հաղորդում՝ «Ֆինանսների կարգավորում» և «Դրենդա» անվանումներով: Կազմակերպում է համաժողովներ աշխարհով մեկ և տրամադրում է գործնական նյութեր: Կիսիները հովվում են նաև «Հավատքի կյանք» եկեղեցին, որը գտնվում է Օհայո նահանգի Կոլամբուս քաղաքի մոտակայքում:

GKM GARY KEESEE MINISTRIES

garykeesee.com